ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼՈՎ ԱՆՁՅԱԼԸ

Լուսանկարում՝ Անիի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավերակները

Հայ-թուրքական հակամարտությունը խորն արմատներ ունի: Ոչ վաղ անցյալի չսպիացած վերքերն ու մերժողականությունը թունավորում են հարևան ժողովուրդների միջև հարաբերությունները: Հեղինակը մեծ ավանդ է ունեցել մեր օրերում երկու կողմերի միջև շփումների ակտիվացման և համատեղ ջանքերով ազգամիջյան թշնամությունը հաղթահարելու ուղիների փնտրման գործում: Դժվարագույն քննարկումների և զարգացումների մասին նրա կենդանի և վառ նկարագրությունը կլանում է ընթերցողին: Գիրքն ապացույց է, որ ժողովրդական դիվանագիտության համեմատաբար նոր գործընթացը հաշտեցան արդյունավետ միջոց է անգամ ամենաոխերիմ հակառակորդների համար, և երկխոսություն ծավալելու, շփումների և համագործակցության միջոցով ուղի է հարթում մերձեցման համար:

Դեյվիդ Լ. Ֆիլիպսը Արտաքին հարաբերությունների խորհրդի Կանխարգելիչ միջամտության կենտրոնի (ԱՄՆ) փոխտնօրենն ու վաստակավոր աշխատակիցն է: Նա ներկայում նաև Հարվարդի համալսարանի Մերձավոր արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի հրավիրյալ հետազոտող է, ինչպես նաև Ամերիկյան համալսարանի Հակամարտությունների կանխման և խաղաղության հաստատման ծրագրի տնօրենը: Ի թիվս անցյալում զբաղեցրած այլ պաշտոնների, նա ղեկավարել է Թուրքիան և Կովկասը ներառող ժողովրդական դիվանագիտության ծրագիրը, ինչպես նաև նախագահել է Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը: Նա ծառայել է նաև որպես Միավորված ազգերի ավագ խորհրդատու, ինչպես նաև ԱՄՆ Պետքարտուղարության ավագ խորհրդատու և արտաքին գործերի փորձագետ:

Երևան - 2010

ԴԵՅՎԻԴ Լ. ՖԻԼԻՊՍ

ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼՈՎ ԱՆՁՅԱԼԸ

ժողովրդական դիվանագիտությունը և հայ-թուրքական հաշտեցումը

ԴԵՅՎԻԴ Լ. ՖԻԼԻՊՍ

ԲԱՐԶՐԱՁԱՅՆԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ

Ժողովրդական դիվանագիտությունը և հայ-թուրքական հաշտեցումը

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Ֆ 541

ԲԱՐՁՐԱԶԱՅՆԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ. - Ֆիլիպս, Դեյվիդ Լ.
Երևան.: Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն, 2010.- 228 էջ

Հայերեն թարգմանությունը՝ Անի Պողոսյանի

Նախապատրաստվել է տպագրության
Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի *կողմից*

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն գրքի ոչ մի հատված (բացառությամբ քննադատական դիտարկումների նկատառումներով արվող մեջբերումներից), առանց հրատարակողի գրավոր թույլտվության, չի կարող վերարտադրվել էլեկտրոնային, պատճենահանման, տեսագրման կամ տեղեկույթի որոնման ու հավաքման հայտնի կամ անհայտ եղանակներով:

Այս գիրքը թարգմանվել և հրատարակվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի շնորհիվ, Ամերիկայի ժողովրդի նվիրատվության միջոցով, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ: Սույն գրքի բովանդակության համար պատասխանատու է հեղինակը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, ԱՄՆ Միզազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

ISBN 978-99941-2-346-9

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Ֆ 541

Առաջին անգամ հրատարակվել է 2005թ.
Berghahn Books
www.berghahnbooks.com
©2005 David L. Phillips

©2010 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
©2010 International Center for Human Development

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development
www.ichd.org

Նվիրում եմ մորս և հորս, ովքեր իրենց նվիրումով սոցիալական արդարությանը մշտապես եղել են ոգեշնչման աղբյուր:

Նվիրվում է նաև հայտնի ոճրագործության զոհերին: Թող նրանց տառապանքների հիշատակը զերծ պահի ապագա սերունդներին ցավից ու բռնությունից:

Բովանդակություն

Նախաբան 7
Ներածություն 12
1 Դասեր Արևելյան Միջերկրականից 19
2 Առաջին կապի հաստատումը 35
3 Պատմության կանոնակարգում 45
4 Կարեկցանք 60
5 Պատմական քայլ 75
6 Վիճաբանությունների փոթորիկ 86
7 Թող հազար ծաղիկ ծաղկի 103
8 Ահաբեկչությունը հարվածում է 117
9 Հաշտեցման երկընտրանք 127

10 Իրավիճակի և հեռանկարների գնահատում 143
11 Ցեղասպանության կոնվենցիայի կիրառելիությունը 155
12 Պատերազմ Իրաքում 169
13 Սահմանին 179
14 Տեսությունից՝ կիրառում 188
ՎԵՐՁԱԲԱՆ..... 204

ՀԱՎԵԼՎԱԾ.

ՀԹՀՀ հանձնարարականները..... 208
Հապավումներ 214
Գործող անձիք 217

Նախաբան

Այս աշխատության մեջ իրենց արտացոլումն են գտել ժողովրդական դիվանագիտության կիրառմամբ հակամարտությունների լուծման վերաբերյալ Դեյվիդ Ֆիլիպսի իրազեկող և ոգևորող գաղափարները: Աշխատությունը հիմնված է սեփական փորձի և պատմության դասերի վրա՝ հաշվի առնելով հայերի և թուրքերի արդի տարաձայնությունները: Հուսով եմ, որ այն օգտակար կլինի միջազգային հարաբերություններն ուսումնասիրող ուսանողներին:

Ինքնատիպ է արդյոք նրա մոտեցումը: Արդյունավետ է արդյոք: Այսպես թե այնպես, դա պետք հաշվի առնել:

Իրավամբ, այն ենթարկվել է բազմաթիվ փորձությունների. պապենական ատելությունը հեշտ չի մոռացվում: Անցյալի պարտությունների հիշողությունը միշտ չէ, որ պատերազմի դեմ վահան է դառնում: Մեկը մյուսին հազվադեպ է ընդունում, այն էլ պատշաճ վարվեցողության պահերին:

Դեյվիդն իմ համեստ մասնակցությունն է հայցել է այս ջանքերում: Նրա ներգրավման վերաբերյալ ծավալուն մեկնաբանության փոխարեն ես կսահմանափակվեմ Դեյվիդի կազմակերպած ժողովրդական դիվանագիտությանը նվիրված ժողովում իմ ելույթի տեքստով:

❖❖❖

Կամ արդյոք առավել հրատապ խնդիր, քան մարդկանց միավորելը և հաշտեցման տանելը: Երանի թե կարողանայինք ողջունել խաղաղությունը ճիշտ այնպես, ինչպես մեր պապերն են ողջունել պատերազմը, եթե միայն կարողանայինք փառաբանել խաղաղությունն այնպես, ինչպես նրանք, ովքեր մեզանից առաջ արկածների և մրցակցության տենչանքով փառաբանել են պատերազմը, եթե միայն մեր գիտուններն ու մտածողները, բանաս-

տեղծներն ու փիլիսոփաները կարողանային հասնել խաղաղությանը նույն ավյունով ու ոգեշնչմամբ, ինչ նրանք կամ ուրիշներն են հասել պատերազմին:

Ինչո՞ւ է պատերազմը համարվում այնքան հեշտ այլընտրանք: Ինչո՞ւ է խաղաղությունը մնում որպես անհասանելի նպատակ: Գիտենք, որ իշխանավորներն ունակ են պատերազմ բռնկելու, սակայն որտե՞ղ են մարդկության այն նվիրյալները, որոնք փնտրում են պատերազմից խուսափելու ճանապարհը:

Ամեն մի պետություն ունի իր բարձրաստիճան զինվորական ակադեմիաները: Ինչո՞ւ չկան (կամ քիչ են) այն ակադեմիաները, որոնք ուսուցանում են ոչ միայն խաղաղության արժանիքները, այլև դրան հասնելու արվեստը: Ինչո՞ւ ենք այնքան գոհ ու միաժամանակ զարմացած, երբ պատերազմը նահանջում և խաղաղության է վերածվում:

Գիտեմ՝ մարդիկ մեղքը կգցեն մարդկային էության վրա: Նրանք կասեն, որ պատմության ակունքներից ի վեր դաժանությունն ու արյունահեղությունը տիրել են հասարակությունը: Եթե մոռանանք էլ, ապա Կայենի և Աբելի պատմությունն ընդմիշտ կմնա մեզ համար որպես նախազգուշացում: Նրանք եղբայրներ էին, մինչդեռ մեկը դարձավ մյուսի մարդասպանը կամ զոհը: Սա՞ է, միթե, այն դասը, որը քաղում ենք այդ բիբլիական պատմությունից: Այն, որ եղբայրները կարող են դառնալ թշնամիներ և սպանե՞լ միմյանց: Ո՛չ: Դասն այն է, որ ով սպանում է, սպանում է իր եղբորը: Եվ դա է, որ գերադասում են մոռանալ պատերազմողները:

Ինչու՞:

Պատերազմը վերջ է դնում հարցերին: Զինվորական և քաղաքական հրամանները փոխարինում են քաղաքակիրթ լեզվին: Մտածելը վտանգավոր է, կասկածելի, արգելված: Ամեն ինչ շատ պարզ է դառնում: Եթե միայն առաջին գծում գտնվող զինվորը կարողանար պատկերացնել մարդկայնությունն այն մարդու, որին նա խեղելու կամ սպանելու է, արդյոք կքաշե՞ր ձգանը կամ կնետե՞ր ռումբը: Պատերազմի ժամանակ պատկերացումը նույնպես զոհ է: Հակամարտության ժամանակ ով մեր եղբայրը չէ, մեր թշնամին է, և ոչ թե հակառակը: Ինչո՞ւ չենք կարող մեկընդմիշտ համաձայնել, որ զուտ մարդկային մակարդակում բոլոր պատերազմները եղբայրասպան են: Ահա ինչու պատերազմը մեծ մասամբ դիտվում է ոչ միայն դաժան, այլև գրոտեսկային և այլանդակ: Իսկական զինվորներն առաջինն են դա հասկանում: Նրանք գիտեն, որ անդամալույծ ու համր դիակներով պատված պատերազմի դաշտում չի կարող լինել ո՛չ գեղեցկություն, ո՛չ արվեստ, ո՛չ բանաստեղծություն, ո՛չ մարդկայնություն, ո՛չ էլ հատուցման խթան, միայն նողկանքի ու ողբի պոռթկում:

Ո՞վ և ի՞նչն է մեղավոր ազգերի և համայնքների միջև պատերազմների համար: Շատ հաճախ որպես արդարացում նշվում են ռազմավարական ազգայնականության և տնտեսական հետաքրքրությունների պատճառներ, ինչը համոզիչ է: Կրոնը, ինչպես նաև էթնիկական պատկանելությունը, նույնպես մեծ դեր են խաղացել պատերազմների բռնկման գործում: Պատճառները տարբեր են եղել, արդյունքները մնացել են նույնը՝ մարդկային կյանքի նկատմամբ անընդունելի ոտնձգությունը և մարդկային արժեքների աններելի խեղաթյուրումը:

Ուստի պատերազմին արժանի պատասխանը դրանից խուսափելն է, այն թույլ չտալը, այն փոխարինելը մի ուրիշ բանով: Բայց երբ բռնկվում է պատերազմը, դրա դաժան հիշողությունը պետք է հաշտություն ծնի: Քանզի որքան պատուհասում է հակամարտությունը, նույնքան էլ ապաքինում է հաշտությունը: Բարեծին մարդու համար իր վիճակի խոցելիությունը հաղթահարելու ամենաազնիվ միջոցը չարչարանքի, թուլության և մահվան հետևանքներ առաջացնող պատճառներին հակադրվելն է: Անշուշտ, վեհություն, ավելի ճիշտ, հոգևոր վեհություն, երբ թշնամիները հանդիպում են, ձեռք սեղմում, և հաշտեցման տանող երկխոսություն վարում: Դա եսասիրությունը և չարիքը ինքնակամ հաղթահարելու վարքագիծ է:

Դուք, որ պահպանել եք ձեր ժողովուրդներին պատվով ծառայելու սովորույթները, չէ՞ք կամենա դառնալ ձեր ժողովուրդների նվիրյալներ՝ վերջ դնելով այդքան զոհեր պահանջող ատելության և անխուսափելի դաժանության հաղթարշավին:

Բոլորս գիտենք, որ կան պատճառներ, գուցե նույնիսկ հիմնավոր պատճառներ չմոռանալու համար այն ամենը, ինչ մյուս կողմն արել է ձեր ընտանիքի և ընկերների նկատմամբ: Հիշողությունը ավելի հեշտությամբ դառնում է ատելության մահաբեր զենք, քան վահան մահաբեր ցանկությունների դեմ՝ հանուն բարեկամության և եղբայրության: Մի թույլ տվեք, որ դա տեղի ունենա: Օգտագործեք հիշողությունը և դրա դասերը որպես բարեկամին և թշնամուն, Արևելքն ու Արևմուտքը, մահմեդականությունն ու քրիստոնեությունը հաշտեցնելու կամուրջ:

Ահավասիկ, Իսրայելի հրեա ժողովրդի համար հեշտ չէր սկիզբ դնել Գերմանիայի հետ հաշտվելու օրհնյալ ժամանակաշրջանին: Մտածեք, եթե հրեաները և գերմանացիները կարող են համագործակցել պատմությունը մարդկայնացնելու ձևաչափով, ապա մյուսները նույնպես կարող են: Սա չի նշանակում մոռանալ անցյալը: Դա դավաճանություն կլիներ: Անցյալը

չպետք է մոռացվի հանուն ապագայի: Ճիշտ հակառակը. անցյալը չմոռանալն է այն պատասխանատվության պատճառը, որը մենք միասին զգում ենք մեր երեխաների վաղվա օրվա համար:

Համաձայն եմ՝ անցյալն ունի իր տրամաբանությունը, սակայն ապագան՝ նույնպես: Ես սա ասում եմ, որովհետև պատկանում եմ մի սերնդի, որը դավաճանված է զգում մարդու և լքված Աստծո կողմից: Մենք ունեինք աշխարհի բոլոր պատճառները չվստահելու հասարակությանը, և այնուամենայնիվ մենք դրա մի մասն ենք: Մենք կարող էինք հրաժարվել «մյուսներից», և այնուամենայնիվ ձգտում ենք նրանց մեր դաշնակիցները դարձնել: Մենք կարող էինք քամահրանքով վերաբերվել մշակույթին ու գիտությանը, և այնուամենայնիվ շարունակում ենք ապրել դրանցով: Մենք կարող էինք մերժել բանականությունը, կարեկցանքը և բարությունը՝ որպես ապրելաձև, և այնուամենայնիվ հաստատակամորեն դրանք համարում ենք ազնիվ նպատակներ, առանց որոնց ապագան կդառնար մռայլ, իսկ պատմությունը՝ անիմաստ, անհեթեթ և, ի վերջո, հիշելու համար անարժան: Եկեք դաս քաղենք միմյանց տառապանքներից և կհասկանանք, որ նույն Հոր զավակներն ենք: Մենք բոլորս հավասար իրավունք ունենք օգտվելու նրա ստեղծածից, ինչպես որ հավասարապես պատասխանատու ենք նրա բարօրության համար: Ոչ մի ժողովուրդ մյուսին վերադաս կամ ստորադաս չէ: Ոչ մի ազգ մյուսից ավելի արժանավոր չէ: Ոչ մի կրոն մյուսից ավելի ճշմարիտ չէ: Ռասիզմը և՛ հիմարություն է, և՛ մեղք, իսկ ազգային խտրականությունը՝ անընդունելի: Կրոնական մոլեռանդությունը ատելություն է ծնում, ոչ թե փրկություն, ինչպես որ քաղաքական ծայրահեղականությունը՝ թշնամություն, ոչ թե անվտանգություն: Երբ մի խումբ ազգային, կրոնական կամ գաղափարախոսական պատճառներով իր գերազանցությունն է պնդում մյուսների նկատմամբ, ընդամենը ցույց է տալիս մյուսներին իշխելու իր կամքը:

Մենք գիտենք դա պատմությունից: Չի եղել սերունդ առանց մյուսների կողմից հետապնդված և նվաճված պետությունների, մյուսների կողմից խախտված և ոտնահարված իրավունքների, առանց սպանվածների, առանց այլ հավատացյալների կողմից հալածված և նվաստացած հավատացյալների:

Միթե մարդկությունը պետք է հավերժ պայքարի իր իսկ վերացման դեմ ներսից և դրսից: Միթե հասարակությունը երբեք չի սովորի, որ դաժանությանն ապավինելը նպաստում է Մահվան հզորացմանը՝ տարածելով դրա սահմանները դեպի հեռավոր հորիզոններ: Միթե երբեք չենք հասկանա, որ պատերազմներն անիմաստ են, քանզի հաղթանակների պտուղները

երկար չեն վայելում:

Դարը մոտենում է ավարտին, և ակամա մտածում ես, թե ինչ է այն մեզ սովորեցնելու: Ի՞նչ է այն թողնելու հաջորդին: Մի՞թե միայն իր զարմանահրաշ տեխնոլոգիական ձեռքբերումները, որոնք կոծկել են նրա թերությունները:

Մեր շուրջը շատ տառապանք կա, գուցե նույնիսկ մեր մեջ: Չափազանց շատ ծրագրեր են սխալ իրագործվել: Իդեալիզմը խաթարվել է, սկզբունքները՝ չարաշահվել: Ճշմարտության որոնումը հանգել է կեղծիքի, խաղաղության որոնումը՝ արյունահեղության: Կա՞մ արդյոք այս մոլորակի վրա մի վայր, որը վտանգված չէ: Կա՞մ արդյոք մի գաղափար, որ չի ծնել կասկածներ: Ես մտահոգված եմ: Մեզանից շատերն են մտահոգված: Մարդկությունը մի գնացքում է, որը գնում է դեպի անդունդ: Եթե չահազանգենք այժմ, ապա շատ ուշ կլինի:

Ժամանակը չէ՞ արդյոք կանգ առնելու և ցույց տալու աշխարհին, որ մենք մարմնավորում ենք ոչ միայն մարդկության արժանապատվությունը, այլև նրա հույսը:

Ահա այս պատճառով է Դեյվիդ Ֆիլիպսի գիրքն այնքան կարևոր. այն լրացնում է բացը: Կարդալ այն, կնշանակի նվիրվել խաղաղությանը, որը բոլոր նպատակներից ամենաազնիվն է: Այն ձեռք բերելու համար պետք է հակադրվել հակամարտության կողմերին ժողովրդական դիվանագիտության ջանքերով և ներգրավել յուրաքանչյուրին մյուսի մասին երկխոսության մեջ: Մենք սկզբում կլինենք միջնորդի դերում, հետո՝ միջամտողի, սակայն շուտով կանցնենք ջատագովի դերին, որն անհույս իղձերը դարձնում է հնարավոր:

Էլայ Ուայզել

Ներածություն

Աշխարհը լի է դժվար հաղթահարելի հակամարտություններով, որոնք շփոթ են առաջացնում ավանդական դիվանագիտության ասպարեզում: Հակամարտությունների կարգավորմամբ զբաղվող մասնագետները կարող են դաս քաղել այս էջերում նկարագրված աշխատանքից: Ես ավելի շատ փորձել եմ մարդկայնացնել հայերի և թուրքերի գործը՝ պատմելով նրանց չարչրկված անցյալին դիմակայելու և ապագա համագործակցությունը դիտարկելու պայքարի մասին, քան ակադեմիական տրակտատ գրել: Նրանց փորձն ուսանելի է պատմական թշնամությամբ վարկաբեկված այլ հակամարտությունների համար:

Ես «ժողովրդական դիվանագիտության» մասնագետ չեմ, ոչ էլ օսմանյան պատմության կամ թուրքագիտության մասնագետ: Թուրք-հայկական խնդիրների իմ ուսումնասիրությունը սկիզբ առավ մեկ տասնամյակ առաջ, երբ փորձում էի խթանել թուրքերի և քրդերի երկխոսությունը: Աստիճանաբար ներքաշվեցի կիպրոսցիների, հույների և թուրքերի հետ հարաբերությունների մեջ: Այս նախաձեռնություններն անվանում են «ժողովրդական դիվանագիտություն»: «Ժողովրդական դիվանագիտության» գործողությունները համատեքստ են ստեղծում քաղաքացիական հասարակության համար՝ սեփական ընկալումները որոշում կայացնողներին հաղորդելու և հասարակական կարծիք ստեղծելու նպատակով փոխըմբռնումը զարգացնելու գործում:

Մարկ Գրոսմանը՝ ԱՄՆ պետքարտուղարի քաղաքական հարցերով տեղակալը, ինձ զգուշացրել է, որ հայերին և թուրքերին ընդգրկող «ժողովրդական դիվանագիտությունն» իմ ամենադժվարին աշխատանքն է լի-

նելու: Թուրքերն ու հայերը խիստ անվստահություն ունեն միմյանց հանդեպ: Նրանց բաժանում են Օսմանյան կայսրության անկման տարիներին տեղի ունեցած իրադարձությունների պատմության վերաբերյալ տարբեր ըմբռնումները: Հայերը նկարագրում են XIX դարավերջի արյունալի ջարդերը, որոնք հանգեցրին մեկուկես միլիոն հայերի նահատակությանը: 1915թ. ապրիլի 24-ին 800 հայ հասարակական գործիչների հավաքեցին և աքսորեցին: 1915-23թթ. զոհվեց ավելի քան մեկ միլիոն հայ[1]: Թուրքական դատարանը հետագայում դատապարտեց «երիտասարդ թուրքերին» հայ ժողովրդի սպանդը նախագծելու և իրագործելու համար:

Թուրքիան հրաժարվում է օգտագործել «ցեղասպանություն» բառը և դիմադրում է հայկական սփյուռքի՝ հանուն միջազգային ճանաչման քարոզարշավին: Որոշ թուրքեր վիճարկում են փաստերը և շեշտում պատերազմի համատեքստը, որի պայմաններում են տեղի ունեցել նշված իրադարձությունները: Նրանք պնդում են, որ հայերը դավաճանեցին Օսմանյան Թուրքիան՝ տասնամյա ապստամբություն ձեռնարկելով և անկախություն ձեռք բերելու համար համագործակցելով ռուսական բանակի հետ: Կոմունիստական հեղափոխությունից հետո ցարական ուժերն այլևս չկարողացան պաշտպանել վտանգված և աքսորյալ հայերին: Թուրքիան ընդունում է, որ սպանվել է մի քանի հարյուր հազար հայ. նրանք դրա համար մեղադրում են քուրդ հրոսակներին: Թուրքիան պնդում է նաև, որ հայերն իրենց ապստամբության ընթացքում սպանել են առնվազն նույնքան թուրքերի:

Միայն հայերը չէ, որ տանջվել են: Շատ թուրքեր ընտանեկան կորուստների, անարդարության և նվաստացման անցյալ ունեն: Բալկաններում, Կովկասում և Սև ծովի շրջաններում թուրքերին նույնպես քշել են իրենց տներից: Պատմական և մշակութային սերտ կապերը Անատոլիայի թուրքերին միավորում են Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի շրջանների եղբայրների հետ: Թուրքիան հակազդեց, երբ 1988թ. Լեռնային Ղարաբաղում՝ Ադրբեջանում գտնվող էթնիկ հայկական անկլավում, թշնամական գործողություններ ծավալվեցին: Հայկական ուժերը զբաղեցրին ադրբեջանական տարածքի զգալի հատված: Հակամարտության հետևանքով ավելի քան քսան հազար մարդ սպանվեց և մոտ մեկ միլիոն մարդ տեղահանվեց: Թուրքիան շրջափակում սկսեց՝ սահմանափակելով Հայաստանի կապը Արևմուտքի հետ: Թեև Անկարան ճանաչում է Հայաստանի պետությունը, սակայն հրաժարվում է պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատել, քանի դեռ չեն վերադարձվի Ադրբեջանի «գրավյալ տարածքները»:

Չնայած աշխարհագրական հարևանությանը, անցած ութսունհինգ

տարիներին թուրքերն ու հայերը զարմանալիորեն աննշան շփումներ են ունեցել: Մինչև վերջերս «հայկական հարցերը» տաբու էին Թուրքիայում: Մինչդեռ յուրաքանչյուր հայ պատմում է պապենական հողերից՝ ներկայում Արևելյան Թուրքիայում գտնվող Արարատ լեռան շրջակայքից և լայնարձակ տարածքներից վտարված իր ընտանիքի զոհված անդամների մասին:

Ժողովրդական դիվանագիտությունը խնդրի լուծման ոչ պաշտոնական փորձ է: Այն ընդգրկում է անհատ քաղաքացիների, ովքեր ուսումնասիրում են այն պայմանները, որոնք ծնում են հակամարտություններ, և ընդհանուր խնդիրների լուծման համար միասնական ռազմավարություններ մշակում: Նպատակը համագործության խթանումն է, որպեսզի հակամարտությունը դիտվի որպես միասնական խնդիր, որ պահանջում է երկու կողմերի համագործակցությունը: Չնայած ժողովրդական դիվանագիտության արդյունավետությունը պայմանավորված է պաշտոնական դիրքերից իր դուրս լինելով, սակայն այն կարող է մեծացնել դիվանագիտական կապերը, եթե զարգանա դիվանագիտական ջանքերին զուգահեռ:

Թուրքիայի և Կովկասի ժողովրդական դիվանագիտության ծրագիրը ստեղծվեց Քլինտոնի վարչակազմի պաշտոնավարման ընթացքում և պաշտոնապես ընդունվեց 2001թ.: Ծրագրի հիմքը Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովն էր (ՀԹՀՀ), որը կազմված էր ականավոր հայերից և թուրքերից, ներառյալ՝ նախկին պաշտոնյաները և քաղաքացիական հասարակության ղեկավարները: Ծրագրի հռչակումից հետո ՀԹՀՀ-ն հռչակվեց որպես պատմական քայլ, որ հաշվի էր նստում պատմական խնդիրների հետ և թուրքերի ու հայերի միջև ավելի լավ հարաբերություններ հաստատելու հնարավորություն ստեղծում: ՀԹՀՀ-ն նաև օգնեց կոտրելու սառույցը՝ խրախուսելով քաղաքացիական հասարակության այլ անդամների ընդգրկվել ժողովրդական դիվանագիտության մեջ: Երբ ՀԹՀՀ-ն վերածվեց ավելի լայն «խորհրդատվական խմբի»՝ ներառելով երկու երկրների քաղաքացիական հասարակությունները, ձևավորեց մի միջավայր, որտեղ հայերն ու թուրքերը կարող էին հանդիպել, անձնական կապեր հաստատել և փնտրել դժվարին խնդիրների լուծման նոր ուղիներ: Նրանք ավելի հեռատես դառնալու և համագործակցության օգուտը տեսնելու հնարավորություն ստացան:

Օրինակ՝ հայ և թուրք ազգագրական և դասական երաժշտության կատարողները համատեղ ելույթ են ունենում: Լրագրողները հոդվածներ են

փոխանակում: Համագործակցում են կանանց խմբերը, և կանանց համատեղ ամսագիր է հրատարակվում: Հայ-թուրքական մշակութային իրադարձությունների վերաբերյալ փաստագրական ֆիլմ է ցուցադրվում երկու երկրներում: Առևտրի տեղական գրասենյակները ուսումնասիրում են առևտրական նոր հնարավորությունները: Նորարարական համացանցային տեխնոլոգիաներ են օգտագործվում «Վիրտուալ գյուղատնտեսական մեծածախ շուկայում», և Տարածաշրջանային տնտեսական համագործակցության աշխատանքային խումբը խթանում է գործարարությունը: Վերականգնող մասնագետները նախագծեր են մշակում Թուրքիայում Աղթամարը՝ հայկական ամենանվիրական ու հնագույն եկեղեցիներից մեկը վերանորոգելու համար: Ակադեմիական փոխանակումներ են տեղի ունենում, և սոցիոլոգները միասին աշխատում են ընդհանուր ընկալումների հնարավորություններն ուսումնասիրելու համար: Պատգամավորները, տեղական իշխանությունների պաշտոնյաները և սահմանամերձ քաղաքների քաղաքապետները բանակցությունների և միջմշակույթային հաղորդակցության գծով վերապատրաստում են անցնում: Հանդիպումներին սովորաբար մասնակցում են հայերն ու թուրքերը: Առանձին հանդիպումներում ներգրավվում են ազերիներին: Այդուհանդերձ դժվար է հայերին և ազերիներին համատեղ ներգրավել: Մինչ հայերը պատրաստակամ են մասնակցելու նման հանդիպումներին, ազերիներից շատերը պնդում են, որ հարաբերություններն անհնարին են, քանի դեռ հայերը վերահսկում են ադրբեջանական տարածքները:

Հակամարտություններն ընդհանուր խառնաշփոթ են ստեղծում: Չնայած երկխոսություն սկսելու ջանքերին՝ այն հայերը, որոնք տրամադրված են ռազմատենչ, մերժում են թուրքերի հետ որևէ կապի հաստատումը, քանի դեռ Թուրքիան տարածքներ չի վերադարձնի և փոխհատուցում չի վճարի: Իրենց հերթին՝ թուրք ծայրահեղականները պահանջում են հայերից ընդունել, որ ցեղասպանություն երբևէ տեղի չի ունեցել: Հայերը չեն կարող առաջ շարժվել՝ մոռանալով անցյալը, թուրքերը ցանկանում են մոռանալ անցյալը և նայել ապագային, Ադրբեջանը պահանջում է տարածքների վերադարձ՝ որպես երկխոսության նախապայման:

Այս արգելքը հաղթահարելու համար ՀԹՀՀ-ն դիմեց Անցումային արդարադատության միջազգային կենտրոն՝ «հեշտացնելու համար XX դարասկզբին տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ Ցեղասպա-

նության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ անաչառ և անկախ իրավական վերլուծության նախապատրաստումը»[2]: Թեպետ վերլուծությունը վտանգներ էր ենթադրում հայերին և թուրքերին անջրպետող ամենացավոտ խնդրին անդրադառնալով, այն երկու կողմերին հնարավորություն ընձեռեց զգալու, որ սեփական շահերը պաշտպանված են: Վերլուծության ազդեցությունը կզգացվի տարիներ անց:

Թուրքերը ողջունեցին հիմնական եզրակացությունը: Միջազգային իրավունքով ընդհանրապես չի թույլատրվում պայմանագրերի հետադարձ կիրառումը: Կոնվենցիայով տվյալ իրադարձություններից բխող ոչ մի իրավական, ֆինանսական կամ տարածքային պահանջ չի կարող հաջողության հավակնություններ ունենալ: Հայերն այստեղ նույնպես իրենց ձեռնտու հատվածներ գտան: Վերլուծությունը եզրակացնում էր. «Այդ իրադարձությունների որոշ իրականացնողներ իմացել են, որ իրենց գործողությունների հետևանքը լինելու է Արևելյան Անատոլիայի հայերի ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացումը, կամ գործել են այդ նպատակին հասնելու դիտավորությամբ, ուստի ունեցել են ցեղասպանությանը բնորոշ մտադրություն: Ցեղասպանություն եզրույթը կարող է կիրառվել մինչ կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած դեպքերի նկատմամբ (1948թ. դեկտեմբերի 9)»[3]:

Աննախադեպ էր մի խումբ թուրքերի և հայերի կողմից նման ծավալուն խնդրի իրավական վերլուծության պահանջը: Դա կարող էր տեղի ունենալ միայն Ժողովրդական դիվանագիտության շնորհիվ: Կառավարությունները երբեք չեն կարող այդքան համարձակ լինել: Պատմական խնդիրներին անդրադառնալու հետ միաժամանակ ՀԹՀՀ-ն առաջինը սկսեց համոզել Թուրքիային և Հայաստանին բացել սահմանը՝ որպես դիվանագիտական հարաբերությունների բարելավման կուլմինացիոն հանգրվան:

Թուրքիայի և Կովկասի Ժողովրդական դիվանագիտության ծրագիրն առաջին դեպքը չէ, երբ ժողովրդական դիվանագիտությունն օգտագործվում է համաշխարհային մասշտաբի խնդիրների լուծման համար: Օրինակներ շատ կան, որոնք առնչվում են, ասենք, Հյուսիսային Իռլանդիայի բողոքականներին ու կաթոլիկներին, Շրի Լանկայի թամիլներին ու սինհալներին, հնդիկներին ու պակիստանցիներին, հրեաներին ու պաղեստինցիներին: Այն, ինչ այս ծրագիրը յուրահատուկ է դարձնում, համակարգային մոտեցումն է, ինչպես նաև կենտրոնացված և շարունակական գործունեութ-

յունը: Այս գործունեությունը հնարավոր չէր լինի առանց ԱՄՆ Պետդեպարտամենտի աջակցության: Ավստրիական, շվեդական, շվեյցարական և բրիտանական հաստատությունները նույնպես աջակցել են այս գործունեությանը:

Միացյալ Նահանգները և միջազգային հանրությունը ավանդ ունեն Թուրքիայի և Հայաստանի միջև ավելի լավ հարաբերությունների հաստատման գործում: Այս երկու երկրները ոչ միայն ճանաչված դաշնակից են և կարևոր գործընկեր ահաբեկչության դեմ պայքարում, այլև առանց հարևան երկրների միջև խնդիրների լուծման տարածաշրջանային խաղաղությունը, կայունությունը և տնտեսական զարգացումը խնդրահարույց կլինեն: Գլոբալացումը և տարածաշրջանային միասնությունը ազգային սահմանները դաձնում են նվազ կարևոր, իսկ տարածաշրջանային համագործակցության խոչընդոտները՝ ավելի ու ավելի ցցուն: Հայերն ու թուրքերը, իրենց կապը ժողովրդավարական երկրների հասարակության հետ ամրապնդելու համար, օգտվում են իրենց ընդհանուր շահերը և միասնական նպատակներն առաջ մղելու բոլոր հնարավորություններից:

Կատարելով առաջին քայլերը՝ թուրքերը և հայերը նպաստել են պաշտոնական կապերի հաստատման համար ավելի նպաստավոր մթնոլորտ ձևավորելուն: 2002թ. հունվարին Անկարան վերականգնեց օդային ճանապարհով հայկական անձնագիր ունեցողների համար Թուրքիա ժամանելու վիզաներ ստանալու իրավունքը: Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարները և նրանց տեղակալները մշտապես հանդիպել են՝ ուսումնասիրելու տնտեսական համագործակցությունը և քննարկելու տրանսպորտային նախապատրաստությունները: Թուրք և հայ պաշտոնյաները ընդունեցին ՀԹՀՀ-ի վերջնական հաշվետվությունը՝ որպես հայ-թուրքական հարաբերությունների շուրջ ապագա բանակցությունների հիմք: Այսօր ժողովրդական դիվանագիտության գործունեությունը շատ աշխույժ է:

Ընդդիմախոսները հայտարարում էին, որ ժողովրդական դիվանագիտությունը պաշտոնական դիվանագիտության թույլ այլընտրանք է: Նրանք սխալվեցին: Ժողովրդական դիվանագիտության ծրագիրը խթանեց պաշտոնական քաղաքական դիսկուրսը: Այն նաև հայ և թուրք քաղաքացիական հասարակությանը կապերի հաստատման և համագործակցության մղեց:

Հայ-թուրքական հակամարտությունն աշխարհի ամենադժվար լուծելի խնդիրներից է, որը և՛ պատմական, և՛ ժամանակակից խնդիրների հետևանք է: Այն ներառում է հարևան պետությունների, մի քանի այլ երկրների, ինչպես նաև հայկական Սփյուռքի շահերը: Խնդիրն էլ ավելի է բարդացել

սառը պատերազմից և հակաահաբեկչական քաղաքականության հետևանքով: *Թուրքիայի և Կովկասի ժողովրդական դիվանագիտության ծրագիրը* ուղեցույց չէ այլ ժողովրդական դիվանագիտությունների ծավալման համար, սակայն դրա հաջողություններն ու անհաջողությունները ուսանելի են:

Արձագանքելով հայերի և թուրքերի հաշտեցման գործընթացին՝ Էլայ Ուիզելը՝ 1986թ. Նոբելյան մրցանակակիրը, ասաց. «Այս իրադարձությունն ինձ հրաշք է թվում: Եթե թուրքերն ու հայերը կարող են հանդիպել և զրուցել, նշանակում է մյուսները նույնպես կարող են»[4]: Անցյալի բացահայտումը ապագա հնարավորություններ ստեղծելու կարևոր մասն է: Այս գիրքը պատմում է այն թուրքերի ու հայերի մասին, ովքեր պայքարել են հաշտեցման նպատակն առաջ տանելու համար:

Ծանոթագրություններ

1. Թվերը վիճարկվում են:
2. ՀԹՀՀ-ի 2001 թ. նոյեմբերի 21-ի հայտարարությունը:
3. Անցումային արդարադատության միջազգային կենտրոն, 2003թ., փետրվար:
4. Դուգլաս Ֆրանց, «*Նյու Յորք թայմս»,* 2001թ., 9 հուլիսի:

1

Դասեր Արևելյան Միջերկրականից

Իմ առաջին այցելությունը Թուրքիա Պարսից ծոցի պատերազմից հետո էր: Անցա Թուրքիայի և Իրաքի սահմանը, որը մի ժամանակ բեռնատար ավտոմեքենաների մի աննկատ կանգառ էր՝ Հաբուր անվամբ: Երբ ՄԱԿ-ը Պարսից ծոցի պատերազմից հետո Իրաքի համար պատժամիջոցներ սահմանեց, Հաբուրը դարձավ իրաքյան մաքսանենգ նավթի հիմնական տարանցիկ կետը: Ճանապարհը պատված էր նավթի հաստ շերտով, որը մղոններով ձգվում էր սահմանի երկու կողմերում:

Դեպի Հյուսիսային Իրաքի քրդական շրջանը տանող ճանապարհն անցնում է Դիարբեքիրի միջով, որը Հարավարևելյան Թուրքիայի ամենամեծ քաղաքն է: Սալահադդինից վերադառնալու ճանապարհին ինձ իջեցրեցին սահմանի իրաքյան մասում, և ես այն անցա թուրքական տաքսի գտնելու համար: Չնայած երթը պետք է տևեր ընդամենը մի քանի ժամ, ձգվեց մի ամբողջ օր: Ինձ անընդհատ կանգնեցնում էին թուրք ոստիկանները, սպասեցնում և հարցաքննում: Նրանք անհանգստացած էին, որ ես այդ տարածքում էի, որպեսզի կապեր հաստատեմ Քրդական աշխատավորական կուսակցության (PKK/ՔԱԿ) հետ, որը թուրքահպատակ քրդերի անկախամետ խումբ է՝ ճանաչված ԱՄՆ-ի կողմից որպես ահաբեկչական կազմակերպութ-

յուն:

Ժողովրդական դիվանագիտության իմ առաջին փորձը կապված էր թուրքերի և քրդերի հետ: Նրանց առաջին կառուցողական երկխոսությունը տեղի ունեցավ մերձփարիզյան մի դղյակում: Զգուշավոր փորձերից հետո մի քուրդ մասնակից պատմեց իր անձնական պատմությունը: Նա նկարագրեց բազմաթիվ կալանավորումներ և իր տանջանքները ձերբակալման ընթացքում: Պատմեց, թե ինչպես իր բանտապետները ստիպել են ուտել սեփական կղանքը և խմել մեզը: Աղետը հասել էր նաև նրա ընտանիքին: Նրա որդին մահացել էր մի «դժբախտ պատահարի» ժամանակ ձերբակալման ընթացքում: Ժողովի մասնակիցներից մեկը՝ թուրքական ռազմածովային նավատորմի պաշտոնաթող ծովակալ, լսելով իր պետության կողմից կատարված դաժանությունների մասին՝ զարհուրեց: Զղջալով նա ներողություն խնդրեց ողջ թուրք ժողովրդի անունից: Նրանց երկխոսությունը գործընթացի որոշիչ պահն էր: Պատմությունները ժողովրդական դիվանագիտության կարևոր մասն են:

Հետագա վեց ամիսների ընթացքում թուրքերը և քրդերը կրկին հանդիպեցին Շվեյցարիայում՝ Լուգանո լճի մոտ գտնվող մի առանձնատանը և ապա Բելգիայում՝ մի հին մենաստանում: Մասնակիցներն ընդունեցին մի հայտարարություն՝ «Միասին քայլելով պատմության միջով», որը ամփոփում էր նրանց՝ որպես Թուրքիայի քաղաքացիների ընդհանուր հույսերը: Նրանք որոշեցին նաև շարունակել իրենց համագործակցությունը՝ ստեղծելով Անկարայում ժողովրդավարական կազմակերպություն, որպեսզի տարածեն իրենց ընկալումները լայն հասարակության շրջանում: Մարկ Գրոսմանը, ով ժամանակի Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանն էր, դրվատեց մեր հաջողությունը թուրքերի և քրդերի միջև համագործակցություն հաստատելու գործում:

1990-ականներին ես գործում էի նաև Բալկաններում և հնարավորություն ունեցա աշխատելու դեսպան Ռիչարդ Հոլբրուքի հետ, ով բանակցեց Դեյթոնի Խաղաղության համաձայնագիրը՝ 1995թ. նոյեմբերին ավարտին հասցնելով Բոսնիայի արյունահեղ պատերազմը: Կանխատեսման և համառության հատկությունները, որոնք Հոլբրուքին շատ օգնեցին Բալկանների գործընթացում, օգտակար եղան նրան նաև Կիպրոսում որպես 1998թ.նախագահ Քլինտոնի կողմից նշանակված հատուկ պատվիրակի դերում: Չնայած Հոլբրուքի կուռ տրամաբանությանը Կիպրոսի ճակատագ-

րի կանխատեսման հարցում, որը մի երկգոտի, հավասարազոր ուժերով երկհամայնք դաշնություն էր, համաձայնության հասնելը հուսահատեցնող կարող էր լինել անգամ արտասովոր բնազդով ու բանակցելու կարողության տեր մարդու համար:

Կիպրոսի նորագույն քաղաքական պատմությունը խճողված է միջազգային միջնորդներով: Ոչ ոք չկարողացավ համաձայնեցնել Գլաֆկո Կլերիդին՝ Կիպրոսի Հանրապետության նախագահին և Ռոֆ Դենքթաշին՝ թուրք կիպրոսցիների առաջնորդին: Պաշտոնական քննարկումները խթանելու համար Հոլբրուքը մտահաղացավ կիպրոսական հույն և թուրք գործարարներին ընդգրկող ժողովրդական դիվանագիտության նախաձեռնություն: Ես 1999թ. հունվարին Պետդեպարտամենտի կողմից նշանակված էի ավագ խորհրդատու:

Կիպրոս կատարած իմ առաջին այցի ժամանակ՝ 1998թ. սեպտեմբերին, ուսումնասիրեցի մի տեղեկատու գիրք, որն ինձ հատկացրել էր Նիկոսիայում ամերիկյան դեսպանությունը: Այն սովորական տեղեկություններ էր պարունակում՝ պատմություն, հյուրանոցներ, հեռախոսահամարներ: Ինձ ապշեցրեց մի փոքրիկ խորհուրդ. սուրճ պատվիրելիս ասեք «կիսաքաղցր»: Սուրճին վերաբերող նախասիրությունները կարող էին քաղաքական հակումներ արտահայտել: Հունական Նիկոսիայում թուրքական սուրճ պատվիրելը խիստ արգելված է:

Կիպրոսցիների համար բառերը կարևոր են: Օրինակ՝ 1974թ. հուլիսյան դեպքերը հույն կիպրոսցիները բնութագրում են որպես «ներխուժում», իսկ թուրք կիպրոսցիները՝ «միջամտություն»: Երբ Ռոֆ Դենքթաշին՝ թուրք կիպրոսցիների առաջնորդին դիմելիս նրան անվանում են «նախագահ Դենքթաշ» կամ «պարոն Դենքթաշ», բացահայտվում է խոսողի քաղաքական հավատամքը: Այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը (ՀԿԹՀ) ճանաչվել է միայն Անկարայի կողմից:

Կիպրոսն ամենավերջին մասնատված երկիրն է Եվրոպայում: Բեռլինյան պատի պես մի պատ բաժանում է կղզին հյուսիսային և հարավային մասերի: 1963թ. հունական ռազմական խունտան հարված հասցրեց Կիպրոսի նախագահ Մակարիոսին: Սահմանադրությունը վերացնելով՝ հարվածի առաջնորդները դրեցին Կիպրոսը Հունաստանին միացնելու՝ «Էնոսիսի» հիմքերը:

Պնդելով, որ 1960թ. Երաշխիքների մասին պայմանագիրը միջամտելու օրինական հիմք է տալիս, Թուրքիայի վարչապետը՝ Բուլենթ Էջևիթը, 1974թ. ամռանը ռազմական գործողություններ սկսեց: Հակամարտության ընթացքում բռնագրավվեց գույք, կիսվեցին ընտանիքներ, իսկ շատ քաղա-

քացիներ անհետ կորան: 1980թ., երբ Թուրքիան իր սահմանն ընդարձակելու քայլեր ձեռնարկեց, ԱՄՆ Կոնգրեսը հակազդեց՝ հարկադրելով զենքի բռնագրավումը: Երեք տարի անց ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պաշտոնապես մերժեց ՀԿԹՀ-ի օրինականության պահանջը: Կիպրոսի բաժանմամբ թուրքերին մնաց կղզու 38 տոկոսը՝ ամենալավ լողափերի և հյուսիսային հանգստյան գոտիների հետ միասին: Հույն կիպրոսցիները պահպանեցին սահմանային հատվածը, որը ներառում է կղզու գյուղական, արդյունաբերական և առևտրական կենտրոնները:

Երբ գործի անցա, Հունաստանի և Թուրքիայի հարաբերությունները ցածր մակարդակում էին: 1996թ. հունվարին հակառակորդ խմբերը բարձրացրեցին Հունաստանի և Թուրքիայի ազգային դրոշները մի կղզում, որը հույներն անվանում են Իմիա, իսկ թուրքերը՝ Քարդակ: Այդ դեպքը գրեթե պատերազմի պատճառ դարձավ ՆԱՏՕ-ի երկու դաշնակիցների միջև և բյուղերացրեց Թուրքիայի ու Հունաստանի պահանջները սահմանային ջրերի նկատմամբ: Ծովային իրավունքի մասին կոնվենցիայի համաձայն՝ Աթենքը վեցից տասներկու մղոնով ընդարձակեց իր մայրցամաքային շելֆը: Քանի որ այդ տեղաշարժը փակեց Թուրքիայի ճանապարհը դեպի Մեծ Էգեյան ծովը, ապա Անկարան այդ ընդարձակումը համարեց *causus belli*:

Կիպրոսի՝ ռուսական «Կրուգ» հրթիռները գնելու ծրագրերը Արևելյան Էգեյանում ուժերի հավասարակշռությունը փոխելու համաձակ փորձ էին: Դրությունն ավելի լարվեց, երբ իմ Կիպրոս ժամանելուն նախորդող օրերին Հունաստանի պաշտպանության նախարարի ինքնաթիռն արգելափակվել էր թուրքական «F16»-երով: Ակն ընդ ական առճակատումները շարունակ Հունաստանին և Թուրքիային պահում էին պատերազմական վիճակում:

Հույն կիպրոսցիների հետ մի քանի օրվա քննարկումներից հետո ԱՄՆ դեսպանի մեքենայով անցա կանաչ գիծը: Ոչ ոք իրավունք չուներ անցնելու ուժեղացված սահմանը, բայց Լեդրա դղյակի դարպասները լայնորեն բացվեցին մեզ համար: Թուրք կիպրոսցիների հետ քաղաքում և «հյուսիսային դեսպանությունում» տեղի ունեցած հանդիպումների ընթացքում Հյուսիսային և Հարավային Կիպրոսների միջև առկա անդունդն ապշեցրեց ինձ: Նիկոսիայի հունական մասը աղմկոտ ու բարեկեցիկ էր՝ Ելիսեյան դաշտերի պես փայլփլող պողոտաներով: Մյուս մասը նման էր Ստամբուլի ամենաթշվառ հետնախորշերին: Թուրք կիպրոսցիները իրենց թերանկախ վիճակի համար հատուցեցին միջազգային էմբարգոյի հետևանքով, (որը պահպանում են բոլոր երկրները, բացի Թուրքիայից) կրած զրկանքներով ու աղքատությամբ:

❖❖❖

Հոլբրուքը տասնյակ հույն և թուրք կիպրոսցիների, տասնյակ հույների ու թուրքերի հրավիրեց «Տնտեսական համագործակցության մեջ փոխադարձ շահ է թաքնված» խորհրդաժողովին: 1997թ. նոյեմբերին Բրյուսելում կայացած Ժողովի ծախսերը հոգաց Նորվեգիայի կառավարությունը: Ես խնդրեցի Յան Իգելանդին, ով հայտնի է Օսլոյի համաձայնություններում ունեցած իր դերով, Հոլբրուքի հետ ղեկավարել ժողովը:

Բացման արարողության ժամանակ Հոլբրուքը բացատրեց. «Ժողովրդական դիվանագիտությունը բանակցություններից անկախ գործընթաց է: Ողջ իմաստն այն մարդկանց հավաքելն է, ովքեր կառավարությունների մեջ չեն, որպեսզի խոսեն միասին այն ամենի մասին, ինչը կարելի է իրականացնել անմիջական մարդկային շփումների հիմքի վրա: Այս գործընթացն ինքնին մարդկանց պառակտող արմատական տարաձայնությունները չի հարթում, լինեն դրանք ռազմավարական, քաղաքական թե պատմական: Բայց միմյանց հասկանալու կամուրջներ է կապում, որոնք ոչնչացնում են սահմանները»[1]:

Օգտակար էր կարկառուն դեմքերի ներկայությունը: Դիք Սփրինգը՝ Իռլանդիայի նախկին արտգործնախարարը, բնութագրեց Իռլանդիայի փորձը և ընդգծեց ազգամիջյան համագործակցության օգուտները փոքր կղզու տնտեսության համար: Դեյվիդ Հենեյը ՝ Կիպրոսում Միացյալ Թագավորության միջնորդը, բնութագրեց համագործակցության երեք կարգ՝ գործողություններ, որոնք գործարար շրջանները կարող են ինքնուրույն ձեռնարկել, քայլեր, որոնք գործարար շրջանները կարող են իրականացնել կառավարության հետ համագործակցությամբ և խնդիրներ, որոնք միայն կառավարությունները կարող են լուծել: Կիպրոսի հարցի լուծման ռազմավարությունը հենված էր այն համոզմունքի վրա, որ Թուրքիան, որի Եվրամիություն մտնելու հեռանկարները կարդարանան Կիպրոսի հարցի լուծումից հետո, կարող է ստիպել Ռոֆ Դենքթաշին փոխզիջման գնալ: Հնչեցնելով այս ուղերձը՝ Եվրամիության հանձնակատար Հանս վան դեն Բրոքն իր գաղափարները ներկայացրեց Եվրամիության հետ Թուրքիայի հարաբերությունների մասին:

Կիպրոս իմ ավելի վաղ փաստահավաք ուղևորության ընթացքում մասնակցեցի ՄԱԿ-ի գրասենյակում տեղի ունեցած ճեպազրույցին և մի հին հեռախոսահանգույց տեսա սենյակներից մեկում: Հեռախոսահանգույցի օպերատորը տեղադրում էր հեռախոսալարերը, որպեսզի միացնի զանգահարողներին: Իմ հարցերին ի պատասխան նա բացատրեց, որ հեռախո-

սահանգույցը օգտվում է հեռախոսի հին մալուխից հյուսիսի և հարավի միջև շտապ օգնության զանգեր կատարելու համար: Ես հասկացա, որ եթե մի քանի զանգեր կարող են կատարվել, ուրեմն համակարգը հզորացնելու դեպքում շատ ավելի զանգեր կարելի է ապահովել:

Հոլբրուքն անմիջապես օգտվեց մարդկանց խոսեցնելու հնարավորությունից: Ինժեներները բացահայտեցին, որ գործող մալուխը զարգացնելու և համակարգը թվայնացնելու դեպքում ամեն տարի մեկ միլիոնից ավելի զանգեր կարող են կատարվել: Մենք նախապատրաստական աշխատանքներ կատարեցինք, և Բրուսելի Ժողովում հայտարարվեց հեռախոսահանգույցի վերագործարկման մասին: Երբ 1998թ. մայիսի 5-ին համակարգը հանդիսավոր կերպով բացվեց, այն խեղդվեց զանգերի հեղեղից: Ըստ երևույթին կիպրոսցիներն այսքան տարի անց կարոտ էին միմյանց հետ զրուցելու: Մի փոքր կղզում, որտեղ համայնքների միջև կապն անհնար էր, զանգահարելու հնարավորությունը շատ նշանակալի իրողություն էր:

Ըստ Հոլբրուքի՝ «քննարկումները լարված էին, շահագրգիռ և երբեմն նույնիսկ շիկացած: Սենյակում արգասաբեր ոգի կար, ոգևորող մթնոլորտ»: Ժողովի մասնակիցները համաձայնության եկան ինստիտուցիոնալացնել իրենց աշխատանքը՝ հաստատելով «կապի և համագործակցության կարևորությունը երկու համայնքների միջև: Ավելին, սա ընդգրկում է ազատ շունչ քաշելու և ի վերջո մարդկանց ազատ տեղաշարժի, ապրանքի ու սպասարկումների ազատ տեղափոխման բոլոր սահմանափակումներից ձերբազատելու քայլեր և ընդլայնում է հաղորդակցությունը՝ շեշտը դնելով հատուկ նախագծերի վրա՝ ի շահ Կիպրոսի բոլոր մարդկանց»[2]:

Նրանք ծրագրեցին գրասենյակներ հիմնել Լեդրա պալատում: Որոշեցին նաև իրականացնել հատուկ նախագծեր, ներառյալ հեռախոսային տեղեկատուն ամբողջ կղզու համար դարձնելու և միջկղզային լրատվական ծառայություն ստեղծելու ծրագրերը: Առաջարկվեցին տասնյակ այլ միջհամայնքային ձեռնարկումներ: Ժողովրդական դիվանագիտության գործունեության ծավալումը նոր հնարավորությունների հույս արթնացրեց: Հետևելով հասարակության հանուն առաջընթացի կոչերին՝ Հոլբրուքը Կլերիդեսին և Դենքթաշին հրավիրեց հայտնի հանդիսավոր ճաշկերույթին՝ կազմակերպելով այդպիսով երկար տարիների ընթացքում նրանց առաջին դեմառդեմ հանդիպումը:

Հույսը կարճ տևեց: Բրուսելի խորհրդաժողովում առած թափը անակն-

կալ կոտրվեց Լյուքսեմբուրգում 1994թ. դեկտեմբերին կայացած ԵՄ-ի գագաթնաժողովից հետո: Թուրքիան ոչ միայն դուրս մնաց ԵՄ ապագա անդամների թե՛ առաջին, թե՛ երկրորդ հերթափոխից, այլև նրան չվերաբերվեցին նույնիսկ որպես թեկնածուի: Լյուքսեմբուրգի վարչապետ Ժան-Կլոդ Ձանքերն էլ ավելի բարդացրեց իրավիճակը՝ հայտարարելով. «Այն երկիրը, որտեղ կտտանքը դեռ սովորական գործելակերպ է, նստելու տեղ չի կարող ունենալ Եվրամիության սեղանի շուրջը»[3]:

Թուրքերը խորապես վիրավորված էին: Դենքթաշն արգելեց բոլոր միջհամայնքային կապերը և նույնիսկ փորձեց արգելել քաղաքացիական հասարակության՝ կղզուց դուրս գործող խմբերի հանդիպումները: Դենքթաշի հրահրած և շարունակական տնտեսական արգելքներից դժգոհ թուրք կիպրոսցիները կասկածի տակ դրեցին տնտեսական համագործակցության քննարկումների կենսունակությունը: Իրավիճակն էլ ավելի սրվեց, երբ Կիպրոսի Հանրապետությանը չհաջողվեց Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության ներկայացուցիչներին ընդգրկել Կիպրոսի պաշտոնական պատվիրակության մեջ, որը բանակցում էր Եվրամիություն մտնելու համար:

Թուրք կիպրոսցիները սկզբում հրաժարվեցին ներկայանալ, երբ նրանց հրավիրեցինք Օսլո՝ հաջորդ հանդիպմանը: Դիմակայելով Դենքթաշի ճնշումներին՝ մեկն ի վերջո ճեղքեց շարքերը, և մյուսները հետևեցին նրա օրինակին: Սարիկ Թարան՝ թուրքական մի մեծ շինարարական ընկերության տերը, օգնեց պատվիրակության անդամներին միավորվելու և իր անձնական ինքնաթիռով թռչելու Օսլո:

Էլայ Ուեյզելը՝ Նոբելյան մրցանակակիրը և Հոլոքոստը վերապրածներից մեկը, բացեց Օսլոյի խորհրդաժողովը: Նա հիշեցրեց կիպրոսցիներին, որ նրանք միակ տանջված ժողովուրդը չեն: Նա հորդորեց նրանց մի կողմ դնել փոքր տարբերություններից ծագող եսակենտրոնությունը և գնալ դեպի հաշտեցում: Մասնակիցները ոգեշնչվեցին և վերահաստատեցին համագործակցելու իրենց կամքը:

Շատ նախագծեր քննարկվեցին: Մասնակիցները համաձայնեցին վերականգնել Ապոստոլոս Անդրեասի պատմական հուշարձանները՝ արևելյան ուղղափառ վանքը թուրքական կողմում և Հալա Սուլթանը՝ թուրքական հուշարձանը հարավում: Այլ համատեղ գործողություններ իրականացվեցին հեռահաղորդակցության, բնապահպանության, մշակութային և մարզական բնագավառներում: Մի հետաքրքիր ստեղծագործական նախաձեռնություն վերաբերում էր կարետա ծովային կրիային (*Caretta caretta*)՝ մի վտանգված տեսակի, որն իր բազմացման շրջանում լողում է կղզու շուրջը:

Ծովային կենսաբաններին հետազոտական շրջագայություններ առաջարկվեցին: Եթե կրիաները կարող են ճանապարհորդել կղզով մեկ, ապա զբոսաշրջիկները նույնպես կարող են:

Ստամբուլում տեղի ունեցած հաջորդ հանդիպման քննարկումները վերաբերում էին համագործակցության քայլերին՝ լուծելու Կիպրոսում ջրի խիստ պակասը: Օսլոյում դրությունը մեկ անգամ արդեն փրկած Թարան հայտարարեց, որ իր շինարարական և ինժեներական ֆիրման կձեռնարկի «խաղաղության ջրագծի» կառուցումը Անթալիայի Մանավգատ գետից դեպի Հյուսիսային Կիպրոս[4]: 1999թ. սկզբին Կիպրոսի Հանրապետությունը Ջրային պաշարների գրասենյակից խումբ ուղղարկեց՝ հանդիպելու Միացյալ Նահանգների Երկրաբանական ծառայության հյուսիսի ջրային ինժեներների հետ: Կլերիդիսը մտահոգված էր, որ փորձի փոխանակումը հմտորեն կշահարկվի Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության ճանաչումը խթանելու համար և գրեթե վերջին վայրկյանին չեղյալ հայտարարեց հանդիպումը: Երբ մասնակիցները վերջապես ժամանեցին, ինձ զարմացրեց նրանց դրական վերաբերմունքը միմյանց նկատմամբ: Լինելով չեզոք գոտում և միջազգային մասնագետների շրջապատում՝ հարավի և հյուսիսի տեխնիկական մասնագետները հաղթահարեցին քաղաքական, մշակութային և լեզվական խոչընդոտները՝ հօգուտ համակղզային ջրային նախագծերի վերաբերյալ անկախ քննարկումներ վարելու: Ես օգնեցի Ջրային պաշարների տվյալների շտեմարանի բարելավման նախագծին աջակցելու նպատակով մեկ միլիոն դոլարի նվիրատվություն հայթհայթելու գործին: Ընդհանուր առմամբ ավելի քան հիսուն միջհամայնքային նախագծեր մշակվեցին: Շարունակականությունը և տեղական նախաձեռնությունը աշխուժացնելու համար մշտական նորվեգացի ներկայացուցիչ նշանակվեց, որն աշխատելու էր Կիպրոսի երկհամայնքային ծրագրերի իրականեցման ուղղությամբ:

Ակնհայտ էր, որ Կիպրոսի հակամարտության լուծումն ազդակ կպահանջի Հունաստանի և Թուրքիայի կողմից: Եվրամիությանն անդամկցելու հեռանկարը այն մագնիսն էր, որը միացնում էր հունական և թուրքական համատեղ շահերը ապագայում և հընթացս համագործակցություն ապահովում Կիպրոսի հարցում: Միջնորդները փորձեցին համոզել Հունաստանին, որ նա պետք է հետ վերցնի իր առարկությունները Եվրամիությանը Թուրքիայի անդամագրվելու կապակցությամբ: Նրանք փաստարկում էին,

որ եթե Թուրքիան բավարարի Եվրամիության չափանիշները, ավելի լավ հարևան, ուժեղ տնտեսական գործընկեր և էականորեն նվազ վտանգ կդառնա:

Ես սևեռվեցի հույն-թուրքական հարաբերությունների վրա՝ օգնելով հույներին և թուրքերին, որոնց միջև ես ստեղծել եմ հարաբերություններ Կիպրոսում մեր ժողովրդական դիվանագիտության հանդիպումների ընթացքում: Մենք որոշեցինք վերականգնել Հույն-թուրքական Գործարար խորհուրդը, ստեղծել հույն-թուրքական լրատվական խումբ և կազմակերպել հույն և թուրք գիտնականների, հատկապես՝ պատմաբանների համատեղ նախագծեր: Ստամբուլի Սաբանչիի համալսարանը ստեղծեց առևտրային, կրթական, մշակութային և զբոսաշրջության համատեղ աշխատող խմբեր, որոնք հիմք էին դառնալու հույների և թուրքերի երկկողմ համաձայնությունների համար:

1999թ. փետրվարին ես ժամանեցի Աթենք հույն գործարար ղեկավարների հետ մի շարք հանդիպումներ իրականացնելու համար: Թոմ Միլլերը, ով հետագայում դառնալու էր Ամերիկայի դեսպանը Հունաստանում, կազմակերպեց հանդիպումների շարք երկրի առաջատար արտադրողների և արտահանողների միջև: Խիտ խցանումներ էին, որ սկիզբ էին առնում օդանավակայանի ճանապարհից: Իմ վարորդը բացատրեց, որ քրդերը ցույց, ոմանք անգամ ինքնահրկիզում են անում: Նրանք բողոքում էին Աբդուլլաի Օջալանի՝ ՔԱԿ-ի ղեկավարի ձերբակալման դեմ:

Օջալանը գլխավորում էր Թուրքիայի «ամենավտանգավոր անձանց» ցուցակը: Ողջ աշխարհով հետապնդվելուց հետո նա ձերբակալվեց և նետվեց Դարդանելին մերձակա մի ամայի կղզում գտնվող Իմրալի բանտը: Սիրիայից արտաքսվելուց հետո ավելի քան մեկ ամիս փախուստի մեջ գտնվելու ընթացքում Օջալանի յուրաքանչյուր քայլին հետևում էին՝ սկսած Նիդեռլանդներից մինչև Ռուսաստան և ապա Հռոմի մի առանձնատունը: Նա վերջապես Նայրոբիում հասավ հունական դեսպանատուն: Ամերիկյան և իսրայելական հետախուզությունները նկարահանում էին նրա բոլոր քայլերը և տեղյակ պահում թուրք պաշտոնյաներին: Իլտեր Թուրքմենը, ով 1980-1983թթ. եղել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար, ասաց ինձ. «ԱՄՆ-ն Օջալանին ուղարկեց մեզ, ինչպես պիցա է ուղարկում, և հետո պահանջեց հատուցել դրա համար»[5]:

Օջալանի ձերբակալումը համազգային տոնախմբություն առաջ բերեց Թուրքիայում: Թեպետ Թուրքիայի քրդերը անտանելի տանջանքներ էին կրում, ՔԱԿ-ը բնավ ազդեցիկ չէր Թուրքիայի քրդերի քաղաքական և մշակութային իրավունքների համար օրինական ձգտումների իրականացման

հարցում: Հազարավոր քրդական գյուղեր ավերվեցին ՔԱԿ-ին պաշտպանելու համար: Օջալանի մարտիկների թիրախը զինված ուժերն էին, ոստիկանությունը և գյուղերում կարգի պահապանները, ինչպես նաև այն քուրդ քաղաքացիները, ովքեր համագործակցում էին թուրքական իշխանությունների հետ:

Թուրքերը զայրացան, երբ իմացան, որ Հունաստանը պաշտպանում էր Օջալանին: Նրանց զայրույթը սաստկացավ այն զեկույցներից, որ հույները ֆինանսական և ռազմական աջակցություն են ցուցաբերում ՔԱԿ-ին: Թուրքիան մեղադրեց Հունաստանին ահաբեկչությունը պետականորեն հովանավորելու մեջ. հույն պաշտոնյաները պատասխանեցին մեղադրանքները, որ հենց Թուրքիայի լավ քողարկված դիկտատուրան է հրահրել քրդական խնդիրը: Խոսքակռիվը ի չիք դարձրեց հույն-թուրքական հարաբերությունների կարգավորման միտումը: Հունաստանը և Թուրքիան համաձայնել էին միասնական ենթատարածքային զորամասեր ստեղծել ՆԱՏՕ-ի ներքո: Նրանք նաև համաձայնել էին համատեղ ղեկավարել օպերատիվ խմբի տեղաբախշումը Բալկաններում խաղաղապահ գործողություններ իրականացնելու համար: Սակայն Օջալանի ձախողումը հույն-թուրքական հարաբերությունները տեղապտույտի մեջ գցեց: Պաշտոնական կապը խզվեց:

Քաղաքացիական հասարակության ջանքերը նույնպես խափանվեցին. Ռահիմի Կոչը հրաժարվեց Հույն-թուրքական բիզնես խորհրդի ղեկավարի պաշտոնից, բայց Թարան հերոսաբար շարունակեց երկխոսությունը: Ալեքսիս Պապահելասը և Մեհմեդ Ալի Բիրանդը, ովքեր աշխատեցին ինձ հետ հույն և թուրք լրագրողների խմբեր կազմակերպելիս, շարունակեցին հանդիպել: Այդպես վարվեցին նաև Ստամբուլի Սաբանչիի համալսարանի և Աթենքի Պանթեոն համալսարանի ակադեմիկոսները: Համագործակցության շնորհիվ քաղաքացիական հասարակության այս ցանցերը գործեցին որպես անվտանգության ցանց: Նրանք պահպանեցին երկխոսությունը, երբ երկու երկրների պաշտոնյաները հրաժարվեցին դրանից: Աթենքի և Անկարայի ամերիկյան դեսպանատներից ստացված ֆինանսական աջակցությունը անգնահատելի էր: Անգնահատելի էր նաև դոկ. Հելենա Քեյն Ֆինի՝ Անկարայում ԱՄՆ-ի դեսպանատան հասարակական գործերի խորհրդատուի լավատեսությունը: Հելենան դարձավ ժողովրդական դիվանագիտության գլխավոր հերոսը և մեծ դեր խաղաց *Թուրքիայի և Կովկասի ժողովրդական դիվանագիտության ծրագրի* պաշտպանության գործում:

ՆԱՏՕ-ի պատերազմը Հարավսլավիայի հետ դանդաղեցրեց հույն-թուրքական հարաբերությունների վատթարացման շրջանը, քանի որ Հունաստանը և Թուրքիան ընդհանուր շահ ունեին Կոսովոյում ռազմական

գործողություններին դիմադրելու հարցում: Ի համերաշխություն իրենց քրիստոնեա ուղղափառ եղբայրների՝ հույները սերբերի կողմն անցան և ընդդիմացան պատերազմին: Վախենալով, որ աջակցությունը էթնիկ ալբանացի անջատողականներին կարող է Թուրքիայում քրդերի համար նախադեպ դառնալ՝ Անկարան նույնպիսի դժկամություն ցուցաբերեց ռազմական գործողություններին հավանություն տալու հարցում: ՆԱՏՕ-ի շնորհիվ Կոսովոյի հակամարտությունը անհրաժեշտություն դարձրեց հունական և թուրքական բանակների ամենօրյա համագործակցությունը՝ մթերքների ու համալրման մատակարարման, ինչպես նաև Մակեդոնիայի սահմանում և Ալբանիայում Կոսովոյի շուրջ մեկ միլիոն փախստականների մարդասիրական օգնության համակարգման գործում: Հունաստանի արտաքին գործերի նախարար Ջորջ Պապանդրեուն Հյուսիսատլանտյան խորհրդի հանդիպման ժամանակ՝ 1999թ.ապրիլի 24-ին հանդիպեց իր թուրք գործընկերոջը՝ Իսմայիլ Չեմին: Մի քանի շաբաթ անց նրանք կրկին հանդիպեցին «Կոսովոյում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ընկերների» ձևաչափով:

Նրանց անձնական հարաբերությունների վրա հիմնվելով՝ Չեմը մայիսի 24-ին նամակ ուղարկեց Պապանդրեուին՝ առաջարկելով «միասնական ջանքերով պայքարել ահաբեկչության դեմ»: Հունիսի 30-ին երկու արտգործնախարարները քաղաքական ղեկավարներ նշանակեցին՝ քննարկումները սկսելու համար: Տարածաշրջանի ջրերի և Կիպրոսի վրա կենտրոնանալու փոխարեն՝ նրանք համաձայնեցին միասին աշխատել Բալկանների, Կովկասի և Միջին Ասիայի տարածաշրջանային խնդիրների շուրջ: Ամենադժվարին խնդիրները շրջանցելու պատճառով սպասումները միտումնավոր ցածր մակարդակի էին:

Երբ Թուրքիայում օգոստոսի 17-ին ավերիչ երկրաշարժ տեղի ունեցավ՝ խլելով ավելի քան 20,000 մարդու կյանք, հունական փրկարար կազմակերպություններն առաջիններից էին, որ օգնության հասան: Երբ երկրորդ ավելի թույլ երկրաշարժը եղավ Հունաստանում, երկուստեք կարեկցանքը նպաստեց երկու կառավարությունների հարաբերությունների բարելավմանը[6]: Պապանդրեուն ողջունեց «մարդկային համերաշխությունը ազգային ողբերգության ժամանակ: Մարդիկ համարձակվեցին մտածել այն մասին, ինչը մենք՝ քաղաքագետներս, կարծում էինք, որ անհնար է: Նրանք ավելի առաջ են անցել, քան մեր դիվանագիտական խուսանավումները: Մի կախարդական վայրկյանում նրանք դիվանագիտությունը կենտրոնացրին իրենց ձեռքում»[7]:

1999թ. վերջին Հունաստանը վերացրեց իր առարկությունները Թուրքիայի՝ Եվրամիության անդամի թեկնածու առաջադրվելիս: Երկկողմ հա-

մաձայնություններ ընդունվեցին առևտրի, սակագների, քրեական հանցանքների, ահաբեկչության, անօրինական իմիգրացիայի դեմ պայքարի, շրջակա միջավայրի պահպանման, զբոսաշրջության և մշակութային ու կրթական ոլորտներում: Բազմակողմանի համագործակցությունը տարածվեց Սև ծովի տնտեսական համագործակցության խորհրդի և Հարավարևելյան Եվրոպայի համագործակցության փորձի միջոցով:

Հույն-թուրքական մերձեցման հնարավորությունները հասունացան, և երկու երկրների քաղաքական ղեկավարներն արդեն նպատակային քայլեր ձեռնարկելու քաջություն ունեին: Գնդապետ Ստեֆան Նորտոնը (զորացրված ԱՄՆ բանակից) նշում է. «Հույները և թուրքերը ընտելացան այն պատկերացմանը, որ իրենք կարող են գոյություն ունենալ ոչ զրոյական արդյունքով աշխարհում: Ավելի ջերմ հարաբերություն, որ վերացնում է ազգայնամոլությունը և ծայրահեղականությունը և զարգացման հնարավորություն տալիս, որը օգտակար է երկու երկրների համար և անհերքելիորեն համապատասխանում է թե՛ Հունաստանի, թե՛ Թուրքիայի շահերին: Հույն- թուրքական հարաբերությունների ապագան պայմանավորված է այն ըմբռնումով, որ փոխկախվածությունը և գլոբալացումը գրավում են աշխարհը: Ազգային մեկուսացումը, հատկապես՝ հզոր, հարուստ և հարևան դաշնակիցների առկայության պարագայում, փակուղի է»[8]:

Չնայած զարգացմանը՝ դեռ գոյություն ունեն արմատական անհամաձայնություններ: Էգեյան վեճը շարունակում է ձախողել մերձեցումը: Հունաստանի ընդարձակումը մայրցամաքային շելֆի և տարածքային ջրերի հաշվին խորապես վրդովում է Անկարային: Պլանային զորավարժությունների արանքներում պատահում են նաև հազվադեպ բախումներ հույն և թուրք ուժերի միջև՝ ծովում և օդում Արևելյան Միջերկրականի համար[9]:

Ցավոտ կետ է մնում Կիպրոսը: 2002թ., մինչ Եվրոպական Միությունը մուտքի բանակցությունների կհրավիրեր Կիպրոսին, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանն անձամբ միջամտեց խնդիրը կարգավորելու համար: Անանի առաջարկը բախվեց Թուրքիայի՝ տարիների ընթացքում կուտակած առարկություններին, ներառյալ՝ ապակենտրոնացված դաշնության գոյության պահանջը, վետոյի իրավունքը և անվտանգության ապահովումը հազարավոր թուրք զինվորների կողմից: Սկզբում Թուրքիան հրաժարվեց Դենքթաշին ճնշելուց: Երբ նա մերժեց ՄԱԿ-ի առաջարկը, ԵՄ-ն էլ ավելի առաջ անցավ՝ 2002թ. դեկտեմբերին Կոպենհագենի գագաթնաժողովում առաջարկելով Կիպրոսի թեկնածությունը: Չնայած ՄԱԿ-ի ջանքերին՝ Անանի ծրագիրն ի վերջո անհաջողության մատնվեց, երբ հույն կիպրոսցիները մերժեցին այն 2004թ. ապրիլի 24-ի հանրաքվեի ժամանակ:

Թուրքերի փոքր, բայց ազդեցիկ մի խումբ հակասական վերաբերմունք ունի ԵՄ-ի նկատմամբ: Այդ ժամանակ գոյություն ուներ ԵՄ-ի թերահավատների մի խումբ, ըստ որի՝ Թուրքիայի շահերն այլ են: Նրանք անհանգստացած էին, որ կկորցնեն ինքնիշխանությունը և վստահ էին, որ ԵՄ-ն կստիպի Թուրքիային հրաժարվել իր դիրքերից Էգեյան ծովում: Նրանք պնդում էին, որ որքան էլ Թուրքիան փորձի բավարարել կոպենհագենյան չափանիշները, Եվրոպան ի վերջո կորոշի, որ չի ուզում 70 միլիոն մահմեդականների ընդգրկել քրիստոնեական հասարակության մեջ:

Ժողովրդական դիվանագիտությունը շարունակվում է: Օրինակ՝ հույն-թուրքական ֆորումը քննարկումներ է անցկացնում մայրցամաքային շելֆի, տարածքային ջրերի և օդային տարածքի սահմանագծման վերաբերյալ[10]: Արևմտյան քաղաքականության կենտրոնը խորհրդաժողովներ է կազմակերպում Արևելյան Միջերկրականի անվտանգության վերաբերյալ: Եվրոպական հանձնաժողովն աջակցում է լրագրողների ուսուցման և փոխանակման գործընթացներին, որոնք կազմակերպվում են «Հանուն ընդհանուր հենարանի» եվրոպական կենտրոնի կողմից: Հույն-թուրքական լրատվական երկխոսությունն աշխատում է Հունաստանի և Թուրքիայի ամենամեծ խմբերի մասնագետների հետ: Նա վարում է վերապատրաստման գործընթացներ լրագրական էթիկայի և հակամարտությունների կարգավորման վերաբերյալ: Ինչ վերաբերում է լրատվության բովանդակությանը, ապա կազմակերպում է հոդվածների փոխանակում և պատրաստում համատեղ ռադիոհաղորդումներ ու հեռուստատեսային փաստագրական ֆիլմեր:

1999թ. ես ղեկավարեցի Աթենքում և Անկարայում ամերիկյան դեսպանական աշխատակազմերի համար ժողովրդական դիվանագիտության ուսումնական ծրագրերի իրականացումը: Մի երիտասարդ մշակութաբան նախաձեռնեց ժողովրդական դիվանագիտության աշխատանքների ընթացքի արձանագրումը: Նրա գրառումները հետզհետե վերածվեցին տվյալների շտեմարանի, որն անփոխարինելի դարձավ համագործակցող քաղաքացիական հասարակության գործունեության վիրտուալ դիտարկման գործում:

Գրոսմանը ինձ հորդորեց չշարունակել մասնակցությունը հույն-թուրքական ժողովրդական դիվանագիտության գործունեությանը: Երկրաշարժերը մեծ ազդեցություն ունեցան մարդկանց միջև անմիջական և պաշտո-

նական կապերի վրա: Ամերիկայի միջամտությունը՝ թե՛ կառավարման աջակցությամբ, թե՛ նախագծերի ֆինանսավորմամբ, այլևս անհրաժեշտ չէր: Գրոսմանը զգաց, որ հույներն ու թուրքերը հասել են գործողությունների կրիտիկական զանգվածի և կարող են շարունակել առանց երրորդ կողմի աջակցության:

Արտաքին գործերի պաշտոնյայի համար Գրոսմանը ունակությունների հազվագյուտ համակցություն ունի: Նրա ակնդետ իրատեսությունը հավասարակշռվում է մարդու իրավունքներին նվիրվածությամբ: Գրոսմանը նաև հմուտ դիվանագետ է, ունակ է կառավարել վարչարարությունը և արդյունք ստանալ: Միաժամանակ նա լայնախոհ է և նոր մտահաղացումներ իրականացնելու կամք ունի:

Գրոսմանը հատկապես հետաքրքրված է հույն-թուրքական ակադեմիական կոնսորցիումով, որն աշխատում էր Օսմանյան կայսրության վերջին տարիների «ընդհանուր պատմության» վրա: Գիտնականներն ուսումնասիրում էին 1992թ. սեպտեմբերի «Զմյուռնիայի հրկիզումը»՝ հույների բնորոշմամբ կամ «Իզմիրի կրակը»՝ թուրքերի իմացությամբ: Հույների համար «Անատոլիական աղետը» ազդարարեց հունական պնդումների և նվիրական ձգտումների վախճանը: Թուրքերը այդ դեպքը համարում են Օսմանյան կայսրության փլուզումից հետո մոխիրներից Թուրքիայի ցավոտ ծնունդ: 1923թ. ապրիլի 23-ին Թուրքիայի Հանրապետությունը ձևավորվեց Մուստա ֆա Քեմալ Աթաթուրքի՝ բոլոր թուրքերի հոր շնորհիվ:

Ընդհանուր պատմության նախագիծը միացրեց բոլոր հույն և թուրք գիտնականներին՝ ուսումնասիրման նյութեր փոխանակելու, բանավոր պատմություններ արձանագրելու, դեպքերի զուգահեռ մեկնաբանություններ գրելու և, հնարավորության դեպքում, փաստաթղթեր համահեղինակելու գործում: Գործունեությունը սկսելու համար ես Սաբանչիի, Պանթեոնի, Էգեյան և Յանինա համալսարանների գիտնականներին հրավիրեցի «Հունաստանում և Թուրքիայում ազգային հիշողության վերականգման սեմինարի»:

Ընդհանուր պատմության մոտեցման հիմքում ընկած է այն համոզմունքը, որ ներկա հակամարտությունների արմատներն անցյալում են, և պատմական դեպքերի վերլուծությունը կարող է բարելավել հակամարտող համայնքների փոխըմբռնումը: Գրոսմանը ենթադրեց, որ ընդհանուր պատմության մեթոդը կարող է օգտագործվել անգամ ամենաանզիջում հակառակորդների՝ հայերի և թուրքերի միջև ժողովրդական դիվանագիտության երկխոսություն խթանելու նպատակով:

Հայերի և թուրքերի միջև ժողովրդական դիվանագիտության երկխո-

սության ամեն փուլի ընթացքում ես հենվում էի հույն-թուրքական և կիպրոսական ժողովրդական դիվանագիտության սեփական փորձիս վրա: Ականավոր թուրքերի հետ հարաբերություններն անգնահատելի էին: Անգնահատելի էին նաև ժողովրդական դիվանագիտության գործունեությունը զարգացնելու տեխնիկաներից քաղված բոլոր կարևոր դասերը: Իր դրական ազդեցությունը մեծացնելու համար ժողովրդական դիվանագիտությունը պետք է.

- փորձի ազդել քաղաքականության վրա՝ աշխատանքները պաշտոնյաների, այդ թվում՝ թե՛ կենտրոնական, թե՛ դաշտային մակարդակում գործող միջնորդների հետ համակարգման միջոցով,
- կարևորի հասարակական կարծիք ձևավորելու ջանքերը՝ քաղաքացիական հասարակության լայն հատվածների ներգրավման միջոցով,
- համապատասխանեցնի ռազմավարությունները, երբ արտաքին իրադարձություններն ազդում են գործողությունների համատեքստի վրա,
- նպաստի ծրագրի մասնակիցների միջև մարդկային հարաբերությունների հաստատմանը, ինչը կարևոր է անխուսափելիորեն առաջացող խնդիրները հարթելու գործում,
- տարբեր աղբյուրներից ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ապահովի,
- վարի աշխատանքների մանրամասն արձանագրություն:

Ծանոթագրություններ

1. Ռիչարդ Հոլբրուքի դիտողություններ, Բրյուսել, 1997թ., նոյեմբեր:
2. Խորհրդաժողովի նյութեր, Օսլո, 1998թ., 2 հուլիսի:
3. Լյուքսեմբուրգի նախագահ Յունքերի հայտարարությունը, 1998 թ., դեկտեմբեր:
4. Turkish Daily News, 1998թ.,4 դեկտեմբերի:

5. Հարցազրույց հեղինակի հետ, 2003թ., 6 օգոստոսի:
6. John Sitilides, “Greek-Turkish Relations: Assessing Opportunities,” Western Policy Center, March 30, 2000.
7. Ջոն Պապանդրեուի հայտարարությունը, Թաքսիմի կլոր սեղան, 1999թ., 3 հոկտեմբերի:
8. John Sitilides, “Greek-Turkish Relations: The Geopolitical Context,” Western Policy Center, November 6, 1999.
9. FBIS, Doc. ID # GMP 20010401000065.
10. Հայտարարություններ Հույն-թուրքական ֆորումից, Էգեյան խնդիրները. Բացահայտումներ և հնարավորություններ, 2000թ., հունիսի 23:

2

Առաջին կապի հաստատումը

Հայերի և թուրքերի պատմական տարաձայնությունները խճճված են հայերի և թուրքերի՝ Ադրբեջանում բնակվող Էթնիկ եղբայրների միջև վերջերս տեղի ունեցած կոնֆլիկտի հետևանքով: 1994թ. Ռուսաստանի միջնորդությամբ դժվարությամբ զինադադար կնքվեց եղբայրասպան պատերազմին վերջ տալու համար, սակայն վերջնական խաղաղության պայմանագիր չկնքվեց:

Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանի կատարած էթնիկական բռնությունները շատ ավելի դաժան ու արյունալի էին, քան որևէ այլ հետխորհրդային հանրապետությունում: Չնայած ազերի ազգայնականները սպառնում են տարածքը ուժով հետ վերցնել, Ղարաբաղի հայերը ռազմական մեծ գերազանցություն ունեն: Հայկական «Էս-300» հրթիռները կարող են հաշված րոպեների ընթացքում ոչնչացնել Բաքուն և վերացնել Ադրբեջանի էներգետիկ արդունաբերությունը: ԱՄՆ-ի ընկերությունները մեծ բաժին ունեն էներգետիկ միջազգային կոնսորցիումում: Մինչև 2007թ. ծրագրված է ավելի քան մեկ միլիոն բարել նավթ մղել Բաքվից Միջերկրականի ափին գտնվող թուրքական Ջեյհան նավահանգիստ:

Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետությունները միայն ընդհանուր տնտեսական շահեր չէ, որ ունեն. Անատոլիայի և ազերի թուրքերի կապերը խորը պատմական արմատներ ունեն: Ազերիներն այն երիտթուրքերի թվում էին, ովքեր Թուրքիայում 1908-1918թթ. գլխավորեցին ազգայնական շար-

ժումը: Չնայած Աթաթուրքը դեմ էր նվաճողականությանը, թրքությունը փառաբանող ծայրահեղ ազգայնական շարժումը տարածվեց Էգեյան ծովից մինչև Կենտրոնական Ասիա: «Թուրանականությունը» խոստանում էր թուրքերին միավորել պանթուրքական դաշնության մեջ: Սառը պատերազմի ընթացքում թուրք քաղաքագետները խոստանում էին փրկել երկաթե վարագույրի հետևում ստրկացած թուրքերին: Շահերը կենտրոնացան Ադրբեջանի շուրջ՝ նրա մոտիկության և նավթային պաշարների պատճառով: Խորհրդային Միության փլուզման հետևանքով Ադրբեջանի անկախանալուց հետո նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը հայտարարեց. «Մենք երկու պետություն ենք, բայց՝ մեկ ազգ»[1]:

Չնայած Թուրքիան Խորհրդային Միության փլուզումից հետո ճանաչեց Հայաստանի անկախությունը, դիվանագիտական հարաբերություններ այդպես էլ երբեք չհաստատվեցին: Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության ծավալմանը զուգընթաց Թուրքիան փակեց իր սահմանները Հայաստանի հետ և արտահայտեց իր համերաշխությունը Ադրբեջանին՝ տնտեսական շրջափակման մեջ դնելով Հայաստանը:

Հայաստանը կամենում է բարիդրացիական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ առանց նախապայմանների: Սակայն Անկարան հրաժարվում է դիվանագիտական կապեր հաստատել, քանի դեռ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը չի վերականգնվի: Թուրքիան նաև պահանջում է, որ Հայաստանը հրաժարվի հայերի ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելու իր ջանքերից՝ աշխարհի տարբեր խորհրդարանների կողմից այն ընդունող բանաձևերի ընդունումը խթանելով: Աշխարհասփյուռ հայկության հետ սերտ գործակցությամբ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը վերածեց արտաքին քաղաքականության կարևորագույն նպատակի:

Քոչարյանին վրդովեց ԵԱՀԿ 1999թ. գագաթնաժողովը Ստամբուլում անցկացնելու որոշումը: ԵԱՀԿ-ն ընդգրկում է հիսուներեք երկիր և գործում է փոխհամաձայնության սկզբունքով: Բայց երբ մեկ անդամ պետություն դեմ է լինում, ապա կարող է կիրառվել «կոնսենսուս մինուս մեկ» որոշման ընդունման դրույթը: Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը գիտեր, որ չի կարողանալու խոչընդոտել Ստամբուլի գագաթնաժողովը, սակայն առարկելու և Թուրքիայի վրա ճնշում գործադրելու հնարավորութ-

յուն տեսավ:

Շրջանցելով Միացյալ Նահանգներում Հայաստանի դեսպանին՝ Օսկանյանը խնդրեց Վան Գրիգորյանին քննարկումներ ձեռնարկել Պետդեպարտամենտի հետ: Վանը առաջատար դեմք է հայ-ամերիկյան համայնքում, ունի գիտակ իրավաբանի և հմուտ բանակցողի համբավ: Հայոց արքեպիսկոպոսը ժամանակին Վանին ինձ ներկայացրեց որպես «լավ հայ»: Երբ հարցրեցի նրան, թե ինչ նկատի ունի, նա բացատրեց. «Վանի կյանքն անցել է հայ ժողովրդի համար արդարության ջանքերով»[2]:

Դեռ Ջորջթաունի համալսարանի ուսանող եղած ժամանակ Վան Գրիգորյանը «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի (FOIA) համաձայն հայց ներկայացրեց Պետդեպարտամենտի՝ հայկական ահաբեկչությանը վերաբերվող հոդվածի նյութերի կապակցությամբ: 1982թ. հրատարակված հոդվածը պարունակում էր մի նշում, որում ասվում էր, թե քանի որ պատմական փաստերը «միանշանակ չեն», Պետդեպարտամենտը չի «հաստատել այն մեղադրանքները, թե Թուրքիայի կառավարությունը ցեղասպանություն է իրականացրել հայ ժողովրդի նկատմամբ»: Այդ միտքը հակասում էր նախագահ Ռոնալդ Ռեյգանի 1981թ. գործադիր իշխանության Հայոց ցեղասպանությունն ընդունող հրամանին: 1986թ. Վանը դատի տվեց Պետդեպարտամենտին՝ պնդելով, որ նա «չար դիտավորություն» է ցուցաբերել՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները լիովին չկատարելով: Յոթ տարի անց Կոլումբիայի շրջանի ԱՄՆ վերաքննիչ դատարանը որոշում ընդունեց նրա օգտին՝ հաստատելով, որ Պետդեպարտամենտն իրոք չի ներկայացրել հուշագրին վերաբերող բոլոր փաստաթղթերը[3]:

Հաջողության հասնելով ԱՄՆ-ի կառավարության հետ վեճում՝ Վանը դարձավ հայ-ամերիկյան հասարակության աստղը: Դեռ պատանի՝ Վանը Դաշնակցության տեղի պատանեկան կազմակերպության հիմնադիրն ու նախագահն էր: Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ Դաշնակցություն կուսակցությունը, ընդգրկում է ամենաարմատական, ռազմաշունչ և ծայրահեղ ազգայնական հայերին: Ամերիկայի հայկական համագումարում կամավորական աշխատանքից հետո Վանը միացավ դրա անձնակազմին, դարձավ վարչության անդամ, իսկ 1998թ. ընտրվեց վարչության նախագահ: Տարիների ընթացքում Վանն իր ներդրումն է ունեցել Հայաստանին վերաբերող օրենսդրության ամեն հատվածում: Իր իսկ խոստովանությամբ, Վանը «Կապիտոլյան բլրում ձայներ հաշվելիս բավական լավ փորձ է» ձեռք բերել[4]:

Եվրոպական հարցերով պետքարտուղարի տեղակալի պաշտոնում,

Մարկ Գրոսմանի պատասխանատվության տակ էր նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության գործունեության, ինչպես նաև գագաթնաժողովի խնդիրները: Երբ Վանն այցելեց Պետդեպարտամենտ Ստամբուլում կայանալիք հանդիպման ծրագրերը քննարկելու համար, հանդիպեց Գրոսմանին: Վանը գիտեր, որ թեպետ կարող է խնդիրներ հարուցել, սակայն գագաթաժողովը ձախողելու փորձերն ի վերջո անհաջողությամբ կավարտվեն: Գրոսմանը առաջարկեց նրան այլ կերպ գործել: Գագաթնաժողովը խափանելու փոխարեն նա առաջարկեց Վանին առանձին երկխոսություն սկսել թուրքերի հետ: Պետդեպարտամենտը նորնոր էր ինձ խորհրդատու նշանակել: Գրոսմանը խոստացել էր Վանին ծանոթացնել Դեպարտամենտի՝ հակամատությունների լուծման նոր մասնագետի՝ «ընդհանուր պատմության մարդու» հետ:

Մի քանի շաբաթ անց Գրոսմանը Նյու Յորքում էր, և մենք որոշեցինք հանդիպել Վանի իրավաբանական գրասենյակի մոտ գտնվող սրճարանում: Գրոսմանը հիշեց իր առաջին հանդիպումը Վանի հետ: 1992թ. Վան Գրիգորյանն ու Հրայր Հովնանյանը՝ շինարարական հայ մագնատը Նյու Ջերսիից, Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի խնդրանքով մեկնեցին Թուրքիա, որպեսզի ուսումնասիրեն գործարար ձեռնարկի հնարավորությունը Սև ծովի ափին գտնվող թուրքական Տրապիզոն նավահանգստում: Արտգործնախարարի հետ քննարկման ժամանակ հայերը հույս հայտնեցին, որ հայերի և թուրքերի միջև առևտրային կապը կօգնի բարելավելու երկու պետությունների հարաբերությունները: Որպես բարյացակամ ժեստ՝ արտգործնախարարը ասաց Վանին և Հովնանյանին, որ Թուրքիայից Հայաստան սահմանը հատելու հատուկ պայմաններ կձեռնարկվեն նրանց համար: Բայց երբ նրանք հասան կամրջին, թուրքական սահմանապահ ուղեկալը արգելափակեց ճանապարհորդներին: Սահմանապահն ասաց Վանին. «Մեզ տեղեկացրել են, որ դուք թուրքական պետության թիվ մեկ թշնամին եք»[5]: Վանն իրենց տհաճ դրության մասին հաղորդագրություն ուղարկեց Անկարայում Ամերիկյան դեսպանատանը, որտեղ փոխդեսպանը Գրոսմանն էր: Վերջինս օգնեց նրանց ազատմանը, և Վանը խորապես երախտապարտ էր:

Գրոսմանը և ես հանդիպեցինք Վանին նրա նրբաճաշակ ապակե և քրոմասալիկապատ գրասենյակում: Ես նկարագրեցի ընդհանուր պատմության մոտեցումը և քննարկեցի հույն-թուրքական ժողովրդական դիվանագիտության գործողությունները: Վանն անհողդողդ էր՝ պնդելով, որ գոյություն ունի պատմության մեկ տարբերակ, և Հայոց ցեղասպանությունն անվիճելի փաստ է: Նա մեզ զգուշացրեց, որ յուրաքանչյուր խեղաթյուրում

իրավիճակն ավելի կբարդացնի: Մտածեցի, որ սա դատարկ սպառնալիք է, սակայն շուտով տեղեկացա հայ-ամերիկյան հասարակության մեջ առկա խոր տարաձայնությունների և առանձին հայերի ահաբեկչական մարտավարության մասին: Անզիջում հայերը դեմ են թուրքերի հետ որևէ կապ հաստատելուն, քանի դեռ Թուրքիան չի ճանաչի ցեղասպանությունը, չի վճարի փոխհատուցումները և չի վերադարձնի «Արևմտյան Հայաստանի» տարածքները:

1970-1980-ականներին հայ ահաբեկիչները բջիջներ կազմակերպեցին, այդ թվում՝ Հայաստանի ազատագրման հայկական գաղտնի բանակը (ԱՍԱԼԱ) և սպանեցին երեսունչորս թուրք դիվանագետի: Մեհմետ Բայդարը՝ Թուրքիայի գլխավոր հյուպատոսը Սան Ֆրանցիսկոյում, առաջին զոհն էր: Նա ճաշի հրավիրվեց մի ամերիկահայի կողմից, և նոր էր նստել սեղանի շուրջը, երբ սառնասրտորեն սպանվեց: Թուրքիայի արտաքին գործերի ակնառու դեմքերը, ներառյալ Ֆրանսիայում, Ավստրիայում, Հարավսլավիայում և Վատիկանում Թուրքիայի դեսպանները, նույնպես սպանվեցին: ԱՍԱԼԱ-ն կարծում էր, որ նման մարտավարությունը հանրության ուշադրությունը կսևեռի ցեղասպանության ճանաչման հարցի վրա: Սակայն դա միայն կատաղեցրեց թուրք պաշտոնյաներին և վատթարացրեց հասարակական կարծիքը Թուրքիայում:

Վանի «կարմիր թելերը» լսելուց հետո մենք համաձայնեցինք թուրքերի և հայերի հանդիպում կազմակերպել: Վանը կազմակերպեց իմ հարցազրույցը Ռոբերտ Գալուստյանի հետ, ով Հայ ազգային ինստիտուտի նախագահն էր. վերջինս առաջարկեց իր օգնությունը հայերի մասնակցության հարցում: Ո՛չ Վանը, ո՛չ էլ Գալուստյանը մեծ հետաքրքրություն չցուցաբերեցին թուրքերի և հայերի միջև բարեկամությունը զարգացնելու գաղափարի հանդեպ: Նրանց համար հաշտեցումը զրոյական արդյունքով մի խաղ էր, ինչը կարող էր ձեռք բերվել միմիայն Անկարայի կողմից ցեղասպանության ճանաչման պարագայում:

Ես զարմացած չէի նրանց կոշտ դիրքորոշումից: Կողմերը երկխոսության սկզբում միշտ էլ առավելապաշտական դիրքեր են ընդունում: Ես նույնն էի ակնկալում թուրքերի կողմից և սկսեցի հարմար թուրք գործընկեր փնտրել: Ինձ ներկայացրեցին Թուրքական պատմության հիմնադրամը: Դրա ղեկավարը մի տարեց ձախական՝ Օրհան Զիլիերն էր: Մեր առաջին հանդիպումը գալիք դժվարությունների ահազանգն էր:

Չիլիերը և նրա կինը ժամանում էին Նյու Յորք, և ես հրավիրեցի նրանց իմ տուն կոկտեյլի: Խիստ ցուրտ երեկո էր, և նրանք, չկարողանալով տաքսի գտնել, երկար քայլել էին Կենտրոնական այգու միջով: Երբ Չիլիերի կինը հանեց իր վերարկուն, ծխախոտ վառեց: Հնարավորինս քաղաքավարի ասացի, որ իմ բնակարանում չեն ծխում: Նա անչափ նյարդայնացավ և հագավ վերարկուն, որպեսզի ձյունոտ գիշերը դրսում ծխի: Վերադառնալով նա թշնամական և ագրեսիվ էր տրամադրված:

Ինչպես և Վանը, Չիլիերը նույնպես իր «կարմիր թելերն» ուներ: Մենք բազմաթիվ էլեկտրոնային նամակներ ուղարկեցինք միմյանց՝ պայմանավորվելով «XX դարասկզբում հայ և թուրք ազգային ինքնության կերտման մասին սեմինարի» նախապատրաստման կապակցությամբ: Երկար տալառնելուց հետո ավարտեցինք Թուրքիայում և Հայաստանում գիտական աշխատանքների օրակարգի մշակումը: Սեմինարը նաև կգնահատեր հետազոտական նյութերի առկայությունը, այդ թվում՝ թուրքական, հայկական և միջազգային արխիվները: Սակայն համաձայնության չեկանք «ազգային ինքնության» սահմանման շուրջ: Նա կարծում էր, որ սեմինարը պիտի վերաբերի միայն հայերին՝ Օսմանյան կայսրության և մեր ժամանակներում: Քանի որ հայերի մեծ մասն ապրում է սփյուռքում, ես պնդեցի, որ հարկ է նրանց նույնպես ընդգրկել:

Թեև Չիլիերը ի վերջո համաձայնեց՝ մենք կրկին փակուղու առաջ կանգնեցինք, երբ պետք է ընտրեինք սեմինարի մասնակիցներին: Նա առաջարկեց թուրք գիտնականների մի խումբ, որն ընդգրկում էր նաև որոշ ազգայնամոլ պատմաբանների: Սակայն նա կտրուկ դեմ եղավ դոկտոր Ռուբեն Ադալյանի՝ Հայ ազգային ինստիտուտի տնօրենի մասնակցությանը: Ադալյանը շատ հրատարակությունների հեղինակ և խմբագիր է, ներառյալ «Ցեղասպանության հանրագիտարանը», «Հայոց ցեղասպանության աղբյուրների ուղեցույցը ԱՄՆ-ի արխիվներում (1915-18թթ.)»: Հարգելով Ադալյանի մասին Չիլիերի մտահոգությունը՝ կարծում էի, որ Ադալյանի մասնակցությունը կարևոր է: Ես պատրաստ էի լսելու ցանկացած և յուրաքանչյուր կարծիք, սակայն ինձ էի վերապահում այն որոշումների կայացման իրավունքը, որոնք իմ կարծիքով շահեկան էին նախագծի համար:

Վերհիշելով Գալուստյանի անսասան դիրքը՝ այլընտրանք չունեի Ադալյանի մասնակցությունը պնդելուն: Գիտակցում էի, որ նրան դուրս թողնելով՝ ողջ գործընթացը կկազմալուծվի: Մտահոգված էի իմ հաջողություններիի շարքը ձախողելու և Գրոսմանի վստահությունը կորցնելու համար: Չիլիերի հետ գործ ունենալով՝ հասկացա, որ Թուրքական պատմության հիմնադրամը չափազանց կաշկանդված է և երբեք չի կարող պատշաճ գործըն-

կեր լինել կառուցողական և արդյունավետ ժողովրդական դիվանագիտության ծրագրում: Ես ներողություն խնդրեցի նեղություն պատճառելու համար և տեղեկացրի Զիլիերին, որ հետագա հանդիպումների ծրագրերը հանում եմ:

Երեք կարևոր դաս առա Պատմության հիմնադրամի հետ քննարկումներից: Առաջին՝ շատ կարևոր է ժողովրդական դիվանագիտության նախաձեռնության հատկապես զգայուն նախերգանքում պահպանել որոշումների հանդեպ հսկողությունը: Երկրորդ՝ առաջին հանդիպումները պետք է անցկացվեն չեզոք վայրում: Երրորդ՝ շատ ավելի հեշտ է տարբերությունները հաղթահարելը, երբ հաստատությունների միջև շփումների և գործնական հարաբերությունների նախադեպ կա: Իմ անհաջողությունը նաև որպես հիշեցում էր ծառայում, որ պետք է հաստատակամություն ցուցաբերել:

Այդ անհաջողությունն ինձ էլ ավելի վճռական դարձրեց թուրքերին և հայերին մերձեցնելու խնդրում: Հելենա Ֆինն ինձ խորհուրդ տվեց դիմել Սաբանչի համալսարանին: Սաբանչիին ներառելու իմ փորձը շատ անպատեհ էր: Սաբանչիների ընտանիքում այդ ժամանակ դժբախտ պատահար էր տեղի ունեցել: Սաքիփ Սաբանչին Հարավարևելյան Թուրքիայում քրդերի բռնադատաման և բռնությունների ալիքի դեմ էր արտահայտվել: Մի զինյալ ներս էր մտել Սաքիփի կրստեր եղբոր գրասենյակ և սպանել նրան: Սաբանչի համալսարանը մասնավոր է, որին ֆինանսապես աջակցում է Սաբանչիների ընտանիքը: Ահմետ Էվինի՝ սոցիալական գիտությունների ֆակուլտետի դեկանի գլուխը խառն էր, հենց նոր նոր ամբիոն էր բացել և ղեկավարում էր հույն-թուրքական աշխատանքային խմբերի գործունեությունը: Սկզբում նա հրաժարվեց մասնակցելուց: Հելենա Ֆինը դիմեց Ահմետին, և ես մեկնեցի Ստամբուլ, որպեսզի նրան համոզեմ:

«Հայ և թուրք գիտնականների ու քաղաքական հասարակության ներկայացուցիչների համատեղ քննարկումը» վերջապես գումարվեց Վիեննայի դիվանագիտական ակադեմիայում 2000թ. հունիսի 10-ին: Էվինին էր միացել Հալիլ Բեյկթայը՝ ականավոր պատմաբան, որ ազդեցիկ ու ցանկացած թեմայով երկար խոսելու արտասովոր ունակություն ուներ: Մյուս թուրք մասնակիցը Օզդեմ Սանբերկն էր՝ մի հաճելի անձնավորություն, ով նոր էր պաշտոնաթող եղել թուրքական արտգործնախարարությունում և դարձել Թուրքիայի տնտեսական ու սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (ԹՏՍՀՀ/TESEV) տնօրենը: Օզդեմը հայտնի էր որպես ճկուն և հմուտ

դիվանագետ, Միացյալ Թագավորությունում Թուրքիայի դեսպան և արտաքին գործերի նախարարի տեղակալ լինելու տարիներին: Նա փորձառու վարչարար է և Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունում ծառայության ընթացքում ըմբռնել է հիերարխիայի նշանակությունը:

Ռուբեն Ադալյանը, Խաչիկ Թոլոյանը՝ բարեհամբույր ամերիկահայեր Ուեսլիի համալսարանից, և Թևան Պողոսյանը, ով Երևանում ղեկավարում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄԶՄԿ), նույնպես մասնակցում էին: Ես հրավիրեցի ժողովրդական դիվանագիտության մասնագետի՝ Ջո Մոնթվիլին, որպեսզի նա մասնակցի որպես փորձագետ:

Ծանոթ լինելով դասական ժողովրդական դիվանագիտության մեթոդին՝ առանձին նախնական քննարկումներ կազմակերպեցի թուրքերի և հայերի հետ: Նախնական քննարկումները կարևոր են պատվիրակությունների անդամների միջև վստահություն ստեղծելու և բարի կամք ձևավորելու համար: Մենք քննարկեցինք սպասելիքները, օրակարգը և հիմնական կանոնները:

Իմ բացման խոսքի ժամանակ նկատեցի, որ շփումը կոշտ և անհարմար է: Երբ սեղանի շուրջ հերթով ներկայանում էին, Բերկթայը բոլորին զարմացրեց՝ խոսելով «Հայոց ցեղասպանության» մասին: Ճանաչման կարևորության տեսանկյունից՝ նրա ձևակերպումը հայերին հաճելի էր, այն հանդիպման համար շրջադարձային դարձավ՝ շեշտակիորեն փոխելով մեր քննարկումների ընթացքը:

Հետևելով թուրք-հունական ընդհանուր պատմության օրինակին՝ մենք քննարկեցինք գիտական համագործակցության հնարավոր ոլորտները: Նաև քննարկեցինք թուրքական և հայկական պաշտոնական փաստաթղթերը, հանրագիտարանները և դպրոցական գրքերը: Վերանայեցինք հայ-թուրքական հարաբերությունների վիճակը և քննարկեցինք Թուրքիայի և Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև կապի և համագործակցության հնարավորությունները: Հանդիպումը լավ ընթացավ:

Այդ երեկո մենք գնացինք Բրուքների Մեծ մեսսայի համերգի: Հին եկեղեցուց դուրս գալիս հանկարծակի հանդիպեցինք Ավստրիայում Թուրքիայի դեսպանին: Նա շատ զարմացած էր Օզդեմին՝ արտգործնախարարության իր հին գործընկերոջը տեսնելով մի խումբ հայերի հետ: «Ի՞նչ ես անում Վիեննայում»,- հարցրեց նա: Օզդեմը հնարամտորեն պատասխանեց. «Եկել ենք համերգի»: Ներկայացումից հետո ճաշեցինք Վիեննայի լավագույն ռեստորաններից մեկում և միասին ծիծաղեցինք՝ հիշելով անակնկալ հանդիպումը:

Հաջորդ առավոտյան որոշեցինք վերանայել արվածը և քննարկել հաջորդ քայլերը: Օզդեմը սկսեց քննարկումը՝ Թևանին հրավիրելով Թուրքիա: Նրանք քննարկեցին ԹՏՀՀ-ի և ՄԶՄԿ-ի միջև հարաբերությունների հնարավոր ոլորտները:

Սաբանչի համալսարանը համաձայնեց ծառայել որպես տեղեկատվական կենտրոն գիտական համագործակցության համար: Հնարավոր հաջորդականությունը և ժամկետները պիտի քննարկեինք Ստամբուլում մեր մյուս հանդիպումների ժամանակ:

Միայն այն փաստը, որ հայերն ու թուրքերը զրուցում էին, մեծ առաջընթաց էր: Ավելին՝ նրանք որոշակիացրեցին համագործակցության առարկաները, պայմանավորվեցին, որ իրենց հաստատությունները հստակ քայլեր կանեն և համաձայնեցին կրկին հանդիպել: Գրոսմանը անչափ գոհ էր արդյունքներից: Գոհ էր անգամ միշտ պահանջկոտ Վանը:

Չնայած Վիեննայի հանդիպումը գաղտնիք չէր, համաձայնեցինք, որ անհրաժեշտ է զգուշավորություն ցուցաբերել: Սակայն Ստամբուլ վերադառնալուց մի քանի օր հետո Բերկթայը մի ծավալուն հարցազրույց տվեց՝ հաստատելով կայացած հանդիպումները և խոսելով «Հայոց Ցեղասպանության» մասին: Նրա լայնորեն տարածված մեկնաբանությունները վիճաբանությունների պատճառ դարձան: Բերկթայը մահվան սպառնալիքներ ստացավ, ինչպես նաև հարյուրավոր ատելությամբ լի նամակներ: Սաբանչիին հեղեղեցին նրա հեռանալու պահանջներով, սակայն նա համառորեն մնաց՝ ոգեկոչելով ակադեմիական անկախության սկզբունքը:

Վիճաբանություններն էլ ավելի թեժացան Վաշինգտոնի իրադարձություններից հետո: Արդեն սովորություն է, որ ԱՄՆ-ի նախագահը պետք է հայտարարությամբ հանդես գա ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության հիշատակի օրը: Նախագահ Քլինտոնը նշեց. «Միացյալ Նահանգները լիովին պաշտպանում են Հայաստանի և նրա հարևանների՝ միմյանց հետ խաղաղություն հաստատելու և Կովկասի տարածաշրջանում ապահովության ու համագործակցության մի նոր դարաշրջան սկսելու փորձերը: Մենք խրախուսում ենք ամեն մի երկխոսություն տարածաշրջանի քաղաքացիների միջև, որի շնորհիվ հնարավոր կլինի հաշտեցումն ու փոխըմբռնումը»[6]: Դժգոհ լինելով նրա խոսքերից՝ Կոնգրեսի անդամները ներկայացրեցին 596-րդ բանաձևը՝ կոչ անելով նախագահին 1915թ. Արևելյան Թուրքիայում հայերի ջարդերը որակելիս օգտագործել «ցեղասպանություն» եզրույթը:

Չնայած Օզդեմը ներկայացնում էր սեփական վերլուծական կենտրոնը, սերտ կապի մեջ էր արտաքին գործերի նախարարության հետ և միշտ հակված էր դեպի պետությունը: Օզդեմը պնդեց, որ գործողություններն անիրա-

կանանալի են, քանի դեռ Թուրքիան վտանգի և ճնշման տակ է: Ժողովրդական դիվանագիտությունը հետաձգվեց մինչ Կապիտոլիումի բլրի իրադարձությունների վերջնական արդյունքը:

Ծանոթագրություններ

1. Մեջբերում Դոգու Էրգիլի հեղինակի հետ ունեցած հարցազրույցից, 2003թ., 5 օգոստոսի:
2. Քննարկումներ հեղինակի հետ, Նյու Յորք, 2001թ., 20 նոյեմբերի:
3. Journal of the Armenian Bar Association (Հայ իրավաբանների միության ամսագիր), 1993թ. փետրվար:
4. Հեղինակի հետ հարցազրույց, 2003թ., 10 հուլիսի:
5. Հեղինակի հետ հարցազրույց, 2003թ., 10 հուլիսի:
6. Սպիտակ տուն, 2000թ., 24 ապրիլի:

3

Պատմության կանոնակարգում

596-րդ բանաձևը՝ «Հայոց ցեղասպանության բանաձևը», առաջադրվեց 2000թ. սեպտեմբերին: Որպես նախագահության թեկնածու՝ Բիլ Քլինտոնը խոստացավ հիշատակել Հայոց ցեղասպանությունը: Սակայն Քլինիտոնի վարչակազմը դեմ հանդես եկավ բանաձևին: Վարչակազմը վստահ էր, որ բանաձևի ընդունումը լուրջ հետևանքներ կունենա թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա, և Թուրքիայի հետ հարաբերությունների խափանումը կվնասի ԱՄՆ-ի ազգային անվտանգության շահերը:

ԱՄՆ-ն և Թուրքիան տասնամյակներ շարունակ առանձնահատուկ հարաբերություններ են ունեցել: Որպես ՆԱՏՕ-ի արևելյան թև՝ Թուրքիան կարևորագույն դաշնակից էր սառը պատերազմի ժամանակ: Կորեական հակամարտությունից ի վեր ամերիկյան և թուրքական զորքերը շուրջ կես դար ծառայել են կողք կողքի: Կորեայում ԱՄՆ-ն տպավորվեց թուրք զինվորների մարտունակությամբ և զոհողության պատրաստակամությամբ: Թուրքիան ՆԱՏՕ-ն համարում էր կամուրջ դեպի Արևմուտք և լուրջ էր վերաբերվում դաշնակցային իր պարտավորություններին: ՆԱՏՕ-ն սկսեց օգտվել Թուրքական բազաներից. ԱՄՆ-ի միջուկային զենքերը նույնպես

տեղակայվեցին Թուրքիայում:

Առավել քան երբևէ, Թուրքիան անփոխարինելի դաշնակից էր 1991թ. Պարսից ծոցի պատերազմում: Նախագահ Թուրգուտ Օզալը ջանասիրաբար պաշտպանեց Սադամի կողմից Քուվեյթի գրավմանը հակազդելուն ուղղված արշավը: Վաշինգտոնի պահանջով Օզալը փակեց Իրաքի հետ սահմանը և փակեց Իրաքի նավթամուղի ելքը դեպի Միջերկրական ծով: Թուրքիան մեծ գին վճարեց իր համագործակցության համար: ՄԱԿ-ի պատժամիջոցներն Իրաքում թուրքական տնտեսության համար արժեցան 40 միլիարդ ԱՄՆ դոլար:

Չնայած ներպետական ընդդիմությանը և տարածաշրջանային անկայունության մտավախություններին՝ Թուրքիան մասնակցեց 1991թ. Պարսից ծոցի պատերազմին: Երբ մեկ միլիոն իրաքյան քրդեր փախան Սադամ Հուսեյնի բռնադատումներից, շատերն անցան սահմանը: ԱՄՆ-ն և Թուրքիան «Հարմարության ապահովման համատեղ գործողության» միջոցով արձագանքեցին մարդասիրական արտակարգ իրավիճակին: Միաժամանակ Թուրքիան հյուրընկալեց ամերիկյան և բրիտանական ինքնաթիռները, որոնք մասնակցում էին Հյուսիսային պահապան գործողությանը Իրաքի օդային տարածքում՝ 36-րդ զուգահեռականից հյուսիս՝ ստեղծելով թռիչքներից ազատ տարածք և պատնեշ ապահովելով Սադամի նոր ագրեսիայից:

Վաշինգտոնը գնահատում է նաև Թուրքիայի սերտ կապերն Իսրայելի հետ: Այդ կապերը գնահատում են նաև Միացյալ Նահանգներում լոբբիինգի իսրայելամետ խմբերը: Իսրայելը ապահովում է Թուրքիային կարևոր տեխնոլոգիայով՝ արդիականացնելու ԱՄՆ-ից բերված «Աբրամ» տանկերը և «Էֆ-16» ռեակտիվ կործանիչները: Իր հերթին, իսրայելական օդաչուներն օգտագործում են Թուրքիայի օդային տարածքը վարժական թռիչքների համար: Գոյություն ունեն նաև սերտ առևտրական և մշակութային կապեր: Իսրայելական ավոկադոն վաճառվում է Թուրքիայի շուկաներում, և իսրայելցի զբոսաշրջիկներին հաճախ կարելի է տեսնել Բոդրումի գիշերային զվարճանքի վայրերում և թուրքական ափի այլ հանգստավայրերում:

Միաժամանակ Թուրքիան լավ հարաբերություններ է պահպանում պաղեստինցիների հետ: XVI դարասկզբին, երբ խալիֆայությունը տեղափոխվում էր Ստամբուլ, Պաղեստինը և Եգիպտոսը ընդգրկվեցին Օսմանյան կայսրության մեջ: Թուրք և պաղեստինցի զինվորները միասին զոհվում էին Առաջին համաշխարհային պատերազմի Գազայի մարտերում: Որպես Իսլամական խորհրդաժողովի կազմակերպության Իսրայելի հետ կապեր ունեցող միակ անդամ, Թուրքիան իրեն տեսնում է Միջին Արևելքի խաղա-

ղության պահապանի դերում: ԱՄՆ-ի և Թուրքիայի առևտրական շահերը նույնպես փոխկապված են: Թուրքական կառավարությունն օգնում է Բաքվից մինչև Վրաստան և Միջերկրականում Ջեյհանի թուրքական նավահանգիստը ձգվող նավթի և գազի խողովակաշարի կառուցումը ֆինանսավորելուն: ԱՄՆ Առևտրի դեպարտամենտը Թուրքիան համարում է ծագող մեծ շուկա. Թուրքիան ամեն տարի գնում է 6 միլիարդ ԱՄՆ դոլարի արժողությամբ ամերիկյան գյուղատնտեսական ապրանքներ և պաշտպանության ու տիեզերական-օդային տեխնոլոգիաներ:

Թուրքերի համար ԱՄՆ-ն ավելին է, քան պարզապես դաշնակից: Միացյալ Նահանգները և Թուրքիան ռազմավարական դաշնակիցներ են՝ կապված ընդհանուր շահերով և ընդհանուր ջանքերի պատմությամբ: Նվիրվածությունը՝ «Սադակատը», մեծ արժեք է թուրքական հասարակության մեջ: Թուրքերի համար նվիրվածությունը շարունակական է և անխափան: Այն ենթադրում է փոխկապվածություն, անձնազոհություն և հավատարմություն: Ոչինչ ավելի թանկ չէ, քան հուսալի ընկերը: Թուրքերն ապշած էին, որ ԱՄՆ-ի Կոնգրեսը կարող է մեղադրել Թուրքիային Օսմանյան կայսրության շրջանի իրադարձությունների համար: Ավելին՝ շատ թուրքեր վտահ են, որ նման իրադարձություններ տեղի չեն ունեցել: «Ցեղասպանություն» եզրույթն արթնացնում է զարհուրելի պատկերներ նացիստական մահվան ճամբարներից: Նրանց համար անհավատալի է, որ իրենց նախահայրերը կարող էին մասնակցել այդպիսի բարբարոսական գործողությունների:

596-րդ բանաձևին ԱՄՆ վարչակազմի ընդդիմադիր դիրքորոշումը շարադրվեց պետքարտուղար Մադլեն Օլբրայթի և պաշտպանության քարտուղար Վիլյամ Կոհենի նամակում՝ ուղղված Սպիտակ տան խոսնակ Դենիս Հասթերթին (R-IL): Նրանք գրում էին, որ բանաձևն անբարենպաստ ազդեցություն կունենա «Ամերիկայի ազգային անվտանգության շահերի վրա Արևելյան Միջերկրականում, Միջին Արևելքում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում»[1]: Ռոբերտ Փիրսոնը՝ Թուրքիայում Ամերիկայի դեսպանը, Վաշինգտոնից վերադարձից հետո, որտեղ «մասնակցում էր 596-րդ հոդվածի դեմ վարչակազմի շարունակական ջանքերին», ասաց. «ԱՄՆ-ի կառավարությունը համարում է, որ բանաձևի ընդունումը կխանգարի, չի աջակցի տարածաշրջանային և երկկողմ հարցերի առաջընթացին, որոնք կարևոր են թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Թուրքիայի համար: ԱՄՆ-ի կառավարությունը Թուրքիան համարում է գործընկեր և կարևոր դաշնակից կարևորագույն տարածաշրջանում: Մենք ցանկանում ենք աշխատել Թուրքիանի հետ մեր ընդհանուր նպատակներին հասնելու համար»[2]:

Դրական վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ հատուկ է ոչ միայն Քլինտոնի վարչակազմին: Առանձնահատուկ հարաբերությունները պահպանվում էին դեռևս նախագահ Դուայթ Էյզենհաուերի վարչակազմի ժամանակներից: 2002թ. պաշտպանության փոխքարտուղար Փոլ Վոլֆովիցը նշեց. «Միացյալ Նահանգները, ՆԱՏՕ-ի դաշնակցությունը, Արևմուտքը և իրավամբ ողջ աշխարհը բախտավոր է, որ այս կարևոր խաչմերուկում գտնվելու պահին ունենք ամենաուժեղ, ամենահուսալի և ինքնավստահ դաշնակիցներից մեկին»[3]:

Թուրքիան 596-րդ բանաձևը խորտակելուն ուղղված մի հզոր քարոզարշավ սկսեց: Գունդուզ Ակտանը՝ պաշտոնաթող դիվանագետը, ով ծառայել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում, Անկարայի խնդիրը ներկայացրեց Վաշինգտոնում: Նա պնդեց. «Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությունում 85 տարի առաջ տեղի ունեցած իրադարձություններին, թուրքերը դրանք չեն ընդունում որպես ցեղասպանություն: Մենք իսկապես ընդունում ենք դրանք որպես զարհուրելի ողբալի իրադարձություններ, սակայն դրանք միջազգային մարդասիրական իրավունքով ցեղասպանություն չեն որակվում»[4]: Սպառնալով Գունդուզը զգուշացրեց ԱՄՆ-ին այն ճնշումների մասին, որոնք կհետևեն, եթե բանաձևն ընդունվի: Նրա նախազգուշացումը հաճելի չէր Կոնգրեսին:

Գունդուզը հակասական անձնավորություն է, ով ղեկավար դեր է ունեցել ՀԹՀՀ-ում: Նա հրաժարական տվեց արտաքին գործերի ծառայությունից, երբ վարչապետ Թանսու Չիլերի վարչակազմը նրան անարդարացիորեն մեղադրեց ֆինանսական խախտումների համար՝ կապված Ժնևի լճի մերձակայքում տուն գնելու հետ: Հասկանալով, որ քաղաքական գործիչները գալիս և գնում են, Գունդուզը կազմակերպեց իր վերադարձը՝ անվտանգության ոլորտում իրեն դասելով հակաարևմտյան գործիչների շարքը: Նա պայքարում էր մարդու իրավունքների բարեփոխումների դեմ՝ լինելով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում Թուրքիայի ներկայացուցիչը: Փաստարկելով, որ լեզուն ենթադրում է ազգային ինքնություն, իսկ ազգային ինքնությունը տանում է դեպի անկախության պահանջների, նա համառորեն ընդդիմանում էր քրդերեն հեռուստաալիքների և կրթահամակարգի ազատականացմանը: Իր պաշտոնավարման ընթացքում Գունդուզը ամբարում էր Թուրքիայի մտահոգություններն արտահայտող լոբբինգի փաստարկները ԵՄ-ի անդամագրման, Կիպրոսի միավորման և Հայաստանի հետ մերձեցման դեմ: Իլտեր Թուրքմենն ասում է. «Երբ անհանգիստ ես, ամեն բան թվում է վտանգավոր»[5]: Գունդուզը փառամոլ մարդ է, ցանկանում է հասարակության աչքում կարևոր անձնավորություն երևալ: Շաբա-

թը մեկ նա *«Ռադիկալում»* մեկնաբանություն է հրատարակում և հաճախ հայտնվում Թուրքիայի հեռուստամարաթոններում: Նա ինքն իրեն տեսնում է որպես Թուրքիայի Հենրի Քիսինջեր՝ մեծարված, հարգված և պահանջված:

Շատ թուրքերի պես, Գունդուզը XX դարասկզբի իրադարձությունների մասին խոսում է որպես «փոխադարձ ողբերգության մասին»: Հայկական վայրագությունների հուշարձան է կառուցվել Իգդիրում՝ Հայաստանին սահմանակից թուրքական քաղաքում: Չորս իրար միացող յաթաղաններ, որոնք տեսանելի են սահմանի մյուս կողմից, խորհրդանշում են թուրքերի զանգվածային սպանությունները հայերի կողմից: Հասարակ թուրքերը պատկերացում չունեն, թե ինչ է պատահել հայերին Օսմանյան կայսրությունում: Հայկական հողերի զտումից հետո նրանց ներկայության մասին ոչ մի պաշտոնական հիշատակում չի մնացել: Այն հայերին, ովքեր ապրում են Կարսում, անվանում են «յերլի», որը թարգմանաբար բառացի նշանակում է «տեղի մարդ»: Դողու Էրգիլը Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի վաստակաշատ անդամ է: ԱՄՆ-ում բարձրագույն կրթություն ստանալու տարիներին ամերիկահայ համակուրսեցին դիմել է նրան. «Քո պապը սպանել է իմ պապին»: Էրգիլը չգիտեր պատմությունը: Նա գնացել է գրադարան և ապշել՝ հարուստ գրականություն գտնելով Օսմանյան կայսրության հոգեվարքի շրջանում հայերի զրկանքների մասին:[6]

Թուրքերը գիտեն այն դժվարությունների մասին, որոնց միջով անցել են իրենք Օսմանյան կայսրության վերջին տարիներին: Երբ բրիտանացիները հրաժարվեցին դաշնակցել Օսմանյան կայսրության հետ, Գերմանիան հովանավորեց 2 միլիոն օսմանյան զինվորների կռիվն Առաջին աշխարհամարտում: Նրանք պարտվեցին գրեթե բոլոր ճակատներում՝ Եվրոպայից մինչև Իրան, Կովկաս և Սուեզի ջրանցք: Սակայն թուրքական պատմության պաշտոնական վարկածը մերժում է իր պարտությունը: Այն ասում է, որ առանցքի ուժերը հանձնվեցին, և Թուրքիան ստիպված էր վարվել նույն կերպ: Պատերազմի սկզբին Օսմանյան կայսրությունը տարածվում էր 4.3 միլիոն քառակուսի կիլոմետր: Պատերազմի վերջին այն կրճատվեց մինչև 770.000 քկմ:

Հայերի մեծ մասը որևէ կարեկցանք չունի թուրքերի պատմական տանջանքների հանդեպ: Հայերը խստորեն առարկում են իրադարձությունների չափերի, համատեքստի և հետևանքների, ինչպես նաև ոճրագործների ինք-

նության և կապերի վերաբերյալ Թուրքիայի պնդումներին: Նրանք վստահ են, որ գոյություն է ունեցել մտածված մի գերծրագիր՝ զտել Օսմանյան կայսրությունը հայկական փոքրամասնությունից, որի գագաթնակետը 1.5 միլիոն հայի տեղահանումն ու սպանությունն էր: Էրգիլը հարցրել է. «Ի՞նչ եղավ հայերի տներին, և ինչու՞ հայերը չվերադարձան պատերազմից հետո»[7]:

Պնդելով Հայոց ցեղասպանության փաստը՝ հայերը վկայակոչում են «անվերապահորեն օրինական և վստահելի աղբյուրները», ներառյալ՝ դեսպան Հենրի Մորգենթաուի պաշտոնական գրառումները և հյուպատոսական գրասենյակների հեռագրերը: Մորգենթաուն հայտնել է. «Այս արտաքսումների հրամանը տալով՝ թուրքական իշխանությունները երաշխավորեցին ողջ ռասայի մահը: Նրանք սա լավ հասկանում էին ինձ հետ զրույցի ժամանակ. նրանք այդ փաստը քողարկելու փորձ անգամ չարեցին»[8]: 1894-1922 թթ. «Նյու Յորք թայմսը» հրապարակեց ավելի քան 1000 հոդված հայկական «ջարդերի» մասին[9]: Ռաֆայել Լեմկինը՝ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի հեղինակը, ցեղասպանությունը նկարագրեց այսպես. «Այն, ինչ պատահել է հայերին»[10]:

Անկարան վստահ է, որ ցեղասպանության ճանաչման միջազգային գործունեությունը հայկական սփյուռքի սևեռուն գաղափարն է: Նրանք մատնանշում են Ռոբերտ Քոչարյանի հայտարարությունը, որ «ավելի քան 70 տարվա խորհրդային իշխանության ընթացքում պաշտոնական Երևանը երբևէ չի աշխատել այս խնդրի լուծման ուղղությամբ: Հայկական սփյուռքը մշտապես ակտիվորեն զբաղվել է ցեղասպանության ճանաչմամբ: Սփյուռքահայերն այն մարդիկ են, ովքեր այդ դեպքերի զոհերն են, կամ, ավելի ճիշտ, զոհերի ժառանգները: Նրանք չեն կարող անտարբեր մնալ այս հարցում»[11]: Թուրք պաշտոնյաները պնդում են, որ Սփյուռքի ջանքերը խոչընդոտում են առաջընթացը և տարածաշրջանային համագործակցությունը. Անկարան վստահ է, որ Հայաստանի հայերն ավելի գործնական մտադրություններ ունեն: Թեպետ Հայոց ցեղասպանությունը սփյուռքի հայերի առանցքային միավորող կետն է, ողբերգությունը վերաբերում է ամեն հայի և ձևավորել է ընդհանրական հիշողություն, որը տարածվում է պետական սահմաններից անդին: Ամեն տարի՝ Հիշատակի օրը, ավելի քան մեկ միլիոն հայ Հայաստանից և ամբողջ աշխարհից ուխտագնացություն է կատարում դեպի Եղեռնի հուշարձան: Վան Գրիգորյանի և հայերի մեծ մասի համար «Հայոց ցեղասպանությունը մեր ինքնության հիմքն է»[12]:

Անակնկալ չէ, որ Հայաստանի հայերը մեծ ջանքեր են գործադրում

Թուրքիայի հետ սահմանի բացման համար: Ի վերջո, հենց նրանք են տառապում բնականոն ճամփորդության և առևտրի նկատմամբ Թուրքիայի արգելափակումից: Երիտասարդ հայերը սահմանափակ հեռանկարներ ունեն շրջափակված, մեկուսացված և աղքատ Հայաստանում: Շուրջ 1.5 միլիոն հայ է արտագաղթել 1988թ. անկախությունից հետո: Ոչ մի հայ, սակայն, չի ժխտի ցեղասպանությունը սահմանների բացման դիմաց: Երբ 1998թ. Քոչարյանը դարձավ Հայաստանի նախագահ, ցեղասպանության ճանաչումը դարձրեց իր արտաքին քաղաքականության առանցքային գիծը: Արտահայտելով յուրաքանչյուր հայի տեսակետը՝ Վարդան Օսկանյանը նշում է. «Հիշողությունը ժխտումով չի բուժվում: Պատասխանատվության արդարացի ստանձնումը վստահության վերականգնման նախապայման է»[13]:

Նույնիսկ այն ամերիկյան պաշտոնյաները, ովքեր դեմ էին 596-րդ բանաձևին, ընդունում էին այն սոսկալի ողբերգությունը, որը բաժին է ընկել հայերին և առանձնակի կարեկցանք էին տածում փրկվածների սերունդների նկատմամբ: Կոնգրեսի 106-րդ գումարման վերջին օրերին՝ ճիշտ նոյեմբերյան ընտրություններից առաջ, մեծ երկկուսակցական աջակցություն էր նախապատրաստվում 596-րդ բանաձևի համար: Սպիտակ տան Միջազգային հարաբերությունների կոմիտեն 24 կողմ և 11 դեմ ձայներով առաջ մղեց բանաձևը: Հետզհետե թվում էր, թե բանաձևի ընդունումը ողջ Ներկայացուցիչների պալատի կողմից միանգամայն հավանական է: Թուրքիան ուժգնացրեց իր դիվանագիտական հարձակումը և զգուշացրեց ծանր հետևանքների մասին: Գլխավոր շտաբի պետ գեներալ Հուսեյն Կիվրիկօղլուն հետաձգեց իր վաղուց նախատեսած այցը Վաշինգտոն: Թուրքիայի ազգային մեծ ժողովը սպառնաց դադարեցնել Հյուսիսային պահապան գործողությունը, որը վեց ամիսը մեկ ժամկետի երկարաձգում է պահանջում: Անկարան պնդեց, որ բանաձևի ընդունումը կխորտակի Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավման բոլոր հույսերը: Այդ ապացուցելու համար, Թուրքիան քաղաքականություն սկսեց, որով արգելում էր Ստամբուլի օդանավակայանում մուտքի վիզա տրամադրել հայաստանյան անձնագիր ունեցողներին:

Թեև թուրք պաշտոնյաները պնդում էին, որ ճնշման տակ չեն բանակցի, սակայն բանաձևի ընդունման հեռանկարները լուրջ երկխոսության հնարավորություն ստեղծեցին: Թուրքիան ծածուկ կապեր գործի դրեց:

Ստիվեն Սեստանովիչը՝ Անկախ պետությունների համագործակցության հարցերով պետքարտուղարի տեղակալը, և Դեն Ֆրիդը՝ Լեհաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպանը և Սեստանովիչի տեղակալը, թուրք պաշտոնյաների հետ իրականության և հաշտեցման գործընթացի վերաբերյալ քննարկումներ անցկացրեցին: Պետդեպարտամենտը ինձնից նաև պահանջեց կապեր գտնել Թուրքիայի կառավարությունում: Ամերիկյան մի պաշտոնյա Դյուպոնտ Սըրքլի սրճարաններից մեկում հանդիպում կազմակերպեց թուրքական դեսպանատան մի աշխատակցի հետ: Թուրքն ինձ հավաստիացրեց, որ կգտնեմ նրան ամբոխի մեջ: Նա պիտի լայնեզր գլխարկ դրած լիներ:

Նա հայտնվեց նշանակված ժամին և խնդրեց ինձ, որ մեր քննարկումները գաղտնի մնան: Նա ինձ ասաց, որ գործում է արտաքին գործերի նախարարի հրահանգների համաձայն, առանց ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանի իմացության: Զգուշացրեց, որ Անկարան լուրջ վերապահումներ ունի իմ մասնակցության վերաբերյալ: Հօգուտ քրդերի մարդու իրավունքների պաշտպանության հարցում իմ գործունեությունն աննկատ չի մնացել Թուրքիայի ազգային հետախուզության կազմակերպության համար: Հակառակ մտավախությունների՝ Թուրքիան պատրաստ էր աշխատել ինձ հետ: ԱՄՆ-ի կառավարությունը հստակեցրել էր, որ ես եմ վարելու հայ-թուրքական երկխոսությունը: Որևէ թյուրիմացություն բացառելու համար նա ինձ մի քանի անգամ կրկնեց. «Իմ նախարարը կողմնակից է իսկության և հաշտեցման հաջող գործընթացի իրականացմանը»:

Սեստանովիչը և Ֆրիդը փորձառու դիվանագետներ են: Մի քանի ժամվա ընթացքում ես նրանց հակիրճ ներկայացրեցի Վիեննայի հանդիպման և հույն-թուրքական ընդհանուր պատմության նախագծի պատմությունը: Երկուսն էլ արժևորեցին ժողովրդական դիվանագիտության գործընթացը, հատկապես Պետդեպարտամենտի շարունակական մասնակցության փոխարեն, որը խոստանում էր դժվարին և ձգձգվող գործ լինել:

Ֆրիդը գաղափարական լուրջ հետաքրքրություն ցուցաբերեց ժողովրդական դիվանագիտության նկատմամբ: Նա կենտրոնացավ ընդհանուր պատմության և կրթական բարեփոխման վրա՝ որպես խաղաղության կառուցման գործիքների: Թուրքական և հայկական դասագրքերի վերանայման հետ մեկտեղ ես նկարագրեցի այլ գործողություններ ևս՝ ուղղված կրթական ծրագրերում բացասական կարծրատիպերը հայտնաբերելու և ազգայնական գաղափարները վերացնելուն: 1996թ. Բողազիչի համալսարանը հույն դասավանդողների հետ աշխատանք կատարեց հյուսիսային Թրակիայի ակադեմիական դասագրքերը վերանայելու ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ Հարավարևելյան Եվրոպայի Ժողովրդավարության և հաշ-

տեցման կենտրոնը «Պատմությունը և պատմության դասավանդումը» լայնածավալ գործընթաց ձեռնարկեց: Սկսած 1999թ. դեկտեմբերից կենտրոնը հիմնեց Պատմության ուսուցման հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր պատմության ուսուցման նուրբ և հակասական հարցերը: Հանձնաժողովը կենտրոնացավ բյուզանդական ու օսմանյան ժառանգությունների, ինչպես նաև Բալկաններում ազգայնականության բորբոքման գործում կրթական համակարգերի դերի վրա: Հանձնաժողովը գնահատեց մի շարք երկրներում կրթական համակարգերը և դասագրքերի նկատմամբ կառավարության ազդեցության աստիճանը:

Ես տպավորվեցի Ֆրիդի հեռատեսությունից: Իհարկե, նրա մտահոգության առարկան հայ-թուրքական երկխոսություն սկսելու հրատապ մարտահրավերն էր: Բայց նա հասկանում էր նաև համբերատար մոտեցման կարևորությունը, ինչպես նաև հասարակության տարբեր խավերի ներգրավման անհրաժեշտությունը ազգային ընկալումների փոփոխման տեսանկյունից: Հայերի կողմից թուրքերին հրեշացնելու և թուրքերի կողմից հայերին կարծրատիպեր վերագրելու իրողությունը փոխելը ժամանակ կպահանջի: Ֆրիդի՝ ողջ պատկերը տեսնելու ունակությունն իմ մեջ հարգանք առաջացրեց նրա նկատմամբ:

Եվ նորից Քոչարյանն ու Օսկանյանը դիմեցին Վանին: Սեստանովիչի և Ֆրիդի հետ հանդիպման ժամանակ Վանն ընդգծեց, որ Կոնգրեսի բանաձևը բանակցությունների առարկա չէ: Դա ամերիկյան Կոնգրեսի գործն էր և չպետք է խանգարեր Թուրքիայի և Հայաստանի միջև երկխոսության կայացմանը: Սակայն Վանը չափազանց փորձառու էր օրենսդրական խնդիրներում բոլոր ձվերը նույն զամբյուղում պահելու համար: Չէ՞ որ բանաձևի ընդունման գործընթացը կարող էր և խաբուսիկ լինել:

Վանը հաստատեց, որ Հայաստանը պատրաստ է մասնակցելու իսկության և հաշտեցման գործընթացին: Նա, սակայն, անսասան էր մի հարցում: Գործընթացի նպատակը չպետք է լիներ Հայոց ցեղասպանության իրողության ուսումնասիրումը: Այդ փաստը անքննելի էր: Թուրք պաշտոնյաներն առարկեցին Վանի նախապայմանին: Նրանք նաև պնդեցին, որ չեն բանակցի ճնշման ներքո: Քանի դեռ 596-րդ բանաձևը կախված էր նրանց գլխին, որևէ զարգացում հնարավոր չէր:

Թուրքական կառավարությունը հակում ունի պաշտպանողական դիրք բռնելու այն հարցերի պարագայում, որոնք նրա առջև բարձրացվում են: Բարդ խնդրի բախվելով՝ Անկարան հազվադեպ է լավ համակարգված ռազմավարության ունակություն և հեռատեսություն ցուցաբերում: Թուրքերը լավ վարչարարներ են, երբ հարցը վերաբերում է ամենօրյա գործերին, սա-

կայն տեսլական և ճկունություն պահանջող նախաձեռնողական նուրբ քաղաքականություն մշակելու հարցում նվազ ունակ են: Պետությունը Թուրքիայում սեփական քաղաքացիներից պահանջում է հնազանդություն, բայց ոչ ստեղծագործելու ունակություն: Ժողովրդավարական բազմակարծությունը և անձնական նախաձեռնությունը զարգացած չեն. Անկարան չի վստահում ժողովրդական դիվանագիտության գործընթացին:

Չնայած իրենց հոռետեսությանը՝ թուրք պաշտոնյաները լիովին համաձայնեցին ժողովրդական դիվանագիտության իրողության ու հաշտեցման գործընթացին մասնակցելուն: Անկարան այդ քայլին դիմեց թուրք-ամերիկյան հարաբերությունների վատթարացումից խուսափելու համար: Նրանք նաև գիտակցում էին, որ Հայաստանի նկատմամբ անբարյացակամ վերաբերմունքը կվնասի Թուրքիայի՝ Եվրամիությանը միանալու նպատակին: Հայաստանի հետ շարունակվող լարվածությունը նաև հնարավորություն կտար Ռուսաստանին՝ Սև ծովի ավազանում Թուրքիայի պատմական հակառակորդին, ուժեղացնելու իր ազդեցությունը Հարավային Կովկասում: Որոշվեց, որ ԱՄՆ-ն կապահովի իսկության և հաշտեցման գործընթացի անաչառությունը՝ վարելով դրա սկզբնական փուլերը:

Ես նախազգուշացրի Սեստանովիչին և Ֆրիդին, որ նախաձեռնության պաշտոնական հաստատման համար էական միջոցներ անհրաժեշտ կլինեն: Հարավաֆրիկյան իսկության և հաշտեցման հանձնաժողովը ընդգրկել էր հազար հոգու և տարեկան արժեցել էր 18 միլիոն ԱՄՆ դոլար: Ես նրանց խորհուրդ տվեցի զսպել ակնկալիքները և նախանշել իրական նպատակներ: Գործընթացն առաջ տանելու համար անհրաժեշտ կլինի հարգանք վայելող և համապատասխան միջոցներ ունեցող հասարակական կազմակերպություն: Առաջարկեցի ԱՄՆ խաղաղության ինստիտուտը (USIP):

Վանն ուզում էր վստահ լինել, որ թուրքերի մտադրությունները լուրջ են: Նա և Սեստանովիչը առաջարկեցին պետքարտուղարին նամակներ ուղարկել թուրքական և հայկական արտաքին գործերի նախարարություններ՝ նախանշելով աշխատանքային ծրագրերն ու հստակ նպատակները: Եվ Վանը, և՛ Պետդեպարտամենտի պաշտոնյաները առանձին դիմեցին ինձ նամակագրությունը նախապատրաստելու համար: Վերջապես որոշվեց, որ Օլբրայթը ընդհանուր նամակ կուղարկի՝ առաջարկելով գործընթացը Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմին և Օսկանյանին: Նա նաև կցելու էր USIP-ին ուղարկված մեկ այլ նամակի պատճենը՝ աշխատանքի նկարագրության, մեթոդաբանության, ինչպես նաև արդյունքների ժամանակացույցի մանրամասներով:

Ապա տեղի ունեցավ անհավատալին: Հենց այն ժամանակ, երբ 596-րդ

բանաձևի ընդունման համար պակասում էր միայն մեկ ձայն, նախագահ Քլինտոնը զանգահարեց Հասթերթին և խնդրեց նրան հետ վերցնել բանաձևը: Նախագահը վկայակոչեց ազգային անվտանգության մտահոգությունները ահաբեկչության առնչությամբ և շեշտեց Թուրքիայի աջակցության կարիքը Մերձավոր Արևելքում ամերիկյան շահերը սպառնալիքներից պաշտպանելու գործում:

Հայերն ապշահար էին վերջին պահին բանաձևը հանելուց: Նրանք ահռելի ջանքեր և միջոցներ էին վատնել: Վանը շատ ծանր տարավ լուրը: Նա ենթադրում էր, որ երկխոսություն վերսկսելու փորձերը նույնպես կտապալվեն: Սակայն Սեստանովիչը և Ֆրիդը հաստատակամություն հանդես բերեցին: Թուրքերը միշտ պնդում էին, որ չեն բանակցի ճնշման ներքո: Բանաձևի վերացումից հետո ամերիկյան պաշտոնյաները նոր դիրքորոշմամբ դիմեցին Անկարային: Նրանց զարմացրեց պատասխանը: 596-րդ բանաձևի հետևանքը խթանեց Անկարայի՝ հայ-թուրքական խնդիրներին «մեկընդմիշտ վերջ դնելու» շահագրգռությունը:

Այդ ընթացքում Թուրքիայում Հայաստանին վերաբերող առաջարկությունների հեղեղ սկսվեց: Թուրքիայի մեջլիսն առաջարկեց խորհրդարանական հանձնաժողով ստեղծել: Կենտրոնական Ասիայի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը կոչ արեց բացել օսմանյան արխիվները: Սուքրու Էլեքդաղը՝ ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպանը, համագործակցում էր Բիլքենթի համալսարանի հետ՝ պատմաբանների հանձնաժողով ստեղծելու ուղղությամբ:

Թեև հայ-թուրքական մերձեցումը հուսադրող էր, սակայն նախաձեռնությունների թվին զուգահեռ աճում էին ռիսկերը: Չափազանց մեծ թվով ձեռնարկումները կարող էին փոշիացնել հանձնաժողովի ազդեցությունը: Նախաձեռնությունների բարի կամքը նույնպես կասկածելի էր: Թուրքական առաջարկներից շատերը չէին նախատեսում հայերի մասնակցությունը: Վստահելի լինելու համար իսկության և հաշտեցման գործընթացը պիտի միացյալ ջանքերով իրականացվի: Ամերիկյան պաշտոնյաները վստահ էին, որ հայկական և թուրքական իշխանությունների հետ սերտ կապ ունեցող առանձին մասնակիցների ներգրավող երկխոսության միասնական շրջանակն առավել նախընտրելի է:

Պետդեպարտամենտի խնդրանքով ես այցելեցի Թուրքիա՝ գնահատելու հայ-թուրքական հարաբերությունների շուրջ առկա մթնոլորտը և ուսումնասիրելու ժողովրդական դիվանագիտության հնարավորությունները: Թուրքերի մեծամասնությունը կողմ էր հայերի և թուրքերի մասնակցությամբ հասարակական կազմակերպությունների ծրագրերին: Իմ այցից մի

քանի օր անց Գունդուզը գրեց. «Գաղտնիք չէ, որ ամերիկյան Պետդեպարտամենտը հորդորում է երկու կողմերին սկսել բանակցությունները: Կան հաղորդումներ, որ որոշ թուրքական, հայկական և ամերիկյան հասարակական կազմակերպություններ համատեղ ծրագրեր կձեռնարկեն՝ քննարկելու և բանավիճելու հարցի պատմական, իրավական և հոգեբանական կողմերի շուրջ»[14]:

Բայց ինչպե՞ս կարող էին հայերը հեռանկար տեսնել Կապիտոլիումի բլրում կրած անհաջողությունից հետո: Նոյեմբերի 6-ին Սեստանովիչը Երևանում հանդիպեց Քոչարյանին: Վերջինս վատ տրամադրություն ուներ և գանգատվեց Քլինտոնի ուրացումից: Նա այնքան նյարդայնացած էր, որ հանդիպման մասնակիցները կարծեցին, թե նա դեռ տառապում է ատամնաբուժական վիրահատական միջամտությունից: Նախագահը հենց նոր էր վերադարձել Փարիզից՝ իր ատամնաբույժի մոտից:

Քանզի հայկական սփյուռքը պատրաստվում էր կրկին ներկայացնել բանաձևը Կոնգրեսի նոր գումարմանը, արագացրի Հայաստան և Թուրքիա այցելությունս: Հելենա Ֆինը դարձավ իմ հավատարիմ խորհրդատուն: Մենք հանդիպել էինք 1998թ. դեսպանատան ընդունելության ժամանակ: Հետագայում դառնալով Կրթական և մշակութային գործերի գրասենյակի բյուրոյի գլխավոր փոխքարտքուղար՝ Հելենան ինձ հորդորեց «նախ գնալ Անկարա և տեղեկանալ դեսպանատանը: Ապա առաջարկում եմ քեզ արձագանքել այն թուրքերին, ովքեր հակամարտությունների լուծման ժողովրդական դիվանագիտության հնարավոր մոտեցումների առաջարկություններ ունեն»[15]:

Դեկտեմբերի 23-ին՝ ուշ կեսօրին, հանդիպեցի Փիրսոնին: Ցեղասպանության բանաձևը քննարկվել էր Փիրսոնի՝ Թուրքիայում Ամերիկայի դեսպան նշանակվելու առաջին օրերին: Ժամանման օրվանից թուրք պաշտոնյաները ճնշում էին գործադրում Փիրսոնի վրա բանաձևի կապակցությամբ: Չնայած Փիրսոնը ողջունում էր միջանձնային հարաբերությունները, ժողովրդական դիվանագիտության հարցում զգուշավոր էր: Փիրսոնը կարծում էր, որ կառավարությունների միջև գոյություն ունեցող խնդիրները պետք է լուծվեն կառավարությունների ներկայացուցիչների կողմից:

Մայք Լեմոնը՝ Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպանը, այլ վերաբերմունք ուներ ժողովրդական դիվանագիտության նկատմամբ: Լեմոնը ակտիվիստ էր և իր պաշտոնական պարտականությունները կատարում

էր լիարյուն ու ոգևորությամբ: Նա իր անվերապահ աջակցությունը հայտնեց ժողովրդական դիվանագիտությանը: Թեև Պետդեպարտամենտի համար դրսի մարդ էի, հասկանում էի, որ աջակցությունը Վաշինգտոնից բավարար չէ: Ներկբայորեն անհրաժեշտ էր ներգրավել Թուրքիայում և Հայաստանում գտնվող ամերիկյան պաշտոնյաներին: Ես խոստացա կանոնավորապես խորհրդակցել դեսպանատան աշխատակազմի հետ և Փիրսոնին ու Լեմոնին տեղյակ պահել զարգացումների մասին:

Դեկտեմբերի 27-ին Սեստանովիչին և Ֆրիդին ուղարկեցի ճանապարհորդությանս հաշվետվությունը և առաջ քաշեցի ժամանակին «Հայ-թուրքական պատմական հանձնաժողով» անվամբ հայտնի գաղափարը: Ես պատկերացնում էի ժողովրդական դիվանագիտության մի ամբողջական ծրագիր, որի կենտրոնում հանձնաժողովն էր՝ ներառելով հասարակության մյուս խավերը: Իմ տեղեկագիրը նկարագրում էր լրատվական ռազմավարությունը, համատեղ տնտեսական զարգացման նախաձեռնությունները, համագործակցային մշակութային միջոցառումները, ակադեմիական համագործակցությունը, երիտասարդական փոխանակումները և Հայաստանի ու Թուրքիայի սահմանային շրջանների տեղական ինքնակառավարական պաշտոնյաների ուսուցումը հակամարտությունների կարգավորման թեմայով: Գործողությունների նախնական նկարագրությունը շատ նման էր *Թուրքիայի և Կովկասի ժողովրդական դիվանագիտության ծրագրին*, որը պիտի ամփոփվեր վեց ամիս անց:

Ես անհանգիստ էի, որ ժողովրդական դիվանագիտության իրականացման հնարավորությունների պատուհանը շուտով կփակվի: Հետևելով իր 1987թ. բաձևին՝ Եվրախորհրդարանը վերահաստատեց, որ եթե Թուրքիան ցանկանում է անդամակցել ԵՄ-ին, ապա պետք է ընդունի, որ 1915թ. իրադարձությունները որակվում են որպես ցեղասպանություն: Բանաձևը նաև կոչ էր անում Թուրքիային վերացնել Հայաստանի տնտեսական շրջափակումը:

Եվրախորհրդարանի բանաձևի արդյունքում մեծ թվով թուրքեր սկսեցին ԵՄ-ն համարել մի հասարակություն, ուր մահմեդական թուրքերի արժեքները պարզապես ողջունելի չեն: Շատ թուրքեր իրենց մերժված էին զգում և համարում էին, որ իրենց վերաբերվել են որպես երկրորդ կարգի քաղաքացիների: Թուրքիան վիրավորվեց՝ տեսնելով նախկին Վարշավյան դաշինքի երկրներին ԵՄ-ի անդամության թեկնածուների առաջին շարքերում, մինչդեռ Թուրքիան՝ ՆԱՏՕ-ի վաղեմի անդամը և Արևմուտքի բարեկամը, մի կողմ էր հրված և ձեռքին ուներ իր թեկնածության առաջադրման բանակցությունների սկսման ժամկետը միայն:

2001թ. փետրվարի 1-ին Ֆրանսիայի խորհրդարանն ընդունեց մի հստակ բանաձև, ըստ որի՝ «Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը»: Թուրքիան դրան պատասխանեց Ֆրանսիայում իր դեսպանին հետ կանչելով և չեղյալ հայտարարելով ֆրանսիական «Թալես» և «Ալկատել» ընկերությունների հետ կնքած երկու առևտրական գործարքները՝ յուրաքանչյուրը շուրջ 200 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ: Թուրքիայի պաշտպանության նախարարը զգուշացրեց, որ բանաձևը հետևանքներ կունենա սպառազինության մատակարարման համար մրցույթին ֆրանսիական հայտերի գնահատման վրա: Երբ Գունդուզը զանգահարեց հետաքրքրվելով այդ գարնանը նախատեսված մտավոր գրոհի նախապատրաստություններով, ինձ ասաց, որ թուրքական ընկերությունները բոյկոտ են կազմակերպում ֆրանսիական արտադրանքների նկատմամբ: «Կալիֆորնիական գինիները նույնպես շատ լավն են: Ձեր բոյկոտը լավ է ամերիկյան բիզնեսի համար»,- նախատեցի ես:

Ինչու՞ է Թուրքիան այդպես ցավագին արձագանքում ցեղասպանության միջազգային ճանաչմանը: Թուրքերը հրաժարվում են ճանաչել ցեղասպանությունը, որովհետև ճանաչումը հակասում է իրենց ազնիվ կերպարի մասին սեփական ընկալմանը: Վիրավորական է դատվել միջազգային հանրային կարծիքի դատարանում այն իրադարձությունների համար, որոնք տեղի են ունեցել անգամ Թուրքիայի Հանրապետության ստեղծումից առաջ: Միաժամանակ Թուրքիայի կառավարությունը վախենում է, որ արշավը փոխհատուցման կամ տարածքային պահանջների իրավական հիմք է ստեղծում: Անկարան նաև անհանգստանում է, որ Հայաստանը ցանկանում է հետ ստանալ նախնիների տարածքները, օրինակ՝ Արարատ լեռը: Թուրք ազգայնականները դեռ համոզված են, որ երկիրը շրջապատված է թշնամական ուժերով, որոնք փորձում են այն ոչնչացնել:

Քոչարյանն անդրադարձավ այս մտահոգություններին թուրք առաջատար լրագրող Մեհմետ Ալի Բիրանդի հետ հարցազրույցի ժամանակ: Հանդիպման նախապատրաստությունները հաստատելուցս հետո Բիրանդը Երևան թռավ Սի-Էն-Էն/Թուրք-ի իր նկարահանող խմբի հետ Հայկական ավիաուղիների հին Տուպոլև պտտուկավոր ինքնաթիռով: Հարցազրույցն արժեր կատարած ուղևորությանը: Քոչարյանն ասաց Բիրանդին. «Ես գիտեմ, որ Թուրքիայում որոշ մարդիկ կարծում են, որ եթե ցեղասպանությունն ընդունվի, Հայաստանը Թուրքիային տարածքային պահանջներ կներկայացնի: [Սակայն] ցեղասպանության ճանաչումը չի հանգի իրավական հետևանքների կամ տարածքային պահանջների»[16]: Քոչարյանի հավաստիացումն օգնեց հանդարտեցնելու մտավախությունները Հայաստանի

մտադրությունների առնչությամբ: Այն նպաստեց նաև ժողովրդական դիվանագիտության հաջորդ փուլի համար բարենպաստ մթնոլորտ ստեղծելուն:

Ծանոթագրություններ

1. Թղթակցություն ԱՄՆ Կոնգրեսի անդամների հետ, 2000թ., 12 հոկտեմբերի:
2. Դեսպան Ռոբերտ Փիրսոնի հայտարարությունը, 2000թ., 5 հոկտեմբերի:
3. Փոլ Վոլֆովից, 2002թ. դասախոսություն Թուրգուտ Օզալի հիշատակին, Վաշինգտոնի Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտ:

Turkish Daily News, July 21, 2001.

4. Հեղինակի հետ հարցազրույց, 2003թ., 6 օգոստոսի:
5. Հեղինակի հետ հարցազրույց, 2003թ., 5 օգոստոսի:
6. Նույնը:
7. Mathew Berkowitz, “The Dark World of the Armenians,” The Jerusalem Post, September 22, 2003.
8. The Armenian Genocide: News Accounts from the American Press 1915–22, edited by Richard D. Kloian, Armenian Genocide Resource Center of Northern California, 2000.
9. Samantha Power, “A Problem from Hell: America and the Age of Genocide,” HarperCollins Publishers, 2003.
10. Մեհմետ Ալի Բիրանդի հարցազրույցը նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, 2001թ., 23 փետրվարի:

Turkish Daily News, July 12, 2001.

11. Արտգործնախարար Վարդան Օսկանյանի նկատառումները, ՏԵՍԵՎ, Ստամբուլ, 2002թ., 26 հունիսի:
12. Gunduz Aktan, “And Now France,” Turkish Daily News, November 1, 2000.
13. Հուշագրում PDAS/ECA Հելենա Ֆինի կողմից, 2000թ., 15 դեկտեմբերի
14. Մեհմետ Ալի Բիրանդի հարցազրույցը նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, 2001թ., 23 փետրվարի:

4

Կարեկցանք

Եթե 2000թ. հունիսին Վիեննայում կայացած հանդիպումը ժողովրդական դիվանագիտության դասական օրինակ էր, որն ընդգրկում էր գիտնականների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հաջորդ հանդիպումը շատ ավելի քաղաքական էր: Լուռ համաձայնություն տալով իսկության և հաշտեցման գործընթացին՝ Թուրքիայի և Հայաստանի իշխանությունները իրավամբ հետաքրքրված էին արդյունքով: Երկուսն էլ «ոչ պաշտոնական» ներկայացուցիչների ուղարկեցին քննարկումներին հետևելու համար:

Հայկական պատվիրակությունն ընդգրկում էր Դավիթ Հովհաննիսյանին՝ Հայաստանի նախկին արտաքին գործերի նախարարի վստահված անձին: Նախկինում Սիրիայում Հայաստանի դեսպանը լինելով՝ Դավիթը տարածաշրջանի հարցերով «ընդհանուր պատասխանատու» էր նշանակվել: Նա նաև դասախոս է Երևանի պետական համալսարանում, որտեղ հարգված է որպես լավ գիտնական և Ղուրանի ուսումնասիրությունների մասնագետ: Դավիթը խիստ սակավախոս անձնավորություն է, սիրում է ջազ և հաճախ հպարտությամբ է խոսում իր թոռնիկի մասին: Նա մասնակցեց հանդիպմանը որպես մասնավոր անձ:

Վան Գրիգորյանին և Դավիթին միացավ Ալեքսանդր Արզումանյանը՝ Հայաստանի նախկին արտգործնախարարը և ՄԱԿ-ում Հայաստանի դեսպանը: Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման ժամանակ Ալեքսանդրը

Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու անհաջող փորձ արեց: Չնայած Ալեքսանդրի կինը Ֆիլադելֆիայից է, Արզումանյանները որոշեցին ընտանիքով բնակվել Երևանում: Ալեքսանդրը անչափ մտահոգված է Հայաստանի զարգացման վրա Թուրքիայի ազդեցության հետևանքներով:

Օզդեմ Սանբերկը թուրքական կողմից էր: Օզդեմի՝ որպես փոխարտգործնախարարի պարտականությունների մեջ էին մտնում Թուրքիայի և Ադրբեջանի միջև երկկողմ հարաբերությունները: Նա հանգուցային դեր խաղաց 1995թ. հեղաշրջման գործում: Նրա մասնակցությունը վստահեցնում էր, որ Բաքվի շահերը չեն անտեսվի: Օզդեմին էր միացել Գունդուզ Ակտանը: Թեև և՛ Օզդեմը, և՛ Սանբերկը «նախկին պաշտոնյաներ» են, սերտ կապեր են պահպանում արտգործնախարարության հետ: Գունդուզը հատկապես կապված է պետական կառույցների, նաև Ազգային անվտանգության խորհրդի ներկայացուցիչների հետ:

Մենք ներկա եղանք Մոցարտի կոնցերտներից մեկի կատարմանը հին քաղաքի մի փոքրիկ թատրոնում: Ես հուսով էի, որ համերգը կխաղաղեցնի խմբին: Հայերն անհանգիստ էին Գունդուզի առնչությամբ: Նրանց համար նա ծայրահեղ «ժխտողական» է: Գունդուզը ծայրահեղ ազգայնականի իր համբավը հաստատեց Կոնգրեսում 596-րդ բանաձևի դեմ իր վկայախոսության ժամանակ:

Հանդիպումը նման էր գործարքի: Հայ մասնակիցները շեշտում էին Հայոց ցեղասպանությանը վերաբերող բաց քննարկման կարիքը: Թուրքերը ասում էին, որ իրենք պատրաստ են քննարկել ցանկացած թեմա: Երբ գալիս էր որոշում ընդունելու պահը, Գունդուզն ու Օզդեմն իրենց բջջային հեռախոսներով դուրս էին գալիս զրուցելու: Թվում էր, թե նրանք գործում են կառավարության հրահանգներով:

Երկու օր լարված քննարկումներից հետո մենք մշակեցինք մի ծրագիր, ըստ որի՝ ստեղծվելու էր հանձնաժողով՝ պատմագիտական, հոգեբանական և իրավագիտական աշխատանքներով զբաղվող խմբերով: Մենք որոշեցինք պատմական հարցերով զբաղվող խմբի աշխատանքներն առանձնացնել ըստ տարբեր ժամանակաշրջանների՝ ազգայնականության վերելքի (1878-1885), սուլթան Աբդուլ Համիդի կառավարման (1886-1896), XIX դարավերջի և XX դարասկզբի դեպքերի (1896-1922) և ժամանակակից հարաբերությունների (1965 և 1972-ից մինչ օրս)[1]: Հայ-թուրքական հարաբերությունների դարաշրջանի ընդգրկումը կապահովեր պատմական համատեքստը, այդ թվում՝ հայերի ապստամբությունը, Հայոց ցեղասպանությունը և հայկական ահաբեկչական գործողությունները 1970-ականների և

1980-ականների ընթացքում: Քանի որ թուրքերը մտահոգված էին օրակարգի և ժամանակացույցի սահմանման հարցում, համաձայնեցինք «աստիճանական մոտեցումով և ճկուն աշխատակարգով վստահություն ձևավորելու» հարցում: Համաձայնեցինք նաև, որ «Հաշտության հանձնաժողովին վերաբերող բոլոր հարցերը կառնչվեն միայն մասնակիցներին և չեն բացվի հասարակության առջև»[2]: Մասնակիցները ցանկանում էին հիմք ստեղծել՝ համախոհներ ձեռք բերելով և բացատրելով նախաձեռնությունը գործընթացը հունից հանելու ունակ անձանց:

Ավելի մեծ խումբ հանդիպեց մեկ ամիս անց Վիեննայում: Թուքական կողմին էր միացել Իլտեր Թուրքմենը, որը 1980-83թթ. եղել էր արտգործնախարար և ապա ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ: Իլտերը պատմեց իր Հայաստան կատարած առաջին այցի մասին: 1941թ. Իլտերն արձակուրդի էր մեկնել իր հոր մոտ, ով Մոսկվայում թուրքական դեսպանատան ռազմական կցորդն էր: Երբ Հիտլերյան Գերմանիայի օդուժը սկսեց ռմբակոծել քաղաքը, նրան և ընտանիքի այլ անդամներին նստեցրին սովետական գնացք և քաղաքից դուրս ուղարկեցին: Տասնյոթ օր անց խումբը մտավ Հայաստան, անցավ Գյումրին և վերջապես հատեց Թուրքիայի սահմանը՝ մտնելով Կարս: Իլտերը տեղյակ չէր Հայաստանի և Թուրքիայի հակասություններին, քանի դեռ ԱՍԱԼԱ-ն չէր սկսել սպանել թուրք դիվանագետներին: Իլտերը պատմեց, թե ինչպես է «որպես արտգործնախարար՝ հաճախակի մեկնել թաղումների: Ես պահպանում եմ Թուրքիայի բոլոր լավագույն դիվանագետների հիշատակին արտասանած մահախոսական ճառերիս թղթապանակը»[3]: Չնայած այս փորձառությանը՝ Իլտերը դարձավ ՀԹՀՀ-ի ամենակարևոր մասնակիցներից մեկը: Իլտերը իմաստուն մարդ է, նրա ազնիվ վարքը և ամուր կամքը անգնահատելի էին: Երբ ՀԹՀՀ-ն հաջորդ տարի գրեթե կործանվեց, Իլտերը և Վանը բազմիցս առանձին հանդիպել են գործընթացը պահպանելու նպատակով: Ուստուն Էրգուդերը հավասակշռված և բարձրաշխարհիկ մարդ է, նա իրեն շատ աժանապատվորեն է դրսևորում: Վիեննայում իրեն ներկայացնելիս Ուստունը նկարագրեց իր առաջին բախումը հայկական հարցին: «Որպես Մանչեստրի համալսարանի շրջանավարտ՝ ես ժամեր էի անցկացնում գրադարանում: Մի օր հայտնաբերեցի անկախ աղբյուրների մի ամբողջ տրցակ, որ նկարագրում էր Օսմանյան կայսրության վերջին տարիները: Դա մի մեծ հայտնագործություն էր»[4]: Ուստունը ականավոր գիտնական դարձավ: Բողազիչի հա-

մալսարանի ռեկտորի պաշտոնից թոշակի անցնելուց հետո նա Սաբանչի համալսարանում հիմնեց Ստամբուլի քաղաքականության կենտրոնը: Որպես ՀԹՀՀ-ի մասնակիցների թվում քաղաքացիական հասարակության միակ իրական ներկայացուցիչ՝ Ուստունը հաշտեցման գործընթացի հերոսական գործիչ պիտի դառնար: Ուստունին և Իլտերին ինձ հետ ծանոթացրեց Հելենա Ֆինը:

Սադի Էրգուվենչը հարգանք վայելող պաշտոնաթող երեքաստղակիր գեներալ է, որ Պարսից ծոցի պատերազմում Ինջիլրիկ ռազմաօդային բազայի հրամանատարն է եղել: Թեև էությամբ զուսպ է, Սադին սերտ կապեր ունի Թուրքիայի անվտանգության հաստատության հետ և հետևում է իր պաշտոնական դիրքորոշմանը: Պաշտոնաթող լինելուց հետո Սադին պաշտոն ստանձնեց ամենազոր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարությունում: Նա հաճախ է մասնակցում միջազգային խորհրդաժողովների: Առաջին շարքում բազմած՝ Սադին ժպիտ է դնում Թուրքիայի հաճախ անհաշտ հարևանական հարաբերությունների դեմքին:

Գունդուզը հրավիրեց Վամիկ Վոլկանին՝ Շարլոտսվիլում Վիրջինիայի համալսարանի հոգեբանության դասախոսի:

Վամիկը մեծ ավանդ ունի՝ որպես դասախոս և ժողովրդական դիվանագիտության մասնագետ: Սակայն նրա մոտեցումը դուր չեկավ մասնակիցներին, որոնք այնպիսի տպավորություն ունեին, կարծես իրենց հոգեվերլուծության են ենթարկում: Արդյունքում Վամիկը մասնակցեց միայն մի քանի հանդիպումների: Վնասվածք ստացողի հոգեբանությանը և ինքնությանը վերաբերող հարցերը կրկին էին ծագելու մեր քննարկումների ընթացքում: Նրա հեռացումը կորուստ էր:

Հերբերտ Կելմանը՝ Հարվարդի համալսարանի դասախոսը և բազմաշերտ դիվանագիտության կնքահայրը, տարակուսում է, թե արդյոք ՀԹՀՀ-ն իրո՞ք ժողովրդական դիվանագիտություն է, քանի որ դրա որոշ մասնակիցներ իրենց կառավարության հրահանգներով էին գործում[5]: Ես ՀԹՀՀ-ի թուրք մասնակիցներին ընտրեցի հենց Թուրքիայի կառավարության հետ ունեցած կապերի պատճառով: Ենթադրում էի, որ նրանց կապը ապարատի հետ առավելություն է: Նրանք ոչ միայն ծանոթ էին թուրք պաշտոնյաների մոտեցումներին, որոնց վրա հույս ունեինք ազդել, այլև նրանց՝ որպես պետության պաշտպանների համբավն անհրաժեշտ էր, որպեսզի Անկարայում ՀԹՀՀ-ի քննադատները չեզոքացվեին:

Թուրքիան գերի է այն հոգեբանությանը, երբ բազմաթիվ թուրքեր հավատում են, որ աշխարհն իրենց դեմ է: Նրանք մատնանշում են 1920թ. Սևրի պայմանագիրը՝ որպես երկիրը ոչնչացնելու միջազգային դավադրութ-

յուն: Առաջին համաշխարհային պատերազմից հետո դաշնակիցները փորձեցին Սևրի պայմանագիրը պարտադրել Օսմանյան Թուրքիային: Դրա փոխարեն Աթաթուրքը հաղթեց դաշնակիցներին Գալիպոլիսում, հաղթեց Անկախության պատերազմում և ստեղծեց ժամանակակից, աշխարհիկ Եվրոպային հարևան հանրապետություն: Շատ թուրքեր համոզված են, որ Սևրի պայմանագիրը Մեծ ուժերի՝ ազդեցության մթնոլորտ ստեղծելու և Թուրքիայի հավակնությունները բռնաճնշելու փորձն էր: «Սևրի համախտանիշը» հիմնված է այն համոզման վրա, որ դրսի ուժերը ցանկանում են թուլացնել և մասնատել Թուրքիան: Իլտերը պնդում է. «Սևրը գոյություն ուներ որպես առասպել, որը վերջերս կենդանացավ ազգայնականների շնորհիվ»[6]: Մենք կորցրել ենք այն ինքնավստահությունը, որ ոգեշնչել էր մեզ Աթաթուրքը»[7]:

ՀԹՀՀ-ն քննարկեց Թուրքիայում որոշումների կայացման գործընթացի անթափանցիկության հարցը: Այսպես կոչված ընդերք- պետությունը ներառում է զինված ուժերը, մտավորականությունը և բյուրոկրատիան: Այն առաջացավ ի պատասխան թույլ կառավարություններին, որոնք անկարող էին վերահսկել երկրում տեղի ունեցող իրադարձությունները: Ընդերք-պետությունը գործադրում է իր արտակարգ ուժը, որպեսզի պաշտպանվի վտանգներից՝ իրական կամ մտացածին: Դրա գործունեությունն աներևույթ է, առանց խորհրդարանի իրավական մանդատի կամ լիազորության: Այն ազդում է հասարակության հիմնարար սոցիալական և քաղաքական հաստատությունների վրա՝ ի շահ ստատուս քվոի պահպանման: Նրա կադրերի և հաստատությունների, կարգ ու կանոնի ցանցն ամենակարող է և ամենահաս:

Որպես Թուրքիայի ինքնիշխանության առաջամարտիկ՝ ընդերք-պետությունը դեմ է Եվրամիությանն անդամակցելուն: Սրան մտահոգում են զինված ուժերի հանդեպ քաղաքացիական հսկողության խնդիրը, նա դեմ է դրա ծախսերի թափանցիկությանը: Ընդերք-պետությունը ժխտում է առաջընթացը Կիպրոսում, Հայաստանի շուրջ քննարկումները և քրդերի մարդու իրավունքների բարելավումը: Այս խնդիրներին հետամուտ լինելը դրան հնարավորություն է ընձեռում արտոնյալ դիրք պահպանել: Սպառնալիքների նվազման պարագայում քեմալական բազեները չեն կարող արդարեցնել 750.000-անոց զինված բանակի գոյությունը:

Ընդերք-պետության՝ ազգապահպան նպատակն ի չիք է դարձել թափանցիկության պակասի պատճառով: Քաղաքացիական ծառայողները խոնարհվում են դրա բացարձակ ուժի առջև: Անգամ Թուրքիայի գործարար վերանախավը, որը կառավարությունը իրենով անելու համբավ ունի, երբեք

ընդերք-պետության դեմ չի ընդվզում: Նրանք պարտավոր են սնվել պետությանը պատկանող բանկերից: Նրանց եկամուտները ձևավորվում են պետական պատվերներից և պետական արտոնագրերի կարիք ունեն: Խոշոր կորպորացիաներին են պատկանում նաև բոլոր լրատվամիջոցները, որոնք պաշտպանում են պետական շահերը: Թուրքիայի հսկա հովանավորչական համակարգը վերահսկում են իշխանությունը ձեռքում պահողների հետ սերտաճած արտոնյալ խմբերը:*

Թեպետ կարևոր էր վստահություն ձեռք բերել՝ պաշտոնաթող դիվանագետների ընդգրկելով, Ուստունը հետագայում գանգատվելու էր, որ ժողովրդական դիվանագիտությունը «զավթվել են [պաշտոնյաները]: Մեզ անհրաժեշտ էր դուռ բացել դեպի արտգործնախարարություն, բայց մենք չպետք է թույլ տայինք գերիշխել»[8]:

Ես շարունակ պնդում էի Վանին, որ հարկավոր է ընդլայնել հայերի խումբը, բայց միայն մեկ նոր հայ միացավ ՀԹՀՀ-ին: Անդրանիկ Միհրանյանը փորձառու է, անկոտրում և պերճախոս: Նա եղել է Բորիս Ելցինի արտաքին գործերի քաղաքականության ավագ խորհրդատուն և Ռուսաստանում հայ համայնքի գործիչ է, ինչպես նաև Մոսկվայի պետական համալսարանի դասախոս: ՀԹՀՀ-ի հայ անդամների համար նա նույն դերը խաղաց, ինչ Գունդուզը՝ թուրքերի պարագայում: Նա հայկական ազգային շահերի ագրեսիվ կողմնակից է և միշտ հարձակողական դիրքում է:

Բոլորս անհամբեր էինք բացման երեկոյան Ավստրիական համերգի ընթացքում: Չոր փայտե աթոռներն անհարմար էին: Համերգասրահում շոգ էր, իսկ կատարումը հեռու կատարելությունից: Բոլորն անհամբեր սպասում էին աշխատանքը սկսվելուն: Հաջորդ առավոտյան մենք պատմական, հոգեբանական և իրավական հարցերի համակարգված քննարկում սկսեցինք, որոնք ազդելու էին հանձնաժողովի աշխատանքների վրա: Դավիթը սկսեց հարցով. ո՞վ ենք մենք: Ներկայացնելով պատմության բեռը՝ նա բացատրեց, թե ինչպես է Հայոց ցեղասպանությունը անջնջելի կնիք թողել ողջ աշխարհում հայերի ընդհանրական ինքնության ձևավորման վրա: Թեև անցել է 85 տարի, սակայն հայերը դեռ վրդովված են իրենց անցյալի կորուստներից: Մինչ օրս նրանք մտահոգ են իրենց անվտանգության և ապագա անվտանգության խնդրով: Ի պատասխան իրենց հավաքական ցավին ու տառա-

*Թուրքիայի ԵՄ անդամակցությանն առընչվող բարեփոխումները ընդերք-պետությանը մղում են դեպի լուսանցք:

պանքին՝ հայերը սփոփանք են գտնում իրենց ընտանիքներում և եկեղեցում, որն ապահովում է կապը նույն ինքնության առավել մեծ խմբի հետ: Ցեղասպանության ժխտումը Թուրքիայի կողմից ազդում է հայերի ընդհանրական ինքնագնահատականի վրա: Նրանց տանջանքների ժխտումը թուրքերի մեծամասնության կողմից անարդարության և ցասումի սուր զգացում է ծնում:

Ես ականատես եղա ժխտման ազդեցությանը հայերի վրա, երբ մի քանի ամիս անց ՀԹՀՀ-ն հարցազրույց անցկացրեց պաշտոնաթող թուրք դեսպաններ Օմեր Լութեմի և Մումթազ Սոյզալի հետ: Երբ հայերը փորձեցին նկարագրել իրենց սեփական տներից քշված լինելու կսկիծը, Լութեմն ընդհատեց. «Թուրքական գրքերը ցույց չեն տալիս որևէ հայի ներկայություն մինչև թուրքերը: Անատոլիան երբեք չի եղել հայերի հայրենիք: Դուք պարզապես եկվոր էիք»: Երբ Ալեքսանդրը նշեց, որ իրենց ներկայությունն Անատոլիայում բավարար է եղել կառուցելու համար ավելի քան չորս հազար եկեղեցի, Սոյզալն ավելացրեց. «Մենք փորձել ենք ոչնչացնել բոլորը, բայց դրանք պարզապես շատ-շատ էին»: Հետո Լութեմը սպառնաց. «Եթե հայերը պնդեն ցեղասպանությունը, Թուրքիան կվնասի Հայաստանին: Դուք դա՞ եք ցանկանում»: Մենք մտածեցինք՝ մի՞թե Լութեմն ու Սոյզալն այդ աստիճան ատելությամբ են լցված: Արդյոք նրանց դիտողությունները դիմացինին ստորացնելո՞ւ, թե՞ ընդհարում սադրելու նպատակ ունեին[9]:

Թեև Լութեմն ու Սոյզալը ծայրահեղ օրինակներ են, բայց նույնիսկ պասիվ ժխտումը վրեժի մղում է առաջացնում: Հայերն արդարություն են ցանկանում իրենց դեմ գործած չարիքների համար: Արդարություն նշանակում է, որ մարդիկ պատասխան տան իրենց հանցնաքների համար: Այն նշանակում է նաև հրապարակավ ընդունում, ինչն էլ կհանգեցնի հանգուցալուծման և թեմայի փակման: Ի լրումն՝ արդարություն նշանակում է կազմաքանդել այն բոլոր ինստիտուտները, որոնք կեղեքումների գործիք են եղել: Արդարության ընդունումը օգնում է կասեցնել ապագա դաժանություններն ու բռնությունները[10]:

Հայերն արդարության կարիք ունեն: Օսմանյան կայսությունն այլևս չկա, և այն անձիք, ովքեր հանցանք են գործել, մահացել են տարիներ առաջ: Քանի որ Թուրքիան հրաժարվում է ճանաչել Ցեղասպանությունը, հայերը համոզված են, որ միակ ճանապարհն այլ կառավարություններում և հասարակակն կարծիքի միջազգային ատյաններում ճանաչում փնտրելն է: Առանց ճանաչման՝ հայերի վիշտը հավերժ է, և հայերը դատապարտված են հիշել, ինչ իրենք կորցրել են:

Դոկտոր Անի Քալայջյանը վստահ է, որ անկեղծ ցավակցությունը հսկա-

յական բուժող հատկություններ ունի, սակայն զոհը չպետք է պասիվ լինի այն պնդելու հարցում: Նա գրում է. «Հանցագործության ներումը քանդում է զայրույթի, դատապարտման և մեղադրանքի շրջանը: Շատ հայեր ներելը շփոթում են մոռանալու հետ»[11]: Ատելության շրջանը նաև կարող է քանդվել, երբ զոհն ընդունի, թե ինչպես իր գործողությունները կարող էին նպաստել իր զոհ լինելուն: 1949թ. Քոջիրո Կուրիյաման՝ Ճապոնիայի խորհրդարանի անդամը, ներողություն հայցեց Ճապոնիայի՝ Հիրոսիմայի և Նագասակիի ռմբակոծմանը հանգեցրած դերի համար: «Մենք ազնվորեն զղջում ենք, որ Ճապոնիան խզել է մեր երկրների ավելի քան մեկդարյա բարեկամությունը»[12]: Նույն կերպ ֆրանս-գերմանական բարեկամությունն անհնար կլիներ, եթե Գերմանիան չընդուներ իր ագրեսիան և չզղջար Հոլոքոստի համար:

Դեպքերի համատեքստը գնահատելը, սակայն, չպետք է օգտագործվի բարոյական համադրությունն արդարացնելու համար: Օրինակ՝ հայերն արհամարհանքով վերաբերվեցին, երբ Թուրքիայի պետական արխիվները փաստաթղթեր հրապարակեցին՝ հերքելով հայերի ցեղասպանությունը՝ պնդելով, որ իրականում հայերն են կազմակերպված կոտորածներ իրականացրել: Որոշ թուրքեր պնդում են, որ հայերն իրենք են իրենց ենթարկել կոտորածների՝ դավաճանելով Օսմանյան կայսրությանը: Փոխըմբռնման փոխարեն նման հայտարարություններն էլ ավելի են բևեռացնում դիրքերը և խրամատավորում թշնամական հայացքները[13]:

Դավիթը բացատրեց, որ ցեղասպանության ճանաչումը կարևոր է հաշտեցման համար: «Ես հավատում եմ, որ ապագայի ձեռքում բազում հնարավորություններ կան հայերի և թուրքերի համար»,- ավելացրեց Անդրանիկը:- Մենք ունեցել ենք շատ կարևոր ընդհանուր պատմություն: Լավ կլիներ, եթե կետրոնանայինք ապագա համագործակցության հնարավորությունների վրա. սահմանների բացում, տնտեսական հարաբերություններ և մշակութային աշխատանքներ: Հենց որ սա սկսի գործել, ապա դուք կկարողանաք պատմությունը նայել վերացարկված»[14]: Ուստունը կարծում է, որ հաշտեցման բանալին «սահմանները բացելն է, դիվանագիտական հարաբերությունները քննարկելը և ցեղասպանությունը որոշ ժամանակով մի կողմ դնելը»[15]: ՍակայնԴավիթը զգուշացնում է. «Առաջ նայել, չի նշանակում մոռանալ անցյալը»[16]:

«Մենք՝ թուրքերս, հետ չենք նայում մեր անցյալին»,- բացատրեց Գունդուզը:- Մենք երբեք չենք լսել մեր տառապանքների մասին: Փոխարենը մեր հայացքը ապագային է ուղղված: Հանրապետությունը հենց ցավի այս մոռացումի վրա է հիմնվել»[17]: Գունդուզը նկատի ուներ Օսմանյան կայսրութ-

յան վերջին տարիները: Ադրիատիկից մինչև Կասպից ծով օսմանյան տարածքները կորսվեցին, երբ կայսրությունը փլուզվեց: «Միլիոնավոր մարդիկ սպանվեցին և քշվեցին իրենց տներից: Սա միայն հող կորցնելու հարց չէր: Միլիոնավոր մարդիկ դաժանորեն սպանվեցին, հաշմվեցին և գաղթեցին: Այս վերջին տարագրությունը դիպավ Անատոլիայի բոլոր ժողովուրդներին: Ընդհանուր պատմությունը վերացավ»[16]:

Թուրքերը նախընտրում են կենտրոնանալ անցյալի փառքի վրա: Պատմության ընտրողական ընթերցումը շեշտում է սուլթանների փառքը և նրանց հերոսական հաղթանակները կռիվներում: Կրթված թուրքերը գիտեն սուլթան Սելիմ Առաջինի մասին, ով նվաճեց Հյուսիսային Աֆրիկան: 1517-ին Սելիմը Մուհամեդ մարգարեի սուրբ մասունքները Կահիրեից տեղափոխեց Կոնստանդնուպոլիս: Այդուհետ օսմանյան սուլթանները նաև խալի ֆներ էին՝ մարգարեի ներկայացուցիչները և սունի իսլամի հետևորդների առաջնորդներ: Սելիմի որդին՝ Սուլեյման Մեծը, նույնպես փառաբանված է: Նա հասել էր Վիեննայի դարպասներին և իշխում էր Եվրոպայի կեսին: Օսմանյան իշխանությունն այն օրերին բարորակ էր և լուսավորյալ: Քանի դեռ հնազանդ էին և վճարում էին հարկերը, նվաճված ժողովուրդներին թուլատրվում էր ունենալ իրենց առաջնորդներին և հետևել իրենց համայնական ավանդույթներին: Թեև փոքրամասնությունները ենթարկեցված էին տեղի տերերին («բեյեր») և տարածաշրջանային հրամանատարներին («փաշաներ»), «Միլլեթի համակարգը» հնարավորություն էր ընձեռում կրոնական համայնքներին վարել սեփական գործերը, ինչն էլ զարգանալու հնարավորություն էր տալիս կրոնական խմբերին:

Ի պատասխան եվրոպական ուժերի՝ երկիրը թուլացնելու ջանքերին, Աթաթուրքը շեշտեց Թուրքիայի սահմանների անխախտության գաղափարը: Թուրքերը երբեք չեն հաստատվում իրենց պարտությունների վրա՝ ձևանալով, որ անհաջողություններ երբեք չեն պատահել: Օրինակ՝ չկան արխիվներ, որ պատմեն Օսմանյան կայսրության վախճանի մասին: Բոլոր փաստաթղթերը զտվել են: Թուրքիայի Հանրապետությունն ընտրողական հիշողության երկիր է:

Քննարկում ծավալվեց քաղաքական կոն ֆլիկտի հոգեդինամիկայի շուրջ: Վամիկը առաջ քաշեց վարկած, որ ամենադժվար հակամարտությունները նրանք են, երբ երկու կողմերն էլ հաշմող կորուստներ են կրել: Շատ մարդիկ կան Թուրքիայում, ում նախահայրերը Բալկաններում, Կովկասի և Սև ծովի ավազանի հողերում ջարդերի զոհեր են եղել: Նա բացատրեց, որ թուրքերը հոգնել են դատապարտվելուց: Նրանք նույնպես կորուստներ են ունեցել, և նրանց տառապանքներին նույնպես պետք է կարեկցել:

Հաշտեցում երբեք չի կարող լինել, քանի դեռ երկու կողմերը չեն հաղթահարել միմյանց լսելու խոչընդոտը և չեն կարեկցում միմյանց ընդհանուր ողբերգությանը: Կելմանը բացատրում է. «Ժողովրդական դիվանագիտության մասնակիցները խոսում են, որ հասկացվեն, և լսում են, որ հասկանան»[19]:

Որպես կիպրոսցի թուրք՝ Վամիկը ազգամիջյան բախումների և համայնքային բռնությունների ողբերգության անձնական փորձ ունի: Նա նկարագրեց իր առաջին հանդիպումը հայի հետ: Երբ Վամիկը երիտասարդ էր, սիրում էր ջութակ նվագել: Նա շատ էր սիրում իր հայ ուսուցչուհուն: Հայերի մասին Վամիկի վաղ պատկերացումների վրա ազդել էր ջութակի ու հայ ուսուցչուհու հանդեպ սերը: Արցունքներ հոսեցին նրա աչքերից, երբ պատմում էր իր ուսուցչուհու մասին:

Վամիկը ներկայացրեց հույն և թուրք կիպրոսցիների հակամարտության հոգեդինամիկային նվիրված իր աշխատանքը: Ըստ Վամիկի՝ ժամանակակից հակամարտության արմատական պատճառը հոգեբանական վիշտն է, որը զգում է խոցված բնակչությունը: Հետտրավմատիկ սթրեսի խանգարման նախանշաններ են տարրական վստահության կորուստը, վիշտ ապրելու դժվարությունը և սերնդեսերունդ փոխանցվող անօգնականության և ստորացման զգացումները: Եվ հույն, և՛ թուրք կիպրոսցի պատմաբանները հսկա գրադարաններ ունեն, որոնք արդարացնում են նրանց տեսակետները Կիպրոսի բաժանման վերաբերյալ: Մենք ծիծաղեցինք, երբ Վամիկն ասաց, որ պատմաբանները ոչնչի շուրջ չեն կարողանում համաձայնության գալ:

Վամիկը նախընտրում է աշխատել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Նա վստահ է, որ բարձր քաղաքական ղեկավարները վատ թեկնածուներ են հոգեդինամիկ աշխատանքի համար: Նրանք չափազանց սևեռված են սեփական հրապարակային կերպարի վրա, և որպես քաղաքական գործիչներ՝ սեփական համակիրների շրջանակից անդին խուսանավելու սահմանափակ հնարավորություն ունեն: Ավելի՛ն, քաղաքական գործիչները հաճախ քաղաքական շահ են հետապնդում՝ անարդարության զգացումով պայմանավորված զայրույթը սրելով: Այդ անելիս՝ նրանք օգտվում են «ընտրյալ ցավից»: Այսպես, Սլոբոդան Միլոշևիչն արթնացրեց վարակիչ սերբական ազգայնամոլականությունը՝ ոգեկոչելով դավաճանության, զոհողության և մահվան հիշողությունները: Նա գերեզմանից հանեց 1389թ. Կոսովոյի կռվում նահատակված արքայազն Լազարի՝ Սերբիայի մեծ ռազմիկի աճյունն ու ցուցադրեց երկրով մեկ, որպես հիշեցում սերբերին մահմեդական թուրքերի դեմ անավարտ կռվի մասին:

«Ընտրյալ ցավը» հնարավորություն է տալիս զոհին խորասուզվել սեփական կորուստների մեջ: Ինքնակենտրոնացումը չի թողնում ընկալել, որ հալածողները թերևս ինչ-որ պահի նույնպես զոհեր են եղել: Վամիկը վստահ է, որ անհնար է հաշտեցման հասնել՝ չանդրադառնալով թե՛ զոհի, թե՛ հալածողի հոգեբանական կարիքներին: Գունդուզը բացատրեց. «Անհնար է, որ որևէ իշխանություն, որը սեփական զավակներին չի սովորեցնում անցյալի ցավը, հասկանա ուրիշի կսկիծը»[20]:

Գունդուզն ու Անդրանիկը Դիվանագիտական Ակադեմիայի այգում ճաշի նստեցին կողք-կողքի: Երկուսն էլ սեփական ազգայնական հայացքների անթաքույց համակիրներ են: Թվում էր, թե մեր առավոտվա քննարկումը ազդեցություն է ունեցել: Նրանք, սուրճ ըմպելով, ճեմում էին միասին, մինչ Գունդուզը ծխում էր իր սիգարը: Նրանց կառուցողական շփումը, սակայն, լուրջ փորձության էր ենթարկվելու նույն օրը՝ կեսօրին:

Նախաճաշից հետո Գունդուզը թուղթ ներկայացրեց մարդասիրական միջազգային իրավունքի զարգացման վերաբերյալ, որի գագաթնակետը Նյուրնբերգի դատավարություններն ու Ցեղասպանության հանցանքները կանխելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունումն են (1948թ. դեկտեմբերի 9): Նա հատկապես կենտրոնացավ ցեղասպանության՝ կոնվենցիայում տրված սահմանման վրա: Գունդուզը պնդեց, որ հայերը սպանվել են ոչ այն պատճառով, որ էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբ էին: Նրանց վտարել են, որովհետև ապստամբել էին Օսմանյան կայսրության դեմ: Հայերին աքսորելու որոշումը հիմնված էր ոչ թե այն հանգամանքի վրա, թե ովքեր էին նրանք, այլ՝ ինչ էին անում: Նա պնդում էր. «Հիմնվելով այն փաստի վրա, որ հայերը Օսմանյան Թուրքիայում ազգային անկախության համար պայքարող քաղաքական խումբ էին, նրանց դեմ հանցանքները ցեղասպանություն չեն կարող որակվել: Օսմանյան Թուրքիայում ռասայական ատելություն չկար հայերի նկատմամբ»[21]: Գունդուզը նաև փաստարկեց, որ Ցեղասպանության կոնվենցիան XX դարարասկզբի դեպքերի համար կիրառելի չէ, քանզի միջազգային օրենքը հետադարձ ուժ չունի: Այս հարցը մեկընդմիշտ լուծելու համար նա առաջարկեց, որ Թուրքիայի և Հայաստանի Հանրապետությունները միջնորդության համար իրենց փաստարկները ներկայացնեն Հաագայի արդարադատության միջազգային դատարան:

Հայերը զայրացած էին: Վանը փորձեց թուլացնել լարվածությունը՝ խո-

սելով պայմանագրի նպատակների մասին, սակայն քննարկումը շուտով վերածվեց վեճի, փոխադարձ մեղադրանքների և անձնավորման: Բարեբախտաբար Դիվանագիտական Ակադեմիայի ընթերական թակեց դուռն ու ներս բերեց մատուցարանը՝ սուրճով և թխվածքներով: Մեր սուրճի ընդմիջումը տեղի ունեցավ ճիշտ ժամանակին:

Մտածեցի, որ չարժե շարունակել իրավական հարցերից խոսել: Առավոտվա բարի կամքն անհետացել էր, և գործընթացը կարող էր շեղվել, եթե գրգռող քննարկումները շարունակվեին: Փոխարենը խմբին խնդրեցի մտածել ապագա գործողությունների իրականացման կառուցակարգի մասին: Ձևաչափն ու աշխատանքային ծրագիրն արդեն իսկ համաձայնեցրել էինք նախորդ հանդիպման ընթացքում: Որոշեցի կարգավորել գործընթացը՝ ուշադրություն հրավիրելով նախորդ համաձայնությունների վրա:

Գունդուզը դեռ նյարդայնացած էր նախորդ քննարկումից: Ես ընդմիջման ժամանակ տեսա նրան և Վամիկին զրուցելիս: Վամիկը միջամտեց, որպեսզի պաշտպանի Գունդուզի կարծիքը: Նա մեզ հորդորեց համբերատար լինել: Հաշտեցման ծրագրերը շտապեցնելուց առաջ Վամիկը պնդեց, որ հիմնական խումբն ինքը պիտի փոխակերպվի: Առաջարկեց մեզ ավելի լավ ճանաչել իրար, գնահատել տարբերությունները և խորացնել փոխըմբռնումը: Նա ավելացրեց, որ վստահության հաստատումը կարող է տարիներ տևել:

Գունդուզը չմեղմանալով շարունակեց մնալ հարձակողական դիրքում: Պնդում էր, որ զարգացումն անհնար է, քանի դեռ հայերը չեն դադարեցնի ցեղասպանության միջազգային ճանաչման արշավը: Նա զգուշացրեց հայկական սփյուռքին ցեղասպանության մի նոր բանաձև չկազմակերպել ԱՄՆ Կոնգրեսում: «Մեկ այլ բանաձևի ընդունումը մեծ թշնամանք կառաջացնի հայերի նկատմամբ»,- սպառնաց նա[22]:

Հայերը վստահ էին, որ Գունդուզն ու Վամիկը պարզապես ջուր են ծեծում: Բոլորը հանգիստ էին, քանի դեռ Գունդուզը չէր սկսել քննարկումը իր ձեռքը վերցնել: Հանդիպումը ձախողման եզրին էր: Ընդմիջում հայտարարեցի և Գունդուզի հետ ձեռք ձեռքի ելա այգի:

Ես նրան ասացի, որ փակուղում ենք: Մտադիր էի կրկին հավաքել խումբն ու հայտարարել, որ հանդիպումը հետաձգվում է: Ավելին՝ ապագայում նոր հանդիպումներ չեն լինելու: Ասացի Գունդուզին, որ նա թունավորել է ջրհորը, և ես անպայման այնպես կանեմ, որ և՛ Վաշինգտոնում, և՛ Անկարայում իմանան, որ նա տապալել է նախաձեռնությունը:

Գունդուզն առարկեց. ասացի, որ գործընթացը փրկելու միակ միջոցը համատեղ միջոցառումներն անցկացնող կազմակերպության ստեղծմանն

իր աջակցությունը հայտնելն է: ՀԹՀՀ-ի որոշ անդամների պես, ես ևս օգտագործում էի կապերս իշխանությունների հետ՝ առաջընթաց ապահովելու համար:

Մեր գործընկերներն անհանգիստ սպասում էին, երբ վերադարձանք սենյակ: Ձայն խնդրելով՝ զգուշորեն ընտրելով բառերը վերահաստատեց հաշտեցման կարևորությունն ու իր պատրաստակամությունը գործընթացին: Բոլորը թևթևացած շունչ քաշեցին: Հաշտեցման հանձնաժողովը խուսափեց փլուզումից: Մահացու հարվածը շրջանցեց մեզ: Վամիկն արտահայտեց խմբի զգացումները՝ ընդունելով մեր մազապուրծ կործանումը և ցուցադրելով իր հարգանքը բոլորի հանդեպ: Ես շարունակեցի Վամիկի հաղորդած դրական լիցքը՝ խնդրելով մասնակիցներին նկարագրել իրենց ակնկալիքները:

Անդրանիկը պատմեց իր ընտանիքի պատմությունը, որ Մուշից էր՝ հնագույն հայկական քաղաքից, ներկայում Կենտրոնական Անատոլիայում: Նա պատմեց, թե ինչպես են իր պապերինն ու տատերին իրենց հարևանների հետ միասին չորս կողմից պատին դեմ տվել և վտարել: Նա միշտ երազել է վերադառնալ իր ընտանիքի պապենական հողերը և այցելել հինավուրց օջախը: Հուսով էր, որ երբևէ կհանդիպի թուրքերի, ովքեր հանձ կառնեն նրանց ողբերգության բարոյական պատասխանատվությունը՝ հարգելով նրանց հիշատակը:

Օզդեմը պատասխանեց՝ պատմելով իր ընտանիքի պատմությունը: Իր պապն ու տատը սերում էին Մակեդոնիայի մի գյուղից: Երբ Օսմանյան կայսրությունը կործանվեց, նրանց հարկադրեցին լքել իրենց ունեցվածքն ու առանց կոպեկի հեռանալ Բալկաններից: Նրանց բախտը բերել էր. վրիժառու սերբերն ու բուլղարները Մակեդոնիայում դաժանորեն կոտորել են հարյուրհազարավոր մահմեդականների: Օզդեմը հիշեցրեց Անդրանիկին, որ երկու ընտանիքներին էլ նույն ճակատագիրն է վիճակվել, և որպես նրանց ժառանգներ՝ իրենք պետք է անցյալի սխալները ուղղեն:

Գունդուզը մեջ ընկավ. «Դուք գիտե՞ք, թե ինչ ենք զգում մենք, երբ փորձում եք մեզ խայտառակել՝ ողջ աշխարհի խորհրդարաններում բանաձևեր առաջադրելով: Մենք խոցված ենք»: «Դու՞ք եք վիրավորված: Ինչ ենք, ձեր կարծիքով, զգում մենք,- ասաց Ալեքսանդրը:- Ախր այդ մեզ են ենթարկել ցեղասպանության»[23]:

Վանը նորից հունի մեջ գցեց խումբը՝ ընդգծելով հետագա քայլերը: Նա առաջարկեց մեր աշխատանքը դարձնել ինստիտուցիոնալ՝ հանձնաժողով ստեղծելով: Մենք համաձայնեցինք, որ պատմության, իրավունքի և հոգեբանության մասնագետները կարող են մեզ խորհուրդներ տալ, սակայն

առաջատար դերը պիտի ստանձնի խմբի կորիզը, որը և պիտի ի հայտ բերի քաղաքականության այլընտրանքները: Իլտերը ասաց. «Թուրքիան չունի խիզախ քաղաքական գործիչներ: Մենք չենք կարող նրանց թողնել գործը: Նրանք դրան պատրաստ չեն: Մենք պետք է կենտրոնանանք հասարակական կարծիք ձևավորելու վրա»[24]:

Առաջին անգամ հայերը և թուրքերը իրոք լսեցին իրար: Չնայած կարող էին քմծիծաղել, երբ Վամիկը խնդրում էր փոխըմբռնող լինել, սակայն նրանք իրոք հաղթահարեցին ջրբաժանը: Օզդեմը գրում էր. «Շատ օգտակար հանդիպում էր, սակայն բարեկամական զգացումը կարևորագույն ձեռքբերումն էր»[25]:

Իմ՝ նախագահողիս հայտարարությունն այս էր. «Մենք զգացմունքային քննարկում ունեցանք անձնական պատմությունների շուրջ, [որը] խորացրեց փոխըմբռնումը և ուժեղացրեց ընդհանուր նպատակի զգացումը»[26]: Իրական ընկերության համար, սակայն, ժամանակ է պետք: Ձեռքբերումներից բացի, մենք շատ ավելի ժամանակ պետք է միասին անցկացնեինք: Իմանալով որոշ անդամների անհատականությունը՝ մտածեցի, արդյոք ՀԹՀՀ-ն կարող է մնալ որպես խումբ:

Հայերը կենտրոնացած էին ուղենիշների վրա: Խումբ ստեղծելու ընթացքի վրա կանգ առնելու փոխարեն՝ համաձայնեցինք հաջորդ հանդիպմանն ընդունել աշխատանքի պայմանները և հրապարակավ հայտարարել Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի մասին (ՀԹՀՀ): Ի լրումն՝ ինձ խնդրեցին մշակել ՀԹՀՀ-ի հիմնադիր կանոնադրությունը:

Ծանոթագրություններ

1. Նախագահողի հայտարարություն, 2001 թ., 20 մարտի
2. Նույնը:
3. Հարցազրույց հեղինակի հետ, 2004 թ., 17 հունվարի:
4. Հարցազրույց հեղինակի հետ, 2004 թ., 15 հունվարի:
5. Հարցազրույց հեղինակի հետ, 2004 թ., 9 հունվարի:
6. Հարցազրույց հեղինակի հետ, 2003 թ., 6 օգոստոսի:
7. Հարցազրույց հեղինակի հետ, 2004 թ., 17 հունվարի:
8. Հարցազրույց հեղինակի հետ, 2003 թ., 6 օգոստոսի:
9. Հանդիպման գրառումներ, 2001 թ., 24 սեպտեմբերի:

10. Joseph V. Montville, “Justice and the Burdens of History,” published in Reconciliation, Coexistence and Justice in Interethnic Conflict, edited by Mohammed Abu Nimer, Lexington Books, 2001.
11. Anie Kalayjian, “Forgiveness and Transcendence,” published in Clio’s Psyche, December 1999.
12. Joseph V. Montville, “The Greening of Diplomacy,” Journal of the American Psychoanalytic Association, Vol. 31, No. 2.
13. Հայտարարություն Թուրքիայի պետական արխիվների գլխավոր տնօրինության կողմից, 2003թ., 22 ապրիլի:
14. *Ազատություն ռադիոկայան*, 2002թ., 13 հունվարի:
15. Հարցազրույց հեղինակի հետ, 2003թ., 6 օգոստոսի:
16. Հանդիպման գրառումներ, 2001թ., 30 մայիսի:
17. Gunduz Aktan, “The Pot Calling the Kettle Black,” Turkish Daily News, October 20, 2001
18. Նույն տեղում:
19. Հարցազրույց հեղինակի հետ, 2004թ., հունվարի 9:
20. Aktan, “The Pot Calling the Kettle Black.”
21. Հանդիպման գրառումներ, 2001թ., ապրիլի 30:
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում:
24. Նույն տեղում:
25. Սանբերկի էլեկտրոնային նամակը Գրիգորյանին, 2001թ., 1 մայիսի:
26. Հայտարարություն նախագահողի կողմից, 2001թ., 30 ապրիլի:

5

Պատմական քայլ

Ես Դուգ Ֆրանցին՝ *«Նյու Յորք Թայմսի»* Ստամբուլի թղթակցին տեղյակ էի պահում հաշտեցման հանձնաժողովի ստեղծման քայլերի մասին: Նա մեկնել էր Արևելյան Թուրքիայում հայերի պապենական հայրենիքը և հետաքրքրված էր ՀԹՀՀ-ով: Ասացի նրան, որ ՀԹՀՀ-ն իր հանդիպման մասին վերջնականապես որոշում կկայացնի 2001թ. հուլիսի 9-ին: Անցանկալի զարգացումների դեպքում Ֆրանցը խոստացավ չհրատարակել հոդվածը, քանի դեռ չեմ հավաստել, որ կարգավիճակը պաշտոնապես ընդունվել է, և ՀԹՀՀ-ի անդամները համաձայն են գործել հրապարակավ[1]:

Հանդիպման ժամանակ ես հստակ ասացի, որ հետդարձ չի լինելու, եթե մեր գործունեությունը հրապարակենք: Նման բան դեռ չի եղել, և եթե սխալվենք, երկար ժամանակ հնարավոր չի լինի նորը նախաձեռնել: Գիտակցելով ՀԹՀՀ-ի կարևորությունը՝ նրանք որոշեցին առաջ շարժվել:

Չնայած ժողովրդական դիվանագիտության իրականացման որոշ դեպքերում մասնակիցներն ընդունում են գաղտնիության խիստ կանոններ, ՀԹՀՀ-ն գիտեր, որ հնարավոր է իր աշխատանքի վերաբերյալ որոշ տեղեկությունների արտահոսքը: Ուստի որոշվեց ստեղծել լրատվական նախաձեռնողական ռազմավարություն, որը նպաստավոր հասարակական կարծիք կձևավորեր: «Նյու Յորք թայմսում» ՀԹՀՀ-ի մասին տեղեկություն հրապարակելով՝ հուսով էինք, որ Ֆրանցի հոդվածը աղբյուր կծառայեր միջազգային հեռուստատեսության, ինչպես նաև թուրք և հայ լրագրողների հա-

մար: Ես պայմանավորվեցի, որ Ֆրանցը հարցազրույց վերցնի Էլայ Ուայզելից, ում հեղինակությունը կմեծացնի ՀԹՀՀ-ի վարկը:

Ես վերադարձա Մարդկային երկխոսության կենտրոնի Ժնևի լճի նիստերի դահլիճ և տեսա, որ ՀԹՀՀ-ի թուրք անդամները տենդագին զրուցում են իրենց բջջային հեռախոսներով: Ոմանք համակարգչով ՀԹՀՀ-ի կանոնադրության օրինակներ էին ուղարկում թուրքական լրատվամիջոցներին: Թուրքերի հեռախոսազրույցները մեկ ժամից ավելի տևեցին: Իլտեր Թուրքմենը և Գունդուզ Ատկանը մշտապես հանդես են գալիս թուրքական առաջատար թերթերում և համաձայնեցին գրել գործունեության մասին:

Մինչդեռ հայերն անտարբեր էին: Վան Գրիգորյանն արդեն հակիրճ ներկայացրել էր ընթացքը հայ առաջատար քաղաքական, կրոնական և քաղաքացիական գործիչներին: Նա վստահ էր, որ հայերի և թուրքերի միջև առաջին կառուցողական երկխոսությունը ոմանք կողջունեն, ոմանք էլ կընդդիմանան, սակայն այն ճիշտ ուղղություն է հետևելու համար: Դավիթ Հովհաննիսյանը զանգահարեց Վարդան Օսկանյանին՝ հաստատելու համար համաձայնության կայացումը և այն, որ հայտարարությունը կհայտնվի հաջորդ օրվա «Նյու Յորք թայմսում»: Օսկանյանի պատասխանը զարմանալի էր: Նա Դավթին հրահանգեց ասել, որ լքել է արտգործնախարարությունը և մասնակցում է որպես մասնավոր անձ: Միաժամանակ ասաց Դավթին, որ երկուշաբթի առավոտյան կսպասի նրան նախարարության իր գրասենյակում:

Դավիթը ցնցված էր, երբ վերադարձավ դահլիճ: Ես քանիցս հանդիպել եմ Օսկանյանին, որպեսզի իրազեկեմ նրան: Ամեն քայլափոխի նա հավանություն էր տալիս մեր նախաձեռնությանը: Ռոբերտ Քոչարյանը նույնպես ուղղակիորեն հավաստել էր իր աջակցությունը ՀԹՀՀ-ին: Թեև Քոչարյանին զեկուցել էին անձամբ, և նա գիտեր, թե երբ է ՀԹՀՀ-ն հրապարակավ հայտարարելու իր գոյության մասին, Օսկանյանի արձագանքից մտահոգվեցի, որ հայ ղեկավարների աջակցությունն այնքան էլ ամուր չի լինելու:

ՀԹՀՀ-ի հայ անդամներն իրենց մտահոգությունները չէին արտահայտում: Երբ ՀԹՀՀ-ն կրկին հավաքվեց կեսօրին, քննարկեցինք խնդիրներ, որոնք առնչվում էին հայ և թուրք քաղաքացիական հասարակությունների կապերին: Վերջերս հայերի կատարած ուխտագնացությունը Թուրքիա բացահայտեց համագործակցության և՛ հնարավորությունները, և՛ ծուղակները:

Մոտ երկու տասնյակ հայ շրջել էր հայկական պատմական և սուրբ վայրերում, որոնք Թուրքիայում են: Նրանց ուխտագնացությունը համընկավ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700- ամյակի հետ:

«Խումբը որևէ դժվարություն չունեցավ թուրք ղեկավարների հետ և նույնիսկ «արքայական վերաբերմունքի» արժանացավ Կարսում, որտեղ նրանց ողջունեցին քաղաքապետը և քաղաքի այլ պաշտոնյաներ»[2]: Չնայած բարեկամական զգացումներին՝ ճանապարհորդությունը մաքուր հաղթանակ չէր: Անկարան վստահեցրեց Հայ-թուրքական գործարարության զարգացման խորհրդին, որ հայերին կթույլատրվի այցելել հին հայկական Անի քաղաքը և ապա անցնել սահմանը դեպի Հայաստան: Նրանց վերջին վայրկյանին տեղեկացրին, որ թույլտվությունն անվավեր է:

ՀԹՀՀ-ն ավելի շատ միտված էր քաղաքականության նախաձեռնություններին, քան քաղաքացիների «բարի-զգացմունքային» այցելություններին: Թեև ՀԹՀՀ-ի հայ անդամներն ընդունում էին մշակութային նախագծերի կարևորությունը, ավելի շատ սևեռված էին Թուրքիայի հետ սահմանը բացելու և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վրա: Նրանք փոքր քայլերի և վստահության ձևավորման համբերություն չունեին: Անդրանիկ Միհրանյանն էլ ավելի էր բարձրացնում նշաձողը՝ պահանջելով, որ ՀԹՀՀ-ն անդրադառնա ցեղասպանության խնդրին: «Մշակույթը լավ է, բայց մեզ պետք է փոխըմբռնման հասնել ցեղասպանության և մեզ բաժանող այլ խնդիրների վերաբերյալ»: Այլապես, նա զգուշացնում էր. «Մենք կշարունակենք բարձրացնել ցեղասպանության հարցը աշխարհի խորհրդարաններում»[3]:

Թուրքերի դիրքը կոշտացավ: Նրանք չէին ցանկանում քննարկել ցեղասպանությունը, ոչ էլ Անդրանիկի սպառնալիքն ընդունեցին: Վամիկ Վոլկանը պատասխանեց. «Լավ: Դուք մեր կոկորդից եք բռնել, մենք՝ ձեր կոկորդից: Միթե ճնշումն օգնում է»: Այս մտահոգությանն արձագանքելով՝ Գունդուզը դեմ խոսեց ամերիկահայության՝ Վաշինգտոնում Հայոց ցեղասպանության թանգարան բացելու նախագծին: Վանը հույս հայտնեց, որ թանգարանը կընդգրկի նաև հաշտեցման ցուցասրահ: Թանգարանը ոչ միայն կպատմի այն պարկեշտ թուրքերի մասին, ովքեր փրկում էին հայերին, այլև կընդգծի ՀԹՀՀ-ի՝ երկու համայնքների միջև հարաբերություններ վերահաստատելու դերը: «Դուք ցանկանում եք մեր կարեկցանքը, բայց չեք կարեկցում մեզ»,- առարկեց Գունդուզը[4]:

Կրակի վրա յուղ լցնելով՝ Օզդեմ Սանբերկը հարցրեց, թե ինչպես է ՀԹՀՀ-ն անդրադառնալու «գրավյալ տարածքների» խնդրին, որոնք Ադրբեջանում բռնազավթել են էթնիկ հայերը: Պատրաստվու՞մ է արդյոք ՀԹՀՀ-ն կոչ անել հօգուտ սեփական տներից տարահանված ազերիների վերադարձի: Օզդեմն ընդգծեց թուրքերի և ազերիների պատմական և մշակութային սերտ կապերը: Ադրբեջանի անկախացումից ի վեր Անկարան Հայաստանի

հետ հարաբերությունների կարգավորումը պայմանավորեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմամբ: Ալեքսանդր Արզումանյանն առարկեց. «Մենք չպետք է քննարկենք Լեռնային Ղարաբաղը: Դա մի հակամարտություն է, որ վերաբերում է երրորդ պետությանը և որևէ կապ չունի Թուրքիայի և Հայաստանի հետ»[5]:

Ցեղասպանության հարցի քննարկմանը վերադառնալով՝ Իլտերը հարցրեց. «Սա նշանակում է, որ առաջ շարժվել չենք կարող, քանի դեռ մեծ հարցը լուծված չէ»: Իլտերի բերանով ինչպես միշտ խոսում էր ողջախոհությունը: Որքան էլ թեժանար քննարկումը, նա միշտ բարեկիրթ էր ու հարգալից: Իլտերը հորդորեց ՀԹՀՀ-ին կենտրոնանալ փոքր քայլերի վրա: Ամենադժվար հարցերի շուրջ վիճելու փոխարեն նա առաջադրեց առանձին ծրագրերի գաղափարը, որոնք ի ցույց կդնեին համագործակցության իրական արժեքը: Վամիկը համաձայնեց, որ դեռ վաղ է անդրադառնալ ցեղասպանության հարցին: ՀԹՀՀ-ն նախ և առաջ պիտի ամրապնդի կապերը իր անդամների միջև:

Չնայած առաջ շարժվելու մասին ձեռք բերված համաձայնությանը՝ ակնհայտ էր, որ հայերն ու թուրքերն արմատապես տարբեր ակնկալիքներ ունեին ՀԹՀՀ-ից: Հայերը ՀԹՀՀ-ն համարում էին թուրք վերնախավին մոտենալու և ցեղասպանության շուրջ երկխոսություն սկսելու միջոց: Եթե անգամ թուրքերը կարեկցում էին հայերին կրած տառապանքների համար, պատրաստ չէին ՀԹՀՀ կողմից ցեղասպանությունն ընդունելուն: Գունդուզն ասաց. «Թուրք մասնակիցներից ոչ ոք չի 1915-16 թթ. իրադարձությունները ցեղասպանություն չի համարում: Սուր բանավեճերի ընթացքում մեր դիրքորոշումը մյուս կողմին բազմիցս է բացատրվել»[6]:

ՀԹՀՀ-ն համաձայնեց փորձել համապատասխան դիրքորոշումների ավելի լավ ըմբռնում ձևավորել: Չնայած որոշ անդամների կոշտ մոտեցումը կասկածներ էր առաջացնում նրանց մասնակցության օգտակարության առումով, համոզված էինք, որ երկխոսությունը հնարավոր կդարձնի թուրքերի մեջ հայերի տառապանքների ըմբռնման խորացումը: Իրենց հերթին հայերն ավելի կարեկցանքով կվերաբերվեն Օսմանյան կայսրության մայրամուտին թուրքերին բաժին ընկած ողբերգությանը: Մարդկային հարաբերություններ և փոխըմբռնում հաստատելու նպատակն ավելի հասանելի կլիներ տարատեսակ մասնակիցներին: Ներգրավելով սեփական երկրի պետական մեքենայի ղեկին մոտ կանգնած անձանց, ՀԹՀՀ-ն աստիճանական առաջընթացի զոհասեղանին դրեց բարեկամական հարաբերությունները: Զոհողությունն իրավամբ գին կունենար, եթե ՀԹՀՀ-ն զգալի ճեղքման հասներ քաղաքականության մեջ:

❖❖❖

Քաղաքացիական հասարակության գործունեության շուրջ քննարկումները սկսելու համար Օզդեմը ներկայացրեց որոշ նախագծերի առաջարկներ, որոնք մշակվել էին Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմանդրամի (TESEV) կողմից: Հիմնադրամը հիմնվել է գործարարների կոմից և ազատական հաստատության հեղինակություն ունի: Օզդեմն առաջարկեց, որ իր վերլուծական կենտրոնը կարող է հայաստանյան գործընկերոջ հետ սկսել համատեղ սոցիոլոգիական հետազոտություն՝ թուրքերի հանդեպ հայերի, և հայերի հանդեպ՝ թուրքերի վերաբերմունքները բացահայտելու նպատակով: Գունդուզը կտրուկ ընդհատեց հետազոտման մեթոբանության վերաբերյալ Օզդեմի խոսքը՝ ասելով. «Ես երբեք չեմ համաձայնվի նման ծրագրի»: Թուրքերը սկսեցին իրար հետ վիճել: Նրանց վեճը հետզհետե ավելի տաքացավ, անգլերենից անցան թուրքերենի:

ՀԹՀՀ-ի հայ և թուրք մասնակիցների միջև խիստ տարաձայնությունները սպասելի էին: Սակայն թուրքերի միջև խորը տարաձայնությունն անակնկալ էր: Թուրքերը տարբեր էին ոչ միայն մոտեցումներով, այլև զսպվածության աստիճանով: Գունդուզն ամենատաքարյունն էր: Իլտերի և Գունդուզի միջև լարվածությունն առաջացել էր նրանց ընդհարումների պատճառով, այն ժամանակներում, երբ Իլտերն արտգործնախարար էր: Ինչպես և Գունդուզը, Օզդեմը Իլտերի ենթական էր եղել: Այնուամենայնիվ Օզդեմն իր նախկին ղեկավարի հանդեպ այլ դիրք բռնեց: Ուստունը տրտնջաց, որ ՀԹՀՀ-ի որոշ անդամներ իրենց դրսևորում են որպես պաշտոնյա, և ոչ որպես մասնավոր անձ: Քաղաքացիական հասարակության պես իրենց դրսևորելու և առանց սահմանափակումների գաղափարներ առաջադրելու փոխարեն՝ նրանք ակատափորում էին ժողովրդական դիվանագիտության գործընթացը՝ վերադառնալով պաշտոնական դիրքերի:

Գունդուզը ընդմիջում խնդրեց, որպեսզի թուրքերը կարողանան քննարկել հարցերը: Նրանց առանձնազրույցից հետո ես մի կողմ տարա Գունդուզին՝ նրա մտահոգություններն իմանալու համար: Երբ հանդիպումը հանդարտվեց, մենք համաձայնվեցինք, որ դեռ վաղ է համատեղ նախագծերի համար, և նախագծերի առաջրկությունների փաթեթը մի կողմ դրվեց: Նպատակահարմար չէր նաև այլ գործուղություններ սկսել: ՀԹՀՀ-ն պետք է աշխատի տեղեկացված լինել հայ-թուրքական նախագծերից, բայց չպետք է փորձի վերահսկել դրանք: Փոխարենը ՀԹՀՀ-ն պետք է ծանրանա սեփական գործունեության վրա:

Մենք համաձայնվեցինք, որ ՀԹՀՀ-ն պետք է լսի մյուսներին և ըստ այդմ մշակի ռազմավարությունները: Ստամբուլում մեր հաջորդ հանդիպմանը հրավիրելու էինք քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների, ովքեր ՀԹՀՀ-ին խորհուրդ կտային, թե ինչպես հասնել հաշտեցման նպատակին առավել արդյունավետ ճանապարհով: Հայացքների բազմազանություն ապահովելու համար մենք պիտի զրուցեինք թե՛ «ազատական» մտավորականների, թե՛ ծայրահեղ ազգայնականների հետ:

ՀԹՀՀ-ն խուսափեց վիճաբանություններից՝ հետաձգելով ռազմավարության, գերակայությունների և մոտեցման վերաբերյալ վճռորոշ որոշումները: Հանձնաժողովը որոշեց սկզբից ամենահեշտ հարցերի վրա կենտրոնանալ՝ առավել դժվարահաս խնդիրներին ձեռք մեկնելու համար բարենպաստ մթնոլորտ ստեղծելու համար: Այս ըմբռնումը լավ էր գործում, երբ միասին էինք: Բայց այն ավելի էր դժվարանում հասարակական հայացքի ներքո:

Տարբերությունն ի հայտ եկավ, երբ ՀԹՀՀ-ն կեսօրին հանդիպեց միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Թեև ՀԹՀՀ-ն «Նյու Յորք Թայմսին» բացառիկ հարցազրույց տվեց, մենք ցանկանում էինք, որ այլ լրատվամիջոցներ նույնպես գրեն մեր նախաձեռնության մասին: Նրանց հոդվածներն աշխարհին կտեղեկացնեին ՀԹՀՀ-ի ստեղծման մասին: Մենք քննարկեցինք մամլո ասուլիսի ընթացքը և համաձանվեցինք, որ խմբի անունից կխոսի Իլտերը: Թուրքերը ինձ խնդրեցին շատ գաղտնիքներ չբացել: Նրանք չէին ցանկանում, որ թվար, թե Պետդեպարտամենտն է իրենց պարտադրել ՀԹՀՀ-ն:

Իլտերը հանդես եկավ բացման խոսքով՝ ուղղված «Ասոշիեյթեդ փրեսին», «Աժանս Ֆրանս պրեսին» և «Ռոյթերին». Նրանց տված առաջին հարցն այն էր, թե ինչպես է ՀԹՀՀ-ն անդրադառնալու ցեղասպանության խնդրին: Իլտերը փորձեց պատասխանել խմբի անունից, Վանը լրացում արեց, Գունդուզը միջամտեց: Միշտ նրբազգաց Իլտերը հաճոյախոսեց. «Թվում է՝ մենք ավելի լավ ենք մեզ դրսևորում, երբ լրատվամիջոցները ներկա չեն»[7]:

Մամուլի հետ կապված խնդիրները մշտապես կթունավորեին ՀԹՀՀ-ն: Հանձնաժողովը մամուլի հետ հարաբերվելու սկզբունքներ էր ընդունում, որպեսզի հետագայում անտեսի դրանք: Հետահայաց, ՀԹՀՀ-ին չհաջողվեց լրատվամիջոցների հետ արդյունավետ շփման ծրագիր իրագործել: Նա

նաև կրակն ընկավ՝ իր գործունեությունը բացահայտելով նախքան միասնական ուղերձի համաձայնեցումը կամ որպես խումբ միասնականության հասնելը: Ուստուն Էրգուդերը հետագայում հիշում էր. «Երբեք չեմ մոռանա, երբ լրատվության ներկայացուցիչները Ժնևում սրահ մտան: Հայերը սկսեցին խոսել ոչ թե մեզ հետ, այլ իրենց լսարանի հետ»[8]:

Ֆրանցի հոդվածը հայտնվեց «Նյու Յորք թայմսում» 2001թ. հուլիսի 10-ին: Նա նկարագրեց ՀԹՀՀ-ի գործունեության շրջանակները: Ցեղասպանությանն անդրադառնալով՝ նա մեջբերեց Իլտերի խոսքերը. «Հանձնաժողովը չի սահմանելու որևէ կողմի իրավացիությունը: Փոխարենը փորձելու է գտնել անդունդը կամրջելու ուղիներ»: Ֆրանցը գրել էր. «Մասնակիցները, ներառյալ որոշ նախկին պաշտոնյաներ, ամիսներ շարունակ թաքուն հանդիպում էին: Թուրքիայի և Հայաստանի իշխանություններն ընդգրկված չեն, սակայն մասնակիցներն ասացին, որ երկուսն էլ լուռ համաձայնություն են տվել: Պետքարտուղարությունն աջակցել է նախաձեռնությանը»[9]:

ԱՄՆ կառավարության որոշ պաշտոնյաներ և այլ շահագրգիռ կողմեր հանդես եկան աջակցության հայտարարություններով: Մարկ Գրոսմանը գրեց. «Քաղաքացիական հասարակության շփումները ոգևորող են, և մենք հավատում ենք, որ և՛ Թուրքիան, և՛ Հայաստանը հակված են առաջընթացի: Մենք հիմա էլ վստահ ենք, որ քաղաքացիական հասարակությունների և կառավարությունների երկխոսությունները լավագույնս կօգնեն Հայաստանին և Թուրքիային իրենց ցավալի անցյալից քայլ անել դեպի ավելի խաղաղ ապագա: Այս վարչակազմը վստահ է, որ միջանձնային անմիջական նախաձեռնությունները, ինչպիսին է Հաշտեցման հանձնաժողովը, մեծ քայլ է առաջ»[10]:

ՀԹՀՀ-ն հավանություն ստացավ նաև Ֆրանկ Պալլոնեի (դեմոկրատ կոնգրեսական Նյու Ջերսիից) և Ջո Նոլլենբերգի (հանրապետական կոնգրեսական Միչիգանից)՝ Կոնգրեսի հայկական հարցերի փակ համագումարի համանախագահների կողմից: «Մենք ողջունում ենք հանձնաժողովի ստեղծման մասին լուրերը: Մենք վստահ ենք, որ այս բարձր մակարդակի ճիգերը դրական քայլ են դեպի առաջ և շահեկան՝ երկու ազգերի համար: Մենք հորդորում ենք բոլոր ամերիկահայերին աջակցել այս նախաձեռնությանը»[11]:

Դեսպան Էդվարդ Ջերեջյանը՝ Մերձավոր Արևելքի գործերով պետքարտուղարի նախկին օգնականն ու Բուշի վարչակազմի պատկառելի վստահված անձը, գրել է. «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի մասնավոր խմբի ստեղծումը ողջունելի և դրական քայլ է»[12]: Նրա հավա-

նությանն անձագանքեց նաև Հարրի Գիլմորը՝ Հայաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպանը. «Հանձնաժողովը մեծ ճեղքում է հայ-թուրքական հարաբերություններում, որը կխորացնի փոխըմբռնումը»[13]:

ՀԹՀՀ-ն ողջունվեց նաև Եվրոպայում: Եվրոպական խորհրդարանի Թուրքիայի անդամության գործընթացի առաջընթացի մասին 2001թ. զեկույցը նշում էր, որ խորհրդարանը «աջակցում է Հայաստանի և Թուրքիայի մի խումբ նախկին դիվանագետների և գիտնականների քաղաքացիական գործունեությունը, որի նպատակը անցյալի ընդհանուր ընկալմանը հասնելն է, [և] հուսով է, որ այս նախաձեռնությունը կնպաստի երկու հասարակությունների միջև հարաբերությունների կարգավորմանը»: Միջազգային լրատվամիջոցները նույնպես դրական արձագանքեցին: «Վաշինգտոն թայմսի» խմբագրականն ասում էր. «ՀԹՀՀ-ն քայլ է ճիշտ ուղղությամբ, այն նաև Թուրքիայի և Հայաստանի հասունության և բարի կամքի արտացոլումն է»[14]: «Տորոնտո գլոբ էնդ մեյլը» գրեցին. «ՀԹՀՀ-ն արժանի է դրվատանքի: Ինչպես Թուրքիան գիտի, որ աշխարհը փոխվում է, այնպես էլ ինքը պետք է փոխվի»[15]:

Թուրքական մամուլը նույնպես ոգևորված էր: Նրանք ուրախ էին, որ հայերը պատրաստ են հաշտեցման և հուսով էին, որ ՀԹՀՀ-ի շնորհիվ հայ ծայրահեղականները կհայտնվեն լուսանցքում: ՀԹՀՀ-ի թուրք անդամներին գովաբանեցին, և պետության հետ նրանց կապերի շնորհիվ լրատվամիջոցներն ակնկալում էին, որ նրանք չեն շեղվի Անկարայի պաշտոնական դիրքորոշումից:

Լրագրողները շրջապատեցին Իլտերին, երբ նա իջավ Ժնևից Ստամբուլ ժամանած օդանավից: Իլտերը արձագանքեց. «Առաջին անգամ չէ, որ հայերն ու թուրքերը հավաքվում են, բայց առաջին անգամ է, որ համակարգված երկխոսություն է տեղի ունենում»[16]: Նա հաստատեց, որ ՀԹՀՀ-ն չի ձգտում հասնելու պատմական ճշմարտության, ոչ էլ ՀԹՀՀ-ի անդամներն են խնդիրների անհապաղ լուծում ակնկալում: «Պատմության ընկալումները մեկ օրում չեն փոխվում»[17]: Օզդեմը նաև հավաստիացրեց. «Մտադրությունն իսկությունը պարզելը չէ, այլ ապագայի համար նոր հորիզոններ բացելն ու փոխըմբռնումը զարգացնելը»[18]: «Միլլիեթի» առաջնորդողը ազդարարում էր. «Պատմական ճեղքում»: Սամի Քոհենը՝ Թուրքիայի առաջատար հոդվածագիրը, գրեց. «Մենք հանձաժողովը համարում ենք… ժամանակին և ճիշտ ուղղությամբ ընթացող»[19]:

Ես անհանգստանում էի Թուրքիայի արձագանքից: Հայ-թուրքական հարաբերությունների թեման մի տեսակ անտեսվում էր թուրք հասարակությունում: Երբ խոսքը վերաբերում էր Հայաստանին, այն անպայման

միախառնվում էր ԱՍԱԼԱ-ի կողմից թուրք դիվանագետների սպանությունների և Լեռնային Ղարաբաղից գրեթե մեկ միլիոն ազերիների տեղահանության հարուցած զայրույթին: Թեև հաշտեցումը հեռագնա գործընթաց է, ես գիտեի, որ այն ցավալի հիշողություններ կարթնացնի երկու կողմերի համար էլ:

Մեծ մասամբ այն պատճառով, որ ՀԹՀՀ-ի թուրք անդամները նախապատրաստել էին լրատվամիջոցներին և ճիշտ ազդակներ էին ուղարկում, Թուրքիայում ՀԹՀՀ-ի հանդեպ վերաբերմունքը հավասարակշռված և հասուն էր: 2001թ. օգոստոսի 29-ին անցկացված հասարակական կարծիքի հարցումը, որն ընգրկեց 2458 թուրքերի, ցույց տվեց՝ 38.5 տոկոսը կողմ էր հայերի հետ երկխոսությանը, 36.9 տոկոսը դեմ էր, իսկ 24.7 տոկոսը կարծիք չի ունեցել[20]: ՀԹՀՀ-ն ողջունեցին մտավորականության, գործարարների և հասարակական կազմակերպությունների վերնախավերը: Սա հնարավոր չէր լինի առանց թուրք պաշտոնյաների լուռ համաձայնության:

Բաքվի արձագանքն անհամեմատ նվազ դրական էր: Մուրթուզ Ալեսկերովը՝ Ադրբեջանի խորհրդարանի խոսնակը, Թուրքիայում էր, երբ ՀԹՀՀ-ի մասին լուրերը հայտնվեցին նորություններում: Նա դատապարտեց նախաձեռնությունը՝ ասելով. «Այն թուրք գործարարները, ովքեր ցանկանում են գործ ունենալ Հայաստանի հետ նախքան երկրի տարածքային ամբողջականության վերականգնումը, դավաճանում են Ադրբեջանին»[21]: Նշելով, որ ՀԹՀՀ-ի համատեղ հայտարարությունը չի հիշատակում Լեռնային Ղարաբաղի խնդիրը, դեսպան Լուտեմը զգուշացրեց, որ Բաքուն հավանություն չի տա առաջին հերթին Ադրբեջանի պահանջներին չանդրադարձող որևէ նախաձեռնության:

Ես անհանգստացած չէի Հայաստանի արձագանքից: Վանն ինձ հավաստիացրեց, որ կարևորագույն հայերը մասնավոր կերպով աջակցություն են հայտնել նախաձեռնությանը: Շատ հայերի համար թուրքերի հետ հաշտեցումը շատ ավելի հակասական խնդիր էր, քան կարող էի պատկերացնել:

Ծանոթագրություններ

1. Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի գործունեության շրջանակները
   Գործունեության շրջանակները համաձայնեցվել են 2001թ. հուլիսի 29-ին քաղաքացիական հասարակության հայ և թուրք ներկայացուցիչների կողմից, ով-

քեր, հանդես գալով որպես մասնավոր անձինք, համաձայնվել են ստեղծել *Հաշտեցման հանձնաժողովը*:

Հաշտեցման հանձնաժողովը ձևավորվել է Վիեննայի դիվանագիտական ակադեմիայում կայացած հանդիպումների հողի վրա:

Հաշտեցման հանձնաժողովը ձգտում է փոխըմբռնում և բարի կամք ձևավորել թուրքերի և հայերի միջև և խթանել Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավումը:

Հաշտեցման հանձնաժողովը գիտակցում է, որ հայերի և թուրքերի միջև էական տարբերություններ կան, ինչպես նաև՝ Հայաստանի և Թուրքիայի միջև բնականոն հարաբերությունների խոչընդոտներ:

Հաշտեցման հանձնաժողովը հուսով է, որ իր ջանքերով հնարավոր կլինի ամուր հող նախապատրաստել հայ և թուրք քաղաքացիական հասարակությունների, այդ թվում՝ սփյուռքի համայնքների անդամների հաշտեցման համար:

Հաշտեցման հանձնաժողովն աջակցում է հայ և թուրք քաղաքացիական հասարակությունների միջև շփումները, երկխոսությունը և համագործակցությունը՝ ուղղված հաշտեցման անհրաժեշտության մասին հանրային իրազեկման և գործնական շահեր քաղելուն:

Հաշտեցման հանձնաժողովն անմիջականորեն գործունեություն կծավալի, ինչպես նաև կխթանի այլ կազմակերպությունների ծրագրերը:

Հաշտեցման հանձնաժողովը շահագրգիռ կազմակերպություններին ուղղված առաջարկներ կմշակի:

Հաշտեցման հանձնաժողովը կաջակցի ժողովրդական դիվանագիտության համագործակցային քայլերին՝ գործարարության, զբոսաշրջության, մշակույթի, կրթության և հետազոտությունների, շրջակա միջավայրի, լրատվության, վստահություն ստեղծելու, ինչպես նաև այլ ասպարեզներում, որ դեռ որոշվելու են:

Հաշտեցման հանձնաժողովը կապահովի մասնագիտական ներուժ՝ ծրագրի կարիքներից ելնելով և կարող է ներգրավել պատմության, հոգեբանության և իրավական, ինչպես նաև այլ հարցերի մասնագետների:

Հաշտեցման հանձնաժողովը կքննարկի առաջընթացը մեկ տարի անց:

2. Bill Broadway, “Armenians’ Bittersweet Pilgrimage,” The Washington Post, June 13, 2001.
3. Հանդիպման գրառումներ, 2001թ., 9 հուլիսի:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. *«Թրքիշ դեյլի նյուս»,* 2001, 13 հուլիսի:
7. Հանդիպման գրառումներ, 2001թ., 9 հուլիսի:

8. Հարցազրույց հեղինակի հետ, 2003թ., 6 օգոստոսի:
9. Douglas Frantz, “Unofficial Commission Acts to Ease Turkish-Armenian Enmity,” New York Times, July 10, 2003.
10. Հայտարարություն Մարկ Գրոսմանի կողմից, Քաղաքական գործերով պետ քարտուղարի տեղակալ, 2001թ., 27 օգոստոսի:
11. Հայտարարություն ՀԹՀՀ-ի հիմման վերաբերյալ ներկայացուցիչներ Ֆրենկ Փելոունի (D-NJ) և Ջոու Քնոլենբերգի (R-MI)՝ Հայկական հարցերով Կոնգրեսական քննարկման ղեկավարի տեղակալի կողմից, 2001թ., 10 հուլիսի:
12. Դեսպան Էդվարդ Ջերեջյանի՝ Ջեյմս Բեյքերի անվան հասարակական քաղաքականության ինստիտուտի տնօրենի հայտարարությունը ՀԹՀՀ-ի ստեղծման մասին, Ռայսի համալսարան, 2001 թ., 13 սեպտեմբերի:
13. Հարի Գիլմորի՝ Հայաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպանի հայտարարությունը ՀԹՀՀ-ի ստեղծման մասին, 2001 թ., 13 հուլիսի:
14. Խմբագրական, «*Վաշինգտոն թայմս*», 2001, 17 հուլիսի:
15. Խմբագրական, «*Տորոնտո գլոուբ էնդ մեյլ*, 2001, 12 հուլիսի:
16. Պատմական քայլ հայերի և թուրքերի համար, «*Թրքիշ դեյլի նյուս*», 2001 թ., 12 հուլիսի:
17. «Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար ստեղծված նոր հանձնաժողով», *Էյջենս Ֆրանս Փրես*, 2001, 11 հուլիսի:
18. ՀԹՀՀ-ն ձևավորվեց, *Արմինիա ռիփորթ*, 2001, 16 հուլիսի:
19. Սամի Կոհեն, «*Միլիեթ*», 2001, 11 հուլիսի:
20. *«Հուրիեթ»*, 2001, 29 օգոստոսի:
21. *«Թրքիշ դեյլի նյուս»,* 2001թ., 14 հուլիսի:

6

Վիճաբանությունների փոթորիկ

Տրապիզոնում իր անհաջող գործարար նախաձեռնությունից բացի, Վանը թուրքերի հետ առանձնապես չի շփվել: Շատ ջանք է թափել թուրքերին դատապարտելու համար, բայց երբեք երկխոսության մեջ չի մտել նրանց հետ: Իր ողջ կյանքում Վանը հարել էր հայերի ավանդական քաղաքականության մտածողությանը և վստահ էր, որ կարող է թուրքերին ստիպել ընդունել ամենը, ինչ պատահել է:

Երբ հանդիպեցի Վան Գրիգորյանին, նա վերանայում էր իր ռազմավարությունը: Նա հարցրեց. «Ի՞նչը կարող է օգնել թուրք հասարակությանը փոխվելու: Արտաքին ճնշու՞մը: Նրանք, ովքեր հենվեցին օտար երկրների վրա, լավ պայմաններ ստացան: Բայց հայերը մնացին ձեռնունայն, ապա և լքյալ»[1]:

Վանը գործում է զոհված հայերի հիշատակը հարգելու մղումով: Հույս ունի ՀԹՀՀ-ի միջոցով ավելի լավ ապագա ստեղծել: Նա բացատրում է. «Մի խիստ հուզված պահի սկսեցի մտածել երեխաներիս մասին: Երկար ժամանակ է, ինչ Վաշինգտոնում լոբբինգ են իրականացնում: Երբ երեխաներս մեծանան, արդյոք շարունակելու՞ են նույնն անել, նույն ռազմավարությու՞նն են բանեցնելու և բախվելու են նույն պատի՞ն: Թե՞ մի բան կծագի, որ

կփոխի նրանց և Հայաստանի հայերի ուղին, ովքեր խեղդվում են շրջափակումից»[2]: Վանը հասկացել է, որ թեև «հայերն ու թուրքերը շարունակում են գժտված մնալ, ինչպիսի տարաձայնություններ էլ լինեն, դրանք միանշանակորեն ավելի են խճճվում երկխոսության և ուղղակի շփումների բացակայության պատճառով»[3]:

Երկխոսության պատրաստակամությունն առաջին քայլն է դեպի փոխըմբռնում, ինչն իր հերթին մերձեցման հիմքն է: Թեև որոշ հայեր փորձում են հասկանալ թուրքերի զգացմունքները, շատերի համար չափազանց դժվար է համաձայնել թուրքական տեսակետին, որ պատերազմ է եղել, և հայերը պարտվել են ու հատուցել գինը: Ոմանք էլ Սարգիս Մաճառյանի պես մտածում են. «Չկա աշխարհում խնդիր, որ ունենա երկու կողմ և մեկ երես: Քանի դեռ գոյություն ունի երկու կողմ, ապա կլինեն երկու տեսակետ, երկու հայացք և երկու դիրքորոշում»[4]:

Վանի՝ ՀԹՀՀ-ին միանալու ցանկությունը պարզապես մարտավարական էր: Թուրքերի դեմ տարիներ շարունակ մարտնչելուց հետո նա հասկացավ, «Մենք պետք է ինքներս գործ ունենանք Թուրքիայի և թուրքերի հետ: Մենք պետք է ձեռք բերենք դաշնակիցներ և ընկերներ, ովքեր շահագրգռված են և ընդհանուր շահ են տեսնում Հայոց ցեղասպանության հարցում համաձայնության գալու և Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու հարցում»[5]:

Ի սկզբանե ՀԹՀՀ-ի հայ անդամները հանձնաժողովը համարում էին Թուրքիայի պետականության հետ շփվելու միջոց: Նրանք մտածում էին, որ որքան շատ թուրքերը լսեն ցեղասպանության հիշատակումների մասին, այնքան ավելի պատրաստ կլինեն ընդունելու դրա փաստը: Վանը բացատրում էր. «Մենք համաձայնեցինք, որ չի կարող լինել իրական հաշտեցում, քանի դեռ թուրքերը չեն ընդունի Հայոց ցեղասպանությունը : Հարցն այն է, թե ինչպես հաջողությամբ հասնել այդ արդյունքին: Հաշտեցումը գործընթաց է, ոչ թե միջոցառում»[6]: Անդրանիկ Միհրանյանն ավելացնում էր. «Հասարակ թուրք ժողովրդին տասնամյակներ շարունակ ասել են, որ հայերի հետ ոչ մի սխալ բան չի պատահել: Թուրքիայի Հանրապետությունը չի կարող մինչև հասարակական կարծիք նախապատրաստելը հանկարծ հայտարարել, որ ինչ-որ բան այնուամենայնիվ պատահել է»[7]:

ՀԹՀՀ-ի հայտարարությունը հիմնականում դրական արձագանք գտավ հայ հասարակությունում: Թեմական խորհուրդը հայտարարեց. «Հայերին և թուրքերին բաժանում է մեկդարյա դառնությունը, մաղձն ու անվստահությունը, և այդ բաժանումը չի կարող հեշտությամբ շտկվել: Եվ այնուամենայնիվ այն պետք է շտկվի ի բարօրություն թե՛ հայերի, թե՛ թուրքերի: Այս նոր

հանձնաժողովը հայ-թուրքական հարաբերությունները բարելավելու իրական հնարավորություններ է ընձեռում, և մենք ջերմորեն աղոթում ենք դրա հաջողության համար»[8]: ՀԹՀՀ-ն Հայաստանում հավանության է արժանացել շատ կուսակցությունների և խմբերի, այդ թվում՝ Հայոց համազգային շարժման, Սոցիալիստական ուժերի միավորման և Վարդանի ասպետների կողմից: Ի լրումն՝ ՀԹՀՀ-ն ողջունեցին նաև Լեռնային Ղարաբաղի հայերը: Ըստ «արտգործնախարար» Նաիրա Մելքումյանի. «Մենք հավատում ենք, որ ՀԹՀՀ-ն կկարողանա ընդհանուր հիմք գտնել և կփորձի քանդել Հայաստանի ու Թուրքիայի հարաբերություններում առկա թնջուկները»[9]:

ՀԹՀՀ-ին աջակցեց նաև հայկական Սփյուռքի մեծամասնությունը: «Արմինիան ռիփորթրի» առաջնորդողը ողջունեց ՀԹՀՀ-ն և հետևողականորեն աջակցեց հաշտեցման նրա ջանքերը: Ամերիկայի հայկական համագումարը հայտարարեց. «Տարիներ շարունակ միջնորդների միջոցով խոսելուց հետո հանձնաժողովը կխթանի անմիջական երկխոսությունն ու համագործակցությունը՝ հայերին և թուրքերին բաժանող հարցերը քննարկելու համար: Ես անվերապահորեն հավատում եմ, որ բոլորի, հատկապես տարածաշրջանում ապրողների շահն է ուսումնասիրել Հայաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող խնդիրների յուրաքանչյուր փոխընդունելի լուծում»[10]:

Չնայած հայկական շատ շրջանակների դրական արձագանքին՝ ՀԹՀՀ-ի շուրջը սկսեցին վեճեր բորբոքվել: Եվ Հայաստանում, և՛ սփյուռքում ՀԹՀՀ-ն կռվախնձոր դարձավ իշխանության և ազդեցության ձգտող կուսակցությունների ու խմբավորումների համար: Դրա քննադատները ամպագոռգոռ էին և արատավոր:

Վանը հասկացավ. «Որոշ մարդկանց համար այս նորությունը նզովք էր, մյուսների համար՝ երկար սպասված ճիշտ քայլ, և մի փորձ, որը պահանջում է «կապրենք՝ կտեսնենք» վերաբերմունք՝ մեծամասնության համար»[11]: Կամ. «Մենք շատերին զարմացրեցինք, երբ սկսեցինք սա: Գիտեինք, որ այդպես էլ լինելու է: Նաև գիտեինք, որ շատերը կվիրավորվեն, կշփոթվեն և կնախանձեն, որ իրենց էլ չեն ընդգրկել»[12]:

Չարախոսները ՀԹՀՀ-ին մեղադրում էին ցեղասպանության եղելությունը կասկածի տակ դնելու մեջ: Նրանք նաև համարում էին, որ ՀԹՀՀ-ն օգտագործվում է որպես Թուրքիայի հանդեպ միջազգային քննադատությունը շեղելու միջոց: Միաժամանակ ՀԹՀՀ-ն մեղադրվում էր որպես ԱՄՆ

իշխանությունների խամաճիկ, և ՀԹՀՀ-ի անդամները որակվեցին որպես դավաճաններ: Նախագահ Քոչարյանի քաղաքական հակառակորդները ՀԹՀՀ-ն օգտագործեցին նրա պաշտոնավարումը վարկաբեկելու համար: Իր հանձնառություններին հետևելու փոխարեն՝ Քոչարյանի վարչակազմը թաքստոց էր փնտրում:

Դաշնակցականները կասկածի տակ առան թուրքերի հետ խոսելու հնարավորությունն անգամ: Նրանք զգուշացրին. «Հայ-թուրքական որևէ երկխոսություն արդույնք կտա միայն այն դեպքում, երբ Թուրքիան ընդունի Հայոց ցեղասպանության պատմական փաստը, մի բան, որը չի կարող որևէ գործարքի առարկա լինել»[13]: Նմանապես պահանջելով, որ ճանաչումը նախորդի երկխոսությանը, Եվրոպայում հայկական ասոցիացիաների ֆորումը (ԵՀԱՖ) ՀԹՀՀ-ն որակեց որպես «թյուր և չարաբաստիկ»[14]: Ջորջ Աղջայանը՝ դաշնակցականների խոսնակը, գրեց. «Նման, այսպես կոչված, ազնիվ մտադրությունները չեն կարող թաքցնել թյուր և չարամիտ մտադրության գարշահոտը: Մի չկշռադատված շարժումով ՀԹՀՀ-ի հայ մասնակիցները թուրք ժխտողականներին արդարացի երևալու հնարավորություն տվեցին և լեգիտիմություն հաղորդեցին նրանց այն դիրքորոշմանը, թե հայերը ցեղասպանության չեն ենթարկվել: Այն ամենը, ինչին ՀԹՀՀ-ն հասել է, այն թյուր միտքն է, որ գոյություն ունեն 1915-1923թթ. դեպքերի երկու կողմեր»[15]:

Սկզբում դաշնակցականները համաձայնեցին հանդիպել և ավելի շատ իմանալ ՀԹՀՀ-ի մասին: Բայց հետագայում հրաժարվեցին քննարկել այն: ՀԹՀՀ-ի ամենախիստ քննադատները հետաքրքրված չեն անկեղծ հաշտեցմամբ: Նախ և առաջ դաշնակցականները ցեղասպանության ճանաչումն օգտագործում են որպես հայկական սփյուռքից դրամ հավաքելու միջոց: Նրանք վստահ են, որ Թուրքիան պետք է հատուցի իր հանցանքների համար՝ հողերը և բռնագրավված ունեցվածքը վերադարձնելով: Նրանք օտարերկրյա պետությունների իշխանությունների կողմից ցեղասպանության ճանաչման ջատագովներն են, մասամբ որպեսզի տարածքային և դրամական հատուցումների համար իրավական հիմք ստեղծեն: Նրանք իրենց պայքարն օգտագործում են նաև քաղաքական ու տնտեսական ուժ ձեռք բերելու համար: Դաշնակցականների համար ՀԹՀՀ-ն իրենց գոյության բուն հիմքը վտանգող նենգ միջոց է: Դաշնակցականներն իրենց դիրքավորել են որպես ռազմիկներ: Հաշտեցումը քանդում է նրանց գոյատևման բուն իմաստը: Դաշնակցականները համոզված են, որ պայքարը նպատակ է, ոչ թե միջոց:

❖❖❖

ՀԹՀՀ-ի որոշ անդամներ հեռուսատեսությունն օգտագործեցին իրենց ընտրողներին դիմելու նպատակով: ՀԹՀՀ-ի թուրք անդամների հայտարարությունները հրահրում էին այն կարծիքը, որ Անկարան օգտագործում է ՀԹՀՀ-ն, որպեսզի խոչընդոտի միջազգային հանրության կողմից ցեղասպանության ճանաչումը: Բաքու այցելելիս Օզդեմ Սանբերկը հայտարարեց. «Մեր հանձնաժողովի գլխավոր նպատակը ԱՄՆ Կոնգրեսում և արևմտյան երկրների կառավարություններում ցեղասպանության հարցին վերաբերող նախաձեռնությունների դեմն առնելն է, որոնք նպատակ ունեն թուլացնել Թուրքիան: Մենք կարևորում ենք այն, որ ցեղասպանության հարցն այլևս չի քննարկվում ԱՄՆ Կոնգրեսում: Քանի դեռ շարունակում ենք երկխոսությունը, խնդիրը կրկին չի հայտնվի Կոնգրեսի օրակարգում»[16]:

Օզդեմի նշած ռազմավարությունը կարծես թե գործում էր: 2000թ. Եվրոպական խորհրդարանը ցեղասպանության ճանաչման հարցը Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու նախապայման համարեց: Հաջորդ տարի Եվրախորհրդարանը չորս ձայնի առավելությամբ որոշեց Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու տարեկան զեկույցում չներառել ցեղասպանության ճանաչման խնդիրը: Եվրախորհրդարանի պատգամավորները ՀԹՀՀ-ն վկայակոչեցին որպես հայ-թուրքական հարաբերությունների մեղմացման ապացույց. Եվրախորհրդարանի պատգամավորները «համարում են, որ երկխոսության խորացումը ցեղասպանության ճանաչման հարցի վերաբերյալ, որի զոհն է եղել հայ համայնքը XX դարասկզբին, բարելավման նշանակալից փուլ է»[17]: ՀԹՀՀ-ի հայտարարությունից անմիջապես հետո սփյուռքին չհաջողվեց ցեղասպանության բանաձևեր անցկացնել Գերմանիայի, Շվեյցարիայի և Բրիտանիայի խորհրդարաններում: Երբ Գերմանիայի խորհրդարանը 2001թ. սեպտեմբերին մերժեց ցեղասպանության բանձևի ընդունումը, վկայակոչեց առաջընթացը թուրք և հայ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև:

Հետևելով Օզդեմի՝ Բաքվում արված հայտարարությանը՝ նա և Վանը Վաշինգտոնում Ամերիկայի թուրքերի միավորումների համագումարի (ԱԹՄՀ/ATAA) ամենամյա խորհրդաժողովի ընթացքում մասնակցեցին հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ քննարկմանը: Լայնեզր գլխարկով թուրք պաշտոնյան ոգևորված էր: Նա շնորհավորեց ինձ իրադարձության առթիվ և ասաց. «Սա իսկապես պատմական իրադարձություն է լինելու»:

Իր պատրաստած դիտողություններում Օզդեմը հարցնում էր. «Ինչո՞ւ

են Արևմուտքի աշխարհում Անատոլիայի և Բալկանների դաժանություններ-ի մահմեդական զոհերին հաճախ մոռանում, իսկ հայերի բողոքները՝ ընդունվում: Օսմանյան կայսրության ոչ մահմեդական փախստականներին հիշում են, իսկ մահմեդական փախստականներից հիմնականում ակնկալում են հետևում թողնել իրենց անցյալն ու նոր կյանք սկսել: Բոլոր կողմերն էլ անցել են այդ դաժան տարիների միջով և բոլոր կողմերն էլ բարեբախտաբար կարող են զգալ միմյանց ցավը: Մեր ընդհանուր պատմությունը կարող է կամրջել մեր հասարակությունները՝ ծածկելով այն անդունդը, որ բաժանում է մեզ միմյանցից»[18]:

Թուրք ուսանողները թղթիկների վրա գրված հարցեր փոխանցեցին ինձ: Որպես վարող՝ ես ընտրեցի առավել հիմնավորված հարցերը: Շատ կարևոր էր, որ քննարկումն անցներ կառուցողական և առանց միջադեպերի: Սակայն Օզդեմը ապասեց իր վերջին խոսքին և թատերական ոճով հասցրեց մահացու հարվածը. «Թուրքիայի Հանրապետությունը երբեք չի ճանաչի Հայոց ցեղասպանությունը»: Խորհրդաժողովից հետո լայնեզր գլխարկով մարդը մոտեցավ ինձ և ասաց. «Ասացի, չէ՞, որ պատմական իրադարձություն է լինելու»: Երբ Վանը մոտեցավ Օզդեմին, վերջինս սկսեց ներողություն խնդրել. «Կներեք, բայց ես իրոք կարծում եմ, որ խորհրդարանական բանաձևը կոչնչացնի ՀԹՀՀ-ն»[19]:

Դաշնակցական թերթի մի լրագրող ծածուկ ներկա էր հանդիպմանը, և Օզդեմի հայտարարությունը հայտնվեց հաջորդ օրվա թերթերի առաջին էջերում: Օզդեմը ՀԹՀՀ-ի հայ անդամներին էլ ավելի պաշտպանողական դիրքում դրեց: Պատասխանելով այն մեղադրանքներին, որ ՀԹՀՀ-ի նպատակն է խոչընդոտել ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի ընդունումը, Վանը միջամտեց. «Դա լրիվ անհեթեթություն է»[20]: Ալեքսանդր Արզումանյանը պնդում էր. «Մենք չենք խաթարում ցեղասպանության միջազգային ճանաչումը: Դրա մասին չխոսելով՝ մենք հաստատում ենք այն՝ որպես պատմական փաստ»[21]:

Չնայած նրանց պնդումներին՝ դատապարտող ձայներն ավելի ու ավելի բարձր էին հնչում: Հայաստանի խորհրդարանում մեծամասնություն կազմող կուսակցությունները բանաձև ընդունեցին՝ պնդելով, որ ՀԹՀՀ-ն ցանկանում էր ցեղասպանության ընդունումը հանել միջազգային օրակարգից, քննադատելով ՀԹՀՀ-ին Լեռնային Ղարաբաղի հարցի թուրքամետ հայացքների պաշտպանության համար և դատապարտելով հանձնաժողովը: Նրանց համատեղ հայտարարությունը նախազգուշացնում էր. «Մենք չենք կարող խոսել ցեղասպանության ոճրագործի հետ, քանի դեռ նա չի ընդունի իր մեղավորությունը»[22]:

ՀԹՀՀ-ի հայ անդամների դեմ հարձակումները քննարկվեցին Ստամբուլում 2001թ. սեպտեմբերի հանդիպման ժամանակ: ՀԹՀՀ-ի հայ անդամների դժվարություններով իրապես մտահոգ՝ Իլտեր Թուրքմենը հարցրեց. «Ի՞նչ կարող ենք անել ձեր դժվարությունները թեթևացնելու համար»: ՀԹՀՀ-ի թուրք անդամներն զգուշանում էին վիճաբանություններից և ցանկանում էին դանդաղ առաջ շարժվել: Սադի Էրգուվենչն ասաց. «Մենք չափից դուրս հավակնոտ էինք: Հնարավոր չէ կոնկրետ շահ ստանալ 48 ժամում»: Իլտերը բացատրեց. «Մենք սա համարում ենք երկար գործընթաց: Հույն-թուրքական ֆորումում քաղաքական առաջարկների մշակման սկիզբը տարիներ տևեց»[23]:

Թուրքերը հավատում են, որ ցեղասպանության հարցը գիտական բանավեճ է, որ պետք է լուծվի մասնագետների ու պատմաբանների միջոցով: Որոշ թուրքեր կոչ արեցին բացել օսմանյան արխիվները և հետազոտություններ իրականացնելու համար համատեղ հանձնաժողով ստեղծել: Նրանք նաև առաջարկեցին հուշարձան կառուցել Անատոլիայում սպանված հայերի և թուրքերի հիշատակին: Մեհմետ Ալի Բիրանդը կոչ արեց թուրք իշխանություններին. «Բացահայտորեն հայտարարեք, որ եղել է քաղաքացիական պատերազմ, որի ընթացքում երկու կողմերն էլ մարդկային կորուստներ են կրել, և Թուրքիան զղջում է պատահածի համար: Ներողություն խնդրեք, եթե հարկ է: Չարժե վախենալ ներողություն խնդրելուց»[24]: Սակայն թուրք պետականությունը գերադասեց այնպիսի կեցվածք ընդունել, ասես ոչինչ չի պատահել, և պնդել, որ հայերի ջարդեր չեն եղել, կամ որ իրականում հայերն են թուրքերի դեմ ցեղասպանություն գործել: ՀԹՀՀ-ի թուրք անդամները նույնպես անզիջում էին: Նրանք հրաժարվեցին ՀԹՀՀ-ի փաստաթղթերում նշել «ցեղասպանություն» եզրույթը: Նույնիսկ ոչ պաշտոնական քննարկումների ընթացքում նրանք այդ իրադարձություններն անվանում էին «զանգվածային սպանություններ» կամ «փոխադարձ ողբերգություն»: Նրանց համար այդ բառն օգտագործելը կնշանակեր ընդունել փաստը:

Երկու կողմերն էլ հետևողական դիրք բռնեցին ցեղասպանության հարցի վերաբերյալ: Արտահայտելով թուրքական կարծիքը՝ Իլտերը հայտարարեց. «Հանձնաժողովի խնդիրը պատմական դատողություններ անելը չէ: Երկխոսության ծավալմանը զուգահեռ՝ մենք հուսով ենք հաղթահարել խնդիրները, բայց դա չի նշանակում, որ դատողություններ կանենք 85 տարի առաջ տեղի ունեցածի վերաբերյալ»[25]:

Մինչ հայերը ցանկանում էին, որ ՀԹՀՀ-ն անդրադառնա ցեղասպանության հարցին, նրանք չէին ցանկանում, որ քննարկումներն ընթանան իրադարձությունների եղելության շուրջ: Վանը պնդում էր. «Սա «պատմագիտական հանձնաժողով» չէ, և չի կարող Հայոց ցեղասպանության եղելության մասին բանավեճ լինել»[26]:

Ստամբուլի ժողովում Վանը բացատրեց, որ ՀԹՀՀ-ի հայ անդամներին մեղադրում են, որ նրանց օգտագործում են ցեղասպանության ճանաչումը խոչընդոտելու նպատակով: Նա կրկին հույս հայտնեց, որ ՀԹՀՀ-ն անվտանգ միջավայր կստեղծի, որտեղ հայերը և թուրքերը կկարողանան շփվել՝ չվախենալով քարկոծվելուց: Ժողովրդական դիվանագիտության մեթոդաբանությանը հավատարիմ՝ նա հուսով էր, որ ՀԹՀՀ-ն դեռ կարող է ծառայել որպես նոր հասկացություններ և մտքեր ծնելու համատեքստ, և որ նրա գաղափարները կարող են փոխանցվել որոշում կայացնողներին և ազդել հասարակական կարծիքի վրա:

Ալեքսանդրն ընդգծեց, որ ՀԹՀՀ-ն պետք է նպատակասլաց լինի: «Մենք պետք է նոր գաղափարներ ձևավորենք և արտահայտենք մտքեր, որոնք իշխանությունները չեն կարող արտահայտել»[27]:

Սուր քննադատությունը արմատական դարձրեց հայերին: Մշեցի հոր և կարսեցի մոր մասին խոսելիս Անդրանիկը նշեց. «Միլիոնավոր հայերի պես նրանք դարձան գաղթականներ և կորցրեցին ամեն ինչ՝ հայրենիքը, հարազատներին, ընկերներին, ունեցվածքը»: Անդրանիկը պնդեց. «Ցեղասպանության ճանաչումը պետք է ունենա որոշակի նյութական և տարածքային հետևանքներ: Դա պետք է ներառի հուշարձաններ կառուցելն այն մեծ քաղաքներում, որտեղ զանգվածային եղեռն է տեղի ունեցել, և խորհրդանշական տարածքային զիջումներ, ինչպես, օրինակ՝ Արարատի և Անիի վերադարձը հայերին»[28]: Հետագա շահարկումները կանխելու համար նա պնդեց, որ ՀԹՀՀ-ն իր համատեղ հայտարարություններում օգտագործի ձևակերպումներ, այդ թվում՝ «[Մենք] համաձայն ենք քննարկել Հայոց ցեղասպանությունը»: Թուրքերը կտրականապես դեմ եղան նրա առաջարկին[29]:

Չնայած Ամերիկայի հայկական համագումարին հաջողվեց հասնել ցեղասպանության դասագրքային սահմանման օգտագործմանը, դաշնակցականները զայրացած էին, որ նախագահ Ջորջ Բուշի 2001թ. ապրիլի 24-ի ուղերձի տեքստում, «ցեղասպանություն» բառը չկար: Նրանք հայտարարեցին, որ Հայկական համագումարը կոնգրեսմեն Ջորջ Ռադանովիչին (հան-

ռապետական կոնգրեսական Կալիֆոռնիայից) հետ է պահել ցեղասպանության բանաձևը կրկին առաջադրելուց: Կողմնակիցներ շահելու և ֆինանսական նվիրատվությունները մեծացնելու եռանդուն ջանքերով Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) ՀԹՀՀ-ին և Հայկական համագումարին մեղադրեց ԱՄՆ կառավարության կամակատարներ լինելու մեջ:

Մի անախորժ ծաղրանկար հայտնվեց ՀՅԴ-ի թերթում՝ ակնարկելով, որ ԱՀՀ-ն ծախվել է Պետդեպարտամենտին: Այն պատկերում էր ամերիկյան պաշտոնյայի և Հայկական համագումարի ներկայացուցչի՝ միասին «հաշտեցման սեղանի» շուրջը նստած: Փողով լի մի պարկ փոխանցվում էր սեղանի տակից, և երկուսն էլ կենաց էին խմում: Դաշնակցականները համոզեցին Կապիտոլիումի բլրի իրենց որոշ ծանոթների պահանջել, որ Կոնգրեսական հետաքննությունների ծառայությունը (ԿՀԾ) հետաքննի ՀԹՀՀ-ի ֆինանսավորումը: ԿՀԾ-ի հաշվետվությունում ասվում էր.

«Քարտուղարությունը ֆինանսական աջակցություն է հատկացրել՝ օժանդակելու հանձնաժողովի գործունեությունը, ինչպես որ անում է քաղաքացիական հասարակության այլ նախաձեռնությունների կամ միջանձնային շփումների պարագայում: Միջոցները հատկացվել են Ամերիկյան համալսարանին՝ դրամաշնորհի տեսքով, հակամարտությունների կարգավորման ծրագրի համար, որն աջակցում է հանձնաժողովի գործունեությանը: Պետքարտուղարությունը Ամերիկյան համալսարանի հակամարտությունների կարգավորման ծրագիրը չի ուղղորդում: Թեև Պետքարտուղարությունը հավատարիմ է հաշտեցման գործընթացն առաջ տանելուն, սակայն գիտակցում է, որ օգտակար կլինի ԱՄՆ կառավարության հնարավորինս նվազագույն ընդգրկումը»:[30]

Ի պատասխան զեկույցին՝ Ամերիկայի հայ ազգային հանձնաժողովի նախագահ Քեն Խաչիկյանն ասաց. «Ցավոք, այս բացահայտումը միայն ամրապնդում է [այն կարծիքը], որ Պետքարտուղարությունը հեռահար հավանություն է տալիս Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտմանը»[31]: ՀՅԴ-ի Աղվան Վարդանյանը պնդեց. «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը մոռացության մատնելը հատուկ է թուրք-ամերիկյան միացյալ մոտեցմանը»[32]:

ՀԹՀՀ-ի քննադատները նաև մատնացույց էին անում Պետքարտուղարության խորհրդատուի իմ կարգավիճակը: Նրանք հարձակում գործեցին ինձ վրա և հարցականի տակ դրեցին իմ անկողմնակալությունը:

ՀԹՀՀ-ի որոշ ուղղակի ծախսեր իսկապես Պետքարտուղարության հատկացրած միջոցներով հոգում էր Ամերիկյան համալսարանը: Այդուհանդերձ, ՀԹՀՀ-ի անդամները երբևէ չեն վարձատրվել: Ի դեպ, ես վստահ եմ,

որ ՀԹՀՀ-ի հայ անդամներն իրենց մասնակցության պատճառով իրականում զրկված էին այլ հնարավորություններից: Պետքարտուղարությունը երբեք չի միջամտել իմ՝ որպես ՀԹՀՀ-ի ղեկավարի աշխատանքին: Դրամաշնորհը հատկացնելուց հետո ամերիկյան պաշտոնյաները հետաքրքրվում էին առաջընթացով, սակայն որդեգրել էին բացարձակապես չմիջամտելու մոտեցում:

Դաշնակցականները գուցեև անկեղծորեն մտահոգ էին քաղաքականության խնդիրներով, սակայն ես վստահ եմ, որ նրանք դժգոհ էին ՀԹՀՀ-ից այն պատճառով, որ իրենք դուրս են մնացել դրա գործունեությունից: ՀԹՀՀ-ի մասին հայտարարությունից մի քանի օր անց ՀՅԴ-ի բյուրոն հրաժարվեց համագործակցել «չլիազորված անձանց» հետ և սուր քննադատություն սկսեց ՀԹՀՀ-ի «ինքնակոչ» անդամների նկատմամբ[33]: 2004թ. հունիսին Ջոն Օրդվեյի՝ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանի իմ պատվին տրված ճաշկերույթին, Վազգեն Մանուկյանը (Ազգային ժողովրդավարական միությունից) նշեց, որ ՀԹՀՀ-ն «ավելի ընկալելի» կլիներ հայ հասարակության համար, եթե ավելի ընդգրկուն և ներկայացուցչական կազմ ունենար[34]:

Քննադատները հարց բարձրացրին նաև ՀԹՀՀ-ի թուրք անդամների հավատարմագրերի վերաբերյալ, հատկապես նրանց, ովքեր դիտվում էին որպես թուրքական պետականության գործակալներ: Ես ՀԹՀՀ-ի թուրք անդամներին ընտրել էի հենց այն նկատառումով, թե ովքեր են և ինչ են ներկայացնում: Պետականությանը մոտ կանգնած մարդկանց ընդգրկումն անհրաժեշտ էր հայ-թուրքական երկխոսության տաբուն կոտրելու և կոշտ դիրքորոշում ունեցողներին վանելու համար: Եթե ՀԹՀՀ-ն նպատակ ուներ ազդել թուրքական քաղաքականության վրա, անհրաժեշտ էին մասնակիցներ, ովքեր մուտք ունեն թուրքական արտգործնախարարություն, թուրքական գլխավոր շտաբ և Ազգային անվտանգության խորհուրդ: Ես, սակայն, չեմ ընդգրկել այնպիսի թուրքերի, ինչպիսիք են, օրինակ, Օմեր Լութեմը և Մումթազ Սոյզալը: Նույն պատճառով չեմ ընդգրկել դաշնակցականներին: Ծայրահեղականների մասնակցությունը ի չիք կդարձներ կառուցողական երկխոսության հնարավորությունները: Մենք անտեսեցինք, սակայն, ծայրահեղական ընդդիմադիրներին չեզոքացնելու ռազմավարության կարիքը: Նրանց մշտապես տեղյակ պահելը կամ նրանցից ոմանց ժամանակ առ ժամանակ որպես դիտորդ ներառելը կարող էր կանխել թյուրիմացությունները և մեղմել քննադատությունը:

Քննադատները բազում պատճառներ գտան ՀԹՀՀ-ն արժեզրկելու համար: Նրանք բողոքեցին հայերի և թուրքերի անհավասար թվից: ՀԹՀՀ-ի

անունը անառիթ քամահրանքի առարկա էր: Ոմանք հարցնում էին, թե ինչու են թուրքերը սկզբից նշվում: Նրանք նաև կասկածի տակ առան «հանձնաժողով» անվանումը, որը ենթադրում էր ինչ-որ պաշտոնական կառույց:

Վանը կրկնեց, որ ՀԹՀՀ-ն չի ստեղծվել խոսելու համար բոլոր հայերի անունից: «Մենք, իհարկե, հասկանում ենք մյուսներին ընդգրկելու կարիքը և մտադիր ենք ընդգրկել: Մենք պատրաստ ենք ներառել նրանց, ովքեր կհամապատասխանեն հանձնաժողովի չափանիշներին: Հարկ է, որ գործընթացը ճկուն լինի»[35]: Նա շարունակեց. «Գործնական առումով մենք չորսով արժենք նրանց վեցին: Տեսքի առումով հասկանում ենք, որ ավելի լավ կլինի, եթե կողմերը հավասար լինեն»[36]: Ես աշխատեցի Վանի հետ անդամության նախնական չափանիշներ սահմանելու ուղղությամբ: ՀԹՀՀ-ի չորս հայ անդամներն ընտրվեցին իրենց միջազգային և ազգային քաղաքական նշանակալի փորձի, անգլերենի լավ իմացության և խմբով աշխատելու պատրաստականության շնորհիվ: Վանը նկատեց. «Ներկայում մենք չենք ճանաչում որևէ մեկին ՀՅԴ-ի, ԱՀԱՀ-ի շարքերից, որ համապատասխաներ անդամության չափանիշներին: Մենք պատրաստ ենք քննարկելու այդ հարցը, բայց նրանց պաշտոնական պատասխանը հստակորեն հաստատում է մեր պնդումը»[37]:

ՀԹՀՀ-ն քննադատվեց նաև որպես գաղտնի գործընթաց, որ զուրկ է թափանցիկությունից: Գործընթացի ոչ հրապարակային բնույթը կասկածներ հարուցեց: Սակայն մինչ ՀԹՀՀ-ի ստեղծման ճանապարհով աշխատանքների ինստիտուցիոնալացման մասին որոշումը պարտադիր էր նախնական հանդիպումները ծածուկ պահելը: Ու թեև գաղտնապահությունը հանգեցրեց ցեղասպանության ճանաչումը ծախելու դավադրության կասկածների, այն անհրաժեշտ էր կրիտիկական զանգված ձեռք բերելու համար՝ նախքան քննադատները կհասցնեին խափանել նախաձեռնությունը: ՀԹՀՀ-ն ավելի լավ կընդունվեր, եթե ավելի երկար պահպանեինք գաղտնիությունը և հայտարարությունը կապեինք Թուրքիա մեկնող հայաստանյան անձնագիր ունեցողների համար վիզայի ընթացակարգը բարելավելու մասին Անկարայի որոշման հետ:

Շատ հայեր աջակցություն խոստացան, բայց հետո հետ կանգնեցին՝ տեղի տալով հնչեղ ընդդիմությանն ու ահաբեկմանը: Հատկապես հուսախաբ արեց Վարդան Օսկանյանը: Նախաձեռնությանը հրապարակավ աջակցելու փոխարեն, ինչը խոստացել էր Օսկանյանը, Հայաստանի իշխանությունները խուսափում էին ՀԹՀՀ-ի հետ որևէ առնչությունից: Կողմ քաշվելու ջանքերը հարված հասցրին՝ էլ ավելի հրահրելով քաղաքական ընդդիմադիրների քննադատությունը:

2001 թ. հուլիսի 13-ին Հայաստանի արտգործնախարարության խոսնակն ասաց.

«Նախ և առաջ ես անվերապահորեն հայտարարում եմ, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը որևէ կապ չունի հաստատության հետ և այս «Հաշտեցման հանձնաժողովի» գործունեության հետ: Արտաքին գործերի նախարարությունն ընդամենն այս գործընթացի մասին տեղեկացվեց այնպես, ինչպես տեղեկանում է հասարակական գրեթե բոլոր կազմակերպությունների գործունեության մասին: Ինչ վերաբերում է Սիրիայում Հայաստանի նախկին դեսպան Դավիթ Հովհաննիսյանի ընդգրկմանը նշված հանձնաժողովում, թույլ տվեք հիշեցնել, որ 2000թ. սեպտեմբերին նա դասախոսական աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում»[38]:

Դավիթ Հովհաննիսյանն առարկեց. «Պաշտոնական ղեկավարությունը ոչ միայն որևէ առարկություն չուներ, այլև հավանություն տվեց մտահղացմանը: Սպասվում էր, որ ղեկավարությունը կստանձնի հասարակությանը տեղյակ պահելու առաքելությունը՝ բացատրելով հանձնաժողովի իմաստը, նպատակներն ու կազմը»[39]: Անդրանիկը պնդեց. «Հայաստանի իշխանությունները լիովին տեղյակ էին ՀԹՀՀ-ից: Այն մեղադրանքները, թե այն ստեղծվել է նրանց թիկունքում, պարզապես ճիշտ չեն»: Վանն ավելացրեց. «Կասկած չկա, որ իշխանությունների հետ մշտապես կապի մեջ եղել»[40]: *«Ազոշիեյթեդ փրեսը»* գրեց. «Հաշտեցման հանձնաժողովը պաշտոնական կարգավիճակ չունի, սակայն անդամներն ասացին, որ ոչ Թուրքիան, ոչ էլ Հայաստանը դեմ չեն եղել հանդիպումների կայացմանը»[41]:

Երբ Հայաստանի արտգործնախարարությունը մեղադրվեց այն բանում, որ հայ-թուրքական հարաբերությունների իրականացումը տրվել է ՀԹՀՀ-ի հայ անդամներին, նախարարությունը պնդեց. «Այս նախաձեռնությունը չի կարող փոխարինել պետական մակարդակի ուղղակի կապերին, որոնք ուղղված են հակամարտության կարգավորմանը»[42]: Սա մշտապես համընկել է ՀԹՀՀ-ի դիրքորոշմանը: Վանը շարունակ կրկնում էր. «ՀԹՀՀ-ն իշխանությունների միջև հարաբերություններին չի փոխարինում: Մենք որևէ կերպ չենք հավակնում իշխանությունների գործը կատարելուն»[43]:

Արյան հոտն առնելով՝ դաշնակցականները պահանջեցին Օսկանյանի հրաժարականը այն հիմնավորմամբ, որ նա տեղյակ էր նախաձեռնությանը, բայց չէր տեղեկացրել Ռոբերտ Քոչարյանին: Ի պատասխան՝ նախագահի խոսնակը հաստատեց. «Քոչարյանը գիտեր հայ-թուրքական նախաձեռնության մասին և դեմ չի արտահայտվել հանձնաժողովի ստեղծմանը»[44]:

Ըստ արժանվույն գնահատվելու փոխարեն՝ ՀԹՀՀ-ն ընկավ կուսակցա-

կան քաղաքական պայքարի կրակի տակ, որի արմատները ձգվում են մինչև Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության ժամանակները: Հայաստանի՝ որպես ցամաքային, դեպի ծով ելք չունեցող երկրի տնտեսական զարգացումը և քաղաքական կայունությունը միշտ էլ կախված են եղել բարիդրացիական հարաբերություններից: Տեր-Պետրոսյանն իշխանության եկավ որպես ազգայնական, սակայն նախագահի պաշտոնում հավասարակշիռ քաղաքականություն վարեց: Նա նոր ուղի հարթեց՝ հավանություն տալով Թուրքիայի հետ բնականոն հարաբերություններին, ինչը, սակայն, Անկարան անպատասխան թողեց: Ի պատասխան՝ Հայաստանի խորհրդարանը պահանջեց, որ Հայաստանի անկախության հռչակագրում նշվի. «Հայաստանի Հանրապետությունն աջակցում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հասնելու ջանքերին»:

Ձինված հեղաշրջման փորձի բացահայտումից հետո Տեր-Պետրոսյանը 1994թ. դեկտեմբերի 28-ին արգելեց ՀՅԴ-ն: Դրանից հետո ՀՅԴ-ն ողջ աշխարհում ուժեղացրեց Տեր-Պետրոսյանի դեմ պայքարը: Երբ 1998 թ. ուժերին վերջապես հաջողվեց ստիպել Տեր-Պետրոսյանին հրաժարական տալ, Քոչարյանը՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» նախկին կոշտ դիրքորոշման կողմնակից վարչապետը, դարձավ Հայաստանի նախագահ: Քաղաքական աջակցության դիմաց Քոչարյանը վերացրեց ՀՅԴ-ի արգելումը: Չնայած Հայաստանի իշխանությունները երբևէ տարածքային պահանջ չեն ներկայացրել Թուրքիային, դաշնակցականները տարածքային հավակնություններ ունեն և հրաժարվում են ճանաչել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Նրանք գտնում են, որ Հայաստանը պետք է պայքարի իր պատմական իրավունքների համար, այդ թվում՝ Թուրքիայի արևելյան տարածքների:

ՀԹՀՀ-ի հակառակորդները հատկապես վրդովված էին հանձնաժողովում Ալեքսանդրի ընդգրկման պատճառով: Դաշնակցականների համար Ալեքսանդրը Տեր-Պետրոսյանի հարմարվելու անհաջող փորձերի կենդանի մարմնավորումն էր: Ալեքսանդրը հրաժարական տվեց արտգործնախարարի պաշտոնից Տեր-Պետրոսյանի հեռացումից հետո՝ թողնելով իր պաշտոնը ազնիվ, նվիրված և ժողովրդավորությանը հավատարիմ մարդու համբավով: Թեև առանձին լրատվամիջոցներ մտահոգություն հայտնեցին Ալեքսանդրի մասնակցության կապակցությամբ, Սարգիս Մաճառյանը գրեց. «Եկեք դիմենք լռության իմաստությանն ու օգուտին, եկեք հետ պահենք մեր լեզուները և մեր գրիչները, եկեք դադարեցնենք աղմուկը, ասեկոսեները և վիճաբանություններն ու թույլ տանք Հաշտեցման հանձնաժողովի գիտակ անդամներին, ովքեր նույնքան հայրենասեր և նվիրված են, որքան

մենք, կատարել իրենց աշխատանքը»[45]: Հետագայում Երևանում Ալեքսանդրին կողոպտեցին և ծեծեցին:

Երբ ՀԹՀՀ-ի մասին հայտարարվեց, *«Վաշինգտոն փոստը»* դրվատեց Հայաստանի և Թուրքիայի իշխանություններին հաշտեցման հանձնաժողովին լուռ հավանություն տալու խիզախության համար: Նման հանձնաժողով ունենալու քաղաքական գինը շատ մեծ կարող է լինել երկու ազգերի փոխադարձ ատելության պայմաններում»[46]: Սակայն Քոչարյանը նահանջում էր իր կատարած խաղաղդրույքից: Նա հայտարարեց. «Եթե Թուրքիան շարունակի ժխտել անցյալը, մեր հաշտեցումը պատանդ կմնա անվստահությանը»[47]: Օսկանյանը նույնպես պահեստային ելքեր էր փնտրում. «Եթե գործընթացը ձախողվի, կարող ենք այն օգտագործել՝ ցույց տալու Միացյալ Նահանգներին և այլ երկրների, որ Թուրքիան ունակ չէ երկխոսությունների միջոցով լուծելու նման խնդիրներ, և միակ ուղին միջազգային ճանաչումն է»[48]:

ՀԹՀՀ-ի հայ անդամները 2001թ. օգոստոսի 1-ին հայտարարություն արեցին. «Հայ-թուրքական հաշտեցման մասնավոր հանձնաժողովի հռչակումն ինքնին նոր հնարավորություններ է ստեղծել հայերի և թուրքերի համար: Աշխարհի հայերի մեծամասնությունը թե՛ հրապարակավ, թե՛ մասնավոր կարգով աջակցություն է առաջարկել: Նրանք համամիտ են մեզ հետ, որ եթե հայերը և թուրքերը կարող են անմիջականորեն զրուցել և համակարգված կերպով քննարկել բազմաթիվ խնդիրներ, որոնք բաժանում են մեզ, առաջընթացը հնարավոր է»: Վանը պնդեց. «Ամերիկահայերը հասկանում են ՀԹՀՀ-ի կարևորությունը»[49]: Վանի խնդրանքով ես հանդիպեցի Հրայր Հովնանյանին և Ռոբերտ Գալուստյանին՝ ԱՀՀ-ի ղեկավարներին: Հովնանյանը շտապում էր արդյունքներ տեսնել: Ես բացատրեցի՝ մենք աշխատում էինք, որ Անկարան վերացնի հայաստանյան անձնագիր ունեցողների համար Թուրքիա մուտք գործելու թույլտվության արգելքները և վերահաստատի դիվանագիտական բարձր մակարդակի հարաբերությունները: Հովնանյանն ու Գալուստյանն ուզում էին տեսնել ժամկետներն ու ակնկալվող արդյունքները: Ես հետ մղեցի հարվածը: Ո՛չ ժողովրդական, ո՛չ էլ պաշտոնական դիվանագիությունն այդպես չեն գործում:

ԱՀՀ-ն պատճառաբանելով, որ իրենք կորցնում են անդամներ և նվիրատվություններ, 2001թ. դեկտեմբերի 1-ին հայտարարություն արեց՝ կողմ քաշվելով ՀԹՀՀ-ից: «ԱՀՀ-ն այլևս կապված չէ ՀԹՀՀ-ի հետ: Եթե Համագումարին առնչվող անհատները որոշեն մասնակցել ՀԹՀՀ-ի գործունեությանը, ապա դա կարող են միայն մասնավոր կարգավիճակով՝ անհատապես, բայց ոչ որպես Համագումարի ներկայացուցիչ»[50]: Չնայած ՀԹՀՀ-ի հետ իր

կապի առնչությամբ ԱՀՀ-ի մտավախությանը, պարզվեց, որ իրականում հենց այդ շրջանում է նոր մասնակիցներ և նվիրատվություններ ձեռք բերել: Համագումարը միայն աջակիցներ կորցրեց, երբ վաղաժամ դադարեցրեց օժանդակությունը ՀԹՀՀ-ին:

Կարճ ժամանակ անց Վանը հրաժարվեց ԱՀՀ-ի ղեկավարի իր պաշտոնից ՀԹՀՀ-ում իր աշխատանքին ավելի շատ ժամանակ հատկացնելու համար: Հասկանալով, որ շրջափակումն աղքատացնում է Հայաստանին և նրա երիտասարդությանը մղում Սփյուռք, նա և ՀԹՀՀ-ի մյուս անդամները շարունակեցին երկխոսությունը թուրքերի հետ: 2003թ. ապրիլի 24-ին նրանց հեռատեսությունը և սխրանքը գնահատվեցին Ջորջ Վ. Բուշի կողմից: «Այս թունավոր ճամփան անցնելու համար հարկավոր է ներկայից ցավալի հայացք ձգել անցյալին և իմաստուն վճռականություն՝ ճշմարտության և հաշտեցման վրա հիմնված նոր ապագա կերտելու համար»,- ասաց նա: Բուշը ողջունեց «Հայաստանի և Թուրքիայի իմաստուն և արի ընկերներին, ովքեր այդ իրադարձությունները քննարկելու համար հանդիպում են հաշտեցման ոգով»[51]:

Ծանոթագրություններ

1. Armenian Radio Hour of New Jersey , 2001թ., 17 հոկտեմբերի:
2. Նույն տեղում:
3. «Թրքիշ դեյլի նյուս», 2001, հուլիսի 12:
4. Սարգիս Մաճառյան, Եկեք գոնե մեկ անգամ իրոք հարգանք մատուցենք մեր նահատակներին, «Քաջ Նազար», 2001, 1 օգոստոսի:
5. The Gazette, April 23, 2002.
6. Նյու Ջերսիի հայկական ռադիոյի ժամ, 2001թ., 17 հոկտեմբերի:
7. «Ազատություն» ռադիոկայան, 2002, 13 հունիսի:
8. Գահերեց, Թեմական խորհուրդ, 2001թ., 24 օգոստոսի:
9. «Ազատ Արցախ», 2001, 24 հուլիսի:
10. Ամերիկայի հայկական համագումարի հայտարարություն, 2001 թ., 10 հուլիսի:
11. «Արմինիեն ուիքլի», 2002, փետրվար/մարտ:
12. Armenian Radio Hour of New Jersey , 2001թ., 17 հոկտեմբերի:
13. «Ազատություն» ռադիոկայան, 2001 թ., 12 դեկտեմբերի:
14. FAAE-ի մամլո հաղորդագրություն, 2001 թ., 18 դեկտեմբերի:

15. Ջորջ Աղջայան, Հաշտեցում՝ հիմնված ժխտման վրա, «Արմինիեն ուիքլի», 2001, 21-27 հուլիսի:
16. «Կալիֆոռնիա կուրիեր», 2001, 1 նոյեմբերի:
17. «Արմինիեն ուիքլի», 2002 , 11-17 մայիսի:
18. Թուրք-ամերիկյան կապերի համագումարի կոնֆերանս, 2001 թ., 2 նոյեմբերի:
19. Հանդիպման գրառումներ, 2001 թ., 24 սեպտեմբերի:
20. «Միրոր սպեկթեյթր», 2001, 17 հոկտեմբերի:
21. Հանդիպման գրառումներ, 2001թ., 24 սեպտեմբերի:
22. Կոնգրեսական հետաքննությունների ծառայություն, 2001թ., 2 հոկտեմբերի:
23. Հանդիպման գրառումներ, 2001 թ., 24 սեպտեմբերի:
24. Մեհմետ Ալի Բիրանդ, «Փոստա», 2001, 27 ապրիլի:
25. Քեմալ Իլտեր, Պատմական քայլ հայերի և թուրքերի համար, «Թրքիշ դեյլի նյուս», 2001, 12 հուլիսի:
26. Նյու Ջերսիի հայկական ռադիոյի ժամ, 2001թ., 17 հոկտեմբերի:
27. Հանդիպման գրառումներ, 2001թ., 24 սեպտեմբերի:
28. Հանդիպման գրառումներ, 2001թ., 21 սեպտեմբերի:
29. Հանդիպման գրառումներ, 2001թ., 24 սեպտեմբերի:
30. Կոնգրեսական հետաքննությունների ծառայություն, 2001թ., 2 հոկտեմբերի:
31. «Ազատություն» ռադիոկայան, 2001թ., 16 հոկտեմբերի:
32. «Ասպարեզ օնլայն», 2002, 23 ապրիլի:
33. ՀՅԴ-ի հայտարարություն, 2001թ., 13 հուլիսի:
34. «Ասպարեզ օնլայն», 2002, 23 ապրիլի:
35. «Ֆոկուս», 2001, 8 օգոստոսի:
36. Armenian Radio Hour of New Jersey, 2001թ., 16 հոկտեմբերի:
37. «Փրոուբ», 2001, 8 օգոստոսի:
38. Ձյունիկ Աղաջանյանի հայտարարությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, 2001 թ., 13 հուլիսի:
39. Հայկական լուրերի ցանց, 2002 թ., 16 ապրիլի:
40. Արմենպրես, 2002թ., 6 փետրվարի:
41. Թուրք և հայ անձինք հիմնում են հաշտեցման հանձնաժողով, «Ասոշիեյթեդ փրես», 2001, 11 հուլիսի:
42. Ձյունիկ Աղաջանյանի հայտարարությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, 2001թ., 13 հուլիսի:
43. «Արմինիեն ուիքլի», 2002, փետրվար/մարտ:
44. «Ազատություն» ռադիոկայան, 2001թ., 14 հուլիսի:
45. Սարգիս Մաճառյան, Եկեք գոնե մեկ անգամ իրոք հարգանք մատուցենք մեր նահատակներին, «Քաջ Նազար», 2001, 1 օգոստոսի:

46. Հայ-թուրքական հաշտեցում, «Վաշինգտոն թայմս», 2001, 17 հուլիսի:
47. Արմինֆո, 2002թ., 2 մայիսի:
48. «Արմինիան ռիփորթ», 2001, 24 հուլիսի:
49. «Միրոր սփեկթեյթր», 2001, 17 հոկտեմբերի:
50. ԱՀՀ-ի հայտարարությունը, 2001թ., 1 դեկտեմբերի:
51. Սպիտակ տուն, 2003թ., 24 ապրիլի:

7

Թող հազար ծաղիկ ծաղկի

ՀԹՀՀ-ն կոտրեց սառույցը և օգնեց քաղաքացիական հասարակության ժողովրդական դիվանագիտության մի շարք միջոցառումների ձևավորմանը: Հանձնաժողովը նաև ծառայեց որպես քննադատության շանթարգել՝ դրանով իսկ քաղացիական հասարակության այլ նախաձեռնություններին անխաթար իրականացվելու հնարավորություն ընձեռելով: Չնայած միջանձնային շփումները չեն կարող քաղաքական հիմնարար խնդիրներ լուծել, կարող են բանակցությունների համար հող պատրաստել: Երբ պետության կրիտիկական զանգվածը փոփոխություն է պահանջում, հասարակական ճնշումը կարող է ստիպել քաղաքական գործիչներին փոխել մոտեցումը: Քաղաքացիական հասարակության ճնշումը հատկապես նշանակալի է այն ժողովրդավարություններում, ուր պաշտոնյաները ուշադիր են հասարակական կարծիքի նկատմամբ և ի վերջո հաշվետու են ընտրողներին:

Ամերիկյան համալսարանի Թուրքիայի և Կովկասի ժողովրդական դիվանագիտության ծրագիրը սկսվեց որպես համեստ նախաձեռնություն: Պետդեպարտամենտի Կրթական և մշակութային հարցերի բյուրոն (ECA) Վիեննայում ամերիկյան դեսպանատանը փոքր գումար փոխանցեց, որն իր հերթին դրամաշնորհ էր հատկացնելու Դիվանագիտական ակադեմիային: Միջոցները օգտագործվեցին Վիեննայում առաջին հանդիպումների ուղևորությունների և ներպետական տեղաշարժի ծախսերը հոգալու համար:

Հելենա Ֆինը վերադարձավ Վաշինգտոն և սկսեց աշխատել որպես Կրթական և մշակութային հարցերով պետքարտուղարի տեղակալ: Երբ Թուրքական պատմության հիմնադրամի հետ համագործակցությունը դարձավ անհնարին, Հելենան կարևոր դեր խաղաց Սաբանչի համալսարանը որպես ծրագրի գործընկեր պահպանելու գործում: Թուրքիայի նկատմամբ Հելենայի հետաքրքրությունը երբեք չմարեց՝ չնայած իր նոր ՝ ավելի պատասխանատու աշխատանքին: Գործընթացին մաս-մաս մոտենալու փոխարեն, Հելենան ուզում էր իմանալ, թե ինչ է հարկավոր հայերի և թուրքերի մասնակցությամբ ժողովրդական դիվանագիտության ամբողջական ծրագիր իրականացնելու համար:

Որպես իր պաշտոնական զարգացման օժանդակության մի մաս՝ ԱՄՆ Կոնգրեսը տարեկան գումարներ է հատկացնում՝ ուղղված նորանկախ երկրների ժողովրդավարական զարգացումն ամրապնդմանը: Վան Գրիգորյանի նախագահությամբ Ամերիկայի հայկական համագումարն (ԱՀՀ) անում էր հնարավորը, որ Հայաստանը առատորեն օգտվի «Ազատության պաշտպանության ակտի» (ԱՊԱ/FSA) շնորհիվ նորանկախ երկրներին հատկացվող միջոցներից: Համագումարի ջանքերի արդյունքում Հայաստանը դարձավ մեկ շնչի հաշվով ԱՄՆ-ի արտաքին ամենամեծ օժանդակություն ստացող երրորդ երկիրը՝ Իսրայելից և Եգիպտոսից հետո:

Թալիբանին իշխանազրկելուց հետո վերակառուցման աշխատանքները վերահսկելու նպատակով Աֆղանստան մեկնելուց առաջ դեսպան Ուիլյամ Թեյլորը տնօրինում էր ԱՊԱ միջոցները, ինչպես նաև Կոնգրեսի Արևելաեվրոպական ժողովրդավարությունների պաշտպանության հատկացումները (ԱԵԺՊ/SEED): Դեսպան Թեյլորը ոգևորված էր ժողովրդական դիվանագիտությամբ և ողջունում էր մեր աշխատանքը հայերի և թուրքերի երկխոսությունը խթանելու ուղղությամբ: Թուրքիան հայտնվեց ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID) կողմից տնօրինվող աշխարհագրորեն սահմանված օժանդակության ծրագրերի շրջանակներում: Նա ԱՊԱ-ի կամ ԱԵԺՊ-ի աջակցության շահառու չէր: Թեյլորն ինձ հարցրեց, թե կարո՞ղ ենք ընդլայնել մեր ծրագիրը Ադրբեջանն ընդգրկելու համար: Ադրբեջանն ընդգրկելը կլուծեր բյուրոկրատական խնդիրը և հնարավորություն կընձեռեր ԱՊԱ-ից դրամաշնորհային միջոցների տրամադրումը:

Ես մտահոգված էի Ադրբեջանն ընդգրկելու հարցում: 1995թ. մեկնեցի Կովկաս Օսլոյի Միջազգային խաղաղության հետազոտական ինստիտուտի (ՕՄԽՀ/PRIO) անունից: Իմ խնդիրն էր կազմակերպել տարածաշրջանային տնտեսական համագործակցության մի նախաձեռնություն՝ Թուրքիայի,

Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Թվում էր՝ ամեն բան կարգին է, սակայն ազերի պատվիրակությունը վերջին պահին հրաժարվեց: ՕՄԽՀ-ն տեղադրում էր տեղեկացնել մասնակիցներին նախքան նրանց Նորվեգիա ժամանելը, սակայն շատերն արդեն ճանապարհին էին կամ ժամանել էին մասնակցելու մի հանդիպման, որը տեղի չէր ունենալու: Թեյլորն ինձ համոզեց այցելել Ադրբեջան և ուսումնասիրել ժողովրդական դիվանագիտության ծրագրերի իրականացման հնարավորությունները: Ես կապվեցի Լեյլա Ալիևայի՝ Մոսկվայի պետական համալսարանի վաղեմի բարեկամիս հետ, ում հետ անցյալում համագործակցել էի: Լեյլան ազերի հիանալի վերլուծաբան է և հայերի հետ աշխատանքի փորձ է ունի: Նա ինձ զգուշացրեց, որ ազերի քաղաքացիական հասարակությունն առանձնապես շահագրգռված չէ կապվելու հայ գործընկերների հետ: Կարգավորման մասին խոսել կնշանակի ընդունել status quo-ն: Քանի դեռ Լեռնային Ղարաբաղում ազերի տարածքները գրավված էին, ժողովրդական դիվանագիտությունը խիստ դժվար էր իրականանալու:

1998թ. Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ/OSCE) նոր շունչ հաղորդեց հակամարտության կարգավորման և վերջնական խաղաղության համաձայնության հաստատմանն ուղղված իր ջանքերին: ԵԱՀԿ Մինսկի խումբը, որը ներառում է Ռուսաստանը, Ֆրանսիան և Միացյալ Նահանգները, բանակցություններում ստանձնեց առաջատարի դերը: Լեյլան հուսով էր, որ Ամերիկայի գործուն դերը կդառնա առաջընթացի գրավականը: Չնայած սեփական իշխանությունների վերապահումներին, որոշ ազերիներ պատրաստ էին ներգրավվել ժողովրդական դիվանագիտության մեջ: Նրանց պատրաստակամությունն ամրապնդվեց, երբ իմացան, որ ֆինանսական հատկացումներ կարող են լինել:

Պետդեպարտամենտն ինձ տեղեկացրեց Մինսկի խմբի բանակցությունների մասին: Կովկասի համակարգողը ոգևորված էր 2001թ. սկզբին հակամարտության լուծման հնարավորությամբ: Պետքարտուղար Քոլին Փաուելը նախատեսում էր հրավիրել Ռոբերտ Քոչարյանին և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևին բանակցելու Ֆլորիդայի Քի Վեստում: Չնայած վարդագույն կանխատեսումներին՝ ես զգուշավոր էի: Զգուշավոր էին նաև Թեյլորը և Պետդեպարտամենտի այլ հին գայլերը: Եթե բանակցությունները վերջ դնեին Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, հայերի և ադրբեջանցիների միջև ժողովրդական դիվանագիտությունը կօգներ ամրապնդելու համաձայնությունը: Եթե բանակցությունները ձախողվեին, ժողովրդական դիվանագիտությունը կծառայեր որպես վահան՝ կանխելով բացասա-

կան հետևանքները:

Ես Ամերիկյան համալսարանում յուրօրինակ առաջարկով մոտեցա դասախոս Աբդուլ Ազիզ Սայիդին: Պետդեպարտամենտը կարող էր 3 միլիոն դոլար տրամադրել:

Անհրաժեշտ էր ճկուն հաստատություն Թուրքիայում, Հայաստանում և Ադրբեջանում տասնյակ ծրագրերի գործընկերների հետ ենթապայմանագրերը կառավարելու համար: Ամերիկյան համալսարանում Ազիզի Համաշխարհային խաղաղության կենտրոնը կարո՞ղ էր արդյոք լուծել խնդիրը:

Սիրիական արմատներով ամերիկացի Սայիդը հարգված և անվանի գիտնական է՝ ժողովրդական դիվանագիտության տասնամյակների փորձով: Արծվային դիմագծերով ճերմակահեր ազդեցիկ Սայիդն ըստ արժանվույն գնահատեց պետքարտուղարության առաջարկը: Նա համաձայնեց, որ Համաշխարհային խաղաղության կենտրոնը կառավարի դրամաշնորհը: ՀԹՀՀ-ի դրամաշնորհի պայմանագիրն ավարտուն տեսքի հասցվեց Ժնևում 2001թ. հուլիսի 9-ին հայտարարությունից ժամեր առաջ:

Ամերիկյան համալսարանի ժողովրդական դիվանագիտության ծրագիրն ուղղվեց հայ և թուրք, հայ և ազերի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև շփումներին և համագործակցությանը: Փաթեթը ղեկավարվում էր երեք կանոնով: Առաջին՝ թիրախ երկրներում յուրաքանչյուր ծրագիր պետք է համատեղ տնօրինեն հասարակական կազմակերպությունները (ՀԿ): Երկրորդ՝ ծրագրի գործընկերները պետք է ապահովեն իրենց ծախսերի թափանցիկությունը: Երրորդ՝ Ամերիկյան համալսարանի աշխատակիցները կամ միջազգային մասնագետները պիտի օժանդակեին ծրագրի կառավարմանն ու տեխնիկական խորհուրդներ տրամադրեն: Ծրագրի շատ գործընկերներ երբևէ տեղեկություն չէին փնտրել Ամերիկյան համալսարանի ֆինանսավորման վերաբերյալ, ոչ էլ տեղյակ էին նրա գործունեության և ՀԹՀՀ-ի կապի մասին: ՀԹՀՀ-ի հայտարարությունը փշրեց այն արգելքը, որ խոչընդոտում էր հայ-թուրքական երկխոսությունը: Հանկարծ այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ բոլոր հայկական և թուրքական հասարակական կազմակերպությունները ձգտում են կապ հաստատել միմյանց հետ: Ամերիկյան համալսարանը իրավացիորեն պատրաստվում էր աջակցել կարևորագույն ՀԿ-ներին: Նա մեծ նշանակություն տվեց այն համագործակցային նախաձեռնություններին այնպիսի խմբերի միջև, որոնք հասարակական կարծիքի վրա ազդելու ունակություն ունեին: Աշխատանքները ծավալվեցին մշակույթի, լրատվության, տնտեսության, կրթության և գենդերային խնդիրների ու առաջնորդության զարգացման ուղղությամբ: Ամերիկյան համալսարանը խրախուսական մրցանակ սահ-

մանեց՝ խորհրդարանականներին, Հայաստանի և Թուրքիայի սահմանամերձ համայնքների ղեկավարներին և տեղական պաշտոնյաներին ներգրավելու միջոցով քաղաքականության վրա ազդեցության նախաձեռնությունների համար:

Աշխատանքները սկզբում ծավալվեցին մշակույթի ոլորտում: Նպատակը մարդկային գործոնը շեշտելն էր, իսկ դրա արդյունքում՝ հայ-թուրքական հարաբերություններն անձնավորելը: Ես ակնկալում է նաև, որ մշակութային միջոցառումները կարող են երկու երկրներում էլ դրական լրատվական դաշտ ստեղծել, ինչպես և պատահեց:

Անկարայի լարային քառյակը՝ Թուրքիայի կառավարության պաշտոնական համույթը, ելույթ էր ունեցել ամբողջ աշխարհում, իսկ Հայաստանում՝ երբեք: «OCTA Records»-ը Անկարայի լարային քառյակին հրավիրեց Երևան, և համույթն ընդգրկվեց Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի դասական երաժշտության փառատոնում: Երաժիշտները հայկական երաժշտության պատառիկներ խնդրեցին, որոնք սերտեցին և կատարեցին Երևանի պատմական համերգասրահում: Որպես Հայաստանի պաշտոնական հյուրերի՝ Էջմիածնի իր աթոռանիստում նրանց հյուրընկալեց Հայ առաքելական եկեղեցու գլուխը՝ Ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսը: Թուրք երաժիշտների անվտանգությամբ մտահոգ՝ Ամերիկյան համալսարանը թիկնապահներ վարձեց նրանց համար:

Հաջորդ գարնանը Հայաստանի Կոմիտասի անվան քառյակը համերգ տվեց Ստամբուլում և Անթալիայում՝ ի պատասխան Անկարայի լարային քառյակի այցելությանը: Համերգից հետո կոմիտասականները զարմացան, որ կատարողներին ծաղիկներ չնվիրեցին: Համերգից հետո ծաղկեփնջեր նվիրելն ավանդույթ է Հայաստանում: Սակայն ոչ Թուրքիայում, հատկապես, երբ կատարողները տղամարդիկ են: Թեև թուրք հյուրընկալողները ցանկանում էին հարգել հայկական սովորույթը, բայց մտածեցին, որ ծաղիկներ նվիրելը թյուր կըմբռնի թուրք հանդիսատեսը: Երկու կողմերի արարողակարգերի պահանջները հոգալու նպատակով թուրք հյուրընկալողները հմտորեն գտան խնդրի լուծումը: Նրանք այնպես կազմակերպեցին, որ քսանհինգ երեխաներ բեմ բարձրացան և ծաղկեփնջեր նվիրեցին հայ կատարողներին: Համերգի գագաթնակետն էր Կոմիտասի և Անկարայի լարային քառյակների հոգեցունց թավջութակային դուետը:

Դասական երաժշտության համերգների հետ մեկտեղ «Լալեզարը»՝

թուրքական ժողովրդական երաժշտության համույթը, հովանավորվեց Ստամբուլում և Երևանում Ռիչարդ Հակոբյանի, հայկական ազգային երաժշտության հայտնի ամերիկահայ կատարողի հետ համերգներ տալու համար: Դաշնակցականները փորձեցին բարձրաձայն բողոքներով և ցուցապաստառներով խափանել համերգը: Գարշահոտ պայթուցիկ նետվեց համերգասրահ: Չնայած իրարանցմանը՝ հանդիսատեսը պահանջեց, որ համերգը տեղի ունենա: Շատ հայեր համերգից հետո տված հարցազրույցներում ափսոսանք և զղջում հայտնեցին պատահարի համար: Երբ Ռիչարդ Հակոբյանը միացավ «Լալեզարին» Թուրքիայում համերգ տալու համար, հանդիսատեսին և լրատվամիջոցներին դիմեց մաքուր թուրքերենով: Թուրք հանիսատեսի համակրանքը շահելու համար օգտագործելով լեզվի իր իմացությունն ու ջերմ բնավորությունը՝ Հակոբյանն իսկական մշակութային դեսպանի ունակություններ ցուցաբերեց:

Ռիչարդ Հակոբյանը թուրք երաժիշտներին հրավիրեց միանալու իր համույթին՝ կատարելու Բոստոնի «Աշխարհի երաժշտության շարքի» մի մասը, ինչպես նաև համարեգ տալու Սմիթսոնյան համալսարանի Սեքլեր թանգարանում: Համերգները զարդարում էր Ուդի Հրանտի կատարումը, ով ականավոր ստամբուլաբնակ տաճկահայ երաժիշտ է՝ ավանդական ուդ նվագարանի վարպետ: Երևանյան պատահարից հետո ես մտավախություն ունեի, որ սփյուռքի դաշնակցականները ցույցեր կկազմակերպեն Սմիթսոնյան համալսարանի շուրջ: Բարեբախտաբար համերգներն անցան առանց իսկ չնչին պատահարի: Ամերիկաթուրքերը և ամերիկահայերը բռնեցին միմյանց ձեռքերը և սկսեցին օրորվել կրկներգի մեղեդու ներքո:

Համերգները և մյուս մշակութային միջոցառումները լայնորեն լուսաբանվեցին հայկական և թուրքական առաջատար լրատվամիջոցներով: Միաժամանակ «Երևան» կինոստուդիայի տնօրեն Տիգրան Խզմալյանը փաստագրական ֆիլմ նկարահանեց լարային քառյակների և ժողովրդական երաժշտության համերգների մասին: Ֆիլմը կցուցադրվի թուրքական, հայկական և ամերիկյան հեռուստաալիքներով: Մշակութային իրադարձությունները ցանկալի ազդեցություն ունեցան դրական լրատվական դաշտի ստեղծման և բացասական կարծրատիպերի վերացման առումով:

Մյուս մշակութային ծրագրերը ներառեցին Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու վերականգնման աշխատանքները: Վանա լճի կղզում կառուցված Աղթամարը հայկական հնագույն վանքերից է: «Երկիր և մշակույթ» կազմակերպության վերականգնող մասնագետների և ճարտարապետների միջազգային մի խումբ մեկնեց Ստամբուլ և Թուրքիայի արևելք՝ Վան՝ Աղթամար եկեղեցու վերականգնման և օծման հնարավորություններն ուսումնա-

սիրելու համար: Թուրք, հայ և միջազգային վերականգնող մասնագետների հետ հետագայում հանդիպումներ տեղի ունեցան Նյու Յորքում: Երկու տարի տևած նուրբ բանակցություններից հետո Թուրքիայի և Հայաստանի մշակույթի նախարարությունների ներկայացուցիչները համաձայնեցին հանդիպել «ոչ պաշտոնական» կարգավիճակով: Ստամբուլի հանդիպումը կազմակերպեց Պատմական ժառանգության պաշտպանության հիմնադրամը: Խումբը Թուրքիայի, Հայաստանի և Սփյուռքի մասնագետների հետ մեկնեց նաև Աղթամար՝ եկեղեցու քանդակների և նշանավոր սրբապատկերների վերականգնման կարիքները քննարկելու համար: Ընդգրկվել էին նաև թուրք և տաճկահայ ուսանողներ: Նրանց նախաձեռնությունը կոչվում էր «Վերականգնենք մեր ոգիները եկեղեցու վերականգման միջոցով»:

Լրատվական գործունեությունը մեծ թափ առավ: Ես կազմակերպեցի, որ Մեհմեդ ԱԼի Բիրանդը՝ «Սի-Էն-Էն Թուրքի» առաջատար թղթակիցը, այցելի Երևան և հարցազրույց վերցնի նախագահ Ռոբերտ Քոչարյանից: Պատմական հարցազրույցի ժամանակ Քոչարյանը խոստացավ, որ Հայաստանի Հանրապետությունը տարածքային պահանջներ չի ներկայացնի կամ ֆինանսական փոխհատուցում չի պահանջի: Հաջորդ տարիների ընթացքում «Սի-Սի-Էն Թուրքը» հեռարձակեց հայ-թուրքական հարաբերությունների նորություններ, իսկ Մեհմեդ Ալի Բիրանդը մի քանի հարցազրույցներ և ծրագրեր վարեց այդ թեմայով:

Հայ-թուրքական հարաբերություններով հետաքրքրված լրագրողները հրավիրվեցին մասնակցելու լրագրողների փոխանակման ծրագրում: Առաջատար թուրք լրագրողները գրեցին Հայաստան և Լեռնային Ղարաբաղ կատարած այցի մասին: Լուսաբանումն ընդգրկում էր նորություններ և մարդկային կյանքի պատմություններ: Երևանի մամուլի ակումբի հայ լրագրողներն այցելեցին Ստամբուլ, և մի քանի թուրքական թերթեր արտատպեցին հայ հեղինակների գրած առաջնորդողները:

Մեկ այլ փոխանակման ծրագիր ընդգրկում էր ապագա հայ և թուրք լրագրողների: Թուրքերը Հայաստանում հանդիպեցին պետական պաշտոնյաների հետ, այցելեցին մշակութի օջախներ և քննարկումներ անցկացրեցին թերթերի, հեռուստատեսության և ռադիոյի աշխատակիցների հետ: Հայերի փոխայցելությունը համընկավ քաղաքական ճգնաժամի հետ, և վարչապետ Բուլենտ Էջևիթը հրաժարական տվեց: Այդ օրերին Թուրքիայում լինելը հնարավորություն ընձեռեց հարցազրույց վերցնելու թուրք քաղաքական վերլուծաբաններից, խորհրդարանականներից, գիտնականներից և առաջատար գործարարներից: Լրագրողները մասնակցեցին նաև հակամարտությունների կարգավորման լրատվական աշխատանքի սեմի-

նարին, որը կազմակերպել էր «Common Ground Productions»-ը:

Կանանց նոր ամսագիր հրատարակվեց: Թուրք և հայ կանանց մի հրատարակչական/խմբագրական խումբ, Սուլե Կիլիչարսլանի, (ով կարևոր դեր էր խաղալու Թուրքիայի և Հայաստանի միջև օդային ուղևորափոխադրումներն ընդլայնելու գործում), և հայ ու թուրք կանանց խմբագրական խորհրդի ղեկավարությամբ հայերեն, թուրքերեն և անգլերեն հրատարակվեց տերմինների բառարան: Ամսագիրը լուսաբանեց հաջողակ կանանց՝ որպես օրինակների: Մյուս խորագրերն ընդգրկում էին առողջության, մշակույթի, խոհարարության և նորաձևության թեմաներ: 15000 օրինակ վաճառվեց կամ տարածվեց Թուրքիայում, Հայաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Միացյալ Նահանգներում: Առցանց էլեկտրոնային տարբերակը տեղակայվեց նաև համացանցում:

Հայ և թուրք կանանց խմբերի միջև համագործակցությունը խրախուսելու նպատակով թուրք կանանց պատվիրակությունը 2002թ. մարտի 8-ին մեկնեց Երևան՝ Կանանց միջազգային տոնը նշելու համար: Հայ կանանց խմբի անդամ Հրանուշ Խառատյանը հանդիպումներ կազմակերպեց կին պատգամավորների, ձեռնարկատերերի և գիտնականների հետ, ինչպես նաև քննարկում Երևանի պետական համալսարանում: Մամլո ասուլիսի ժամանակ լարվածություն ստեղծվեց, երբ հայ կանայք բարձրացրին Հայոց ցեղասպանության հարցը: Ստամբուլ կատարած փոխադարձ ուղևորության ժամանակ «Մարմարա» հիմնադրամը ընդհատեց հեռարձակումը, երբ Հրանուշը ելույթ էր ունենում ցեղասպանության հարցի մասին: Չնայած այս անհաջող միջադեպին՝ կանանց խմբերը շարունակեցին իրենց համագործակցությունը: Նրանց մյուս հանդիպումը Ամերիկյան համալսարանի ներկայացուցիչ Ռեյչել Փենթլարջի միջնորդության շնորհիվ անցավ առանց միջադեպերի: Հետևեց կին պատգամավորների հանդիպումների շարքը:

Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհուրդը (ՀԹԲԶԽ/TABCD) մի շարք ձեռնարկների պատկառելի գործընկեր էր: Ահմետ Էրտեգունը՝ «Ատլանտիկ ռեքորդզի» հարգարժան հիմնադիրը և խորհրդի նախագահը, համաձայնեց լինել խորհրդատվական խմբի պատվավոր նախագահ: Ստամբուլի նրա ներկայացուցիչը՝ Նոյան Սոյակը, իրեն դրսևորեց որպես ծրագրի հմուտ ղեկավար: Նրա եղբայր Կաանն ակտիվ էր հայ-թուրքական մերձեցման ամրապնդման գործարար և մշակութային նախաձեռնություններում:

ՀԹԲԶԽ-ի և հայաստանյան Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ/ICHD) նախաձեռնությամբ հիմնադրվեց Վիրտուալ ագրարային մեծածախ շուկան (VAWM): Ծառայելով որպես տեղեկատվության

գրադարան՝ նրա տվյալների շտեմարանն օգնում է Հյուսիսարևմտյան Հայաստանի և Արևելյան Թուրքիայի հողագործներին տեղեկություններ ստանալու բերքահավաքի կանխատեսումների, շուկայի ուսումնասիրությունների, սերմերի, պարարտանյութերի ու պեստիցիդների և գյուղատնտեսական մեքենաների վերաբերյալ: Ինտերնետային կայքը վերածվեց Կովկասի շուկայական ցանցի (MANEC)՝ վիրտուալ ֆորումի, որը նպաստում է մի շարք ապրանքների իրացմանը: Առևտրի պատվիրակությունների փոխայցելություններ եղան, և տարածաշրջանային տոնավաճառի ու տարածաշրջանային առևտրային պալատի ծրագրեր մշակվեցին:

Գիտական միջոցառումներ կազմակերպեցին Թուրքական տնտեսական և հասարակական ուսումնասիրությունների հիմնադրամը (TESEV) և Հայկական սոցիոլոգիական ասոցացիան: Հայերի և թուրքերի փոխադարձ ընկալումը գնահատելու համար կազմակերպությունները ընդհանուր մեթոդաբանություն մշակեցին, դաշտային աշխատանքներ սկսեցին երկու երկրներում և արդյունքները ներկայացրեցին միջազգային սեմինարում: Ռուբեն Ս աֆրաստյանը՝ Երևանի պետական համալսարանի դասախոս և Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրենը, գիտական կապեր ստեղծեց Բիլկենտ և Սաբանչի համալսարանների գործընկերների հետ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից բացի, ժողովրդական դիվանագիտությունը ընդգրկեց նաև քաղաքականություն մշակողներին: Ծվեդիայում «Խորհրդարանականները հանուն գլոբալ գործողությունների» (ԽԳԳ/PGA) ամենամյա համաժողովի ընթացքում տեղի ունեցավ հայ-թուրքական պատգամավորական հանդիպում: Մասնակիցները քննարկեցին տնտեսական, այդ թվում՝ էներգիայի և տրանսպորտի հետ կապված խնդիրներ: Նրանք քննարկեցին Մետաքսի ճանապարհի վերակառուցումը, տարածաշրջանային ենթակառուցվածքները, էներգակիրների խողովակաշարերը և Թուրքիա Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հնարավորությունները: Խորհրդարանական խումբը հավանություն տվեց երկու երկրների միջև բնականոն ուղևորություններին և առևտրին: Նախաձեռնությունը հիմք դարձավ Հայ-թուրքական խորհրդարանական հանձնաժողով ստեղծելու ջանքերի համար:

Թուրքիայի և Հայաստանի սահմանամերձ շրջանների համայնքապետերը, առևտրային պալատները և քաղաքացիական հասարակության գործիչները մասնակցեցին տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կարողությունների զարգացման դասընթացներին: Հասարակական հիմնախդնիրների ուսումանսիրությունների (թուրքական) կենտ-

րոնը (ՀՀՈՒԹԿ/TOSAM) և հայաստանյան Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը մշակեցին միջնորդության, միջմշակութային երկխոսության և խնդիրների համագործակցային լուծման դասընթացների համատեղ ծրագրեր: Հայաստանի և Թուրքիայի ավելի քան 500 տեղական գործիչներ մասնակցեցին դասընթացներին: Հայերը և թուրքերը հանդիպեցին նաև իրենց սերտած դասերը համեմատելու և ի պաշտպանություն սահմանի բացման խումբ ստեղծելու նպատակով:

Թեև Ամերիկայի հայկական համագումարին անդամակցող հայկական սփյուռքի գործիչները և Ամերիկաթուրքերի միավորումների ասոցիացիայի (ATAA) ղեկավարները նույնպես համատեղ գործունեության քննարկումներ անցկացրին, սփյուռքի տարբեր համայնքների միջև համագործակցություն սկսելը անհամեմատ դժվար եղավ: Սփյուռքի ներկայացուցիչները սովորաբար ավելի կոշտ դիրքորոշում ունեն: Խաղաղության և բարեկեցության բարիքները վայելելով՝ նրանք կարող են իրենց անզիջում դիրք գրավելու շռայլություն թույլ տալ:

Ժողովրդական դիվանագիտության քայլերը ողջունեց Հայաստանի իշխանությունը: Երբ Երևանում էի, արտաքին գործերի նախարարության խոսնակը հայտարարեց. «Հայ պաշտոնյաները քաջալերում են տարբեր կազմակերպությունների և նրանց թուրք գործընկերների շփումները»[1]: Շփումները և համագործակցությունը երկու կողմերում էլ ցանկալի էին: *«Թրքիշ դեյլի նյուսը»* հայտարարեց. «Միջանձնային կապերը ճանապարհ են հարթում Անկարայի և Երևանի հարաբերություններում հաջորդ քայլերի համար»[2]:

Փոխայցելությունները միշտ չէ, որ հարթ էին անցնում: Լինում էին դեպքեր, երբ հայ հյուրընկալողներն, առանց նախազգուշացման, պահանջում էին, որ թուրք պատվիրակությունները Երևանում այցելեն Հայոց ցեղասպանության հուշարձան, որտեղ նրանց լուսանկարում էին և խնդրում գրել տպավորությունները թանգարանի հուշագրքում: Թուրքերը հայտնվում էին փակուղում: Ոմանք չէին ցանկանում, որ հուշարձան այցելությունը մեկնաբանվի որպես ցեղասպանության ճանաչում: Մյուս կողմից՝ չէին ցանկանում մերժել, որ դա չընդունվի որպես անարգանք իրենց հյուրընկալողների նկատմամբ: Սակայն նման դեպքերը հազվադեպ էին, և փոխայցելությունների ծրագրերը մեծ մասամբ անցնում էին առանց դույզն-ինչ շեղման:

Ժողովրդական դիվանագիտությունը հայերի և ազերիների միջև ավե-

լի դժվար էր ընթանում, քան հայերի և թուրքերի միջև: Նախագահ Հեյդար Ալիևը ժողովրդական դիվանագիտության նախաձեռնությունների ակտիվ հակառակորդն էր, և Ադրբեջանի խորհրդարանը դրանք արգելող օրենք ընդունեց: Չնայած այս խոչընդոտներին՝ հայ- ադրբեջանական որոշ միջոցառումներ այնուամենայնիվ հաջողությամբ իրականացան: ՀՀՈՒԹԿ-ն և ՄԶՄԿ-ն կիրառեցին իրենց խնդիրների համագործակցային լուծման կրթական ծրագրերը ազերիների և Ղարաբաղի հայերի դասընթացներում: Վերապատրաստման մի շարք ծրագրերից հետո մասնակիցները հանդիպեցին ծրագիրը գնահատելու և համատեղ մի քանի աշխատանքային խմբեր, այդ թվում՝ կանանց խումբ ստեղծելու նպատակով: Համատեղ ծրագրեր են քննարկվում, ինչպիսիք են, օրինակ, հակահետևակային ականների վերաբերյալ իրազեկման և հակամարտության շրջաններում երիտասարդների կրթության ծրագրերը: Լրատվամիջոցների հրապարակումները դիտարկելու և համատեղ փաստագրական ֆիլմեր նկարահանելու համար ձևավորվեց նաև լրատվական խումբ: Զուգահեռ գործողությունները հնարավորության դեպքում համատեղվում էին:

Հայ և ազերի սոցիոլոգներն աշխատում էին միասին փոխադարձ ընկալումներն ուսումնասիրելու նպատակով: Յուրաքանչյուր երկրում հարցվեց հազարական մարդ: Արդյունքները, այդ թվում՝ հարաբերությունների բարելավման հեռանկարների և խոչընդոտների գնահատումները տարածվեցին գիտական շրջաններում, ինչպես նաև հայկական և ադրբեջանական լրատվամիջոցներով: Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք նույնպես ընդգրկված էին:

Փրկության միջազգային կոմիտեն (IRC) խաղաղության կրթության ծրագիր իրականացրեց տեղահանված ճամբարների երիտասարդների համար: Վերապատրաստողների ուսուցումից հետո 120 ազերի մասնակցեց խաղաղություն դասավանդողների սեմինարին: Ազերի ուսանողը միացավ ուսուցման խմբին՝ ուսուցման տեխնիկան զարգացնելու և Ադրբեջանի այլ վայրերում ուսուցանելու համար: Ծրագիրը գնահատելու համար Փենթլարջն այցելեց Լաչին՝ փախստականների ճամբար: Հանդիպումը տեղի ունեցավ հին խարխուլ դպրոցում՝ բետոնե հատակով, հին սեղաններով և նախնադարյան գրատախտակով: Ուսանողները ներս մտան, մաքուր, ամենալավ հագուստներով, մաքուր կոշիկներով և սանրված մազերով: Ի նշան IRC-ի լավ աշխատանքի՝ նրանք շնորհակալություն հայտնեցին ծրագրի համար և հավաստիացրին, որ ուսուցումն իրենց դարձրել է իրենց ընտանիքների և հասարակության ավելի պատասխանատու անդամներ և երկրի ապագա գործիչներ:

Հայ և ազերի խորհրդարանականները ԽԳԳ-ի հովանու ներքո հանդիպեցին Ծվեդիայում: Սեմինարը վարում էին սենատոր Լոնգին Պատուզյակը՝ Լեհաստանի Սենատի նախագահը և Իռլանդիայի սենատոր Ջոն Քոնոորը: Ջրի և բնական ռեսուրսների կառավարման շվեդ մասնագետն աշխատեց հայ և ազերի գործընկերների հետ՝ պայմանները գնահատելու համար և ապա միացյալ պատվիրակությանն ուղեկցեց դեպի Յոհանեսբուրգ, ուր նրանք մասնակցեցին ՄԱԿ-ի Կայուն զարգացման գագաթնաժողովին: Ջրային ռեսուրսների համագործակցային կառավարմանը վերաբերող հաջորդ սեմինարը տեղի ունեցավ Վիեննայի Դիվանագիտական Ակադեմիայում: Հայ և ազերի խորհրդարանականներն, ի վերջո, ընդգրկվեցին ԽԳԳ-ի ընդհանուր գործունեության մեջ:

Հայերն ու ազերիները հայտնաբերեցին, որ շատ ընդհանրություններ ունեն: Երկուսն էլ տիրապետում են ռուսերենին և կոմունիզմի դեմ պայքարի ընդհանուր պատմություն ունեն: Սակայն Հայաստանի և Ադրբեջանի նախագահներն իրենց երկրների ժողովրդավարական զարգացման խոչընդոտներն էին: Շատ հայեր և ազերիներ ունակ չէին կամ չէին ցանկանում հակառակվել իրենց իշխանություններին և մասնակցել հայ-ադրբեջանական ժողովրդական դիվանագիտության գործունեությանը: Նման դեպքերում զուգահեռ գործընթացներ էին իրականացվում կամ բազմակողմանի մոտեցում էր կիրառվում: Թեև հայերի, ազերիների, վրացիների և թուրքերի հետ հանդիպումները լրացուցիչ կազմակերպչական դժվարություններ էին առաջացնում, բազմակողմանի ձևաչափը հնարավոր դարձրեց շփումները, ինչն ավելի երկարատև համագործակցության տարավ:

Տարածաշրջանում մի շարք համալսարաններ՝ Ադրբեջանում Բաքվի պետական համալսարանը և Խազար համալսարանը, Վրաստանում Թբիլիսիի պետական համալսարանը և Թբիլիսիի Ասիայի ու Աֆրիկայի համալսարանը, Հայաստանում Երևանի պետական համալսարանը և Երևանի պետական լեզվագիտական համալսարանը հիմնեցին Կովկասի գիտական համագործակցության միջազգային կոնսորցիումը (ԿԳՀՄԿ/CICAC): Թուրքիայում Սաբանչի համալսարանը և Մերձավոր արևելքի տեխնիկական համալսարանը նույնպես մասնակցեցին ԿԳՀՄԿ-ի զարգացմանը, ինչպես նաև գիտական փոխայցելություններին և համագործակցային հետազոտություններին: Մշակվեցին «Կովկասի մշակույթ» և «Կովկասը գլոբալ հեռանկարում» ընդհանուր դասընթացները:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի աշխատանքային խմբում ընդգրկված էին տնտեսագետներ, գործարարներ և տեղական իշխանությունների ղեկավարներ: Ուսումնասիրվեցին տարածաշրջանային

տնտեսական ինտեգրացիայի հնարավորությունները՝ կենտրոնանալով ենթակառուցվածքների, տրանսպորտի, բանկային գործի, հարկերի և սովորույթների վրա: Ի լրումն ինտերնետային կայքի, որը տեղեկություններ է տալիս առևտրականներին և ներդրողներին, աշխատանքային խումբը ծրագրեր մշակեց Հարավային Կովկասի տնտեսական միության համար:

Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և Թուրքիայի սահմանամերձ տարածքների համայնքապետերի աշխատանքային խումբը տարածաշրջանային զարգացման ռազմավարություն մշակեց: Տեղական ինքնակառավարման խնդիրների ուսուցում առաջարկվեց Կարսի, Էրզրումի, Իգդիրի և Արդվինի (Թուրքիա), Շիրակից, Լոռու և Տավուշի (Հայաստան), Ղազախի, Աղստաֆայի և Գյանջայի (Ադրբեջան), Սամխեթիի և Ջավախքի (Վրաստան) մասնակիցներին: Հակամարտությունների կարգավորման ոչ ավանդական մեթոդների կենտրոնն առաջատար դեր խաղաց գործողություններ-ը համակարգելու և տեղական պաշտոնյաների համատեղ աշխատանքը խրախուսելու գործում:

Ամերիկյան համալսարանի՝ տարածաշրջանային ինտեգրման և տնտեսական զարգացման ուղղությամբ աշխատող բոլոր գործընկերները հանդիպեցին տարածաշրջանային առևտրային պալատի նախաձեռնությունը մշակելու համար: Գնահատելով Ամերիկյան համալասարանի դերակատարման մոտալուտ ավարտը՝ ժողովրդական դիվանագիտության ծրագիրն ընդգծեց տեղական գործընկերների կարողությունների զարգացման կարևորությունը: Մինչև այդ պահը Ամերիկյան համալսարանն աշխատել էր ընտրված կազմակերպությունների հետ՝ օգնելով նրանց դառնալու կայուն և շահագրգիռ կառավորությունների, ինչպես նաև ֆինանսավորման առանձին աղբյուրներից, ինչպես օրինակ՝ Եվրասիայի հիմնադրամից հետագայում աջակցություն ապահովելու նպատակով:

Ժողովրդական դիվանագիտության քայլերին բարի ծառայություն մատուցեցին այն մասնագետները, ովքեր հմտություններ, համբերություն և հետևողականություն հաղորդեցին յուրաքանչյուր նախաձեռնությանը: Օրինակ՝ Կալվին Սիմսը՝ «Նյու Յորք թայմսի» միջազգային թղթակիցը, համակարգեց լրատվամիջոցների փոխայցելությունները: Նա և Շելի Հեքը (վերջինս անկախ լրատվություն ձևավորեց հետպատերազմյան Բոսնիայում և Հերցեգովինայում) ուղղորդում էին կանանց ամսագիրը: Ջորջ Թերզիսը (Փոխըմբռնման եվրոպական կենտրոնից) վարեց հակամարտությունների կարգավորման լրատվամիջոցների ուսուցումը: ԽԳԳ-ի Շազիա Ռաֆին և Եվա Դանը աջակցեցին միջխորհրդարանական գործունեությանը: Էդ Բլեքլին (Միլանի Նյու սքուլ համալսարանի կառավարման դպրոց),

վարեց տեղական ինքնակառավարման պաշտոնյաների ուսուցումը: Ամերիկայն համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Մայք Մյուերսը խորհուրդատվություն էր մատուցում տարածաշրջանային տնտեսական ինտեգրման վերաբերյալ:

Երեք տարվա ժամանակահատվածում Ամերիկյան համալսարանի Համաշխարհային խաղաղության կենտրոնի մասնագիտական աշխատակազմն ինքնամոռաց իրականացնում էր ամենօրյա կառավարումը: Մեծ վաստակ ունեցան Բեթի Սիսկան և Ռեյչել Փենթլարջը, ովքեր իրականացրին ընդհանուր ղեկավարումը, ներառյալ ծրագրի ֆինանսական և վարչական կառավարումը: Յուրաքանչյուր քայլ պահանջում էր հատուկ ուղղորդում և հոգատարություն: Նույնիսկ հեշտ թվացող խնդիրներն անսպասելի դժվարությունների էին հանգեցնում, որոնք համապատասխան միջամտություն էին պահանջում: Ամերիկյան համալսարանի աշխատակիցներին յուրաքանչյուր ծրագրում զորավիգ էին սեփական դատողությունն ու հակամարտությունների կարգավորման փորձը: Նրանց հմտությունները, ծանր աշխատանքը և նվիրվածությունը անգնահատելի էին:

Ես Մարկ Գրոսմանին ներկայացրի Թուրքիայիում և Կովկասում ժողովրդական դիվանագիտության ծրագրի գործողությունների հաշվետվությունը: Նա պատասխանեց. «Ես քեզ խնդրեցի սկսել երկխոսություն, իսկ դու սոցիալական շարժում ծավալեցիր»:

Ծանոթագրություններ

1. Հայկական լրատվական ցանց, 2002թ., 18 ապրիլի:
2. «Թրքիշ դեյլի նյուս», 2002, 24 ապրիլի:

8

Ահաբեկչությունը հարվածում է

ԱՄՆ արտաքին քաղաքականության նպատակ համարվող հայ-թուրքական հաշտեցման կարևորությունը կտրուկ նվազեց 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո: Ահաբեկչության դեմ պայքարը վերասահմանեց թուրք-ամերիկյան հարաբերություններն ու ազդեց Կովկասում ու Կենտրոնական Ասիայում Թուրքիայի հարաբերությունների վրա: Սեպտեմբերի 11-ը արմտական ազդեցություն ունեցավ ՀԹՀՀ-ի՝ հաշտեցմանն ուղղված ջանքերի վրա:

Բուշի վարչակազմը պարզ հայտարարեց, որ կօգտագործի բոլոր անհրաժեշտ և պատշաճ միջոցները ահաբեկչական խմբերին, ինչպես նաև այն վարչակարգերին, որոնք պատսպարում են նրանց հակահարված տալու համար: Չնայած իր ռազմական հզորությանը՝ ԱՄՆ-ն չի կարող միայնակ պայքարել ահաբեկչության դեմ: Նա հենվում է դաշնակիցների և ռազմական կոալիցիաների վրա: Պաշտպանության փոխքարտուղար Պոլ Վոլ ֆովիցն ասաց. «Ահաբեկչության դեմ պատերազմում հաղթելու համար մենք պետք է ձեռք մեկնենք մուսուլմանական աշխարհի հարյուրմիլիոնավոր զուսպ և հանդուրժող մարդկանց: Թուրքիան վճռական դեր ունի Արևմուտքի և մուսուլմանական աշխարհի միջև վտանգավոր անջրպետը վերացնե-

լու գործում»: Վոլֆովիցն ավելի առաջ գնաց՝ բնութագրելով Թուրքիան որպես «իսկապես անփոխարինելի պետություն», որի «դաշնակցությունը Միացյալ Նահանգների հետ ավելի կարևոր է դարձել սեպտեմբերի 11-ից հետո աշխարհը աքցանի մեջ առած ճգնաժամի ժամանակ»[1]:

Երբ Ջորջ Վ. Բուշն ասաց երկրներին՝ «Կամ մեզ հետ եք, կամ մեր դեմ», Թուրքիան, Հայաստանը և Ադրբեջանը անցան Միացյալ Նահանգների կողմը: Թուրքիան զինվորներ ուղարկեց Ալ Քաեդայի և Թալիբանի դեմ պայքարելու համար և, ի վերջո, իր ձեռքը վերցրեց Աֆղանստանի Միջազգային անվտանգության աջակցության ուժերի հրամանատարությունը: Ռոբերտ Քոչարյանը հայտարարեց, որ պայքարելու է «ահաբեկչության չարիքի դեմ վճռականությամբ և հաստատակամությամբ»: Նա նաև առաջարկեց Հայաստանի օդային տարածքն օգտագործել Թուրքիայի Ինջիրլիկ ռազմաօդային բազայում տեղակայված կոալիցիոն օդուժի թռիչքների համար[2]: Ադրբեջանը նույնպես աջակցության ուղերձ հղեց և օժանդակեց մատակարարումների փոխադրումներին: Իր մասնակցության դիմաց Բաքուն ԱՄՆ-ին խնդրեց հանել Ազատության պաշտպանության օրենքի 907-րդ հոդվածը:

Չնայած Ադրբեջանը էթնիկ հայերի հետ պատերազմում միանշանակորեն պարտվածն էր, ԱՄՆ Կոնգրեսը 1992թ. ընդունեց Ազատության պաշտպանության օրենքի 907-րդ հոդվածը, որն արգելեց օգնություն ցույց տալ Ադրբեջանին, քանի դեռ նա չի վերացնի «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրագործվող շրջափակումներն ու ճնշման այլ ձևերը»: Վան Գրիգորյանը 907-րդ հոդվածը համարում էր իր ամենամեծ օրենսդրական հաջողություններից մեկը: Սեպտեմբերի 11-ից հետո մյուսները չհամաձայնվեցին: Զբիգնև Բժեզինսկին, Բրենթ Սքոուքոֆտը և Էնթոնի Լեյքը՝ անվտանգության երեք նախկին խորհրդատուները, դիմեցին Սենատի ղեկավարությանը՝ պահանջելով «Ադրբեջանի նկատմամբ հնացած պատժամիջոցի» վերացում[3]: Գործարար և նավթի ընկերությունները, ինչպես նաև հրեական առաջատար կազմակերպությունները նույնպես պահանջեցին պատժամիջոցի չեղյալ հայտարարում: Սենատոր Սեմ Բրաունբեքը (սենատոր Կանզաս նահանգից), որ այդ պայքարն էր գլխավորում, ի վերջո հասավ Կոնգրեսի թույլտվությանը ազգային անվտանգության հարցերում նախագահի կողմից բացառություն կատարելու գործում: Աջակցությունը թույլատրող օրենսդրական ակտը ընդգծեց Հայաստանի կարևորությունն ահաբեկչության դեմ պայքարում և լրացուցիչ 4,6 մլն դոլար հատկացրեց Հայաստանին ռազմական աջակցության նպատակով: Դրա հետ մեկտեղ Բաքուն ցանկանում էր Ամերիկայի օգնությունը ձեռք բերել Լեռնային Ղարաբաղի հանդեպ վերահսկողությունը վերականգնելու համար: 2001թ. օգոս-

տոսին Քոլին Փաուելը Քոչարյանին և Հեյդար Ալիևին հրավիրեց Քի Վեսթ՝ խաղաղության բանակցությունների համար: Թվում էր, թե նրանք մոտ են համաձայնությանը. Հայաստանն իրեն կմիացնի Լեռնային Ղարաբաղը, ինչպես նաև պատերազմից առաջ Ղարաբաղը Հայաստանից բաժանող միջանցքի հողերը: Հայաստանը Ադրբեջանին կհատուցի Մեղրու տարածքով դեպի Նախիջևան միջանցք տրամադրելով: Այսպես կոչված Մեղրու փոխանակումն ուղղակիորեն կմիացնի Ադրբեջանը և Նախիջևանը: Բոլոր այն ազերիներին, ովքեր տեղահանված էին հակամարտության պատճառով, իրավունք կունենան վերադառնալու Հայաստանին չմիացված տարածքներ, և էական արտաքին օգնություն կտրամադրվի Ադրբեջանին՝ հոգալով ազերի փախստականների վերաինտեգրման և վերահաստատման ծախսերը: Առաջարկը քաղցրացնելու համար Ադրբեջանին խոստացան նաև լրացուցիչ հատկացումներ՝: Երկու նախագահերն էլ, սակայն, հզոր ընդդիմության հանդիպեցին, երբ վերադարձան տուն: Երկու կողմն էլ իրենց ընտրազանգվածը բավարար կերպով չէին նախապատրաստել ցավալի զիջումներին:

Անկարան հավատարիմ մնաց Թուրգուտ Օզալի նվիրվածությանը Ադրբեջանին՝ Հայաստանի հետ Թուրքիայի լավ հարաբերությունները պայմանավորելով «գրավյալ տարածքների» վերադարձով: 2002թ. հունվարին Վաշինգտոն կատարած իր պաշտոնական այցի ժամանակ վարչապետ Բուլենտ Էջևիթը կրկնեց, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կախված է Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման հետ: «Եթե Ադրբեջանի տարածքների զբաղեցումը դադարեցվի, ապա ուրախ կլինենք դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ»[4]:

Թուրքիայում բնակվում են շուրջ մեկ միլիոն էթնիկ ազերիներ: Ալիևը, թուրքերի ու ազերիների եղբայրական կապերը և Ադրբեջանի էներգետիկ պաշարների հարստությունը ծառայեցնելով Անկարայի աջակցությունն ստանալու շահին, կարողացավ համոզել Անկարային շրջափակել Հայաստանը: Ալիևը հույս ուներ, Հայաստանի տնտեսական հզորությունը կոտրելով և նրա ինքնապահովման ունակությունը նվազեցնելով, ստիպել նրան ավելի թույլ դիրքից բանակցել և այդպիսով ստիպված զիջման գնալ: Ըստ Վարդան Օսկանյանի. «Թուրքիան տասը տարի առաջ Ադրբեջանի ճնշման տակ փակեց իր սահմանները Հայաստանի հետ: Բայց այն, ինչ սպասվում էր, չիրականացավ: Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների հիմնական խնդիրը Ղարաբաղի հակամարտության հարցում Թուրքիայի նկատմամբ Ադրբեջանի ճնշումն է»[5]: Նա նաև նշեց. «Երկկողմ հարաբերությունները չպետք է հայ-ադրբեջանական հակամարտության պատանդը

մնան, և Թուրքիան չպետք է մեզ հետ կապերի հաստատումը պայմանավորի ադրբեջանական խնդիրներով»[6]:

ՀԹՀՀ-ի հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ սեպտեմբերի 11-ից հետո՝ անկայուն ժամանակաշրջանում: Քենեդի օդանավակայանի չվացուցակը սեղմվեց, օդանավերի բառացիորեն բոլոր նստատեղերը դատարկ էին: Երկվորյակ աշտարակներին հարվածող ինքնաթիռների պատկերները դեռ թարմ էին բոլորի հիշողության մեջ: Ուղևորներին մտահոգում էին նաև այն զգուշացումները, որ Թուրքիայում հարձակումներ են լինելու ԱՄՆ-ի շահերի դեմ: Ամերիկյան դեսպանատները և հյուպատոսությունները հասցված էին պատրաստության բարձր աստիճանի: Ստամբուլի Հիլթոն հյուրանոցն ընդամենը տասը հյուր ուներ: Դռնապանը, շքասրահի կլերկները և կոշիկ մաքրող տղան լուռ կատարում էին իրենց աշխատանքը:

Թուրքերը սեղանի մոտ եկան այն գիտակցությամբ, որ Թուրքիայի անփոխարինելի դերը ահաբեկչության դեմ պայքարում ուժեղացրել է իրենց դիրքը: Սեպտեմբերի 11-ը ստիպեց ՀԹՀՀ-ին փոխել իր մոտեցման տրամաչափը: Անդրանիկը նկատեց. «Հիմա ոչ ոք ցեղասպանության հարցը չի բարձրացնի Կոնգրեսում: Թուրքիան կրկին դարձավ Մերձավոր Արևելքում Ամերիկայի ռազմավարական շահերի իրագործման կարևորագույն երկիրը»[7]: Իլտեր Թուրքմենը սրտանց ցավակցեց Ամերիկայի ողբերգության համար: Գունդուզ Ատկանը նվազ նրբազգաց էր. «Հիմա դուք գիտեք, թե մենք ինչ ենք զգում»: Նա նկատի ուներ Թուրքիայի տասնամյակներ տևող պայքարը Քրդստանի աշխատավորական կուսակցության դեմ:

Գործի անցնելով՝ ՀԹՀՀ-ի թուրք անդամները պահանջեցին, որ նախքան հաշտեցումը լուծվեն արմատական խնդիրները: Նրանք պնդեցին, որ ամենակարևոր խոչընդոտը հայկական Սփյուռքն է: Հայերի և թուրքերի միջև քննարկումները միշտ հանգում էին ցեղասպանությանը վերաբերող հարցերի: Օսկանյանը հաստատեց. «Ցավագին հիշողությունները, տանջալի անցյալը, մեղադրանքները, չմաքրված հաշիվները և զոհերի հարատևող վերքերը տանջում են [մեր] ժողովուրդների ազգային գիտակցությունը: Դրանք ասես «պահարանում աղմկող ուրվական լինեն»[8]:

Այլ ուրվական է սպանված թուրք դիվանագետների հիշատակը: 2001թ. սեպտեմբերին Ստամբուլ ՀԹՀՀ-ի կատարած այցի ժամանակ Բոս ֆորում՝ նրբագեղ նավի վրա, ճաշի սեղանի շուրջը խոսակցություն սկսվեց ԱՍԱԼԱ-ի ոճիրների մասին: Անդրանիկ Միհրանյանն արդարացրեց սպանություններ-

ը՝ պնդելով, որ ԱՍԱԼԱ-ի մարտավարությունն անհրաժեշտ էր միջազգային հանրության ուշադրությունը ցեղասպանության ճանաչման խնդրին սևեռելու համար: Էմին Մահիր Բալչիօղլուն վրդովվեց Անդրանիկի խոսքերից: Երբ տակավին տղա էր, Էմին Մահիրը մի օր տուն վերադառնալով, իմացավ, որ իր հայրը՝ Թուրքիայի դեսպանը Մադրիդում, ընկել է ԱՍԱԼԱ-ի ձեռքով: Իր կորոստի ցավը հաղթահարելով՝ Էմին Մահիրը հետագայում միացավ ՀԹՀՀ-ին և մշակութային համագործակցության ոլորտում բավական ակտիվ դրսևորվեց՝ որպես հաշտեցման շարժիչ: Վան Գրիգորյանը նշեց. «Կարևոր էր, որ հանդիպեցինք մարդկանց, ում վրա ազդել էր Թուրքիայում հայկական ահաբեկչությունը, և չնայած դրան՝ չարակամ չէին»[9]:

ՀԹՀՀ-ն երբեք չի փորձել քննարկել ցեղասպանության եղելությունը, ոչ էլ Ղարաբաղի հակամարտության լուծման ոչ պաշտոնական երկխոսություն է սկսել: Փոխարենը կենտրոնացել է համագործակցության գործնական ձևերի վրա: Երբ 2000թ. ներկայացվեց 596-րդ հոդվածը, Անկարան բողոքեց՝ արգելելով մուտքի վիզաներ տրամադրել Թուրքիա ուղևորվող հայաստանցիներին: Վիզաները չէին կարող տրամադրվել երկիր մուտքի կետում. դրանք կարող էին տրվել միայն թուրքական դեսպանությունների կամ հյուպատոսությունների կողմից: Հայաստանում դիվանագիտական կառույցների բացակայությունը խնդրահարույց էր: Դա դժվարացնում էր նաև հայաստանցի արտագնա աշխատողների վիճակը Թուրքիայում: Ավելի քան 40.000 հայաստանցիներ աշխատում էին Թուրքիայում և գումար ուղարկում տուն՝ ընտանիք:

ՀԹՀՀ-ն կոչ արեց Անկարային հանել արգելքները և կարգավորել վիզային ռեժիմը: 2002թ. հունվարի 10-ին Թուրքիան, ի վերջո, նոր ընթացակարգ ընդունեց՝ հայերին հնարավորություն ընձեռելով վիզա ստանալ սահմանային ցանկացած կետում, նախքան ժամանումը այն ստանալու պայմանի փոխարեն: Արգելքների վերացումով հայաստանցի հայերը կարիք չունեին այլևս Մոսկվա, Թբիլիսի կամ թուրքական հյուպատոսարան ունեցող մի այլ քաղաք թռչելու՝ վիզա ստանալու համար: Հիմա նրանք կարող են այն 15 ԱՄՆ դոլարով ստանալ Ստամբուլի օդանավակայանից, ինչը թույլատրում է նրանց երկրում մնալ մինչև երեք ամիս: Նոր ընթացակարգը կարևոր ազդեցություն ունեցավ 40.000 հայաստանցիներ վրա, ովքեր ապրում էին Թուրքիայում: Անկարան ուղղված ընթացակարգը ներկայացրեց որպես «բարի կամքի դրսևորում»:

Ուստուն Էրգուդերը նկատեց. «Վիզաների արգելքների վերացումը ՀԹՀՀ-ի ջանքերի առաջին պտուղն էր: Իմ գործընկերները, ովքեր նախկին դեսպաններ են, մեծ ազդեցություն ունեցան այդ արդյունքին հասնելու գոր-

ծում»[10]: Գունդուզի՝ ազգային անվտանգության հաստատությանը համոզելու ջանքեր արժանի էին գովեստի: Մարկ Գրոսմանը նույնպես օգնեց՝ բազմաթիվ քննարկումներում հարցը բարձրացնելով թուրք գործընկերների հետ:

Որպես սահմանը բացելու առաջին քայլ՝ ՀԹՀՀ-ն առաջարկեց վերսկսել երկաթուղային հաղորդակցությունը Կարսի և Գյումրիի միջև, որը դադարել էր 1993թ.: Թեև երկու քաղաքները ընդամենը 90 կմ հեռավորության վրա են, սահմանը փակ է և խիստ ռազմականացված: Թուրքիայի և Հայաստանի միջև պաշտոնապես առևտուր գոյություն չունի, բայց ապրանքները փոխադրվում են Վրաստանի միջով: Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների միությունը տարեկան անօրինական առևտրի ծավալը գնահատեց 100 մլն դոլար: ԱՄՆ-ի Առևտրի և զարգացման գործակալությունը 1999-2000 թթ. սկսեց «Անդրկովկասյան երկաթուղու ծրագրի» տեխնիկական ուսումնասիրությունը՝ գնահատելով Կարսից ձգվող Հյուսիսային և Հարավային Անդրկովկասի ուղիների ֆիզիկական վիճակը: Ուսումնասիրությունը բացահայտեց, որ երկաթուղու վիճակը չափազանց վատթարացել է՝ անուշադրության, շրջափակման և երկրաշարժի պատճառով: Ի լրումն՝ Լեռնային Ղարաբաղում՝ Իմլիշիի մերձակայքում, 22 կմ երկաթգիծ ավերվել է: Ուսումնասիրության արդյունքում նաև առաջարկվեց 13 կմ նոր գիծ կառուցել Գյումրիի մոտ: Առաջարկվեց Հայաստանի և Թուրքիայի միջև աստիճանային անցման համար վերաէլեկտրաֆիկացմանը զուգահեռ գծերի փոխարկիչ տեղակայել: Անհրաժեշտ կլինեն նաև բալաստ, կապեր և երկաթգիծ, ինչպես նաև երկու նոր կամուրջ:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունն առաջարկեց հոգալ Հայաստանում համակարգի արդիականացման ծախսերը: Վերականգնման և զարգացման եվրոպական բանկն առաջարկեց ֆինանսավորել երկաթգծի վերանգնումը Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցք ծրագրի միջոցներով: Եվրամիությունը նույնպես խոստացավ աջակցել: Հետագայում ամերիկյան պաշտոնյաները նշեցին երկաթուղային տրանսպորտի կարիքը Աֆղանստանում գտնվող զորքերին նյութեր մատակարարելու համար, բայց Անկարան շարունակում էր մերժել Կարս-Գյումրի դարպասի բացումը:

Հայաստանի հետ ուղղակի առևտրական կապերի խզումը մեծ ազդեցություն ունեցավ Արևելյան Անատոլիայի տնտեսական պայմանների վրա:

Մեհմեդ Յիլմազը՝ Կարսի առևտրային պալատի նախագահը, ասաց. «Մենք ուզում ենք բացել սահմանը: Դա կնշանակի աշխատանք բոլորի համար: Հայերը կայցելեն Կարս մթերքներ և տեքստիլ արտադրանք գնելու համար: Թուրքական մթերքները, օրինակ՝ կարագը, ջեմը և ձիթապտղի յուղը, առաք վում են Վրաստան և Իրան և ապա վերավաճառվում Հայաստանում: Երկու կողմերն էլ շահագրգիռ են անմիջական առևտուր վերսկսելու հարցում»[11]: Կարս այցելելուց հետո Ուստունն ասաց. «Քաղաքը մահանում է»[12]:

Ի պատասխան Կոնգրեսի հարցմանը՝ փոխպետքարտուղար Ռիչարդ Արմիթեյջը զեկույց ներկայացրեց՝ նշելով առևտրային կապերի վերականգնման անհրաժեշտությունը: «Հայ-թուրքական սահմանի բացումը կկրճատի Հայաստանից և դեպի Հայաստան տրանսպորտային ծախսերը, կմեծացնի Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրաշրջանառությունը, ինչպես նաև կբարելավի Հայաստանում և Թուրքիայի արևելքում ընդհանուր տնտեսական միջավայրը: Սահմանի բացումը չընդհատվող երկաթուղային կապ կստեղծի Ստամբուլի և Բաքվի, ինչպես նաև Միջերկրական և Կասպից ծովերի միջև»[13]:

Հայ-թուրքական գործարար զարգացման խորհուրդը կարծում էր, որ Գյումրիի սահմանի բացումն առաջին տարում 300 մլն ԱՄՆ դոլար առևտրաշրջանառության կհանգեցնի: Նաև համարում է, որ հայ-ադրբեջանական սահմանի բացումը կխթանի Կենտրոնական Ասիայում Թուրքիայի առևտրի շրջանառությունը՝ 35 տոկոսով կրճատելով տրանսպորտային ծախսերը: Հայաստանի արտահանումը կարճ ժամկետում կկրկնապատկվի, իսկ համախառն ներքին արդյունքը, որը ներկայում շուրջ 2 միլիարդ ԱՄՆ դոլար է կազմում, կմեծանա 30-40 տոկոսով: Կաան Սոյակը նկատում էր. «Չկա որևէ խոչընդոտ հայերի և թուրքերի միջև բանակցություններ և համագործակցություն ծավալելու համար: Փակ սահմանը միակ խոչընդոտն է բիզնեսի և մարդկային հարաբերությունների զարգացման համար: Մեզ բաժանող փակ սահմանն անիմաստ է»[14]:

Երբ 2003թ. մայիսին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն այցելեց Կարս, քաղաքապետը և առևտրային պալատը թախանձեցին նրան բացել սահմանը: ՀԹՀՀ-ն կազմակերպեց ԱՄՆ կոնգրեսականների դիմումը: Սենատոր Միտչ Մակքոնելը (հանրապետական՝ Քենտուկի նահանգ) հայտարարեց. «(Հայաստանի և Թուրքիայի միջև) սահմանի բացումը բխում է Ամերիկայի ազգային շահերից, ես վստահ եմ, որ այն կօգնի Ամերիկային ահաբեկչության դեմ պայքարում»[15]: Ֆրենկ Պալոնեն և Ջո Նոլլենբերգը՝ Կոնգրեսի հայկական հարցերի փակ համագումարի համանախագահները, գրեցին. «Թեև Թուրքիան գնահատվում է որպես Միացյալ Նահանգների դաշ-

նակից, հատկապես՝ ահաբեկչությունը արմատախիլ անելու մեր ջանքերում, Հայաստանի հանդեպ նրա վերաբերմունքն անընդունելի է: Թուրքիայի՝ Հայաստանի շրջափակումը հանելու և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու անկարողությունը չափազանց մտահոգիչ է»[16]: Սահմանի բացման հարցը բարձրացրեց Փաուելը 2003թ. ապրիլի 2-ին Անկարա կատարած այցի ժամանակ: Փոխնախագահ Դիք Չեյնին, պաշտպանության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդը և ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության խորհրդական Քոնդոլիզա Ռայսը նույնպես քննարկեցին այս հարցը արտգործնախարար Աբդուլա Գյուլի հետ 2003թ. հուլիսի 21-ին նրա Վաշինգտոն կատարած այցի ընթացքում:

ՀԹՀՀ-ի հիմնումից առաջ Թուրքիայի և Հայաստանի արտգործնախարարները գրեթե երկու տարի չէին հանդիպել: ՀԹՀՀ-ի ջանքերը և սեպտեմբերի 11-ից հետո ստեղծված անվտանգության նոր իրավիճակը խթանեցին հայ և թուրք պաշտոնյաների միջև հանդիպումները:

2002թ. փետրվարին Իսմայիլ Ջեմը և Վարդան Օսկանյանը հանդիպեցին Նյու Յորքում՝ համաշխարհային տնտեսական ֆորումում: Մարտին Հայաստանի Հանրապետությունը Ստամբուլում բացեց Սևծովյան տնտեսական համագործակցության խորհրդի (ՍԾՏԽ/BSEC) տեղեկատվական գրասենյակ: Ապրիլին Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը համապարփակ վերանայման ենթարկեց Հայաստանի հանդեպ Թուրքիայի քաղաքականությունը: Հրավիրեցին Գունդուզին և Օզդեմ Սանբերկին: Մի քանի օր անց հայ և թուրք արտգործնախարարները դեմ առ դեմ հանդիպում ունեցան Ռեյկյավիկում ՆԱՏՕ-ի հանդիպման ընթացքում: 2002թ. հունիսին Ջեմը և Օսկանյանը հանդիպեցին Ստամբուլում՝ ՍԾՏԽ-ում: հաջորդ գարնանը Օսկանյանը և Գյուլը հանդիպեցին Մադրիդում ՆԱՏՕ-ի նախարարական հանդիպման ետնաբեմում: ՆԱՏՕ-ն իր առաջին զորավարժություններն անցկացրեց Հայաստանում, և Թուրքիայի «Իշտիկլալ Մարշի» ազգային հիմնը հնչեց թուրք զինվորներին ողջունելու համար: Թուրքիայի նախագահ Սեզերը ուղերձ հղեց նախագահ Քոչարյանին՝ շնորհավորելով նրան վերընտրվելու կապակցությամբ: Գյուլը և Օսկանյանը 2003 թ. սեպտեմբերին նորից հանդիպեցին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանում: Կանոնավոր շփումների արդյունքում Օսկանյանը և Գյուլը անձնական լավ հարաբերություններ հաստատեցին և հաճախ հեռախոսազրույցներ էին ունենում:

❖❖❖

ՀԹՀՀ-ն հաճախ էր ներգործություն կրում աշխարհաքաղաքական իրադարձություններից, որոնք նրա ազդեցությունից դուրս էին: Թեև ՀԹՀՀ-ն գործունեության ծրագիր ուներ, սակայն առաջին իսկ օրվանից հարկադրված էր ճշտել իր մոտեցումը: ՀԹՀՀ-ի գործունեության կարևորագույն դասերից է գործողությունները դրանց համատեքստին հարմարեցնելու անհրաժեշտությունը: Թեև դժվար է չափել ժողովրդական դիվանագիտության ազդեցությունը, Օսկանյանը կարևորեց դրա դերը Թուրքիայի և Հայաստանի իշխանությունների մերձեցմանը նպաստելու գործում: Այսպես, ժողովրդական դիվանագիտությունը նպաստեց Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցելու վերաբերյալ Թուրքիայի դիրքորոշման փոփոխության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորմանը, ինչը ուղի հարթեց 2003թ. Հայաստանի անդամակցման համար:

Չնայած երկվորյակ աշտարակների վրա ահաբեկչական հարձակումները ստվերեցին ՀԹՀՀ-ի Ստամբուլի հանդիպումը՝ այն ջրբաժան դարձավ հանձնաժողովի գործունեության համար: Ընդունվեցին լրատվության սկզբունքները: Թ՛ե թուրք, թե՛ հայ անդամները հաստատեցին քաղաքականության առաջարկները, ներառյալ՝ վիզաների տրամադրման ընթացակարգերի կարգավորումը և սահմանի բացումը: ՀԹՀՀ-ն նաև հրավիրեց Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի մասնագետներին՝ Նյու Յորքում ՀԹՀՀ-ի հաջորդ հանդիպման ընթացքում իրավական հարցերի վերաբերյալ սեմինար անցկացնելու նպատակով, ինչն իրավամբ կարևորագույն քայլ պիտի դառնար ցեղասպանության խնդրին անդրադառնալու գործում:

Ընդունելով սեպտեմբերի 11-ի հեռագնա ազդեցությունը՝ Ստամբուլի հանդիպման արդյունքում ՀԹՀՀ-ի անդամները համատեղ հայտարարություն արեցին՝ արտահայտելով իրենց «վրդովմունքն ու խորին ցավակցությունը»: ՀԹՀՀ-ն քննարկեց այդ ողբերգական իրադարձությունների ազդեցությունն աշխարհի գործերի վրա և այդ լույսի ներքո վերահաստատեց «փոխըմբռնումն ամրապնդելու, տարաձայնությունները հաղթահարելու և համագործակցությունը խթանելու» բանաձևը[17]:

Ծանոթագրություններ

1. Փոլ Վոլֆովից, Մերձավորարևելյան քաղաքականության Վաշինգտոնի ինստիտուտում Թուրգուտ Օզալի դասախոսությունը, 2002թ., 13 մարտի:
2. Mirror Spectator, October 17, 2001.
3. California Courier, November 1, 2001.
4. Վարչապետ Բուլենտ Էջևիթի հայտարարությունը, 2002թ., 19 հունվարի:
5. Արտգործնախարար Վարդան Օսկանյանի հայտարարությունը Սևծովյան տնտեսական համագործակցության խորհրդում, 2002 թ., 25 հունիսի:
6. Արտգործնախարար Վարդան Օսկանյանի հայտարարությունը TESEV-ում, 2002թ., 26 հունիսի:
7. ANN Groong, October 17, 2001.
8. Արտգործնախարար Վարդան Օսկանյանի հայտարարությունը TESEV-ում, 2002 թ., 26 հունիսի:
9. Նյու Ջերսիի ռադիոյի հայկական ժամ, 2001թ., 17 հոկտեմբերի:
10. «Ազատություն» ռադիոկայան, 2002թ., 13 հունվարի:
11. «Ազատություն» ռադիոկայան 1998թ., 28 հուլիսի:
12. Հարցազրույց հեղինակի հետ, 2003թ., 6 օգոստոսի:
13. Պետքարտուղարության 2003 թ. զեկույցը. Հայ-թուրքական սահմանի փակման տնտեսական ազդեցությունը և դիվանագիտական կապերը երկու կողմերի հետ:
14. «Թրքիշ դեյլի նյուս» 2002, 9 հունվարի
15. Սենատոր Միտչ Մակքոնելի հայտարարությունը, 2002թ., 13 հունիսի:
16. Պատգամավորներ Ֆրենկ Պալոնեի և Ջո Նոլլենբերգի նամակը պետքարտուղար Քոլին Փաուելին, 2001թ., 3 դեկտեմբերի:
17. ՀԹՀՀ-ի համատեղ հայտարարությունը, 2001թ., 25 սեպտեմբերի:

9

Հաշտեցման երկընտրանք

Թեոդոր Ս. Սորենսենը ՀԹՀՀ-ի անդամների վրա հանդարտեցնող ազդեցություն ունեցավ: Սորենսենը ականավոր, պատկառելի անձնավորություն է: Նա համաժողովրդական ճանաչման է հասել որպես նախագահ Ջոն Քենեդիի ճառերի հեղինակ և ավագ խորհրդատու: Պետական ծառայության մեջ նրա բազմաթիվ ձեռքբերումների թվում հիշատակելի է այն կարևոր դերը, որ խաղաց նա կուբայական հրթիռային ճգնաժամի կարգավորման մեջ: Նա հարգված է իր լայնախոհության և քաղաքական հոտառության համար և հայտնի է իր սուր հումորով և թևավոր խոսքերով:

Սորենսենը Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի խորհրդի (ԱԱՄԿ) անդամ է: Կենտրոնը հիմնվել է Ալեք Բորեյնի՝ Հարավ ֆրիկյան իսկության և հաշտեցման հանձնաժողովի փոխտնօրենի նախաձեռնությամբ՝ մարդու իրավունքների ոտնահարման վերապրուկները հաղթահարելու գործում նորանկախ ժողովրդավարություններին խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

Ինչպես և Սորենսենը, Բորեյնը ճառագում է փորձից ծնված իմաստությամբ: ԱԱՄԿ-ն նաև իսկության և հաշտեցման առաջնակարգ փորձագետների թիմ է ընդգրկում: Նրանցից մեկը Փոլ վան Զիլն է՝ հանրագիտակ երիտասարդ իրավաբանը, ով Բորեյնի հետ աշխատել է Հարավային Աֆրիկայում:

Գունդուզ Ակտանը 2001թ. հուլիսին զանգահարեց ինձ Էգեյանում

գտնվող իր կղզուց: Պնդելով, որ ցեղասպանության ընդունման արշավին վերջ տալու միակ ճանապարհը իրավական դաշտում գործունեությունն է՝ նա մեկնեց Հաագա և զրուցեց Արդարադատության միջազգային դատարանի մասնագետների հետ: Գունդուզը ցանկանում էր, որ ՀԹՀՀ-ն կոչ անի Թուրքիայի և Հայաստանի իշխանություններին միջնորդ դատարանի օրինական որոշում ձեռք բերել ցեղասպանության մեղադրանքները վերջնականորեն հանգուցալուծելու նպատակով: Գունդուզն ինձ խնդրեց մասնագետներ գտնել, ովքեր խորհուրդներ կտային ՀԹՀՀ-ին:

1980-ականների վերջին ես մասնակցեցի Գվատեմալայում մարդու իրավունքների կոնգրեսական իրազեկմանը: Միտքս եկավ Պրիսցիլլա Հայները՝ զեկուցողներից մեկը, ով խոսում էր հետպատերազմյան Գվատեմալայում իսկության և հաշտեցման գործընթացի մասին: Ես կապվեցի Մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպության (Human Rights Watch) մի աշխատակցի հետ և իմացա, որ Հայները միացել է ԱԱՄԿ-ին:

ՀԹՀՀ-ի 2001թ. նոյեմբերյան հանդիպումը Նյու Յորքում լավ սկսվեց: Ես խնդրեցի Մետրոպոլիտեն թանգարանին մի քիչ ավելի երկար բաց մնալ և կազմակերպել մոգոլների զարդերի հիասքանչ հավաքածուի ցուցադրում: Ճաշին ՀԹՀՀ-ի անդամները ստացան «Ես սիրում եմ Նյու Յորքը» շապիկներ: ՀԹՀՀ-ի անդամները մի լավ կատակեցին, երբ կռվում էին ճիշտ չափսերի համար:

Ընկերական մթնոլորտը կարճ տևեց: Անդրանիկ Միհրանյանը Գունդուզին մեղադրեց վերջին հանդիպման ընթացում մեր որոշած լրատվական սկզբունքները խախտելու մեջ: Գունդուզը մեղադրեց Անդրանիկին նույն բանի համար: Վան Գրիգորյանը դժգոհեց Օզդեմ Սանբերկից, որի ակնարկներն օգտագործվեցին ՀԹՀՀ-ն վարկաբեկելու համար: Փոխադարձ մեղադրանքները շարունակվում էին: ՀԹՀՀ-ի անդամները ցույց տվեցին իրենց զայրույթն ու լիցքաթափվեցին թշնամանքից:

Մի քանի ժամ տևած խոսքակռվից հետո փորձեցի նորից կենտրոնացնել խումբը՝ անցնելով մեր հետագա օրակարգի քննարկմանը: ԱԱՄԿ-ի «Իրավական խնդիրների սեմինարը» կլուսաբաներ հաշտեցման միջազգային մոդելները: Ես մեկնաբանեցի ՀԹՀՀ-ին սպառնող մի քանի յուրահատուկ փորձություններ: Իսկության և հաշտեցման հանձնաժողովները սովորաբար պաշտոնական մարմիններ են՝ պատմական դեպքերը քննելու և հանցագործությունները պատժելու մանդատներով: ՀԹՀՀ-ն նման իրավասություն չուներ: Սեմինարն ամբողջովին իրազեկման նպատակ էր հետապնդում, և ԱԱՄԿ-ն, ինչպես և ՀԹՀՀ-ն, պաշտոնական կարգավիճակ չուներ:

Ես հանդիպեցի Թեդ Սորենսենին հաջորդ առավոտյան, նրա տան մոտ: Սորենսենը վերջերս կաթված էր տարել, որը թուլացրել էր նրա տեսողությունը և սահմանափակել շարժունակությունը: Սակայն նրա միտքը բյուրեղի պես պարզ էր, իսկ լեզուն՝ ածելու պես սուր: Սորենսենը, ձեռնափայտին հենված, տպավորիչ էր: Երբ հասանք տեղ, թուրքերը և հայերն իրենց լավագույն վարքագծին էին հետևում: Սորենսենի ներածական խոսքը զուսպ էր, լուրջ և հուսադրող: Նա մեզ հիշեցրեց. «Մենք այստեղ ենք ոչ որևէ մեկին դատելու համար: Արդարությունը կույր է: Հիվանդությունը մի քանի ամիս առաջ տարավ տեսողությունս, բայց այն վերադառնում է, և ես կարող եմ տեսնել ձեր աշխատանքի ապագան»[1]:

Անցումային արդարադատություն

Սորենսենը բացատրեց ԱԱՄԿ-ի մոտեցումը անցումային արդարադատության նկատմամբ.

Երբ բռնության և բռնադատման ժամանակաշրջանից հետո քաղաքական համակարգը մտնում է անցումային շրջան, հասարակությունը հաճախ մնում է դեմառդեմ մարդու իրավունքների ոտնահարումների ծանր ժառանգության հետ: Անցյալի հանցանքների հետ ընդհանուր հայտարարի գալու փորձերում պետական պաշտոնյաները և շահերի հասարակական պաշտպանները հաճախ դիմում են պատասխանատվության և՛ դատական, և՛ ոչ դատական մեխանիզմներին ու հետզհետե կիրառում են երկուսի համադրումը: Թե՛ անհատ ոճրագործներին հետապնդելու, թե՛ պետականորեն հովանավորությամբ իրագործված բռնությունների զոհերին փոխհատուցում առաջարկելու, իրողության հանձնաժողով ձևավորելու, ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնելու կամ մարդու իրավունքները ոտնահարողներին ազդեցիկ պաշտոններից հեռացնելու պարագայում հասարակությունը քաղաքական անցման շրջանում հաճախ բախվում է չափազանց դժվար մարտահրավերների, երբ անդրադառնում է իր անցյալին:[2]

Մոդելներ

Հայները ընդհանուր առմամբ ներկայացրեց անցումային արդարադատության մեխանիզմները և նկարագրեց իսկության և հաշտեցման տարբեր գործընթացներ: Աշխարհում,1973-ից ի վեր, ավելի քան քսան իրողության հանձնաժողով է ստեղծվել: Շատերը ստեղծվել են իշխանությունների նախաձեռնությամբ և հաստատվել խորհրդարանների կողմից: Մյուսները

հիմնվել էին միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության նախաձեռնությամբ, և մի քանիսն էլ հիմնվել էին հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ:

Նա քննարկեց իսկության և հաշտեցման գործընթացի ազդեցությունը վիշտը, անարդարությունը և ատելության ժառանգությունը կուլ տալու գործում: Հայները բացատրեց, որ ԻՀՀ-ները նպատակ ունեն խախտել անցյալի լռությունը զոհերի հիշատակը պահպանելու և այն մոռանալու կարիքները ներդաշնակեցնելու միջոցով: Վկայությունները ձայն են տալիս զոհերին և ապաքինող ազդեցություն են գործում թե՛ անհատի, թե՛ հասարակության համար[3]:

Իսկության և հաշտեցման գործընթացի նպատակն է բռնադատումների ժամանակները թոթափած հասարակություններում վստահություն հաստատել շահագրգիռ կողմերի միջև: Բռնության շրջանին վերջ դնելու համար ԻՀՀ-ները նաև նպատակ ունեն պայքարել անպատժելիության մշակույթի դեմ՝ արմատավորելով օրենքի իշխանությունը: ԻՀՀ-ները փորձում են թույլ չտալ մարդու իրավունքների ոտնահարումների կրկնությունը բարելավումներն ինստիտուտալացնելուն ուղղված հանձնարարականների միջոցով, ինչպես, օրինակ՝ զինված ուժերի հանդեպ քաղաքացիական հսկողության սահմանումը կամ ոստիկանության ծառայողների համար մարդու իրավունքների կրթությունը:

Կարևոր է, որ մանդատը հստակ սահմանի ԻՀՀ-ների գործունեության շրջանակը: Պաշտոնական մարմինների համար մանդատը կարող է ընդգրկել դատարան կանչելու, վկայություն տալու և պատիժ պահանջելու իրավունքը: ԻՀՀ-ները քննարկում են միայն որոշակի ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունները: Նրանք կարող են քննության առնել վերջին շրջանում տեղի ունեցած դեպքերը, նաև հետ նայել անցած տասնամյակներին կամ սերունդներին: Օրինակ՝ Ավստրալիայի ԻՀՀ-ն երկար ժամանակահատված էր ծածկում՝ կենտրոնանալով տեղաբնիկների «կորուսյալ սերնդի» վրա: ԻՀՀ-ն սովորաբար գոյություն է ունենում սահմանված ժամանակահատվածում և իր աշխատանքների վերջում պաշտոնական զեկույց է հրապարակում: ԻՀՀ-ն անկողմնակալ նախաձեռնություն է՝ համաձայնություն ձեռք բերելու և իրադարձությունները փաստելու նպատակով:

Հայները համեմատեց Չիլիի, Գվատեմալայի, Արգենտինայի, Էլ Սալվադորի և Հարավային Ա ֆրիկայի ԻՀՀ-ների փորձը: Հարավա ֆրիկյան իսկության և հաշտեցման հանձնաժողովը սովորաբար համարվում է ամենաարդյունավետը՝ անհատական և ազգային մակարդակներում իր ապա-

քինիչ դերով: Այն քննության առավ ոչ միայն աղմուկ հանած գործերը, ինչպիսիք են Ստիվ Բիկոյինը և Վինի Մանդելայինը, այլև արձանագրեց այն ամենօրյա բռնությունները, որոնք ազդել են հարավա ֆրիկացիների կյանքի վրա:

Նա նկարագրեց նաև, թե ինչպես են հանրային իրազեկման քարոզարշավները տեղեկացնում շահագրգիռ կողմերին հանձնաժողովի նպատակի, գործիքների, դերի և սահմանափակումների մասին: Իրազեկումը հնարավորություն է ընձեռում ապահովելու իսկության և հաշտեցման գործընթացում կայացված քաղաքական որոշումների ընդունումը հասարակության կողմից: Յուրաքանչյուր ԻՀՀ բախվում է բարոյական երկընտրանքի՝ ինչն է համաներման և պատասխանատվության լավագույն զուգակշիռը:

Իրապատում

Ճշմարտությունը պատերազմից խեղված ու հաշմված յուրաքանչյուր հասարակության առաջընթացի նախապայմանն է: Երկրները փաստերն արձանագրելու անհրաժեշտությանն արձագանքել են տարբեր ռազմավարություններով: Օրինակ՝ Չիլին մշակել է «Պատմաբանների մանիֆեստ», Կամբոջան վկայություններ է հավաքել «Ցեղասպանության նախագծի» միջոցով, Գվատեմալան ընդգծել է «պատմական պարզաբանումը»:

Տարեգրերն ընդգրկում են անհատական վկայություններ, որոնք երաշխավորում են, որ իրադարձությունները չեն ժխտվի, և ապահովագրում են հավաքական մոռացության դեմ[4]: Իրապատումը սովորաբար հարգում է անհատական տառապանքներն ու ամոքիչ ազդեցություն է ունենում պատմողի վրա: Գործընթացն ավելի է դժվարանում, երբ տառապանքները հավաքական գիտակցություն և խմբային քաղաքական ինքնություն են դարբնում: «Զոհ ազգի» եզրույթը հավելյալ մարտահրավերներ է առաջադրում ընդունման և զղջման համար:

Մարթա Մինոուն ընդգծեց իրապատումի վերականգնող ուժը, որը արժևորում է զոհին և անհատական ապաքինումը դարձնում հաշտեցման հիմք[5]: Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը նկարագրում է իշխանությունների իրավական պատասխանատվությունը՝ հետաքննելու և շտկելու նախորդ ռեժիմների ներքո մարդու իրավունքների խախտումները: «Յուրաքանչյուր հասարակություն ունի անցյալի իրադարձությունների, ինչպես նաև արտասովոր հանցանքների կատարման շարժառիթների ու պայմանների մասին իսկությունն իմանալու անօտարելի իրավունք»[6]:

Բռնությունը կրկնվելու միտում ունի այն հասարակություններում, որտեղ ճշմարտությունը թաքցված է: Հաիթիի բռնությունների շրջանը դրա օրինակն է: Առաջընթացի և զարգացման ճակատը (ԱՀՃ/FRAPH)՝ «Պապա Դոկ» Դյուվալիեյի իշխանության ժամանակ ահաբեկչական մարտավարությունների համար պատասխանատու խորհրդարանական խումբը, կապեր ուներ ԿՀԳ-ի (CIA) հետ: ԱՄՆ-ն տիրացավ 160000 էջ փաստաթղթերի, ինչպես նաև մերկացնող լուսանկարների և տեսաժապավենների, մինչ դրանք կդառնային հրապարակային: Քանի որ վկայության դիմաց համաներում չեր առաջարկվում, հանցագործները վկայություն տալու որևէ դրդապատճառ չունեին: ԱՀՃ-ի շատ անդամներ ընդհատակ անցան կամ ապաստանեցին Միացյալ Նահանգներում: ԱՀՃ-ի Էմանուել «Տոտո» Կոնստանը խուսափեց հետապնդումից՝ տեղափոխվելով Բրուքլին, իսկ գեներալ Ռաուլ Սեդրասին քաղաքական անձեռնմխելիություն տրամադրվեց, և նա արտաքսվեց Պանամա: ԱՀՃ-ի որոշ անդամներ նույնիսկ ուղի հարթեցին դեպի Հաիթիի իշխանությունները, երբ 2004-ի փետրվարին նախագահ Ժան Բերտրան Արիստիդը բռնի արտաքսվեց:

Իսկության հասնելը միշտ չէ, որ հեշտ է, մանավանդ, երբ գոյություն ունեն «բազմակի իսկություններ»: Հակամարտության իրադրություններում բոլոր կողմերը ճշմարտության իրենց տարբերակն ունեն և համոզված են, որ գիտեն, թե ինչ է տեղի ունեցել իրականում: Ուրուգվայն ուղղակիորեն ընդունեց, որ ամեն պատմություն ունի երկու կողմ՝ ԻՀՀ-ին իրավունք վերապահելով՝ քննարկել թե՛ պարտիզանների գործած, թե՛ պետության կատարած հանցանքները:

Արդարություն

Այն մտայնությունը, որ համաներում նշանակում է անպատժելիություն, ստվեր է նետում ԻՀՀ-ների վրա: Վան Չիլը բացատրեց, որ իսկության և հաշտեցման գործընթացը չի փոխարինում դատաքննությամբ պատասխանատվությանը: Նա ընդգծեց, որ իսկությունն ավելի շուտ լրացնում, քան փոխարինում է արդարդատությանը: Վան Չիլը ներկայացրեց միաջազգային մարդասիրական իրավունքի զարգացումը՝ սկսելով Հաագայի կոնվենցիայից (1907թ.), Նյուրնբերգի տրիբունալի խարտիան (1945թ.), Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (1948թ.) և Ժնևի չորս կոնվենցիաները (1949թ.): Այս համաձայնագրերը միասին կազմում են համաձայնագրային և նախադեպային իրավունքի օրենսդրությունը՝ սահմանելով հետաքննելու և մարդու

իրավունքների ոտնահարման զանգվածային բռնությունների, էթնիկ զտման կամ ցեղասպանության զոհերին փոխհատուցման տրամադրելու պետության պարտավորությունները:

Բանավեճ սկսվեց համաներման և պատասխանատվության կողմնակիցների միջև: Ներման կողմնակիցները փաստարկում են, որ համաներումը հնարավորություն է տալիս խուսափել վիուկների որսից և տանում է հաշտեցման: Մյուսները համոզված են, որ եթե արդարությունը բացակայում է, հաշտեցումը ձգձգվում է: Առանց աղաղակող հանցագործությունները պատժելու հնարավոր չէ երաշխավորել, որ ոճրագործներն ապագայում հանցանքներ չեն գործի: Մինչ անհատներին պատասխանատվության չեն կանչվել, առկա է ողջ հասարակությունը կամ էթնիկական խումբը պատասխանատու համարելու միտում:

Բանավեճը միս արյուն ստացավ Հարավսլավիայում: 2000թ. նախագահ Վոյիսլավ Կոշտունիցան պահանջեց, որ Սլոբոդան Միլոշևիչին դատեն տեղական դատարաններում, որոնք լեփ-լեցուն էին Միլոշևիչի վարչակարգից մնացած դատավորներով: Միլոշևիչին պատերազմի ոճիրների համար հետապնդելու փոխարեն, Կոշտունիցան գերադասեց կոռուպցիայի համար մեղադրանքը: Սերբիայի վարչապետ Զորան Ջինջիչը մերժեց այս մոտեցումը և ի վերջո դասավորեց Միլոշևիչի հանձնումը Յուգոսլավիայի հարցերով Հաագայի Միջազգային քրեական դատարանին: Մի տարի անց Միլոշևիչի հետ կապված մարդասպանները Բելգրադի փողոցներից մեկում սպանեցին Ջինջիչին:

Արտաքին օգնությունը հետապնդումների հետ կապելը պատասխանատվությունը քաջալերելու ուղիներից մեկն է: Այսպես՝ ԱՄՆ-ն Հարավսլավիային օգնության տրամադրումը պայմանավորեց Միլոշևիչի արտաքսմամբ: Նախկինում ԱՄՆ-ն արտաքին օգնության ցուցաբերումը պայմանավորել էր Չիլիում, Էլ Սալվադորում և Գվատեմալայում հետապնդումների պահանջի հետ:

Հաշտեցում

Հաշտեցումը սոսկ իսկությունը պատմելով չի ծնվում: Այն ավելի բարդ և երկարատև գործընթաց է, որը և՛ հետադարձ է, և՛ հեռանկարային: Ջոն Փոլ Լեդերաքը հավատում է, որ հաշտեցումը «մի տեղ է՝ հանդիպման կետ, ուր կարող են հանդիպել անցյալին և ապագային վերաբերող մտահոգությունները: Հաշտեցումը՝ որպես հանդիպում, ենթադրում է տալիս, որ անցյալն ընդունելու և ապագան պատկերացնելու խաչմերուկը ներկան վերա-

սահմանելու պարտադիր բաղադրամասն է: Դրա համար մարդիկ պետք է իրենց և թշնամիներին, իրենց հույսերին ու տագնապներին դեմ հանդիման գնալու ուղիներ գտնեն»[7]:

«Ներելն ու մոռանալը» անիրական գաղափար է: Հաշտեցումը նախ պահանջում է ընդունում: Ապաշխարումը ներում է ապահովում զոհի կողմից: Ներելն ընտրելը ազատում է անհատին հատուցման պահանջից: Հաշտեցումն ընդգծում է ապաքինումը՝ վրեժխնդրությունից հրաժարվելու գնով:

Հաշտեցումը ներառում է նաև անհատական վստահության վրա կառուցված հարաբերությունները: Հաշտեցումը կայանում է անցյալի հանցագործությունների հետ կապված հաստատությունների բարեփոխման միջոցով, ինչպես օրինակ զինված ուժերը, ոստիկանությունը և դատարանները: Թեև անհատների միջև հաշտեցումը բավական դժվար է, սակայն էլ ավելի դժվար է հաշտեցումը բաժանված հասարակությունների միջև: Խորհրդանիշները կարևոր են հաշտեցումն ապահովելու համար: Հանրային վայրերում հուշարձաններ կառուցելը խորհրդանշական է: Խորհրդանշական է նաև անհատների ոգեշունչ վարքագիծը: Նելսոն Մանդելան քսանվեց տարի անց բանտից դուրս ելավ անչար: Նրա ներողամտությունն օրինակ ծառայեց բոլոր հարավաֆրիկացիների համար՝ սև, սպիտակ և հնդիկ:

Երբ հարցը վերաբերում է միջպետական հաշտեցմանը, հետպատերազմյան ռազմավարությունները պետք է ներառեն հին ախոյանների միջև քաղաքական, հասարակական, մշակութային և տնտեսական հարաբերությունների զարգացումը: Միջպետական հաշտեցմանը կարող են ծառայել նաև երկկողմ և բազմակողմ կառույցները միջոցով, որոնք փոխազդեցություն են ապահովում և խթանում ընդհանուր շահերը: Համագործակցության կապերը կարող են սկսվել ոչ պաշտոնապես և ապա ժամանակի ընթացքում դառնալ ինստիտուցիոնալացված: Ընկերական համաձայնագրերը և չհարձակվելու մասին դաշնագրերը, որոնք փոխադարձաբար ճանաչում են կողմերի ինքնիշխանությունը, նույնպես օգտակար գործիքներ են հաշտեցման համար:

Իրական հաշտեցումը պահանջում է, որ զոհերի ձայնը լսվի և նրանց զրկանքները ճանաչվեն: Եթե պատասխանատվություն կամ թափանցիկություն չլինի, զոհերը կդատապարտվեն հավիտենական զոհականության վիճակի: Առանց ապաքինման նրանք կարող են խաղալիք դառնալ անպարկեշտ ղեկավարների ձեռքում, ովքեր միջոցներ են փնտրում շահագործելու նրանց զայրույթն ու անապահովությունը:[8]

Համընդհանուր իրավազորություն

1998թ. հոկտեմբերին Լոնդոնում Ավգուստո Պինոչետի ձերբակալումը իսպանացի մագիստրատի խնդրանքով համընդհանուր իրավազորության հասկացողության խթան դարձավ: Հասկացությունը վերաբերվում է առանձին պետության քրեական դատարանի կողմից պետության սահմաններից դուրս հանցանք գործած այլ երկրի քաղաքացու վրա իրավազորության տարածմանը: Համընդհանուր իրավազորությունը միջազգային արդարության ծավալվող համակարգի լրացում է:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հիմնադրած Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական դատարանը (1993թ.) և Ռուանդայի հարցերով միջազգային քրեական դատարանը (1994 թ.) ինստիտուցիոնալացրեցին այլտարածքային արդարության հասկացությունը: Ընդլայնելով իրավիճակի անհրաժեշտությամբ ստեղծված դատարանների փորձը՝ Հռոմի ստատուտը 1998թ. հիմնեց Միջազգային քրեական դատարանը (ՄՔԴ/ICC): Որպես միջազգային արդարադատության մեջ նորամուծություն՝ ՄՔԴ-ն մեծացնում է պատասխանատվությունը և ապագա հանցանքների հավանական կանխումը:

Ամրագրելով, որ ՄՔԴ-ն իրավազորություն ունի միայն այն դեպքում, երբ պետությունները ցանկություն չունեն կամ ընդունակ չեն հետապնդում իրականացնել երկրի ներսում, Հռոմի ստատուտն ընդգծում է պետության պատասխանատվության սկզբունքը: Սակայն, պատասխանողների ֆիզիկական պաշտպանության ապահովումը և հետաքննության, ձերբակալումների և հետպնդումների իրականացման գործում մի շարք պետությունների համագործակցության անհրաժեշտությունը սահմանափակում են այլտարածքային արդարադատության կիրառման հնարավորությունները: Արդյունավետ կիրառման դեպքում համընդհանուր իրավազորության և այլտարածքային արդարադատության համատեղումը նշանակում է, որ ոչ ոք անձեռնամխելիություն չունի հետապնդումից, եթե միայն հետապնդման փոխարեն չի ընտրվել համաներումը:

Համաներում

Արքեպիսկոպոս Դեսմոնդ Տուտուն պաշտպանում է «համաներում-հանուն-ճշմարտության» փոխզիջումը՝ որպես ավելի լավ միջոց, քան նյուրնբերգյան ոճի դատավարությունները կամ Չիլիի ոճի մոռացության համաներումը: Տուտուն պնդում է, որ Հարավային Աֆրիկայում ամենահա-

ջողվածն այն էր, որ «Ազատությունը տրվում էր իսկության դիմաց»[9]: Որպես իրապատումի մեքենա՝ Հարավային Աֆրիկայի Իսկության և հաշտեցման հանձնաժողովը ապացույցներ լսեց թե՛ զոհերի, թե՛ ոճրագործների վկայությունները: Այն հաշվի առավ նաև երկու կողմերի չարաշահումները, այդ թվում՝ նրանց, ովքեր պայքարել են ապարտեիդի դեմ, ինչպես օրինակ, նախագահ Թաբո Մբեկին: Ներում շնորհվեց նրանց, ովքեր խոստովանեցին իրենց հանցանքները: Սրտառուչ սերիալի պես լսումները լայնորեն հեռարձակվում և հրապարակվում էին: Հարաֆաֆրիկյան ԻՀՀ-ն վեր հանեց համաներման կարևորությունը: Այն մշակվել էր այնպես, որ ոճրագործները շահագրգիռ էին սեփական հանցանքներն ընդունելու և բացահայտելու: Երբ հալածողները գիտեն, որ իրենք օրենքով պատասխանատու են լինելու, նրանց մանրակրկիտ խոստովանություններն ապահովելը դժվարանում, իսկ դրանք կարևոր են իսկությունը շարադրելու գործում:

1978 թ. Չիլիի զինվորական վարչակարգը ինքնաներում հայտարարեց: Էլ Սալվադորի ԻՀՀ-ն նույնպես բացառեց զինվորական դատավարությունները: Արգենտինայի ԻՀՀ-ն, 1983թ.հիմնադրել է Ռաուլ Ալֆոնսինը, լիազորվել էր հետաքննելու մարդկանց անհետացումների այն դեպքերը, որոնք պատահել են զինվորական իշխանությունների յոթ ու կես տարվա կառավարման ընթացքում: Ի հայտ էին գալիս խոշտանգված և օդանավերից դուրս նետված քաղաքական բանտարկյալների մասին զարհուրելի պատմություններ: Թեև նախագահ Կառլոս Սաուլ Մենեմը ներում շնորհեց այն պաշտոնյաներին, ովքեր մեղավոր էին ճանաչվել փակ դատավարություններում, նորընտիր նախագահ Նեստոր Կիրխները հորդորեց Արգենտինական սենատին վերացնել համաներումների վիճելի օրենքները, որոնք հնարավորություն չէին տասլի հետապնդում իրականացնել այն զինվորական սպաների նկատմամբ, ովքեր մեղադրվում էին առևանգումների, խոշտանգումների և սպանությունների համար: Կիրխները գիտակցեց, որ ֆինանսական փոխհատուցումը զոհերի ընտանիքներին բավարար չէ:

Անցումը ժողովրդավության հաճախ դժվարին է և քաոսային: Անցման ընթացքում հեռացող զինվորական վարչակարգերը հաճախ վախենում են, որ ժողովրդավարական փոխակերպումների պարագայում իրենցից պատասխան կպահանջեն անցյալում մարդու իրավունքների ոտնահրումների համար: Նորընտիր քաղաքացիական ղեկավարները նորաստեղծ ժողովրդավարություններում հաճախ գերադասում են համաներում հայտարարել, քան պատժիչ միջոցներ կիրառել, որոնք խաթարում են գործընթացը: Օրինակ՝ Ուրուգվայի ժողովրդավարությանը հակված ղեկավարների նոր սերունդը վախենում էր ճնշամիջոցներ կիրառեկ և արգելեց դատավարութ-

յունները:

Ժողովրդավարություն

Իսկության և հաշտեցման հանձնաժողովը հակամարտության փոխակերպման և հետկոնֆլիկտային խաղաղության կառուցման համար կարևոր գործիք է: Այն սովորաբար ստեղծվում է անցումային իշխանությունների կողմից՝ որպես քաղաքական առաջընթացի և ժողովրդավարական բարեփոխումների ամբողջականացման միջոց: Անցյալի բռնություններին անդրադառնալու անկարողությունը խաթարում է օրենքի իշխանության և նոր ժողովրդավարական հաստատությունների օրինականության հիմքերը: Որպես հետապնդումներին այլընտրանք նորաստեղծ ժողովրդավարությունների քաղաքական առաջնորդները երբեմն նախընտրում են պատասխանատվության ենթարկելու փոխարեն պաշտոնական ներողություն խնդրել և դրամական կամ խորհրդանշական փոխհատուցումներ հատկացնել զոհերին և նրանց ընտանիքներին:

Շատ փոխակերպվող հասարակություններում անցյալի ոճրագործները շարունակում են շոշափելի իշխանություն պահպանել՝ զբաղեցնելով պաշտոններ, կամ կողմնակիցների միջոցով: Նրանք հաճախ հատուցումից խուսափելու համար գործում են բեմախորշում: Բարեփոխումների առաջնորդները պետք է շտապեն հզորացնել օրենքի իշխանության համար պատասխանատու հաստատությունները: Մարդու իրավունքների սկզբունքները որպես պաշտոնական քաղաքականություն որդեգրելը նույնպես օգնում է պաշտպանվելու ոտնահարումներից: Արևելյան Եվրոպայի շատ երկրներ էլ ավելի առաջ անցան՝ ընդունելով արգելափակող օրենքներ, որոնք արգելում են մարդու իրավունքները ոտնահարողներին հանրային պաշտոններ զբաղեցնել:

Քաղաքացիական հասարակությունը նույնպես կարևոր դեր է խաղում: Հետկոնֆլիկտային խաղաղարարությունը կարող է ամրապնդվել միջխմբային երկխոսությունների միջոցով, որոնք միատեղում են իսկության և հաշտեցման գործընթացից ազդեցության կրած շահագրգիռ կողմերին: ԻՀՀ-ի աշխատանքի լուսաբանումն իր հերթին ոտքի է հանում հասարակությանը նրան զորավիգ դարձնելով բարեփոխումներին և քաղաքական առաջընթացին:

Հետագա քայլերը

ԱԱՄԿ-ի «Իրավական խնդիրների սեմինարը» օգնեց ՀԹՀՀ-ին՝ հետագա քայլերի առումով: Սորենսենը հմուտ նախագահող էր, իսկ ԱԱՄԿ-ի մասնագետները բարձրակարգ էին: ՀԹՀՀ-ն համաձայնեց հաջորդ օրվա հանդիպման ընթացքում քննարկել ԱԱՄԿ-ի ապագա գործընթացները:

Այդ երեկոյան Ահմետ Էրտեգունը մեզ ճաշի հրավիրեց Մանհեթենում գտնվող նրա նրբաճաշակ առանձնատանը: Նրա բնակարանը զարդարում էին արվեստի գեղեցիկ նմուշներ, իսկ աշխատասենյակում Էրտեգունը ռոք աստղերի մակագրված նկարներ ուներ, օրինակ՝ Էրիկ Քլեփթոնինը: Որպես Անտլանտիկ Ռեքորդզի տնօրեն՝ Էրտեգունը երաժշտության և շոու բիզնեսի այուներից է:

Ահմետ Էրտեգունի հայրը Թուրքիայի դեսպանն էր Վաշինգտոնում, երբ Ահմետը սկսեց ջազային երաժշտության հավաքածու կազմել: Նրա հետաքրքրությունը երաժշտության նկատմամբ արտասովոր էր՝ հաշվի առնելով իր ընտանիքի դիվանագիտական ավանդույթը: Էրտեգունի հայրը 1923թ. մասնակցել է Լոզանի պայմանագրի բանակցություններին, որով կազմավորվեց Թուրքիայի Հանրապետությունը:

Հելենա Ֆինը ճաշին միացավ մեզ: Մեզ միացավ նաև Կիերան Փրենդերգաստը՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի քաղաքական գործերով տեղակալը, ով երկար տարիներ Թուրքիայում ծառայել է Բրիտանական արտգործնախարարությանը: Իր հյուրերին ողջունելու համար պրն. Էրտեգունը ոտքի կանգնեց և արտակարգ հանդիսավորությամբ ասաց. «Հաշտեցումը դժվար աշխատանք է: Ինչ խոչընդոտների էլ հանդիպեք, չհանձնվեք»:

Հաջորդ օրը հանդիպելով ԱԱՄԿ-ին՝ Գունդուզը առաջարկեց, որ ՀԹՀՀ-ն խնդրի ԱԱՄԿ-ին ուսումնասիրել հայերի «այսպես կոչված ցեղասպանության» առնչությամբ Ցեղասպանության Կոնվենցիայի կիրառելիությունը: Վան Գրիգորյանը և հայերը զարմացած էին: Չնայած Գունդուզը խիստ իրավական վերլուծություն էր կամենում, սակայն «կիրառելիություն» հասկացությունը կարող էր տարբեր կերպ մեկնաբանվել:

Թուրքերն ու հայերն առանձնացան տարբեր սենյակներում՝ Գունդուզի առաջարկը քննարկելու համար: Ես հետ ու առաջ էի անում՝ պատասխանելով հարցերին, պարզաբանելով հասկացությունները և փորձելով հարթել փոսերը: Վան Զիլի օգնությամբ մենք զգուշորեն շարադրեցինք ԱԱՄԿ-ի

իրավասությունը: Երբ համաձայնեցրինք ձևակերպումները, թուրքերն ու հայերը հավաքվեցին հիմնական սրահում և համաձայնեցին. «ՀԹՀՀ-ն խնդրում է, որ ԱԱՄԿ-ն անկախ երրորդ կողմի վերլուծություն անցկացնի XX դարասկզբի իրադարձությունների առնչությամբ 1948 թ. Ցեղասպանության կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ, [և որ] այդ վերլուծությունը տրամադրվի ՀԹՀՀ-ին ոչ հրապարակային հիմունքով»[10]:

Դադարի րոպեներին Անդրանիկ Միհրանյանը հեռախոսով զրուցում էր «Ազատություն» ռադիոկայանի հետ: Հայերից ամենից շատ Անդրանիկն էր շփվում լրատվամիջոցների հետ: Չնայած պայմանավորվեցինք, որ վերլուծության արդյունքները չհրապարակվեն, այնուամենայնիվ Անդրանիկը չէր կարծում, որ ոչհրապարակայնությունը վերաբերում է այն փաստին, որ այդպիսի ուսումնասիրություն կատարվելու է: Տարամեկնաբանությունների հնարավորությունը նվազեցնելու համար ես շտապեցի ձևակերպել նախագահողի համաձայնությունն ամփոփող հայտարարությունը և ուղարկեցի այն ՀԹՀՀ-ի անդամներին:

Անդրանիկի հարցազրույցը լրատվական սկզբունքների խիստ խախտում էր և խորապես վշտացրեց թուրքերին: Խաղի կանոնները շարունակելով խախտել՝ Գունդուզը և Օզդեմը, առանց ինձ կամ ՀԹՀՀ-ի իրենց գործընկերներին տեղեկացնելու, կապվեցին ԱԱՄԿ-ի հետ: Օզդեմի՝ Թեդ Սորենսենին ուղղված նամակում ասվում էր.

«Վստահ եմ՝ չեք լսել հայտարարության նախագծի՝ ամփոփիչ ուսումնասիրության արդյունքների հրապարակմանը վերաբերվող դրույթների մեկնաբանության վերաբերյալ հանձնաժողովի անդամների միջև ծագած վեճի մասին: Լրատամիջոցներում մեր ըմբռնման վաղ արտահոսը և ծավալվող հակասությունները մեզ բերցին այն կարծիքին, որ նախքան այս խոչընդոտի հաղթահարումը թերևս առավել խոհեմ կլիներ ձեռնպահ մնալ մեր հարցապնդման առարկայի ուսումնասիրությունից, այն է՝ կիրառելի է արդյոք 1948թ. Կոնվենցիան 1915թ. իրադարձությունների առնչությամբ: Մեր ընկալմամբ ԱԱՄԿ-ին դիմել էին քննել, թե 1948թ. Կոնվենցիան արդյոք կարո՞ղ է հետադարձորեն կիրառվել 1915թ. իրադարձությունների առնչությամբ, այլ ոչ թե քննել, թե արդյոք 1915թ. իրադարձությունները ցեղասպանության հանցակազմ են պարունակում Կոնվենցիայի լույսի ներքո»: [11]

Ես ԱԱՄԿ-ն ներգրավեցի Գունդուզի խնդրանքով: Եթե նա անհանգստացած էր իրենց դերից, ապա պետք է իր կարծիքը անմիջականորեն ինձ հայտներ: ՀԹՀՀ-ի որոշ անդամներ սովորություն դարձրին անտեսել իրենց ընդունած պարտավորությունները և արհամարել ժողովրդական դիվանագիտության համար կարևոր արարողակարգերը:

Հայերն արդեն պաշարվել էին քննադատության սվիններով: Եթե Թուրքիա ճանապարհորդող հայաստանյան անձնագիր կրողների համար վիզային ռեժիմը բարելավվեր, ՀԹՀՀ-ի հանդեպ ճնշումը կթեթևանար: Հայկական համայնքներում ՀԹՀՀ-ի աջակիցները սկսեցին կապել ամրագոտիները: Նույնիսկ Հայկական համագումարը ետ քաշեց իր օգնությունը:

Երբ Սորենսենն ինձ տվեց Օզդեմի նամակի պատճենը և հարցրեց՝ ինչպես գործել, ես տարածեցի այն ՀԹՀՀ-ի անդամներին: Իմացա, որ Օզդեմը գործել է միակողմանիորեն, առանց ՀԹՀՀ-ի թուրք անդամների հետ խորհրդակցելու, բացի Գունդուզից: ՀԹՀՀ-ի հայ անդամներն հայտարարություն հրապարակեցին, որում ասվում էր.

«Երեկ մեզ տեղեկացրին, որ հանձնաժողովի թուրք անդամներն միակողմանիորեն հրահանգեցին ԱԱՄԿ-ին ձեռնպահ մնալ Հայոց ցեղասպանության առնչությամբ 1948 թ Ցեղասպանության կոնվենցիայի կիրառելիության արդեն համաձայնեցված ուսումնասիրությունը սկսելուց: Հետևաբար հանձնաժողովի հայ անդամները ցավով են հայտարարում, որ մենք այսօր տեղեկացրել ենք նախագահող Դեյվիդ Ֆիլիփսին, որ ՀԹՀՀ-ն գործի չի անցնելու: Մենք շարունակում ենք հավատալ, որ հայերի և թուրքերի, Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների վերջնական կարգավորման անհրաժեշտություն կա: Հայկական և թուրքական քաղաքացիական հասարակությունների միջև կապերը, ինչպես օրինակ այն շփումները, որոնք հաստատվել են ՀԹՀՀ-ի շնորհիվ, շարունակում են այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ մնալ»:[12]

Թվում էր շուրջն ամենուր աջակցությունը փուլ է գալիս: Իր կազմակերպությունը հակասական իրավիճակից հեռու պահելով՝ Վան Զիլը գրեց ինձ. «ԱԱՄԿ-ն պատրաստվում է հետաձգել անկախ զեկույցի պատրաստման իր աշխատանքը մինչև այն պահը, երբ և՛ թուրքերը, և հայերը երկուսն էլ խնդրեն մեզ գործի անցնել»[13]: Չնայած առաջինն ինքն էր խնդրել ներգրավվել ԱԱՄԿ-ին, Գունդուզը գրեց. ԱԱՄԿ-ն մի «կենտրոն է, որը ցեղասպանության և Հայկական հարցի փորձ չունի: Այն չի կարող իրավական լուրջ հետաքննությունն անցկացնել»[14]: Իմ՝ նախագահողիս հայտարարությունը պարզապես ուղղված էր հանդիպման արդյունքը պարզաբանելու համար, բայց Գունդուզն անգամ ինձ վրա հարձակվեց՝ ՀԹՀՀ-ի անդամներին հայտարարությունը «առանց թույլտվության կամ համաձայնության»[15] տարածելու համար:

Ալեքսանդր Արզումանյանը հավատում էր, որ ՀԹՀՀ-ի թուրք անդամներին ճնշել են Անկարայի պաշտոնյաները՝ ստիպելով ետ վերցնել իրենց համաձայնությունը ցեղասպանության ուսումնասիրության կապակցությամբ:

Նա ասաց. «Փոխադարձ վստահությունը և հարգանքը ձեռք բերված համաձայնությունների հանդեպ կարևոր է յուրաքանչյուր համատեղ նախաձեռնության համար, և մեր հանձնաժողովի համար մասնավորապես: Քանի որ այս սկզբունքները խախտվել են, մենք՝ հայ անդամներս, նպատակահարմար ենք գտնում որոշ ժամանակով դադարեցնել մեր մասնակցությունը»[16]:

ՀԹՀՀ-ի հակառակորդները ցնծում էին: Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՀԴ) հայերի հայտարարությունը բնորոշեց որպես ՀԹՀՀ-ի ձախողման «ուշացած ընդունում»: Ամերիկայի հայ ազգային կոմիտեն ասաց, որ ՀԹՀՀ-ի փլուզումը մի կողմ հրեց ցեղասպանության ճանաչման պայքարի խոչընդոտը, և ՀՅԴ-ն վերահաստատեց իր կարծիքը, որ ՀԹՀՀ-ն թուրքական ական էր՝ հետաձգելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը[17]: Թերթերի առաջնորդողները հայտարարում էին, որ ՀԹՀՀ-ն վախճանվել է:

Ծանոթագրություններ

1. Թեոդոր Սորենսենի հայտարարությունը, Նյու սքուլ համալսարան, 2001թ., 21 նոյեմբերի:
2. ԱԱՄԿ-ի ամենամյա զեկույց, 2002 թ.:
3. Priscilla B. Hayner, Unspeakable Truths: Confronting State Terror and Atrocities, Routledge,2001.
4. Willie Henderson, “Metaphors, Narrative and ‘Truth’: South Africa’s Truth and Reconciliation Commission,” African Affairs, Vol. 99, No. 396, 2000.
5. Martha Minow, “Between Vengeance and Forgiveness: South Africa’s Truth and Reconciliation Commission,” Negotiation Journal, Vol. 145, October 1998.
6. Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի ամենամյա զեկույց, 1985-86թթ.:
7. John Paul Lederach, Building Peace: Sustainable Reconciliation in Divided Societies, U.S. Institute of Peace Press, 1997.
8. Alex Boraine and Paul van Zyl, “Moving on Requires Looking Back,” International Herald Tribune, August 1, 2003.
9. Desmond Tutu, “Reconciliation in Post-Apartheid South Africa: Experience of the Truth Commission,” The Art of Peace, edited by Jeffrey Hopkins, 2000.

10. Նախագահողի հայտարարություն, 2001թ., 21 նոյեմբերի:
11. Նամակ Օզդեմ Սանբերկից Թեոդոր Սորենսենին, 2001թ., 1 դեկտեմբերի:
12. ՀԹՀՀ-ի հայ անդամների հայտարարություն, 2001թ., 11 դեկտեմբերի:
13. Նամակ Փոլ վան Զիլից հեղինակին, 2001 թ., 14 դեկտեմբերի:
14. *«Ռադիկալ»*, 2001, 10 դեկտեմբերի:
15. Նույն տեղում:
16. «Ազատություն» ռադիոկայան , 2001թ., 12 դեկտեմբերի:
17. Նույն տեղում:

10

Իրավիճակի և հեռանկարների գնահատում

Երկու կողմերն էլ շուտով ափսոսեցին ՀԹՀՀ-ի վախճանի համար: Օզդեմ Սանբերկի նամակից հետո ես կապվեցի լայնեզր գլխարկով մարդու հետ: Իմանալով, որ Օզդեմը չի գործի առանց կարգադրությունների, ինքս ինձ ներշնչեցի, որ Անկարան է պատասխանատու նախաձեռնությունը տապալելու համար: Ցեղասպանության կոնվենցիայի հիշատակումն իսկ Թուրքիայի արտգործնախարարությունում անհանգստություն էր առաջացնում:

Ես ձախողման մասին հայտնեցի նաև ամերիկյան այն պաշտոնյաներին, ովքեր, վստահ էի, իրենց մտահոգությունը կհայտնեին թուրք գործընկերներին: Միաժամանակ իրադարձությունները ներկայացրի Ստամբուլի առաջատար լրագրողներին, ինչպես նաև այլ միջազգային լրագրողների: Իմ նպատակն էր թուրքերին հետ բերել սեղանի շուրջը: Նրանց վերածնված հանձնառությունը կամրապնդեր հայերի հաստատակամությունը և խթան կծառայեր աշխատանքը շարունակելու համար:

ՀԹՀՀ-ի խնդիրները Անկարայի պաշտոնյաների հետ կապելու միջոցով հնարավոր է՝ վերջապես խթանվեր վիզայի գործի առաջխաղացումը: 2002թ. հունվարի 10-ին Թուրքիայի իշխանությունները փոխեցին հայաս-

տանյան անձնագիր ունեցողների վիզայի հետ կապված աշխատանքների ընթացակարգը: Նոր քաղաքականությունը ուշացած էր ՀԹՀՀ-ն փրկելու համար, բայց ճիշտ ժամանակին էր այն վերածնելու համար:

Ուստուն Էրգուդերն իր թուրք գործընկերների կողմից նշանակվեց համագործակցության կապ ապահովող: Նա գրեց. «Մենք չարաբաստիկ տարաձայնությունը համարում ենք ընթացակարգային բանավեճ: Թուրքական խումբը մտադրություն չի ունեցել ուրանալու այն պարտավորությունը, որ ստանձնել է ԱԱՄԿ-ի կողմից ուսումնասիրության առնչությամբ: Մեր կարծիքը հիմա էլ այն է, որ ՀԹՀՀ-ն ժողովրդական դիվանագիտության օգտակար գործիք է թուրքերի և հայերի հաշտեցման և բարեկամություն հաստատելու համար: Մենք վստահ ենք, որ ներկա վիճակում ապագա հանդիպումը, եթե հնարավոր լինի կազմակերպել, պետք է ընդունվի որպես փրկարարական գործողություն: Թուրքական խումբը պատրաստ է նախաձեռնելու այդ աշխատանքը»[1]:

Ուստունը խորապես նվիրված էր հաշտեցմանը: Նա ավելի շատ լսում էր, քան խոսում, և միշտ հարգանք էր ցուցաբերում մյուսների նկատմամբ: Նրա արժանապատիվ կեցվածքը, բնատուր խելքը և անկեղծ ջանքերը խիստ արժեքավոր էին ՀԹՀՀ-ի համար: Ուստունը պնդեց. «ՀԹՀՀ-ն կարող է փրկվել»[2]:

Վան Գրիգորյանը զորակցության բազմաթիվ ուղերձներ ստացավ ամբողջ աշխարհի հայերից: Ձավեշտալի էր, որ հայերը հրապարակավ հարձակվում էին ՀԹՀՀ-ի վրա, բայց մեկուսի աջակցում դրան: Համատարած աջակցությունից ոգևորված՝ Ալեքսանդր Արզումանյանը պնդեց. «ՀԹՀՀ-ն պաշտոնապես չի դադարեցրել և դեռ կարող է վերսկսել գործունեությունը: Մենք կքննարկենք իրադրությունը և միասին կփորձենք դուրս գալ իրավիճակից»[3]:

Երբ ամեն ինչ հանդարտվեց, մենք ծածուկ սկսեցինք ուղիներ փնտրել ՀԹՀՀ-ն վերակենդանացնելու համար: Համաձայնեցինք, որ այս անգամ քննարկումները պետք է խիստ գաղտնի լինեն: Նախորդ փորձերից սովորել էինք, որ աննկատ մնալը կօգնի խուսափելու այն ճնշումներից, որոնք սովորաբար ուղեկցում են հասարակական սպասումներին: Յուրաքանչյուր կողմն իր հերթին կապերը հեշտացնելու համար համակարգող նշանակեց. Վանը ներկայացնում էր հայերին, իսկ Իլտեր Թուրքմենը՝ թուրքերին:

ԱԱՄԿ-ի վերլուծությունը կարևոր էր: Վանը համոզված էր, որ եթե

ՀԹՀՀ-ն ցեղասպանությանն անդրադառնալու ուղի չգտնի, պետք է ցրվի: ՀԹՀՀ-ն սկզբում ընդգծել էր համագործակցության ուղղությամբ փոքր քայլերն ու գործնական ոլորտները, ինչը հիմնախնդիրներին անդրադառնալու համար թափ կհաղորդեր: Արդյունքներ տալու ակնկալիքների ճնշումը հասցրեց իր վնասը:

Վանը և Իլտերը հանդիպեցին «Ռոքֆելլեր» կենտրոնի ամենավերին հարկի ռեստորանում: Անցյալում այդտեղից տեսարան էր բացվում դեպի Առևտրի համաշխարհային կենտրոնը՝ ուր ժամանակին խոյանում էին երկնաքերերը: Այժմ երկվորյակ աշտարակների տեղում դատարկ տարածք էր: Ողբալով ՀԹՀՀ-ի դժվարությունները՝ Իլտերը սրտանց զղջում էր իրադարձությունների բացասական զարգացման համար: Չնայած Վանը և Իլտերն անցած հանդիպումների ժամանակ մրցում էին, փոխադարձ մասնագիտական հարգանք և անձնական համակրանք էին ձեռք բերել: Նրանց փոխադարձ համակրանքը դարձավ գործընթացը պահպանելու գրավականը: Վանը ներհուն իրավաբան է, ում վերլուծական հնարավորությունները համադրվում են ուժեղ ռազմավարական մտածությանը: Իլտերը նույնպես ռազմավար է: Նա անձնավորում է տարեց պետական գործչի՝ հստակ դիրքորոշմամբ, արհեստավարժությամբ ու փորձով:

Հաջորդ օրը մեկնեցինք Նյու Յորք նահանգի հյուսիսում՝ Հուդզոն գետի հովտում գտնվող իմ ամառանոցը: 1732 թ. կառուցված այդ տունը գտնվում է 50 ակր ձգվող ընդարձակ բլուրների մեջ: Ամբարի վրա ցուցանակ է փակցված՝ «Քեմփ Դեյվիդ»: Այն հիանալի միջավայր է հոգեպարար հանդիպման համար:

Ճաշից հետո գնացինք անտառ զբոսնելու: Ես Վանին և Իլտերին միասին քայլելու հնարավորություն տվեցի: Մինչ նրանք շրջում էին, զգացի իմ ջերմ վերաբերմունքը նրանց նկատմամբ: Հավանում էի Վանին և Իլտերին: Ինձ համար մեծ հաճույք էր իմ տունը տրամադրել նրանց քննարկումների համար:

Հետո խմբվեցինք բուխարու շուրջը: Վանը և Իլտերը ցավում էին, որ ՀԹՀՀ-ի որոշ անդամներ իրենց արարքների, խոսքերի և գրվածքների հետևանքով դառնություն են պատճառել: Առաջացած անվստահությունը վտանգի տակ էր դրել ՀԹՀՀ-ն: Մենք համաձայն էինք, որ ՀԹՀՀ-ն իր ներկա դրությամբ չի կարող շարունակել գործունեությունը:

Վանն ընդգծեց, որ հնարավոր չի լինի հավաքել հին խումբը և ձևանալ, թե ոչինչ չի պատահել: Նա ցանկանում էր, որ Գունդուզ Ակտանն ու Օզդեմը հեռանային: Աղբյուրը պղտորվել էր: Անվստահությունը վերածվել էր հակակրանքի:

Իլտերն առարկեց Գունդուզին և Օզդեմին հեռացնելու պահանջին: Նա պնդեց, որ ինքն էլ դուրս կգա, եթե իր գործընկերներին խնդրեն հեռանալ: Չնայած մշտական բախում կար նրանց միջև, Իլտերը ջերմորեն պաշտպանում էր Գունդուզին: Նա այն անձը չէ, ով կարող է կշտամբել կամ լքել գործընկերոջը:

Վանը միշտ ասում էր, որ գոյություն ունի ամեն ինչ շտկելու միայն մեկ հնարավորություն: Մի՞թե ՀԹՀՀ-ն կորցրել էր այդ հնարավորությունը: Նրանք մտածում էին չշարունակել աշխատանքները: Հանձվելու փոխարեն նրանք վերջապես որոշեցին, որ ՀԹՀՀ-ն պետք է վերածվի նոր միավորի: Կարգավիճակի շուրջ սուր շահարկումներից կամ տապալման մեղադրանքներից խուսափելու նպատակով հրապարային հայտարարություններ չէին լինելու: Հաշտեցման գործընթացը պարզապես ծավալվելու էր նոր տեսքով, իսկ Վանը և Իլտերը պիտի համակարգողներ լինեին փոխակերպման ընթացքում:

Ես Թեդ Սորենսենին տեղյակ էի պահում զարգացումների մասին: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը (ԱԱՄԿ) պնդեց, որ իրենք իրավական վերլուծություն կկատարեն միայն այն դեպքում, եթե դա պահանջեն հայերն ու թուրքերը:

Նրանց նամակում չէր ասվում, սակայն, թե որ հայերի և թուրքերի մասին է խոսքը: Ես աշխատում էի հիմնական խումբը պահպանելու ուղղությամբ, որը շարունակելու էր համագործակցությունը ԱԱՄԿ-ի հետ:

Միշտ անզուսպ Անդրանիկ Միհրանյանը հրապարակավ կոչ արեց, որպես վերսկսման նախապայման, հեռացնել ՀԹՀՀ-ի որոշ թուրք անդամների: Իլտերը խորհրդակցեց իր գործընկերների հետ և Վանին առաջարկ արեց: Թուրքիայի արտգործնախարարությունը ցանկանում էր, որ Գունդուզը մնա. Գունդուզը կհեռանար միայն այն դեպքում, եթե Անդրանիկը նույնպես լքեր հանձնաժողովը: Վանը մերժեց փոխանակումը: Եթե Անդրանիկի հեռացումը Գունդուզից ազատվելու գինն էր, ապա ՀԹՀՀ-ն պետք է գործեր երկուսի հետ միասին:

Վանը Երևանում հանդիպեց ՀԹՀՀ-ի հայ անդամներին, և նրանք համաձայնեցին շարունակել աշխատանքը: Ես մեկնեցի Ստամբուլ՝ թուրքական կողմին տեղեկացնելու համար: Բոլորը եկան, բացի Գունդուզից: Թուրքիայի պետական մեքենայի աջակցությունից ոգևորված՝ Գունդուզը հետզհետե արգելակի էր վերածվում՝ խմբում վետո կիրառելու փորձերով: Ուստունը հետագայում գանգատվեց. «Մենք սխալվեցինք՝ թույլ տալով Գունդուզին լինել այն անձը, ով կապ կպահի արտգործնախարարության հետ»[4]:

Մեր հանդիպման ժամանակ ՀԹՀՀ-ի թուրք անդամները որոշեցին դի-

մել ԱԱՄԿ-ին: Բայց Գունդուզի հետ խորհրդակցելուց հետո Իլտերն ասաց, որ իրենց չհաջողվեց համաձայնության հասնել, ուստի իրենք չեն կարող սկսել: Թուրքերը պահանջում էին զուտ իրավական վերլուծություն: Նրանք համոզված էին, որ ուսումնասիրությունը հաշվի կառնի նաև «օրենսդրի մտադրությունը»՝ դրա հեղինակների նկատառումը, այն է՝ կիրառել Կոնվենցիայի ոգին դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրադարձությունների նկատմամբ: Ես ստիպեցի Իլտերին շարադրել իր մտահոգություններն անմիջապես ԱԱՄԿ-ին:

2002թ. մարտի 26-ին Վանը, Իլտերը և Ուստունը ճաշեցին Բրունոյի մոտ և քննարկեցին հաջորդ օրվա անելիքները: Առավոտյան Նյու Յորքի իմ բնակարանում Սորենսենը և Ալեքս Բորեյնը առանձին հանդիպեցին Վանի և ապա Իլտերի հետ: Ուստունը նույնպես միացավ Իլտերի հետ քննարկմանը, հետո բոլորս միասին հանդիպեցինք: Հանդիպման նպատակն էր քննարկել վերջին զարգացումները և մշակել գործընթացի կառավարման ռազմավարությունը: Եվ Վանը, և՛ Իլտերը ընդգծեցին իրենց «կարմիր գծերը»:

ՀԹՀՀ-ի վերածննդի ջանքերը լավ չէին թաքնված: «Ազատություն» ռադիոկայանը հայտնեց. «ՀԹՀՀ-ի անդամները ոչ պաշտոնական շփումներ են պահպանում, որպեսզի վերջին ճիգով փրկեն ամերիկայի հովանավորած գործունեությունը»[5]: «Ազգը» հայտարարեց. «ՀԹՀՀ-ն վերսկսում է իր գործունեությունը» նոր անունով և այլ անդամներով[6]: «ՀԹՀՀ-ն չի փակվել»,- գրեց Հայկական նորությունների ցանցը[7]: Վախենալով, որ ՀԹՀՀ-ն փորձում է վերսկսել ԱԱՄԿ-ի վերլուծությունը՝ դաշնակցականները դատապարտեցին Սորենսենին կողմնակալության համար: Նրանք մեջբերեցին նրա անդամակցությունը Կենտրոնասիական ամերիկյան գործարար հիմնադրամի խորհրդում, որը նախագահում է Ստիվեն Սոլարզը ՝ ինքնակոչ «կոնգրեսականը Ստամբուլից»:

Շահարկումները հանդարտեցնելու համար մեկնեցի Երևան՝ Վարդան Օսկանյանի և այլ կարևոր անձանց հետ հանդիպելու համար: Անդրանիկը հայտարարեց իմ ժամանումը. «Ֆիլիպսը խորհրդակցություններ է վարում հայ և թուրք մասնակիցների հետ, նախաձեռնությունը փրկելու նպատակով: Այդ կապերի արդյունքը կորոշի, թե երբ, ինչ ձևաչափով և ում մասնակցությամբ է հանձնաժողովը վերսկսելու իր աշխատանքը»[8]:

ՀԹՀՀ-ին մեղադրեցին փակ լինելու մեջ: Այսպիսով, ես կարևոր համարեցի հանդիպել ՀԹՀՀ-ի քննադատների՝ Հայ հեղափոխական դաշնակ-

ցության, Հայաստանի ժողովրդական կուսակցության, Ազգային ժողովրդավարական միության և «Ազգային միաբանություն» կուսակցության հետ: Դեսպան Ջոն Օրդվեյի կողմից տրված ճաշկերույթի ժամանակ նրանք շեշտեցին, որ ՀԹՀՀ-ի կազմն ընդլայնելը այն ավելի ընդունելի կդարձնի: Սակայն նրանց բացահայտ ատելությունը թուրքերի նկատմամբ հնարավորություն չէր տալիս պատկերացնելու իրենց ՀԹՀՀ-ի անդամի դերում:

Ապրիլի 22-ի մամուլի ասուլիսի ժամանակ դիմեցի ՀՅԴ-ի «Երկիր» պաշտոնաթերթի թղթակցին: Ես նրան խիստ հանդիմանեցի անպատասխանատու լրագրություն և սխալ տեղեկություն տարածելու համար: Մյուս օրը «Երկիրն» իր առաջին էջում տպագրեց իմ լուսանկարը «Հայ ազգի թշնամին այցելում է Երևան» հոդվածի վերևում: Դրանից հետո Եվրոպայի հայկական դաշնությունը հայտարարեց, որ երեսուներեք խմբեր Հայաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում և Գերմանիայում միացել են ՀԹՀՀ-ն դատապարտող ավելի քան հարյուր կազմակերպությունների:

Գունդուզն էլ ավելի թշնամանք առաջացրեց, երբ մայիսի 22-ին գրեց. «Հայերը պարտվող կողմն էին: Այդ է պատճառը, որ նրանց մարդկային, գույքային և «հողային» կորուստներն ավելի մեծ են, քան մերը: Որպես հաղթող կողմ՝ թուրքերը պետք է հասկանան և մեծահոգություն ցուցաբերեն հայերի զրկանքների նկատմամբ: Միշտ լինելու է հայկական փոքրամասնություն մեր մեջ, և միշտ լինելու է Հայաստան մեր սահմանների մոտ»: Շրջանցելով ՀԹՀՀ-ի ջանքերը՝ Գունդուզն առաջարկեց մի շարք հանձնաժողովներ՝ ժողովրդագրության հանձնաժողով՝ հայ բնակչությունը հաշվելու համար, արխիվային հանձնաժողով՝ փաստաթղթերն ուսումնասիրելու համար և արբիտրաժային հանձնաժողով՝ ցեղասպանության սահմանմանը իրադարձությունների համապատասխանությունը որոշելու համար: Նա ավելացրեց. «Երբ ցեղասպանության հարցը վերանա, հետագա հաշտեցման ընթացքը հեշտ կլինի»[9]:

Ինչպես նշված էր գործունեության նախասահմանված շրջանակներում, Վանն ու Իլտերը համաձայնեցին հանդիպել՝ առաջին տարվա գործունեությունը վերանայելու համար: Հանդիպումը նաև կհստակեցներ ՀԹՀՀ-ի աջակցությունը ԱԱՄԿ-ի վերլուծությանը և կգնահատեր հանձնաժողովի հետագա կենսունակությունը: Եթե ՀԹՀՀ-ն համաձայներ փակվել, ես զեկույց էի գրելու և հրապարակելու:

ՀԹՀՀ-ի գնահատման հանդիպմանը պատրաստվելու համար ես

խորհրդակցություն կազմակերպեցի Վանի, Իլտերի և ԱԱՄԿ-ի մասնակցությամբ: Սորենսենը ցանկանում էր առաջ ընթանալ, բայց Բորեյնը զգուշավոր էր: ԱԱՄԿ-ն պահպանեց իր այն դիրքորոշումը, որ իրավական վերլուծությունը պետք է պահանջվի երկու կողմերի կողմից և գրավոր:

2002թ. հուլիսին գնահատման հանդիպումը տեղի ունեցավ Բոդրումում՝ ծովափնյա հանգստավայրում՝ ՀԹՀՀ-ի որոշ անդամների ամառանոցների մոտ: Հետս բերել էի Սորենսենի՝ ԱԱՄԿ-ի մասնակցության պայմանների վերաբերյալ նամակը: ՀԹՀՀ-ից լիազորություն ստանալուց հետո կգործեի որպես ԱԱՄԿ-ի «հաճախորդ»: ԱԱՄԿ-ն կիրականացներ վերլուծությունը Վանի և Իլտերի հետ նրանց կարևոր կետերը քննարկելուց հետո: Երբ ուսումնասիրությունն ավարտվեր, Վանը, Իլտերը և ես բանավոր կտեղեկացվեինք, և ուսումնասիրությունը միանգամից կհրապարակվեր:

«Մարմարա» հյուրանոցի հաճելի մթնոլորտը դրական լիցքեր հաղորդեց: Բոլորը հանգիստ էին և թեթև հագնված: Իր կնոջ ուղեկցությամբ Գունդուզը նրբազգաց էր և բարեկիրթ:

ՀԹՀՀ-ն վերանայեց իրազեկելու, միջանձնային շփումները խթանելու, քաղաքականության նպատակներ սահմանելու և հիմնական խնդիրներով զբաղվելու նպատակները: Իր իսկ հայտարարությամբ՝ ՀԹՀՀ-ին հաջողվեց ուշադրություն հրավիրել հայ-թուրքական հաշտեցման անհրաժեշտության վրա: Նախքան ՀԹՀՀ-ն հայկական խնդիրները տաբու էին Թուրքիայում: ՀԹՀՀ-ն օգնեց կոտրելու սառույցը, և քաղաքացիական հասարակական նախաձեռնությունների հեղեղ առաջ բերեց: Ամերիկյան համալսարանի Ժողովրդական դիվանագիտության ծրագիրը, շարժմանը թափ հաղորդեց՝ ապահովելով ծրագրերի ֆինանսական աղբյուրները և տեխնիկական աջակցությունը:

Քաղաքականության խնդիրների առնչությամբ թուրքերը համարում են, որ վիզայի ռեժիմի բարելավումը կարևոր նվաճում էր: ՀԹՀՀ-ի հայ անդամները նսեմացնում են դրա կարևորությունը: Նրանք ասում էին, որ նոր ընթացակարգը պարզապես վերականգնեց այն, ինչը գոյություն ուներ նախկինում: Չնայած շարունակական ջանքերին՝ ՀԹՀՀ-ին չհաջողվեց քաղաքականության գծով աշխատանքային խումբ ստեղծել: Իշխանությունների համեմատ առաջամարտիկ լինելու փոխարեն, ՀԹՀՀ-ն թաքնվել էր նրանց հետևում:

Ուրիշ գործոններ էլ սահմանափակեցին ՀԹՀՀ-ի արդյունավետությունը: Թուրք և հայ անդամների միջև ակնկալիքների անջրպետ գոյություն ուներ: Հայերը ձգտում էին արդյունքներ ստանալ, թուրքերը դանդաղ ընթացքի կողմնակիցներ էին: Ավելի շատ խնդիրներ էին ծագում հանդիպում-

ների միջև ընկած ժամանակամիջոցում, քան բուն հանդիպումների ժամանակ: Անջրպետը կոտրում էր թափը, իսկ քարտուղարության բացակայությունը սահմանափակում էր քայլերի հետևողականությունը:

Քննարկումներն արձանագրելը նույնպես խոչընդոտ էր: Համատեղ հայտարարությունների կամ նախագահողի հայտարարությունների բովանդակության համաձայնեցումը հակասություններ առաջ բերց: ՀԹՀՀ-ի որոշ անդամներ էլ ձգտում էին գործել որպես պաշտոնյա, ոչ թե որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ: Պետական դիրքերին հավատարիմ մնալը սահմանափակում էր ստեղծարար գործակցությունը և խամրեցնում արդյունավետ գործունեությունը: Մամուլին արված հայտարարություններն ու գաղտնիության խախտումները խզեցին բարյացակամությունն ու դարձան նոր խնդիրների ծագման պատճառ:

Մինչ քննադատությունը սաստկանում էր, ՀԹՀՀ-ի՝ ցեղասպանության հարցը լուծելու անկարողությունը գործընթացի շարունակության նպատակահարմարության առումով կասկածներ առաջացրեց: Մենք գնահատեցինք ԱԱՄԿ-ի ընդգրկման պատմությունը, ներառյալ՝ իրավական խորհրդատվության մասին Գունդուզի սկզբնական պահանջը: Չնայած ԱԱՄԿ-ի վերլուծությունը հարկադրանքի ուժ չուներ, սակայն վտանգավոր կդառնար, եթե մի կողմը հաղթեր: ՀԹՀՀ-ն վերահաստատեց արմատական հարցերը քննարկելու կարևորությունը և նշելով, որ ԱԱՄԿ-ի ուսումնասիրությունը մի բան է, որ միայն ժողովրդական դիվանագիտությունը կարող է իրականացնել, քննարկեց ԱԱՄԿ-ի հետ նորից կապվելու միջոցները:

Բոդրումի հանդիպումը ՀԹՀՀ-ի ամենահաջողն էր: ՀԹՀՀ-ն որոշեց շարունակել իր աշխատանքը՝ ստեղծելով մի խումբ քաղաքականության առաջարկների վրա աշխատելու համար: Թուրքիայի և Հայաստանի միջև երկաթուղային հաղորդակցությունը վերականգնելու առաջարկի հետ մեկտեղ, ՀԹՀՀ-ի անդամներն առաջարկեցին առևտրի զարգացման գրասենյակների հիմնել Կարսում և Գյումրիում: Թուրքերն առաջարկեցին հյուրընկալել գալիք հանդիպումն Անկարայում, որի ընթացքում ՀԹՀՀ-ն կհանդիպեր թուրք պաշտոնյաների հետ: ՀԹՀՀ-ն նաև կհովանավորի «քաղաքացիական հասարակության գագաթնաժողովը»՝ ի մի բերելով թուրք-հայկական համագործակցության ուղղությամբ գործող ՀԿ-ները:

Մենք նաև համաձայնեցրինք փոխըմբռնման հուշագիր՝ նկարագրելով ԱԱՄԿ-ի հետ աշխատանքները: ՀԹՀՀ-ն ընդունեց Սորենսենի նամակը: Հուշագիրը նաև ամրագրում էր, որ ԱԱՄԿ-ն իր հետազոտության ընթացքում պետք է հանդիպի ՀԹՀՀ-ի անդամներին: Թուրք և հայ ներկայացուցիչների ելույթներից հետո յուրաքանչյուր կողմը պատասխանելու իրավունք

կունենար: Կարող էին մասնակցել իրավախորհրդատուներ:

Ինձ հանձնարարեցին համաձայնեցնել հուշագրի վերջնական պայմանները: Հայերը միայն մեկ պայման ունեին: Նրանք պահանջեցին, որ Գունդուզը ներկայացնի թուրքական կողմի դիրքորոշումը: Նա ինձ հարցրեց. «Ինչու՞: Նրանք կարծում են, որ ես հում մի՞ս եմ»[11]:

Հուշագիրը թելադրում էր տեխնիկական ընթացակարգերը և ամփոփում էր ԱԱՄԿ-ի հետ պայմանավորվածությունները: Նրանում ասվում էր. «ՀԹՀՀ-ն հաստատակամորեն համաձայնում է, որ ԱԱՄԿ-ն պետք է ավարտի վերլուծությունը, և ո՛չ ՀԹՀՀ-ն, ո՛չ էլ իր որևէ անդամ երբևէ կամ որևէ պատճառով չի կարող հետ վերցնել իր աջակցությունը նշված վերլուծությանը»[10]: Մենք համաձայնեցինք պայմանավորվածությունները գաղտնի պահել: ՀԹՀՀ-ի համատեղ հայտարարությունը ասում էր. «Առաջին տարվա գործունեության գնահատումն անավարտ էր, ուստի շարունակում ենք վերանայել մեր աշխատանքը»[12]:

Սեպտեմբերի 10-ին Սորենսենը և Բորեյնը իրենց աշխատակազմով հանդիպեցին Վանի և Գունդուզի հետ: Որոշ իրավաբաններ, ովքեր աշխատում են թուրքական դեսպանատանը, նույնպես մասնակցեցին: Գունդուզը վստահ էր, որ քննարկումն արդեն ավարտված է, և ժողովը զուտ ձևական է: Հակառակ իր վստահությանը՝ Սորենսենը հայտարարեց. «Մինչ այժմ ուսումնասիրությունը դեռևս սոսկ պատրանք է: Դեռ չկան եզրակացություններ, և դեռ ոչինչ թղթին հանձնված չէ»[13]:

Գունդուզն իր միջամտության համար օգտվեց գրավոր հայտարարությունից: Նա պնդեց, որ ԱԱՄԿ-ի ուսումնասիրությունը Թուրքիայի կամ Հայաստանի համար իրավական որևէ հետևանք չի կարող ունենալ: Նա վստահ էր, որ որպես զուտ իրավական վերլուծություն՝ ուսումնասիրությունը պետք է սահմանափակվի այն հարցով, թե կոնվենցիան հետադարձ ուժ ունի՞ արդոք: Որպես հիմնական իրավական սկզբունք՝ նա վկայակոչեց Համաձայնագրերի օրենքի մասին Վիեննայի կոնվենցիայի 28-րդ հոդվածը, «Nulum crimen sine lege»՝ քրեական պատիժը կարող է հիմնվել միայն գործող օրենքի վրա: Քանի որ պայմանագրերը կարող են հետադարձ գործել, եթե միայն երկու կողմերը համաձայնվեն, նա առաջարկեց, որ ԱԱՄԿ-ն առաջարկի թուրքական և հայկական իշխանություններին հայցել Հաագայի արդարադատության միջազգային դատարանի արբիտրաժը:

Գունդուզը փաստում էր, որ հայերի ջարդերը չեն կարող համարվել ցե-

ղասպանություն, որովհետև Օսմանյան կայսրության հայերը ստեղծել են քաղաքական խմբավորում, որը պայքարում էր անկախության համար: Նա հիշատակեց Շապելյե դը Ռիբին՝ Նուրնբերգյան դատավարությունների ընթացքում Ֆրանսիայի մեղադրողին, ով հստակ արտահայտեց ցեղասպանության հանցանքների յուրահատկությունը՝ հիմնվելով Գերմանիայի իշխանությունների գործած հանցանքների վրա: «Պատասխանողի հանցանքներն այնքան հրեշավոր էին, այնքան աներևակայելի քրիստոնեության շրջանի պատմության ընթացքում՝ մինչ հիտլերիզմի ծնունդը, որ ցեղասպանություն եզրույթը պետք է ստեղծվեր, որպեսզի սահմաներ այն»: Գունդուզը նաև վկայակոչեց Ռաֆայել Լեմկինի մեծագույն ստեղծագործությունը՝ Գրավյալ Եվրոպայում իշխում է Առանցքը : «Գերմանիայի գործողությունները իրականում հիմք ծառայեցին ցեղասպանություն եզրույթը զարգացնելու համար: Գերմանական ոճրագործություններն այնքան բարբարոսական էին, որ ցեղասպանությունը ստեղծվեց որպես մի եզրույթ, որը կիրառելի է միայն դրանց պարագայում»[14]: Գունդուզը նշեց, որ ծանոթագրություններում Լեմկինը հայկական ջարդերը հիշատակում է Կարթագենի անկման, Տիտոսի կողմից Երուսաղեմի ավերման և Չինգիզ խանի ու Թամերլանի պատերազմների կողքին[15]:

Վանը նույնպես պատրաստված էր եկել հանդիպմանը: Նա հիշեցրեց ԱԱՄԿ-ին, որ այս վարժության նպատակը հաշտեցումն ընդլայնելն է, և ուսումնասիրությունը երկու կողմերին էլ ինչ-որ բան տալն էր: ԱԱՄԿ-ին չէին խնդրել պատասխանել, թե «Ցեղասպանության կոնվենցիան պիտի կիրառվի՞», թե՞ ոչ, այլ ուսումնասիրել «Ցեղասպանության կոնվենցիայի կիրառելիությունը»:

Վանը քննեց կոնվենցիան մշակողների չափանիշները, սահմանումները և մտադրությունը: Նա բաժանեց Լեմկինի գրառումները, որոնք ասում էին. «Թուրքիայի վավերացումն առաջին քսան հիմնադիր պետությունների թվում կդառնա հայերի ցեղասպանության հատուցումը»[16]: Ապա Վանը տեքստային վերլուծություն արեց և քննեց կոնվենցիայի հետագա իրավական և գիտական մեկնաբանումները: Նա նաև այնպես արեց, որ Սամանթա Փաուերը՝ Հարվարդի համալսարանի Մարդու իրավունքների Քարրի կենտրոնի տնօրենը և Պուլցերյան մրցանակի դափնեկիրը, մեզ միանա հեռախոսով:

Վերադառնալով հաշտեցման թեմային՝ Վանը պնդեց, որ վիճաբանությունը հայերի և թուրքերի միջև չէ, այլ՝ թուրք ժխտողների և մնացած աշխարհի միջև: Նա ավելացրեց, որ ժխտումը սահմանափակում է ամբողջ աշխարհում բազմաթիվ ազնիվ թուրքերի ճանաչումը, ովքեր փրկել են

իրենց հայ հարևաններին: Վանը պնդեց. «Մենք ցանկանում ենք, որ ԱԱՄԿ-ն հայտարարի այն, ինչ բացահայտ է. կոնվենցիայի գործածությունը հայկական փորձի նկատմամբ ցեղասպանությունը սահմանող օրինակ է»[17]:

ԱԱՄԿ-ն ընկալում էր իր խնդրի մեծ դժվարությունը: Բորեյնը ինձ մի նամակ ուղարկեց՝ ասելով. «ԱԱՄԿ-ն համաձայնել է կատարել իրավական վերլուծությունը: Վերլուծությունը կիրականացվի ԱԱՄԿ-ից բացարձակապես անկախ: Վերլուծությունը չի իրականացնելու ԱԱՄԿ-ի որևէ անդամ, ԱԱՄԿ-ն նաև ուղիներ չի փնտրի՝ ազդելու վերլուծության եզրակացությունների վրա: Մեր դերը միայն օգնելն է՝ գտնելու հարմար մասնագետի, ով հանձն կառնի ՀԹՀՀ-ի կողմից պահանջված վերլուծությունը»[18]:

Սորենսենը անդրդվելի էր իր որոշման մեջ, այն է՝ սահմանափակել իմ մասնակցությունը ԱԱՄԿ-ի աշխատանքում: Ակնկալելով, որ ԱԱՄԿ-ի ուսումնասիրությունը որպես հիմք կծառայի ապագա գործողությունների համար, նա ցանկանում էր պահպանել իմ՝ որպես ՀԹՀՀ-ի նախագահողի անկողմնակալությունը:

Ծանոթագրություններ

1. Թղթակցություն Ուստուն Էրգունդերից հեղինակին, 2001թ., 20 դեկտեմբերի:
2. «Ազատություն» ռադիոկայան, 2002թ., 17 հունվարի:
3. «Ազատություն» ռադիոկայան, 2001թ., 12 դեմտեմբերի:
4. Հեղինակի հետ հարցազրույց, 2003թ., 6 օգոստոսի:
5. «Ազատություն» ռադիոկայան, 2002թ., 8 մարտի:
6. «Ազգ», 2002թ., 20 մարտի:
7. Հայաստանի նորությունների ցանց, 2002թ., 20 մարտի:
8. «Մեդիամաքս», 2002թ., 22 ապրիլի:
9. Gunduz Aktan, “Solution of the Genocide Problem,” Turkish Daily News, May 21, 2002.
10. ՀԹՀՀ-ի Փոխըմռնման հուշագիր, 2002թ., 12 հուլիսի:
11. Քննարկումներ Գունդուզ Ակտանի և հեղինակի միջև Բոդրումում, Թուրքիա, 2003թ., 12 հուլիսի:
12. ՀԹՀՀ-ի համատեղ հայտարարություն, 2002թ., 12 հուլիսի:
13. Հանդիպման գրառումներ, 2002թ., 10 սեպտեմբերի:
14. “Genocide as a Crime Under International Law,” American Journal of International

Law, 1947, հատ. 41, թիվ 1, էջ 149:

15. Գունդուզ Ակտանի հայտարարությունը, 2002թ., 10 սեպտեմբերի:
16. Նյու Յորքի հանրային գրադարան, Լեմկինի թղթերի մասնավոր հավաքածու:
17. Վան Գրիգորյանի հայտարարությունը, 2002թ., 10 սեպտեմբերի:
18. Նամակ Ալեքս Բորեյնից հեղինակին, 2002թ., սեպտեմբերի 16:

11

Ցեղասպանության կոնվենցիայի կիրառելիությունը

Գունդուզ Ակտանն անհանգիստ էր Անցումային արդարադատության միջազգային կենտրոնում (ԱԱՄԿ) ունեցած իր ելույթից հետո: Նա ցանկանում էր, որ ես գնահատեմ իր ելույթը: Ես ասացի, որ նրա ելույթը խնամքով պատրաստված էր և «լավ իրավահիմնավորված»: Գունդուզը դեռ կարծում էր, որ իրավական հուշագիրն արդեն կազմված է, և ամբողջ ընթացքը ձևական է: Ես նրան հավաստիացրի, որ այդպես չէ: Հիշեցրեցի ԱԱՄԿ-ի անբասիր հեղինակության մասին և խոստացա, որ Թեդ Սորենսենը հավասարակշռված արդյունք կապահովի: Գունդուզն ասաց, որ հավասարակշռվածությունը հենց այն է, ինչից նա ամենից շատ է վախենում: Նյու Յորքից հեռանալուց առաջ Գունդուզը զանգահարեց Վան Գրիգորյանին: Նրանց զրույցն էլ ավելի բորբոքեց Գունդուզի մտահոգությունները: Վանը համոզված էր, որ «կիրառելիություն» եզրույթը լայնորեն կմեկնաբանվի:

Անկարա վերադառնալուն պես Գունդուզը վայնասուն դրեց՝ ՀԹՀՀ-ի թուրք անդամների առջև մեղադրելով Իլտեր Թուրքմենին ԱԱՄԿ-ի հետ հանդիպման ժամանակ օրենսդրի մտադրության հասկացությունն ուշադ-

ությունից բաց թողնելու համար: Նա որպես իր տեղեկության աղբյուր նշեց Վանին: Գունդուզը կաբինետային մարտերի վետերան է: Նա նախազգում էր, որ վերլուծությունը կարող է և լիովին չհամապատասխանել իր ակնկալիքներին, և ապահովագրում էր ինքն իրեն՝ մեղադրելով Իլտերին: Վանը պնդեց, որ երբեք նման բան չի ասել: Ես հաստատեցի դա. Իլտերը երբեք առանց իմ իմացության ԱԱՄԿ-ին ոչինչ չի ասել:

Գունդուզը հատկապես աշխույժ է հարձակման ժամանակ: Հայերին ընդմիշտ խայթելու հետ մեկտեղ նա իր հոդվածներում անարդարացիորեն կասկածի տակ է առել իմ անկողմնակալությունը: Երբ մենք առաջին անգամ հանդիպեցինք ԱԱՄԿ-ի հետ, նա ինձ ասաց, որ «կոչնչացնի նրանց»[1] իր իրավական փաստարկներով: Այժմ Գունդուզն ուղղվել էր իմ, ինչպես նաև իր թուրք գործընկերների դեմ: Վաղ փուլում Գունդուզի մասնակցությունն անհրաժեշտ էր պետականության շրջանակներում ՀԹՀՀ-ի հանդեպ վստահություն ձևավորելու համար: Բայց նրա վարքը աստիճանաբար խոչընդոտ էր դառնում:

Առանց Իլտերի ՀԹՀՀ-ն կփլուզվեր, և մեղքը կբարդվեր Անկարայի վրա: Իր գործողություններով Իլտերն ապացուցեց, որ հնարավոր է լինել և՛ առաքինի, և՛ հայրենասեր: Վրդովված Գունդուզի անհիմն հայտարարությունից՝ Իլտերը սպառնաց հրաժարական տալ: ՀԹՀՀ-ի անդամները համոզեցին նրան մնալ:

Սորենսենը խոստացավ, որ ԱԱՄԿ-ի վերլուծությունը մեկ ամսում կավարտվի: Սակայն պարզվեց, որ խնդիրը շատ ավելի դժվար է, քան սպասվում էր: Որքան ավելի երկար էր ՀԹՀՀ-ն սպասում, որ ԱԱՄԿ-ն ավարտի իր աշխատանքը, այնքան ավելի էին մասնակիցները անհանգստանում: Օզդեմ Սանբերկը և Ուստունը մտահոգ հաղորդագրություններ ուղարկեցին՝ խնդրելով փաստաթղթի օրինակներ: Ես պատասխանեցի. «Չեմ տեսել ԱԱՄԿ-ի ուսումնասիրությունները, ոչ էլ տեղյակ եմ բովանդակությունից: Խնդիրն այն է, որ նախքան հրատարակումը այն ցույց տրվի Վանին՝ հայերի անունից, և թուրք մասնակիցներից մեկին»[2]: Ալեքս Բորեյնը հաստատեց, որ ուշացումը «մանրազնին և լուրջ աշխատանքի»[3] պատճառով է:

Բոդրումի հուշագիրը ընթացակարգեր ստեղծեց փաստաթուղթն ամփոփելու համար: Այն Վանին և Իլտերին իրավունք էր վերապահում ԱԱՄԿ-ի նախագիծը տեսնել նախքան դրա հրատարակումը: Գունդուզի հարձակումից հետո Իլտերը հրաժարվեց վերլուծության նախագծի տարբերակը վերանայելու պատասխանատվությունից: Հրաժարվեցին նաև Ուստունը և Օզդեմը: Ոչ ոք չէր ցանկանում ռիսկի դիմել և անձնապես մեղադրվել: Ընթացակարգային փակուղին հաղթահարելու համար ես հունվարի վերջին

ՀԹՀՀ-ի բոլոր անդամներին Նյու Յորք հրավիրեցի: Հանդիպումը հետաձգվեց վերջին րոպեին, երբ Գունդուզը և Իլտերը հայտնվեցին հիվանդանոցում, և Օզդեմի մայրը հիվանդացավ:

ՀԹՀՀ-ի թուրք անդամները հուսով էին, որ արդյունքն անորոշ ժամանակով հետաձգելով՝ վերջ կդնեն գործընթացին: Ես վճռականորեն այլընտրանք էի փնտրում, և Վանին հանդիպում նշակակեցի Ստամբուլում: Վերլուծությունն ուղարկվելու էր Իլտերին նախքան մեր ժամանումը: Նա կկարողանար խորհրդակցել ՀԹՀՀ-ի այլ անդամների հետ և իր դիտողություններն ուղարկել ԱԱՄԿ-ին: 2003թ. փետրվարի 4-ին մենք հանդիպեցինք՝ գնահատելու փաստաթուղթը և որոշելու հետագա քայլերը:

Վերլուծության նախաբանում նշված էր, որ այն իրավական վերլուծություն է, ոչ թե փաստագրական կամ պատմական: Այն պատրաստել էր ԱԱՄԿ-ի անկախ խորհրդատուն ՀԹՀՀ-ի՝ ԱԱՄԿ-ին ուղղված 2002թ. հուլիսի 12-ի Փոխըմբռնման հուշագրում ամրագրված խնդրանքի հիման վրա: Արդյունքները հիմնված են ուսումնասիրության, ինչպես նաև ՀԹՀՀ-ի անդամների կողմից արված ելույթների վրա: Խնդրանքի համաձայն՝ ուսումնասիրությունը պետք է տար օբյեկտիվ, անկախ իրավական վերլուծություն՝ XX դարասկզբում տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ:

Իրավական եզրակացությունների ամփոփագրվում նշված էր.

«Միջազգային իրավունքն առհասարակ արգելում է համաձայնագրերի հետադարձ կիրառությունը, եթե միայն նման մտադրություն չի հետևում պայմանագրից կամ եթե դա այլ կերպ սահմանված չէ: Ցեղասպանության մասին կոնվենցիան դրա հետադարձ կիրառությունը հավաստող որևէ դրույթ չի պարունակում: Ընդհակառակը, կոնվենցիայի տեքստը խստորեն ենթադրում է, որ այն ուղղված է ընդունվելիք պարտավորությունները դնել միայն կոնվենցիայի անդամ պետությունների վրա դնելուն: Ուստի կոնվենցիայի շրջանակներում իրադարձություններից ծագող իրավական, ֆինանսական կամ տարածքային որևէ պահանջ չի կարող հաջողությամբ առաջադրվել որևէ անհատի կամ պետության»:

Եզրակացությունը հետևյալն էր.

«Սակայն ցեղասպանություն եզրույթը, ինչպես այն օգտագործված է կոնվենցիայում՝ այդպես անվանվող միջազգային հանցանքը բնորոշելու

համար, կարող է կիրառվել բազմաթիվ և տարբեր իրադարձությունների առնչությամբ, որոնք տեղի են ունեցել նախքան կոնվենցիան ուժի մեջ մտնելը: Ցեղասպանության՝ որպես պատմական փաստի վկայակոչումներ կան և՛ կոնվենցիայի տեքստում, և՛ դրա նախապատրաստական փաստաթղթերում (travaux preparatoires)»:

Ցեղասպանության հանցագործությունը, ինչպես այն մշակվել է Միջազգային քրեական դատարանի կողմից (որի կանոնադրությունն ընդունում է ցեղասպանության սահմանումն ըստ կոնվենցիայի), չորս տարր ունի. (i) ոճրագործը սպանել է մեկ կամ ավելի անձանց, (ii) այդ անձը կամ անձինք պատկանել են որոշակի ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական խմբի, (iii) ոճրագործը մտադրություն է ունեցել ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնել այդ խումբը՝ որպես այդպիսին, և (iv) ոճրագործությունը տեղի է ունեցել այդ խմբի դեմ ուղղված նմանատիպ բացահայտ գործողությունների համատեքստում կամ գործողություն է, որ ինքնին կարող է նման ոչնչացման պատճառ դառնալ:

Գոյություն ունեն այդ Իրադարձությունների մասին բազմաթիվ հիշատակումներ և դրանցում բազմաթիվ փաստերի առնչությամբ կան էական տարակարծություններ: Չնայած այդ տարակարծություններին՝ մեր ուսումնասիրած առանցքային փաստերը, որոնք ընդհանուր են բոլոր հիշատակումների համար, հաստատում են, որ վերը թվարկված տարրերից երեքը առկա են. (1) սպանվել են մեկ կամ ավելի անձինք, (2) այդ անձինք պատկանել են որոշակի ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական խմբի և (3) գործողությունը տեղի է ունեցել այդ խմբի դեմ ուղղված նմանատիպ բացահայտ հանցագործությունների համատեքստում: Գնահատելու համար, թե արդյոք նշված Դեպքերը՝ դիտարկված հավաքականորեն, ցեղասպանություն են, տարակարծության միակ առարկան այն է, թե արդյոք այդ Դեպքերը կատարվել են ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական խումբը, որպես այդպիսին, ոչնչացնելու մտադրությամբ, թե՞ ոչ: Թեև սույն իրավական հուշագիրը նպատակ չունի հստակ լուծել առանձին փաստագրական վեճերը, մենք վստահ ենք, որ ամենապատճառաբանված հետևությունը, որին կարելի է հանգել այդ Դեպքերի վերաբերյալ տարբեր հիշատակումների հիման վրա, այն է, որ այդ Դեպքերի առնվազն որոշ իրականացնողներ գիտեին, որ իրենց գործողությունների հետևանքը լինելու է Արևելյան Անատոլիայի հայերի ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացումը՝ որպես այդպիսին, կամ գործել են այդ նպատակին հասնելու դիտավորությամբ, ուստի ունեցել են ցեղասպանությունը բնորոշելու համար պահանջվող ցեղասպանության մտադրություն: Այսպիսով, կարելի է ասել՝ քանի որ վերը սահման-

ված մյուս երեք տարրերը հստակ հաստատված են, Դեպքերը, հավաքականորեն դիտարկված, պարունակում են ցեղասպանության հանցագործության, ինչպես այն սահմանված է կոնվենցիայում, բոլոր տարրերը, և իրավագետները, ինչպես նաև պատմագետները, քաղաքական գործիչները, լրագրողները և այլ անձինք կարող են, արդարացիորեն շարունակելով, դրանք այդ կերպ որակել[4]:

Մեկ տարվա տանջանքներից հետո ԱԱՄԿ-ի հուշագիրը վերջապես պատրաստ էր: Առանց Թեդ Սորենսենի գլխավորության, Ալեքս Բորեյնի հավասարադատության և Փոլ Վան Զիլի անխոնջ աշխատանքի ԱԱՄԿ-ի կազմակերպած վերլուծությունը հնարավոր չէր լինի:

Թուրքերը ողջունեցին ԱԱՄԿ-ի որոշումը, որ կոնվենցիան հետադարձ ուժ չունի, հետևաբար բացառվում է որևէ տարածքային կամ ֆինանսական պահանջ կոնվենցիայի ներքո: Այդուհանդերձ նրանք պնդեցին, որ ԱԱՄԿ-ն անցել է իր լիազորությունների սահմանը՝ որոշելով, որ իրադարձությունները որակվում են ցեղասպանություն: Հայերը ընդհանուր առմամբ գոհ էին արդյունքից: Չնայած նրանք հրապարակավ բողոքարկեցին հետադարձության մասին եզրահանգումը, սակայն ի սկզբանե գիտեին, որ համաձայնագիրը չի կարող կիրառվել հետադարձորեն:

ԱԱՄԿ-ի վերլուծությունը մեծ մասամբ լավ ընդունվեց հայաստանյան շրջանակներում: Էմիլ Դանիելյանը հաղորդեց «Ազատություն» ռադիոկայանով. «Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 1915թ. հայերի ջարդերը որակվում են ցեղասպանություն: (Այն) ուժգին հարված է հասցնում թուրքական երկարատև ժխտողականության քաղաքականությանը և կարող է մեկ այլ ուղենիշ լինել ողբերգության միջազգային ճանաչման ռազմավարության համար»:[5] Լայնորեն ընթերցվող «Հայկական ժամանակը» ամեն օր հրապարակում էր ԱԱՄԿ-ի վերլուծության հայերեն թարգմանությունը՝ հայ անդամների լուսանկարներով[6]: Ազգային անվտանգության նախկին նախարար Սիմոնյանցը էլ ավելի մեծարեց ՀԹՀՀ-ին: «Դժվար է աշխատել թուրքերի հետ: Պատկերացրեք՝ որքան դժվար է եղել աշխատել առանց բարեկամ հայերի աջակցության»[7]:

Պատասխանը մեղմ էր՝ համեմատած այն սառնության հետ, որը հետևեց ՀԹՀՀ-ի ստեղծմանը: ԱԱՄԿ-ի վերլուծությունը լուրջ աշխատանք էր, որը բաղկացած էր 18 էջից և ներառում էր ծավալուն ծանոթագրություններ: Ժամանակ անցավ, մինչև մարդիկ ուսումնասիրեցին այն և մարսեցին

դրա իրավական և քաղաքական հետևությունները: Վարդան Օսկանյանը և այլք զգուշանում էին հրապարակավ մեկնաբանություններ անելուց: Մինչ արդյունքների որևէ կերպ հրապարակային առընչություն ունենալը նրանք սպասում էին, թե որ ուղղությամբ է փչելու քամին:

Վանի հետ առանձնազրույցի ժամանակ Օսկանյանը «շնորհավորեց» և ասաց, որ դա մեծ ձեռքբերում էր[8]: Սակայն նա հրաժարվեց հրապարակավ ողջունել ԱԱՄԿ-ի վերլուծությունը: Օսկանյանը հետևում էր Հայաստանի նախագահական ընտրություններին: Նրան մտահոգում էր ԱԱՄԿ-ի հետադարձության մասին որոշումը: Իրավական հետևանքների մասով զիջումը դուր չէր գա Ռոբերտ Քոչարյանի սփյուռքահայ անզիջում աջակիցներին: Ռուբեն Շուգարյանը համոզեց Օսկանյանին, որ պատասխանատվություն պահանջելու այլ միջազգային իրավական գործիքներ կարող են կիրառվել, այդ թվում՝ քաղաքացիական գործողությունները և ապահովագրության պահանջները:

Հնչող ոչ բոլոր կարծիքներն էին դրական: Հայտնվելով ՀԹՀՀ-ի հորձանուտում՝ Ամերիկայի հայկական համագումարը հավանության միայն մեկ զգուշավոր հայտարարություն արեց: Դաշնակցություն կուսակցությունը մերժեց հետաքննության այն եզրահանգումը, որ Ցեղասպանության կոնվենցիան չի կարող օգտագործվել տարածքային և ֆինանսական փոխհատուցում պահանջելու համար: «Երկիրը» մատնանշեց, որ հետաքննությունը ճանաչեց միայն այն, ինչ հայտնի էր:[9] Դաշնակցականները նույնիսկ սեփական իրավախորհրդատու վարձեցին՝ ԱԱՄԿ-ի հետադարձության անկիրառելիության որոշմանը հակադրվելու մտադրությամբ:

Փաստաթուղթը զարմանալիորեն չնչին ուշադրության արժանացավ Թուրքիայում: Այն հրապարակվեց Բայրամի բուռն տոնակատարությունների շաբաթվա ընթացքում: Ավելին, Թուրքիան խիստ զբաղված էր Իրաքով: Քոլին Փաուելը հենց նոր էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին զեկույց ներկայացրել զանգվածային ոչնչացման զենքերի վերաբերյալ: Բուշի վարչակազմի անհամբերությունն աստիճանաբար աճում էր ՄԱԿ-ի սպառազինության տեսչության գործընթացքից, և պատերազմը գնալով ավելի հավանական էր թվում:

ՀԹՀՀ-ի թուրք անդամները հետագայում լավ էին արտահայտվում փաստաթղթի վերաբերյալ: Ուստունը նշեց, որ ԱԱՄԿ-ի փաստաթուղթը «լավագույնս համապատասխանում է Թուրքիայի նպատակներին»: Կենտ-

րոնանալով ԱԱՄԿ-ի այն եզրահանգման վրա, որ Ցեղասպանության կոնվենցիան չի կարող կիրառվել հետադարձորեն, Ուստունը վստահ էր, որ փաստաթուղթը «Թուրքիային ազատում է կարթից: Այն մեզ համար գերազանց ելք է: Բաժակը կիսով չափ լիքն է երկու կողմերի համար էլ»: Նա ավելացրեց. «Այն ամենը չէ, ինչ մենք ուզում էինք, բայց մեզ բավարարում է»[10]:

Մինչ մյուսները հարձակվում էին, Գունդուզը տարօրինակորեն լուռ էր: Պրոֆ. Ջասթին Մակքարթին՝ Թուրքիայի կառավարության խորհրդատուն և Լուիզվիլ համալսարանի պրոֆեսորը, գրեց. «Ըստ ՄԱԿ-ի սահմանման՝ իսկապես եղել է հայերի ցեղասպանություն: Եղել է նաև մուսուլմանների և թուրքերի ցեղասպանություն: ՄԱԿ-ի ցեղասպանության սահմանումը անիմաստ է: Այն կարող է օգտագործվել գրեթե յուրաքանչյուր հակամարտության պարագայում»: Մակքարթին մտահոգություն հայտնեց, որ ԱԱՄԿ-ի վերլուծությունը կսրի թուրքերի հանդեպ կանխակալ վերաբերմունքը: «Երբ ցեղասպանություն բառն օգտագործվում է, մարդիկ չեն մտածում ՄԱԿ-ի սահմանման մասին: Նրանք մտածում այն մասին, թե ինչ է Հիտլերն արել հրեաներին: [Մարդիկ] կմեղադրեն թուրքերին՝ առանց որևէ բան իմանալու իրական պատմության մասին»: ԱԱՄԿ-ի վերաբերյալ. «Թերևս նրանց բարի մտադրությունները սխալ են հասկացվել: Շատ հնարավոր է, որ նրանք պարզապես չգիտեին, թե ինչ էին անում: ՀԹՀՀ-ն սխալ քայլ արեց՝ խնդրելով ԱԱՄԿ-ի կարծիքը սրա վերաբերյալ: Ես երբեք չեմ համաձայնել վերջնական պատասխան ստանալու համար պատմական հարցերն ուղղել իրավաբաններին: Այն, ինչ պետք է, պատմաբանների հանձնաժողովն է, ոչ թե իրավաբանների»[11]:

Գունդուզը վերջապես թիրախ գտավ: «ԱԱՄԿ-ին միայն խնդրել էին բացահայտել՝ ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիան հետադարձ ուժով կիրառելի՞ է արդյոք 1915թ. դեպքերի համար, թե՞ ոչ: ԱԱՄԿ-ին չէին հարցրել՝ 1915թ. դեպքերը ցեղասպանություն որակվու՞մ են, թե՞ ոչ»: Նա ողջունեց ԱԱՄԿ-ի եզրահանգումը, որ կոնվենցիան չի կարող գործել հետադարձորեն, սակայն ԱԱՄԿ-ին մեղադրեց «իր լիազորությունները սահմանազանցելու» մեջ[12]:

Վանը ցանկանում էր համոզվել, որ ԱԱՄԿ-ի փաստաթուղթը ճիշտ կհասկացվի: Ես օրինակներ բաժանեցի ԱՄՆ-ի կառավարության իմ ծանոթներին, նաև այլ կառավարությունների, խորհրդարանների, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: ՀԹՀՀ-ի հերթական հայտարարությունն ասում էր. «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը (ՀԹՀՀ) խնդրեց Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին (ԱԱՄԿ) կատարել անկախ իրավական վերլու-

ծություն XX դարասկզբի իրադարձությունների առնչությամբ 1948թ. Ցեղասպանության կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ:

2003թ. փետրվարի 4-ին ԱԱՄԿ-ն տրամադրեց առարկայի վերաբերյալ վերլուծությունը: ՀԹՀՀ-ի անդամները գնահատում են վերլուծությունը և կհանդիպեն՝ քննարկելու այն: Այս համատեքստում ՀԹՀՀ-ն կքննարկի ապագա քայլերը՝ ուղղված հաշտեցման նպատակին հասնելուն»[13]:

ՀԹՀՀ-ի հաջորդ հանդիպումը հյուրընկալել էր Թագավորական միացյալ ծառայությունների ինստիտուտը, որը վերլուծական կենտրոն է՝ կապված բրիտանական պաշտպանության նախարարության հետ: Մարտի 9-ին Սորենսենը և ես մեկնեցինք Լոնդոն: Տաք բանավեճ էինք սպասում: Սորենսենը սկսեց նիստը՝ նկարագրելով իր մասնակցությունը Դեմոկրատական կուսակցության նախընտրական ծրագրի բանակացություններին: Համեմատություն անելով՝ նա նշեց. «ԱԱՄԿ-ի փաստաթուղթը ոչ մի կողմին ամեն ինչ չի տալիս, բայց տալիս է ինչ-որ բան ամեն կողմին»[14]:

ՀԹՀՀ-ի և՛ թուրք, և՛ հայ անդամները դժգոհություն հայտնեցին: Սակայն Գունդուզը միակն էր, ով հրապարակավ հեռացրեց ինքն իրեն ԱԱՄԿ-ի եզրահանգումներից: Գունդուզը գանգատվեց Սորենսենին. «Մենք ակնկալում էինք խիստ իրավական վերլուծություն»[15]: Ալեքսանդր Արզումանյանը կրկին վստահեցրեց նրան, որ Թուրքիայի ներգրավվածությունն Իրաքում կօգնի Գունդուզին «խուսափել քննադատությունից»[16]:

Մենք երբեք մտադիր չենք եղել հիմնվել ԱԱՄԿ-ի վերլուծության վրա: Քանի որ ցեղասպանության խնդիրը ստվեր էր գցում քննարկումների վրա, մեզ պետք էր հնար գտնել դա հարթելու համար: Ես հուսով էի, որ սողոմոնյան մոտեցումը հող կստեղծի ավելի կառուցողական երկխոսության համար: ԱԱՄԿ-ի վերլուծությամբ ՀԹՀՀ-ն պատրաստ էր նոր վերածննդի: Գունդուզը, Օզդեմը և Սադի Էրգուվենչը կհեռանային Լոնդոնի հանդիպումից հետո: Նոր թուրքեր կմիանային, և ՀԹՀՀ-ն կշարունակեր իր գործունեությունը ևս մեկ տարի:

2003թ. մարտին Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ ՀԹՀՀ-ն քննարկեց, թե Թուրքիայում և Հայաստանում անցած ընտրությունները ինչպես կազդեն հետագա աշխատանքի վրա: Դավիթ Հովհաննիսյանը նկարագրեց փետրվարի 19-ի Հայաստանի նախագահական ընտրություններին հաջորդած ահռելի բողոքի ցույցերը: Հայերը վրդովված էին, որ Քոչարյանը գողացել էր Ստեփան Դեմիրճյանի հաղթանակը: Տասնյակ հազա-

րավորներ դուրս էին եկել փողոց՝ պահանջելով երկրորդ փուլ: Ընտրության դիտորդ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը հրապարակեց զեկույց քվեարկության էական խախտումների վերաբերյալ: Հայաստանի ընտրությունները հեռու էին «ազատ և արդար» լինելուց:

1999թ. հոկտեմբերին Հայաստանի վարչապետի և մի շարք խորհրդարանականների սպանությունից առաջ էլ քաղաքականությունը թաթախված էր կոռուպցիայի և բռնությունների մեջ: Ստեփանի հայրը՝ Կարեն Դեմիրճյանը, խորհրդարանի խոսնակ էր հարձակման ժամանակ: Նա մահացավ գնդակների տարափից: Ստեփանն իշխանություններին մեղադրեց քաղաքական սպանության հետաքննությունը խոչընդոտելու մեջ: Որոշ մեկնաբաններ չեն բացառում Քոչարյանի առնչությունն այդ դեպքերին:

Քոչարյանի վարչակազմը կապեր ունի կլեպտոկրատիայի հետ, որը հարստանում է միջին խավի հայերի հաշվին: Կոռուպցիան խիստ տարածված է: Տնտեսությունը տխուր վիճակում է, և մեծ չափերի է հասնում գործազրկությունը: Քաղաքացիական ազատությունները նույնպես ճնշվել են Քոչարյանի օրոք: Օրինակ՝ Քոչարյանը ճնշեց այլակարծությունը՝ փակելով «Ա1+» հեռուստաալիքը՝ առաջատար անկախ լրատվամիջոցը: Ազատ խոսքի պաշտպանները ծեծի ենթարկվեցին, և բողոքողները դաժանորեն հետապնդվեցին:

Շատ հայեր ողջունեցին Ստեփան Դեմիրճյանին որպես Քոչարյանի կոռումպացված և անարդյունավետ իշխանության այլընտրանք: 1959թ. ծնված Դեմիրճյանը երիտասարդ տեխնոկրատ է, նրա Հայաստանի ժողովրդական կուսակցությունը հանձն է առել է ապահովել մաքուր կառավարություն, սոցիալական բարեկեցություն և տնտեսական զարգացում:

Ստեփանը ոտք դրեց հայաստանցիների դժգոհության վրա և լայն աջակցություն ձեռք բերեց՝ խոստանալով արդարություն և բարեկեցություն: Նա միացավ Արամ Սարգսյանին, ում եղբայրը սպանվել էր 1999թ. խորհրդարանի հարձակման ժամանակ: Ստեփանը և Արամը հավանություն տվեցին ՀԹՀՀ-ին և աջակցեցին հայ-թուրքական խորհրդարանական փոխայցելություններին:

Հայ լրագրողները արտահայտեցին իրենց հիասթափությունը ընտրությունների վերաբերյալ: Նրանք վստահ էին, որ Արամը և Ստեփանը կդիմադրեն դաշնակցական ծայրահեղականների ազդեցությանը և ի շահ Հայաստանի քայլեր կձեռնարկեն՝ լավ հարաբերություններ հաստատելով Անկարայի հետ: Հայաստանը հիմնականում տուժում էր այն պատճառով, որ նրա ղեկավարները հեռատեսություն և հնարամտություն չունեին երկրի

խնդիրները լուծելու համար: Քոչարյանի քննադատները դատապարտում են նրան իշխանության ղեկին մնալու համար հասարակության նեղ շրջանակին սպասարկելու մեջ: Նրանք ընդգծում են, որ նա զարգացման արգելք է և հարաբերությունների կարգավորման խոչընդոտ:

Ստեփան Դեմիրճյանի անհաջողությունը նախագահական ընտրություններում տեղի ունեցավ հենց այն ժամանակ, երբ Թուրքիայի քաղաքականությունը գլխիվայր շրջվեց 2002թ. նոյեմբերի 3-ին Ռեջեփ Թայիփ Էրդողանի Արդարություն և զարգացման կուսակցության (ԱԶԿ/AKP) հաղթանակից հետո: Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում 34,2 տոկոս ձայներով ԱԶԿ-ի ջախջաջիչ հաղթանակը 15 տարվա ընթացքում առաջին անգամ ճանապարհ հարթեց միակուսակցական կառավարման համար:

Այն, ինչ թուրքական թերթը՝ «Սաբահն» անվանեց «մեծ մաքրագործում», Թուրքիայի քաղաքական դինոզավրերին՝ «Հայրենիք» կուսակցության Մեսուտ Յիլմազին, «Ճշմարիտ Ուղի» կուսակցության Թանսու Չիլլերին և Ազգայնական գործունեության կուսակցության Դևլեթ Բախչելին դրդեց հրաժարական տալ: Բուլենտ Էջևիթի Դեմոկրատական ձախ կուսակցությունը, որը ոչ ժողովրդավարական էր, ոչ էլ ձախ, ստացավ ձայների 1.2 տոկոսը:

ԱԶԿ-ն հառնեց Նեքմետին Էրբականի Իսլամական առաջընթացի կուսակցության մոխիրներից: Էրդողանն Էրբականի աշակերտն է եղել, նա իշխանության եկավ, երբ Էրբականը նրան նշանակեց Առաջընթացի կուսակցության ստամբուլյան ճյուղի նախագահ և հաստատեց նրա քաղաքապետի թեկնածությունը: Իսլամական քաղաքականությունը նոր է Թուրքիայում, և իսլամական պետություն ստեղծելու նպատակը լուրջ սպառնալիք է պետականության համար: 1923թ. Աթաթուրքը մերժեց իսլամը որպես պետական կրոն և հիմնեց աշխարհիկ հանրապետություն: Նա վերջ դրեց խալիֆաթին, աշխարհիկ դարձրեց կրթական ծրագիրը և արաբական գիրը փոխարինեց լատինականով: Նա նաև արձակեց կրոնական դատարանները և կանանց ընտրելու իրավունք տվեց: Որպես Աթաթուրքի աշխարհիկ ժողովրդավարության պահապան՝ բանակն անհանգստացած էր Էրբականի Լիբիա այցելությունից և Իրանի հետ հաշտության փորձերից: Բանակը փակեց Բարեկեցության կուսակցությունը և արգելեց Էրբականին զբաղվել քաղաքականությամբ:

Հակառակ իր նախորդին՝ ԱԶԿ-ն սովորեց զգուշանալ այնպիսի արտա-

հայտչամիջոցներից, որոնք իրեն կհակադրեին աշխարհիկ հաստատություններին: Փոխարենն այդ կուսակցությունը որդեգրեց ժողովրդականություն վայելող ժողովրդավարության ուղերձները, որ ավելի մոտ է քաղաքական կենտրոնին: Չնայած իր իսլամական արմատներին՝ ԱԶԿ-ն զգույշ էր՝ ինքն իրեն ներկայացնելով որպես արդիական, պահպանողական կուսակցություն՝ Եվրոպայի քրիստոնյա դեմոկրատների նմանությամբ:

ԱԶԿ-ն իշխանության հասավ դասական բողոքի ալիքի վրա: Սաբանչի համալսարանի հասարակական կարծիքի հետազոտությունը հայրենասիրության, այլատյացության և էթնիկ ազգայնականության վերելք արձանագրեց Թուրքիայում: Թուրքերի մեծամասնությունը խորապես դժգոհ էր իշխանությունների տնտեսական ղեկավարումից և զայրացած էր իրենց խորտակված սպասումների համար[17]: ԱԶԿ-ն ելավ բազմաթիվ թուրքերի դժգոհության ալիքի վրա: ԱԶԿ-ն ձեռք մեկնեց նաև Թուրքիայի մուսուլման բնակչության պահպանողական շերտին՝ սևեռվելով այնպիսի հայտնի քաղաքական հարցերի վրա, ինչպիսին է համալսարաններում և պետական հիմնարկներում թուրք կանանց գլխաշոր կրելու արգելքը:

Չնայած Էրդողանը ԱԶԿ-ի անվիճելի առաջնորդն է, չկարողացավ թեկնածու առաջադրվել խորհրդարանում: Արևելյան Անատոլիայի Սիիրտ քաղաքում, քարոզարշավի ժամանակ Էրդողանը կարդաց իսլամական հնչերանգներով բանաստեղծություն. «Մզկիթները մեր զորանոցներն են, գմբեթները՝ մեր սաղավարտները, մինարեթները՝ մեր սվիները, և հավատացյալները մեր զինվորներն են»[18]: Լինելով Ստամբուլի քաղաքապետ՝ նա դատապարտվեց կրոնական թշնամանք հրահրելու համար և չորս ամիս անցկացրեց բանտախցում: Գերագույն ընտրական խորհուրդն արգելեց դատապարտվածներին խորհրդարանում թեկնածու առաջադրվել: Խորհրդարանը, 2003թ. հունվարին իշխանության գալուց հետո, ԱԶԿ-ն փոփոխություն մտցրեց սահմանադրության մեջ՝ թույլատրելով Էրդողանին Սիիրտից թեկնածություն առաջադրել ընտրություններում: Էրդողանը վարչապետ դարձավ 2003թ. մարտի կեսերին:

Էրդողանը բարեփոխումների և սոցիալական արդարության իրական ջատագով է: Թեև նա կողմ է Թուրքիայի արևմտամետ արտաքին քաղաքականությանը, սակայն պետականության կոշտ դիրք պահպանողները անհանգստացած էին Էրդողանի անկախ բնավորությունից և խոչընդոտեցին նրա՝ Դենքթաշին զոհաբերելու ցանկությունը՝ ի շահ Երվրամիությանը Թուրքիայի անդամակցելու հնարավորությունների ընդլայնման: Ազգային անվտանգության խորհրդի ճնշման ներքո Էրդողանն արագ հետ նահանջեց: Դեբորա Սոնթագը գրեց. «[Էրդողանը] մեծապես հիասթափեցրեց

նրանց, ովքեր կարծում էին, որ նա փոփոխություն կմտցնի: Բանակի վրա շուտ հարձակվելը ինքնասպանություն կլինի, բայց առճակատումը հետաձգելն էլ կարող է նրան անզոր դարձնել»[19]: Պետականության ջատագովները Էրդողանին ուղղակի դեմ առ դեմ դուրս գալու փոխարեն այլ միջոցներ փնտրեցին նրան թուլացնելու համար: Ազգային անվտանգության խորհրդի կողմից Իրաքում տեղի ունեցած դեպքերի շահարկումը նպատակ ուներ խոցել Էրդողանին, ինչպես նաև պատերազմի իրական ընդդիմությանը:

Օզդեմն ասաց ՀԹՀՀ-ի հայ անդամներին, որ Թուրքիան չափից ավելի զբաղված էր Իրաքով և իր ներքին քաղաքական դրամայով հայկական խնդիրներին անհրաժեշտ ուշադրություն դարձնելու համար: Գունդուզը հայտարարեց. «Ես չեմ կարող շարունակել մասնակցությունը ՀԹՀՀ-ին»[20]: Օզդեմը պահանջեց. «ՀԹՀՀ-ին թարմ արյուն է հարկավոր »[21]: Մյուսները նույնպես ցանկանում էին դուրս գալ:

Լոնդոնի հանդիպման ժամանակ մենք որոշեցինք Հարվարդի համալսարանում սեմինար անցկացնելու օրը և քննարկեցինք թուրք պաշտոնյաների հետ հանդիպելու համար Անկարա մեկնելու հնարավորությունը: Փորձեցի կազմակերպել այդ միջոցառումները, բայց թուրքերը պատասխան չտվեցին: Աչքի անցկացրի խումբը՝ որոշելու, թե որ թուրքերն են դեռ մեզ հետ: Գրեցի ՀԹՀՀ-ի թուրք անդամներին. «Ես հասկացա մեր քննարկումներից, որ ձեզանից ոմանք ցանկանում են հեռանալ ՀԹՀՀ-ից, որպեսզի հնարավորություն տան Թուրքիայի նոր մասնակիցներին միանալու մեզ: Չնայած ձեր կարիքն անչափ կզգացվի, հասկանում եմ իրավիճակը և գրում եմ՝ քննարկելու ՀԹՀՀ-ի փոխակերպման ձևերը: ՀԹՀՀ-ն, իր ներկա կազմով, վերջնական հանդիպում կունենա Թուրքիայում՝ իրականացնելու իր երկու տարվա գործունեության գնահատումը: Ինչպես և դուք, ես նույնպես արժևորում եմ ՀԹՀՀ-ի սահուն փոխակերպումը: Կարևոր է, որ մենք կառուցողական ավարտենք աշխատանքը»[22]:

Վանը հույս ուներ, որ ԱՄՆ Պետդեպարտամենտը ՀԹՀՀ-ին աջակցելու և ԱԱՄԿ-ի վերլուծությանը հավանություն տալու հայտարարարություն կանի: Բայց Բուշի վարչակազմը զբաղված էր Իրաքով և ընդգրկված էր ԱՄՆ-ի զինվորներին Թուրքիայում տեղավորելու բանակցությունների մեջ: ԱՄՆ կառավարության պատասխանը ԱԱՄԿ-ի վերլուծության վերաբերյալ ի վերջո ձևակերպեց Ջոն Օրդուեյը. «Ես կարծում եմ, որ ՀԹՀՀ-ի խնդրանքով Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի պատրաստած զեկույցը շատ էական և հիմնավոր ներդրում էր Թուրքիայի ու Հայաստանի և թուրքերի ու հայերի միջև երկխոսության և քննարկման համար»[23]:

Այն ժամանակ, երբ Օրդուեյը հրապարակեց իր հայտարարությունը,

Իրաքի պատերազմի առաջին շրջանը մարում էր: ԱՄՆ-ի և Թուրքիայի հարաբերությունները անկում էին ապրում: ԱՄՆ-ն այլևս Թուրքիային նախկինի պես չէր կարևորում, ինչն էլ վերակենդանացրեց հայերի՝ ցեղասպանությունը ճանաչելու կոնգրեսական ջանքերը: Դա նաև դրդապատճառ դարձավ, որ Բուշի վարչակազմը ճնշում գործադրի Կարս-Գյումրի դարպասի բացման համար:

Ծանոթագրություններ

1. Զրույց Գունդուզ Ակտանի և հեղինակի միջև Նյու Յորքում, 2001թ., 20 նոյեմբերի:
2. Էլեկտրոնային նամակ Ուստուն Էրգուդերին հեղինակի կողմից, 2002թ., 26 նոյեմբերի:
3. Զրույց Ալեքս Բորեյնի, Ուստուն Էրգուդերի և Վան Գրիգորյանի միջև 2002թ., 4 դեկտեմբերի:
4. Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համար պատրաստված իրավական վերլուծություն, 2003թ., 4 փետրվարի:
5. Էմիլ Դանիելյան, Միջազգային ուսումնասիրությունը հաստատում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը, «*Արմինիեն լիբերթի*», 2003, 10 փետրվարի:
6. *«Հայկական Ժամանակ»*, 2003, 11 փետրվարի:
7. Հայկական ռադիո թոք շոու, 2003թ., 11 փետրվարի:
8. Զրույցի գրառումներ, 2003թ., 11 փետրվարի:
9. Այո, բայց…, «*Երկիր*», 2003, 12 փետրվարի:
10. Հեղինակի հետ հարցազրույց, 2003թ., 6 օգոստոսի:
11. Ջասթին Մակքարթի, «*Թրքիշ ֆորում*», թիվ10879:
12. Գունդուզ Ակտան, «*Թրքիշ դեյլի նյուս*», 2003, 17 փետրվարի:
13. ՀԹՀՀ-ի հայտարարություն, 2003թ., 7 փետրվարի:
14. Հանդիպման գրառումներ, 2003թ., 10 մարտի:
15. Գունդուզ Ակտան, Լոնդոն, 2003թ., 10 մարտի:
16. Հանդիպման գրառումներ, 2003թ., 10 մարտի:
17. Սաբանչի համալսարան, Թուրքական նախընտրական վարքագծի ուսումնասիրություն, 2002, հոկտեմբեր:
18. Դեբորա Սոնթագ, Էրդողանի փորձը, «*Նյու Յորք թայմս*», 2003, 11 մայիսի:
19. Նույնը:

20. Գունդուզ Ակտան, Լոնդոն, 2003թ., 10 մարտի:
21. Օզդեմ Սանբերկ, Լոնդոն, 2003թ., 10 մարտի:
22. Էլեկտրոնային նամակ հեղինակից, 2003թ., 15 ապրիլի:
23. *«Արմենիեն լիբերթի»*, 2003, 25 ապրիլի:

12

Պատերազմ Իրաքում

Իրաքի պատերազմը խորապես ազդեց հայ-թուրքական երկխոսության համատեքստի վրա: Այն նաև ազդեցություն ունեցավ Բուշի վարչակազմի՝ Թուրքիայի հանդեպ վերաբերմունքի և հայկական հարցերի առնչությամբ Անկարայի վրա ճնշում գործադրելու վրա: Քանի դեռ Պենտագոնը թույլտվություն էր խնդրում ԱՄՆ-ի զորքերը Թուրքիայով Հյուսիսային Իրաք տեղափոխելու համար, հայ-թուրքական խնդիրները վերացան գերակայությունների ցուցակից: Երբ Անկարան հանդիմանեց Վաշինգտոնին, և պատերազմը շարունակվեց առանց Թուրքիայի մասնակցության, վարչակազմի զայրացած պաշտոնյաները պատրաստ էին ապտակել Թուրքիային և ներառել Հայաստանն իրենց պահանջների ցանկում: Հետագայում ճոճանակը կրկին հետ դարձավ, երբ Պենտագոնի պաշտոնյաները խնդրեցին Թուրքիային 10,000 խաղապահների տեղակայել, և Իրաքում ընդհանուր պայմանները վատացան:

Պատերազմի թափ առնելու ժամանակ Թուրքիայի սխալ դիրքորոշման մեղքը բարդվեց Ռեջեփ Թայիփ Էրդողանի վրա, ում Արդարության և զարգացման կուսակցությունը (ԱԶԿ) 2003թ. փետրվարի ընտրություններում ջախջախիչ հաղթանակ տարավ: Ո՛չ Վաշինգտոնը, ո՛չ էլ Թուրքիայի պետական մեքենան չգիտեին ինչ անել Էրդողանի՝ իշխանությանը հասնելու կայծակնային վերելքի հետ: Սրտնեղած նրա կրոնական անցյալից և նրա կնոջ համառությունից՝ (որպես իսլամի խորհրդանիշ գլխաշոր կրելու հարցում)

Թուրքիայի վերնախավը լուրջ կասկածներ ուներ Էրդողանի՝ իսլամական պետություն հիմնելու ծրագրի վերաբերյալ: Էրդողանը հայտարարեց. «Ժողովրդավարությունը կարծես ավտոմեքենա լինի: Երբ հասնում ես քո կանգառին, պետք է դուրս գաս»[1]: Վարչապետի գրասենյակն անսպասելի կանգառ էր Էրդողանի քաղաքական կարիերայի մեջ:

Էրդողանի ԱԶԿ-ն իշխանության եկավ՝ խոստանալով բարեփոխումներ: Փոխարենը նրա առաջին ամիսները լի էին անորոշությամբ և սխալ քայլերով: Էրդողանը խոսեց Կիպրոսի հարցում զիջման մասին, բայց Թուրքական գլխավոր շտաբի (ԹԳՇ/TGS) ճնշման տակ նահանջեց: Չնայած մահապատիժը վերացնելու և քրդերի մշակութային իրավունքներն ընդլայնելու քայլերին՝ Եվրամիությունը հրաժարվեց Թուրքիայի անդամակցության բանակցություններն սկսելու ժամկետ նշանակել: Խոստացավ վերանայել Թուրքիայի թեկնածության հարցը 2004թ. վերջին: Անկարան Թուրքիայի շարունակվող տնտեսական դժվարությունների համար մեղադրեց Արժույթի միջազգային հիմնադրամին: Երբ երկրաշարժից տուժած քրդերը դուրս թափվեցին փողոց՝ օգնություն պահանջելով, ԱԶԿ-ի ապարատչիկները նրանց դեմ հանեցին ոստիկանության զորքերը: Ամենակարևորը՝ ԱԶԿ-ն վատ էր պատրաստված Իրաքին սպառնացող պատերազմին դիմակայելու համար:

Թուրքիան միշտ էլ եղել է Ամերիկայի ամենաուժեղ և ամենավստահելի դաշնակիցներից մեկը: Ծոցի պատերազմի ժամանակ նախագահ Թուրգուտ Օզալը գործեց անվարան՝ աջակցելով միջազգային կոալիցիային: Երբ նախապատրաստվում էր Իրաքի 2003թ. պատերազմը, Բուշի վարչակազմը, անշուշտ, Թուրքիայի աջակցությունը համարեց ինքնըստինքյան տրված: Պատերազմի ծրագիրը ենթադրում էր, որ Իրաքի պաշտպանության համակարգը կառնվի երկկողմանի աքցանի մեջ՝ Իրաք զորքերի ներխուժմամբ. հյուսիսում՝ Թուրքիայից և հարավում Քուվեյթից: Անցյալում ԱՄՆ-ն և ԹԳՇ-ն պարզապես համաձայնում էին, և գործն արվում էր: Ինչպես միշտ, Վաշինգտոնը սպասում էր, որ Թուրքիայի պետական մեքենան կգործի նույն կերպ:

Սակայն ԱԶԿ-ի սրընթաց ընտրական հաղթանակը նոր փոփոխական մեծություն մտցրեց որոշումների կայացման մեջ: Իրաքի պատերազմը թուրք քաղաքացիների շրջանում բնավ ժողովրդականություն չէր վայելում: Շատ թուրքեր կարծում էին, որ Իրաքի դեմ ագրեսիան անօրինական է և չարդարացված: Թուրքիան մեծ գին վճարեց Ծոցի պատերազմում իր մասնակցության համար: Նա պնդում էր, որ Իրաքի դեմ ՄԱԿ-ի սանկցիաներն արժեցան 40 միլիարդ ԱՄՆ դոլար՝ առևտրի և շահույթի կորստի տեսքով:

Իրաքի Քրդսատանի իրավիճակը խորապես անհանգստացնում էր Թուրքիայի պետական մեքենային: Հյուսիսային պահապան օպերացիայի շնորհիվ ամերիկյան և բրիտանական ուժերի պաշտպանությունը թույլ տվեց գրեթե անկախ քրդական պետություն ձևավորել Հյուսիսային Իրաքում: Անկարան մտահոգված էր՝ կարծելով, որ դրա փաստացի՝ դե ֆակտո անկախությունը կոգևորի Թուրքիայի տեղաբնակ քուրդ փոքրամասնությանը դիմելու նմանատիպ քայլի: Չնայած Թուրքիայում 20 միլիոն քուրդ է ապրում, Թուրքիան մինչև 1990-ականների կեսերը նույնիսկ չէր ընդունում, որ քուրդ բնակչություն ունի: Քրդերին անվանում էին «լեռնային թուրքեր»: Երբ առաջին անգամ մեկնեցի Դիարբեքիր՝ Թուրքիայի ամենամեծ քրդական քաղաքը հարավ-արևելքում, դիմացս մի մեծ ցուցանակ ելավ գլխավոր փողոցի վրա, որը հայտարարում էր. «Բոլորն ուրախ են թուրք լինել»: Երկրի շատ քրդեր ինտեգրված են և օգտվում են նույն հնարավորություններից, ինչ թուրք քաղաքացիները: Որպես ապացույց՝ թուրքերը նշում են, որ ինքը՝ Օզալը, կիսով չափ քուրդ է:

Քաղաքական և մշակութային իրավունքների զրկանքներից ավելի Հարավարևելյան Թուրքիայի քրդերը տուժել են 1990-ականների արտակարգ իրադրության ժամանակ անվտանգության հրեշավոր միջոցառումներից: Աբդուլա Օջալանի ձերբակալությունից հետո ՔԱԿ-ի մնացուկները փրկվեցին լեռնային ճամբարներում՝ սահմանի մյուս կողմում: Ամեն գարուն թուրքական զինված ուժերը հարձակվում են քուրդ զինյալների վրա: Ի ցավ Մասուդ Բարզանիի՝ Իրաքա-քրդական ժողովրդավարական կուսակցության նախագահի, թուրք զինվորականները տեղակայվեցին Հյուսիսային Իրաքում՝ մշտական բազաներում: 2002թ. հուլիսին, երբ հանդիպեցի Բարզանիին, նա զայրացած էր Թուրքիայի վրա: Սպառնում էր միջոցներ ձեռնարկել, եթե Անկարան «Կիպրոսի լուծումը» փնտրեր Իրաքի Քրդստանում:

2002թ. նոյեմբերին Պոլ Վոլֆովիցը և Մարկ Գրոսմանը մեկնեցին Անկարա՝ քննարկելու ռազմական համագործակցությունը: Պաշտպանության փոխքարտուղար Դուգլաս Ֆեյսը համոզված էր, որ Անկարան կհամաձայնի Վաշինգտոնի պահանջներին: Թուրքիայի նախկին վարձու լոբբիստ Ֆեյսը վստահ էր, որ Անկարան կգործի այնպես, ինչպես նրան ասեն:

Թեև Էրդողանը վտարված էր խորհրդարանից, երբ 2002թ դեկտեմբերին ժամանեց Սպիտակ տուն, նախագահ Բուշը նրան վերաբերվեց այնպես, ինչպես պետության ղեկավարի: Օվալաձև սրահում Բուշի ազգային անվտանգության անձնակազմի հետ հանդիպման ժամանակ Էրդողանը բողոքեց Սադամ Հուսեյնին քշելու դեմ: Նա զգուշացրեց, որ կարող է առաջանալ Իրանի հետ սերտորեն կապված շիիթական ռեժիմ: Ամերիկացիները

պայմանավորվեցին պատերազմի պարագայում Թուրքիայի մասնակցության վերաբերյալ: Էրդողանն անդրդվելի էր: Մատնանշելով, որ ոչ մի որոշում չի կարող ընդունվել առանց խորհրդարանի լիազորության, Էրդողանը հանդիպումից հեռացավ վստահ, որ ԱՄՆ-ն առանց Թուրքիայի ռազմական գործողություններ չի ձեռնարկի: Այդպես վարվելն ավելի վտանգավոր կլիներ, ավելի շատ ժամանակ կպահանջեր և կհանգեցներ մեծաթիվ զոհերի:

Չնայած ՄԱԿ-ի սպառազինությունների ստուգումներին՝ չհաջողվեց զանգվածային ոչնչացման զենք գտնել, պարզ էր, որ Բուշի վարչակազմը հաստատակամ էր Սադամին հեռացնելու հարցում: Սկզբնական ռազմական ծրագրերը 92.000 ամերիկացի զինվոր և սպասարկող անձնակազմ էին նախատեսում, որոնք պիտի անցնեին Թուրքիայի տարածքով: 2003թ. փետրվարի 24-ին արտգործնախարար Յաշար Յակիշը հանդիպեց Քոլին Փաուելի հետ՝ քննարկելու Թուրքիայի մասնակցության պայմանները: Յակիշը պահանջեց 92 միլիարդ ԱՄՆ դոլլար՝ մեկ միլիարդ ԱՄՆ դոլար ամեն հազար զինվորի համար, որ պետք է ոտք դներ թուրքական հողի վրա:

Բուշի վարչակազմը շփոթահար էր: Լավագույն դեպքում նրանք պատրաստվում էին հատկացնել 6 միլիարդ ԱՄՆ դոլարի օգնություն, որը կարող էր հասնել 24 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ վարկի տեսքով: Յակիշի սկզբնական առաջարկը վեր էր սպասումներից: Թեև վարչակազմի պաշտոնյաները ընդունում էին Թուրքիայի մտահոգությունը Հյուսիսային Իրաքի կապակցությամբ, մերժեցին Յակիշի պահանջը, այն է՝ Սադամ Հուսեյնին հեռացնելուց հետո թույլ տալ Թուրքիային վերահսկել Հյուսիսային Իրաքը:

ԱՁԿ-ի ղեկավարությունը դժգոհ էր Վաշինգտոնի անորոշ հավաստիացումներից: Միաժամանակ թուրքերը բարկացած էին ամերիկյան մամուլում ռասիստական ծաղրանկարներից: Ծաղրելով Յակիշի առաջարկը՝ որոշ պարբերականներում զետեղված ծաղրանկարներ թուրքերին պատկերում էին որպես գորգավաճառներ և շուկայական միջնորդներ: Անկարային դուր չեկավ հավատարմության դիմաց փող կորզողի համբավը: ՄԱԿ-ում Թուրքիայի ժամանակավոր փոխդեսպանը ելույթ ունեցավ հեռուստացույցով՝ հայտարարելով. «Մենք մարմնավաճառներ չենք»:

Էրդողանը իրատես է և Բուշի հետ հեռախոսազրույցի ժամանակ խոստացավ աջակցել ամերիկյան զորքերի տեղեկայմանը: Պահանջելով հարգանք Թուրքիայի ժողովրդավարության նկատմամբ՝ գեներալները Վաշինգտոնից իրենց արած առաջարկները ծածուկ էին պահում: ԱՄՆ-ի պաշտոնյաները համոզված էին, որ Թուրքիայի ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ) կհաստատի գործարքը մարտի 1-ի քվեարկությամբ: Բուշի վարչակազմի պատերազմական ծրագրերը խառնելով՝ գործարքը մերժվեց երեք ձայնով:

Թուրքական գործարար համայնքը ցնցում ապրեց: 48 ժամում Թուրքիայի արժեթղթերի շուկան անկում ապրեց 12,5 տոկոսով, իսկ թուրքական լիրայի գինը 5 տոկոսով ընկավ.մտավախություն կար, որ Թուրքիան կկորցնի Վաշինգտոնի 6 միլիարդ ԱՄՆ դոլար օգնությունը: Թուրք մեկնաբանները շահարկում էին այն ենթադրությունը, որ բանակը ծածուկ աշխատում է վարկաբեկել Էրդողանին: Թեև խորհրդարանի պատգամավորների երկու երրորդը ԱԶԿ-ինն էր, շատ պատգամավորներ չներկայացան, ուխտադրժություններ բազմաթիվ դեպքեր եղան: Էրդողանը ԱՄՆ-ին մեղադրեց խորհրդարանական ընտրությունները շտապեցնելու մեջ՝ մինչդեռ ինքն անհրաժեշտ աջակցություն կհավաքեր: Նա նաև պնդում էր, որ ԱՄՆ-ն վանել է թուրք հասարակությանն այնպիսի հայտարարություններով, որոնք նկարագրում են իրենց դժկամությունը՝ որպես ավելի շատ ֆինանսական օգնություն պոկելու միջոց:

Բուշի վարչակազմը շփոթահար էր: Էրդողանը կամ անկեղծ չէր խաղում՝ աջակցությունը պնդելով, կամ պարզապես անփորձ էր կուսակցական կարգուկանոն հաստատելու և քվեներն ապահովելու համար: ԱՄՆ-ի պաշտոնյաներն անմիջապես սկսեցին աշխատանք տանել ԹԱՄԺ-ի նոր քվեարկության համար: Էրդողանը չէր կամենում դավաճանել իր աջակիցներին և սեղմեց արգելակը: Մինչ այդ պահը նա հաղթել էր սիիրության լրացուցիչ ընտրություններում և դեռ չէր գրավել իր տեղը խորհրդարանում: Նա ասաց Բուշի վարչակազմին, որ նոր քվեարկությունը պետք է սպասի մինչ իր՝ վարչապետի երդման արարողությունը: Եվ Էրդողանը, և՛ Թուրքիայի գլխավոր շտաբը չէին շտապում: Նրանք վստահ էին, որ Պենտագոնը չի պատերազմի առանց Թուրքիայի:

Պենտագոնի պատերազմի ծրագիրն ընդգրկում էր ցամաքային հարձակումը Թուրքիայից Մոսուլում և Քիրկուկում տեղակայված Իրաքի Հանրապետության պահապանների ստորաբաժանումների վրա: Նախատեսվում էին նաև ամերիկյան ռազմական օդանավերի խոշոր հարձակումներ Ինջիրլիկից, որ մի քանի րոպեի թռիչք էր իրաքյան սահմանից: Ինքնաթիռները Արևելյան Միջերկրականում տեղակայված ամերիկյան ավիակիրներից թռչելու էին Թուրքիայի օդային տարածքով՝ Իրաքի նշանակետերին հարվածելու համար: Ամերիկյան ինժեներներին թույլ էին տվել վերակահավորել այն նավահանգիստը, ուր պիտի բեռնաթափվեր բանակի չորրորդ հետևակային դիվիզիան: Պատրաստվելով ԹԱՄԺ-ում նոր քվերակությանը՝ Պենտագոնը որոշեց հեռու պահել իր նավերը թուրքական ափից: Մինչ խորհրդարանը վիճաբանում էր, քսանչորս բեռնատար նավեր, որոնք կրում էին 4-րդ հետևակային դիվիզիայի շարժամիջոցները, զինամթերքը և սպա-

ռազինությունը, սպասում էին բեռնաթափվելու թույլտվության:

Չնայած թվում էր, թե Բուշի վարչակազմը միանգամայն վստահ է, այլընտրանքային նախապատրաստություններ էր տեսնում: Եթե Թուրքիան հրաժարվեր տեղակայման թույլտվություն տալուց, ծրագրվում էր նավերն ուղարկել Քուվեյթ: Չորրորդ հետևակային դիվիզիայի վերատեղակայումը կազմակերպչական մղձավանջ էր: Առնվազն մեկ շաբաթ էր հարկավոր Պարսից ծոց լողալու համար: Միաժամանակ մտահոգություն կար, որ վերադասավորումը կխանգարի այլ բեռնատար նավերի անցումը Սուեզի ջրանցքով և կծանրաբեռնի նավահանգիստը Քուվեյթում, որն արդեն ընդունում էր մի քանի բանակային և ծովային հետևակի դիվիզիաների: Եթե Թուրքիան հրաժարվեր բացել ցամաքային կամուրջը, մտածում էին նաև պատրաստություն տեսնել զորքերն օդով ուղիղ Հյուսիսային Իրաք տեղափոխելու համար:

Վաշինգտոնը սարսափած էր Անկարայի՝ խնդրի լուծման եղանակից: Թուրքիայի որոշման մասին հարցազրույցում սենատոր Ջեյ Ռոքֆելլերը (դեմոկրատ Արևմտյան Վիրջինիայից)՝ Հետաքննությունների հանձնաժողովի բարձրաստիճան դեմոկրատը, նշեց. «Դա ինձ շանթահարեց: Մենք հիսուն տարի շարունակ պաշտպանեցինք նրանց ՆԱՏՕ-ում: Եվ այժմ, երբ ծագեց այս հնարավորությունը, նրանք երեք ձայնով մերժեցին մեզ մուտք գործել հյուսիսից»[2]: Վիլյամ Սաֆիրը մեղադրեց Թուրքիային դավաճանության մեջ[3]:

ԹԱՄԺ-ին շաբաթներ սպասելուց հետո Պենտագոնը վերջապես 4-րդ հետևակային դիվիզիան ուղղեց Քուվեյթ: Թեև հյուսիսային ճակատ չէր լինելու, գեներալ Թոմի Ֆրենքսը համարում էր, որ ԱՄՆ-ն դեռ կարող է պատերազմը հաջողությամբ ավարտել: Բուշի վարչակազմը Անկարայից հայցեց օդային տարածքով թռչելու իրավունք: Էրդողանն այդ ժամանակ արդեն բարձրացրել էր սահմանադրական խոչընդոտի նետած ձեռնոցը և վարչապետ նշանակվել: Սակայն նա դարձյալ նշեց, որ անհրաժեշտ է խորհրդարանի համաձայնությունը: Անհողդողդ ընդդիմանալով պատերազմին՝ թուրք ղեկավարները մինչ Թուրքիայի օդային տարածքը տրամադրելը հետպատերազմյան Իրաքի վերաբերյալ հետագա երաշխիքներ պահանջեցին:

«Անկարայի գործընթացի» միջոցով ԱՄՆ-ի պաշտոնյաները հանդիպեցին իրենց թուրք գործընկերներին, Քրդստանի ժողովրդավարական կուսակցության իրաքա-քրդական ներկայացուցիչներին և Քրդստանի հայրենասիրական միությանը: Քրդերը գազազեցին այն առաջարկից, որ թուրքական զորքերը զբաղեցնեն քսան կիլոմետրանոց բուֆերային տարածք Իրա-

քի Քրդստանում: Նրանք նաև անհանգստացած էին Թուրքիայի աջակցությամբ Իրաքի թուրքմենական ճակատին (ԻԹՃ/ITF): Իրաքում շուրջ երկու միլիոն թուրքմեն կա, բայց նրանք հիմնականում ցրված են երկրով մեկ: ԻԹՃ-ն ֆինանսավորվում և ղեկավարվում է Անկարայից: Անտեսելով քրդերի բողոքները՝ ԱՄՆ-ն Թուրքիային խոստացավ նրա պահանջած բուֆերային տարածքը և նշանակալից դեր՝ Իրաքի ապագա կառավարումը որոշելու գործում:

Մարտի 19-ին ԹԱՄԺ-ն վերջապես կողմ քվեարկեց ԱՄՆ-ի ռազմական օդանավերին իր օդային տարածքը հատելու թույլտվություն տալուն: Նա ՆԱՏՕ-ի վերջին երկիրն էր, որ այդպես վարվեց: Վաշինգտոնը կարծեց, որ համաձայնությունը կայացած է: Բայց քվեարկությունից հետո ԹԳԾ-ն գրավոր երաշխավորություն պահանջեց, որ թուրքական զորքերին կթույլատրվի զբաղեցնել Հյուսիսային Իրաքը: ԹԳԾ-ն պնդեց, որ առանց դրա ամերիկյան ինքնաթիռների մուտքը Թուրքիայի օդային տարածք կարգելվի:

ԱՄՆ-ի պաշտոնյաները վրդովված էին: Փաուելը հանպատրաստից մամուլի ասուլիս տվեց և զայրացած քննադատեց թուրքական դիրքորոշումը: Վարչակազմի մի ավագ պաշտոնյա, ով ներգրավված էր Անկարայի հետ բանակցություններում, ասաց. «Այնպիսի զգացում է, կարծես թուրքերը վերցրել են մի տաք խանձող և աչքս մտցրել: Միթե նրանք «Սի-Էն-Էն» չեն նայում: Միթե չգիտեն, որ պատերազմն արդեն սկսվել է»[4]: Երկու օր անց թուրքերը հետ կանգնեցին իրենց դիրքորոշումից: Բայց թուրք-ամերիկյան հարաբերություններին վնաս արդեն հասցված էր:

Իշխանության գալու մի քանի ամսվա ընթացքում ԱԶԿ-ն հարված է կրել «ընդերք-պետությունից», որի ազդեցությամբ այրվեցին Թուրքիայի կամուրջները ԱՄՆ-ի, ԵՄ-ի և արաբական աշխարհի հետ: Նույնիսկ Թուրքիայի՝ Բուշի վարչակազմի վաղեմի բարեկամներն էին զայրացած: Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենի հայտարարությունից հետո, ըստ որի՝ Թուրքիային ԵՄ ընդունելը կնշանակի «Եվրոպայի վերջը», ԵՄ-ն անդամակցության բանակցությունները սկսելու որոշումը հետաձգեց մինչև 2004թ. դեկտեմբերը[5]: Արաբական աշխարհը նույնպես վերապահումով էր վերաբերվում Թուրքիային: Մոսուլն ու Քիրքուկը գրավելու վտանգն արթնացրեց արաբների՝ օսմանյան կայսերապաշտության հետ կապված վախերը: Չնայած իր խառը բնակչությանը՝ Մոսուլը արաբական աշխարհի համար արաբական քաղաք է:

Անկարան կարծում էր, որ Հյուսիսային Իրաքը գրավելն իրեն հնարավորություն կտա վերահսկելու Քիրքուկի հարուստ նավթային տարածքները: Դա նաև կխափանի քրդերի պետականություն ստեղծելու ձգտումները

և կօգնի պաշտպանելու Իրաքի թուրքմեններին քրդերի գերիշխանությունից: Նախնական ռազմական ծրագրի համաձայն՝ թուրքական զորքերը պետք է հետևեին 4-րդ հետևակային դիվիզիային: Պենտագոնի պաշտոնյաները զգուշացրեցին, որ առանց ԱՄՆ-ի զորքերի՝ որպես բուֆերի, հնարավոր են պատահարներ Հյուսիսային Իրաքում: Եթե Թուրքիան ներխուժեր, ապա հավանական կլիներ, որ ԱՄՆ-ն և Թուրքիան միմյանց դեմ դուրս գային:

Հյուսիսային ճակատը բացելու անհաջողությունը հսկայական ազդեցություն ունեցավ պատերազմի ընթացքի, ինչպես նաև հետպատերազմյան ծրագրերի վրա: Այն ստիպեց ԱՄՆ-ին բոլոր գործողությունները կենտրոնացնել հարավում՝ ձգելով մատակարարման գծերը և հարձակումների հանդեպ ԱՄՆ-ի զորքերը խոցելի դարձնելով: Անապատի մեկշաբաթյա վազքից հետո կոալիցիոն զորքերը կանգնեցին Նաջաֆի հարավում, և կասկածներ առաջացան Պենտագոնի ռազմական ծրագրի կապակցությամբ:

Չորրորդ հետևակային դիվիզիան դեռ չեր հասել ռազմական գործողությունների թատերաբեմ, իսկ մարտական գործություններն արդեն սկսվում էին: Երբ Իրաքի Հանրապետության պահապանների «կրակե օղակը» Բաղդադի շուրջ փլուզվեց, ԱՄՆ-ի զորքերը ավելացրին ճնշումն ու գրոհեցին մայրաքաղաքը: Մարտական միավորների խիստ փոքրաթվությունը սահմանափակեց կոալիցիայի՝ թալանն ու քաոսը վերահսկելու կարողությունը: Եթե 4-րդ հետևակային դիվիզիան խաղի մեջ մտներ, դաշնակիցները կկարողանային վերահսկել իրավիճակն ու ավելի լավ ապահովել անվտանգությունը:

Խիստ ճնշման ներքո Թուրքիան որոշեց չուղարկել իր զորքերը Հյուսիսային Իրաք: Փոխարենը դիմեց ավելի նենգ ռազմավարության: 2003թ. ապրիլին Թուրքական կարմիր կիսալուսնի պահակախումբը կանգնեցվեց մի պահակակետում: Զենքեր և պայթուցիկներ հայտնաբերվեցին պայուսակներում, որոնցում պետք է մարդասիրական օգնություն լիներ: Մարդասիրական օգնության աշխատողները իրականում Թուրքական հատուկ ուժերի զինվորներն էին, որոնք թափանցում էին Հյուսիսային Իրաք՝ աջակցելու ԻԹՃ-ի աշխարհազորայիններին: ԱՄՆ-ն Թուրքական հատուկ բանակի քսաներեք զինվոր արտաքսեց Թուրքիա:

Հուլիսի 4-ին ամերիկյան զորքերը կասեցրեցին Թուրքական հատուկ բանակի տասնմեկ զինվորի, այն հիմնավորմամբ, որ նրանք դավադրություն են կազմակերպել՝ սպանելու Հյուսիսային Իրաքում ընտրված քուրդ պաշտոնյաների: Կասկածյալ թուրք մարդասպաններին հասցրեցին կանխել և տարան Բաղդադ հարցաքննության: Ձերբակալված և երեսները

ծածկած թուրք զինվորների լուսանկարներով լրատվական հաղորդումները գրգռեցին հասարակությանը, որն արդեն հիասթափված էր պատերազմից և հետպատերազմյան պատրաստություններից Թուրքիայի դուրս մնալուց: Գունդուզ Ակտանը գրեց. «Մի՞թե ամերիկացիները մոռացել են՝ ինչ էին զգում Թեհրանում, երբ Հոմեյնիի հեղափոխության ժամանակ տեսան աչքերը կապված դիվանագետներին ԱՄՆ դեսպանատնից դուրս հանելիս: Թուրքերը նույնն են զգում ԱՄՆ-ի վերաբերմունքից իրենց զինվորների նկատմանբ: Ինչպես ամերիկացիները, նրանք նույնպես չեն մոռանա»: Հիլմի Օզկոկը՝ Թուրքական գլխավոր շտաբի պետը, պնդեց, որ այդ կալանավորումը ՆԱՏՕ-ի երկու դաշնակիցների միջև երբևէ պատահած «ամենամեծ ճգնաժամն» էր: Հուրշիթ Թոլոնը, որ բարձր պաշտոն զբաղեցնող գեներալ է, այդ դեպքը որակեց «ահավոր» և հետածգեց իր ուղևորությունը Ամերիկա[6]:

Թուրք զինվորների կալանքը լուրջ հարցեր հարուցեց ՆԱՏՕ-ի երկու դաշնակիցների հարաբերությունների առնչությամբ: Այրում էին ամերիկյան դրոշները: Ստամբուլում բողոքողները հավաքվել էին ամերիկյան դեսպանատան մոտ, և ռումբ պայթեց հյուպատոսության մոտ: «Էկոնոմիստի» խմբագրականը զգուշացրեց. «Քրդական վերածննդի նախազգացումը, ամերիկացիների վարքագիծը խաղ են անում թուրքական նյարդերի հետ»: Պարբերականը թուրք-ամերիկյան հարաբերություններն անվանեց «վտանգված գործընկերություն»[7]:

Ինձ ասել էին, որ գոյություն ունեն անհերքելի ապացույցներ, որ Թուրքական հատուկ ուժերը ծրագրել էին սպանել Քիրքուկի նահանգապետին: Սա զարմանալի չէր: 2002թ. հուլիսին Իրաքի Քրդստան կատարած իմ այցի ժամանակ քուրդ հետախույզներն ինձ ցույց տվեցին մի տեսաժապավեն, որում Թուրքիայի մի ավագ պաշտոնյա Էրբիլում վճարում էր վարձու մարդասպանին, որպեսզի սպանի Իրաքի առաջատար անկախ թուրքմեն քաղաքական գործչին: Իրաքի Քրդստանում Թուրքիան շուրջ մեկ տարի զբաղվում էր ներթափացման և պառակտման գործով:

Հաշվի առնելով երկարատև հատուկ հարաբերությունները՝ Կոնգրեսի անդամները Իրաքի պատերազմի պատրաստությունների ընթացքում մեղմացրին քննադատությունը Թուրքիայի հասցեին: Օրենսդիրները դժգոհ էին պատերազմի ընթացքում Անկարայի թերի համագործակցությունից և որոշ թուրքերի՝ հետպատերազմյան շրջանում Ամերիկայի դժվարությունները ծաղրելուց: Որոշակի հակաթուրքական տրամադրություն սկսեց տիրել Կոնգրեսում, ինչն էլ հայերի ցեղասպանությանը վերաբերող մի քանի նախաձեռնությունների շարժառիթ դարձավ: Սենատոր Ջոն Էնսայնը (հանրապետական՝ Թեննեսի նահանգից) և սենատոր Ջոն Կորզինը (դեմոկրատ՝

Նյու Ջերսի նահանգից) ներկայացրին 307-րդ բանաձևը, որում նշվում էր ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայի Ամերիկայի ստորագրման 15-րդ տարելիցը, և հատկապես Հայոց ցեղասպանությունը նշվում էր որպես այնպիսի իրադարձությունների օրինակ, որոնց կանխմանն է կոչված կոնվենցիան: Համանման բանաձև էր ներկայացվել Ներկայացուցիչների տան Դատական հանձնաժողովում: 193-րդ բանաձևը նվիրված էր Ցեղասպանության կոնվենցիայի տարեդարձին և հիշատակում էր հրեական Հոլոքոստը, ինչպես նաև հայերի, Կամբոջայի և Ռուանդայի ցեղասպանությունները:

Գունդուզ Ակտանը հայտարարեց, որ բանաձևերը «հատուցում» էին: Նա հարցրեց. «Մի՞թե կարծում եք, որ Կոնգրեսը կմտածեր այս ձեռնարկման մասին, եթե մեր խորհրդարանը թուլատրեր ԱՄՆ-ին օգտագործել թուրքական հողը որպես ցատկահարթակ դեպի Իրաքի հյուսիսային ճակատ»[8]:

Ծանոթագրություններ

1. Սոնթագ, «Էրդողանի փորձը»
2. «Սի-Էն-Էն»-ի ուշ հրատարակություն, 2003, 2 մարտի:
3. *«Արմինիա լիբերթի»*, 2003, 2 ապրիլի:
4. Անանուն, 2003, 21 մարտի:
5. *«Արմինիա ուիքլի»*, 2003թ., 4-10 հունվարի:
6. Ցիգալ Շլիֆեր, ԱՄՆ-ն այժմ խնդրում է թուրք զինվորներ Հյուսիսային Իրաքի համար, «*Փոստ գազետ»*, 2003, 22 հուլիսի:
7. Վտանգի տակ գտնվող ընկերակցություն, «*Էկոնոմիստ»*, 2003, 12 հուլիսի:
8. Գունդուզ Ակտան, Այսպես կոչված Հայոց ցեղասպանությունը ամերիկյան Կոնգրեսի օրակարգում, «*Ռադիկալ»*, 2003, 14 հուլիսի:

13

Սահմանին

ՀԹՀՀ-ն միասնականորեն նշել է, որ հայ-թուրքական սահմանի բացումը կնպաստի հաշտեցման նպատակին հասնելուն: ՀԹՀՀ-ի անդամները զգուշավոր լավատես էին, երբ «Թրքիշ դեյլի նյուսը» հայտնեց, որ Անկարան որոշել է բացել Թուրքիայի սահմանը Հայաստանի հետ: Հարցն այն չէր՝ սահմանը կբացվի, թե ոչ, այլ այն, թե սահմանը երբ կբացվի: «Անցյալ ամիս ականատես եղանք Երևանի հետ հարաբերություններում հնարավոր ջերմության մասին թուրք պաշտոնյաների աննախադեպ հայտարարությունների: Հայաստանի շրջափակման տասը տարվա ընթացքում Անկարան առաջին անգամ միտք հայտնեց, որ երկու երկրների միջև սահմանը կարող է բացվել»[1]:

Անկարան մասամբ գործում էր՝ ելնելով թուրք-ամերիկյան հարաբերությունները կարգավորելու ցանկությունից: Հուլիսի 4-ի ջախջախումից հետո երկու երկրները որոշեցին թուլացնել լարված հարաբերությունները և իրենց հատուկ հարաբերությունները վերականգնելու ուղիներ փնտրել: Անկարայում Ամերիկայի դեսպանատան մի պաշտոնյա ասաց. «Մենք փորձում ենք այս հանգրվանից անցնել մեկ այլ հանգրվանի, ուր ավելի լավ համակարգում կունենանք Իրաքում»[2]: Հիմնվեց համատեղ փաստահավաք խումբ, որպեսզի բացահայտվեն Քիրքուկի նահանգապետի սպանության դավադրության մեջ մեղադրվող թուրք զինվորների կալանավորման իրական պատճառները: Այդ «տարաբախտ» դիպվածի կապակցությամբ ցա-

վակցություն հայտնող հայտարարությունը, հեռու էր այն ներողությունից, որը ցանկանում էին թուրքերը:

Աբդուլա Գյուլը 2004թ. հուլիսի վերջին նախաձեռնեց իր այցը Վաշինգտոն: Գյուլին ընդունեցին Դիք Չեյնին, Դոնալդ Ռամսֆելդը, Փոլ Վոլֆովիցը, խորհրդատու Քոնդոլիզա Ռայսը և Քոլին Փաուելը: Աշխատանքային ճաշից հետո նրանց համատեղ ասուլիսում Փաուելը նշեց. «Մենք գնահատում ենք Իրաքում վերակառուցման, մարդասիրական և այլ կարևոր աշխատանքների վերաբերյալ կարևոր աջակցության առաջարկությունները, որոնք ստացանք Թուրքիայից, և որոնք կօգնեն Իրաքի ժողովրդին վերականգնելու իրենց հասարակությունը Սադամ Հուսեյնի թողած ավերածությունից հետո»[3]:

Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում Գյուլին հիշեցնում էին, որ ցեղասպանության ճանաչման հարցը դեռ չի հանվել: Նրան ասացին, որ իրական գործընթացը ճնշումից խուսափելու ամենալավ միջոցն է: Ամենակարևորը՝ վարչակազմի պաշտոնյաներն ընդգծեցին, որ Հայաստանի հետ սահմանի բացումը կծառայի Թուրքիայի ազգային շահերին: Կարգավորված ուղևորություններն ու առևտուրը կխթանեն Թուրքիայի տնտեսությունը և կմեծացնեն Անկարայի ազդեցությունը տարածաշրջանում: Գյուլին հիշեցրին, որ Հայաստանը արտահանման շուկա է թուրքական ապրանքի, այդ թվում՝ սպառման, գյուղատնտեսական ապրանքների և սարքավորումների համար: Սահմանի բացումը կխթանի առևտրային հնարավորությունները էներգիայի, առևտրի և զբոսաշրջության բնագավառներում, որոնք գնահատվում են տարեկան 1մեկ միլիարդ ԱՄՆ դոլար: Ի լրումն՝ ավտոճանապարհային և երկաթգծային ուղիները Թուրքիան կդարձնեն կամուրջ Եվրոպայի և Ասիայի միջև: Երկաթուղին վերականգնելը հնարավոր կդարձնի տարածաշրջանային էներգետիկ նախագծերը, կմիացնի տարածաշրջանային էներգետիկ ցանցերը և կխթանի տնտեսությունն ավելի էժան էլեկտրաէներգիայի շնորհիվ: Թուրքական նավահանգիստներով փոխադրվող ապրանքները նույնպես կարևոր տրանսպորտային վճարներ կձևավորեն: Քսանմեկերորդ դարի «մետաքսե ճանապարհը» կարող է անսպասելի հաջողություն դառնալ Թուրքիայի համար:

Գյուլը մտահոգություն հայտնեց, որ սահմանի բացումը տարածքային պահանջներ կհրահրի Հայաստանի կողմից: ԱՄՆ-ի պաշտոնյաները նրան վստահեցրին, որ նման մահոգություններն անհիմն են: Նրանք նշեցին, որ Հայաստանը երբեք որևէ թուրքական տարածք չի պահանջել: Ի լրումն Հայաստանը պարտավորվել է հարգել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմա-

կերպության անդամ երկրների համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների ուժով: Այնուհետև, Հայաստանը պարտավորված է հետևել 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերին, որոնք գծեցին Թուրքիայի և Հայաստանի միջև անցնող սահմանը: Կարսի պայմանագրի 17-րդ հոդվածը նշում էր, որ «երկու երկրների միջև կհաստատվի չընդհատվող հաղորդակցություն», և պարտադրում էր երկուսին էլ ձեռնարկել «անհրաժեշտ միջոցներ երկաթգծի, հեռագրական և կապի այլ միջոցների պահպանման և զարգացման համար, ինչպես նաև ապահովել մարդկանց և ապրանքների ազատ տեղաշարժը»: Համաձայնագրերի օրենքի մասին Վիեննայի կոնվենցիայի, ինչպես նաև Պետությունների իրավահաջորդության մասին կոնվենցիայի համաձայն՝ Թուրքիայի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը ստանձնել են այս պայմանագրի պահանջների բավարարումը[4]:

Գյուլին հիշեցրեցին, որ գործնական շահերի հետ մեկտեղ սահմանի բացումը կմեծացնի Թուրքիայի հեղինակությունն աշխարհում: 2004թ. ՆԱՏՕ-ի գագաթնաժողովը Թուրքիայում իդեալական հարթակ կապահովի Անկարայի համար՝ դեպի Կովկաս տանող դարպասի, Մերձավոր Արևելքում հանդարտեցնող ազդեցություն գործողի և Իրաքում որպես դրական ուժ հանդես եկողի դերը ստանձնելու համար: Գյուլն ընդունեց այս փաստարկներն ու պնդեց. «Մենք ցանկանում ենք վերականգնել Հայաստանի հետ հարաբերությունները»: Սակայն ընդգծեց, որ Թուրքիան չի գործի ճնշման ներքո:[5] Եթե կոնգրեսական բանաձևերը չդադարեցվեն, Անկարան չի դիմի որևէ գործողության:

Վարչակազմի ավագ պաշտոնյաները միջամտեցին՝ հակազդելու Ցեղասպանության կոնվենցիայի ստորագրման 15-րդ տարելիցը նշելու Կոնգրեսի ջանքերին, որոնք հիշատակում էին Հայոց ցեղասպանությունը: Չեյնին հեռախոսազրույցներ ունեցավ, և Դենիս Հասթերթը համոզեց, որ 193-րդ բանաձևը հեռու կպահվի Ներկայացուցիչների տան քննարկումից: Նմանապես Սենատի մեծամասնության ղեկավար Բիլ Ֆրիսթը (հանրապետական, Թեննեսի նահանգից) և Դիք Լուգարը (հանրապետական, Ինդիանա նահանգից), Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը, խոստացան խափանել 307-րդ բանաձևը:

Հուլիսի վերջին Կոնգրեսը ձեռնպահ մնաց մինչ աշխատավորների օրը: Ես հուսով էի, որ Անկարան որոշ ժամանակ անց՝ ամռան մեռյալ ամիսների ընթացքում, երբ բոլորն արձակուրդում են և ուշադրություն չեն դարձնում, լուռ կբացի իր սահմանը: Անկարային համոզելու համար Վարդան Օսկանյանը կրկնեց, որ Հայաստանը պատրաստ է բարելավելու Թուրքիայի հետ

հարաբերությունները՝ առանց նախապայմանների, ինչպիսին է Հայոց ցեղասպանության ճանաչումը:

Անկարայի քննարկումների գագաթնակետում Դաշնակցություն կուսակցությունը սահմանը փակ պահելու համար մի անհեթեթ արշավ սկսեց: Վահան Հովհաննիսյանը՝ ՀՅԴ-ի փոխնախագահը, նշեց. «Հայ-թուրքական սահմանի վերաբացումը Հայաստանի շահերն ուղղակի վտանգի տակ է դնում»: Նա շարունակեց. «Հայաստանը դեռ պատրաստ չէ բացել սահմանը: Երկիրը կլցվի Թուրքիայից ներկրված էժան ապրանքներով, և կտուժի հատկապես հայ գյուղացին»[6]: Չնայած դաշնակցականները Քոչարյանի իշխող կոալիցիայի կրտսեր անդամներն են, էական ազդեցություն ունեն Հայաստանի նախագահի վրա: Հակառակ Հայաստանի կառավարության պաշտոնական դիրքորոշման՝ դաշնակցականները պահանջում են, որ Թուրքիան տարածքներ վերադարձնի և փոխհատուցում վճարի, որպեսզի Հայաստանը համաձայնի բացել սահմանը: Դաշնակցականները նման են Թուրքիայի ժխտողականներին, ովքեր իրենց գոյությունն արդարացնում են զարգացմանը հակազդելով: Այնուհետև ցուցադրական նեղացկոտությամբ դաշնակցականները ծաղրեցին նաև հայ-թուրքական խորհրդարանական «Բարեկամության խումբ» ստեղծելու առաջարկը: Հովհաննիսյանը պնդեց, որ հայ-թուրքական համագործակցությունը «անհավանական իրավիճակ» կառաջացնի[7]:

Եթե Թուրքիան իրոք սահմանի բացման եզրին էր, ապա նրա որոշումը փոխվեց Հեյդար Ալիևի հիվանդության պատճառով: Նա ուշագնաց եղավ հրապարակային ելույթի ժամանակ, և նրան Բաքվից հասցրին Անկարայի հիվանդանոցներից մեկը: Մինչ աշխարհահռչակ Քլիվլենդի հիվանդանոցի սրտանոթային բաժանմունք տեղափոխվելը Ալիևն իր որդուն առաջադրեց վարչապետի պաշտոնում: Հույսերը, որ Իլհամ Ալիևն ավելի զիջող կգտնվի, շուտով ի դերև ելան: Նա կոչ արեց բոլոր ազերի հասարակական կազմակերպություններին նախքան Լեռնային Ղարաբաղի շուրջ վեճի լուծումը դադարեցնել կապերն իրենց հայաստանյան գործընկերների հետ: «Մի մտեք որևիցե հարաբերության մեջ զավթիչ պետության հետ»[8],- զգուշացրեց Իլհամը:

Օգոստոսին Իլտեր Թուրքմենը և ես Բոդրումում հանդիպեցինք ծովափնյա մի ռեստորանում: Նա հոռետես էր սահմանի բացման հարցում: Ադրբեջանի ուժեղ լոբբինգը Թուրքիայում կընդդիմանար: Թուրքիայի պետական մեքենայի միջանցքներին լավ ծանոթ՝ Իլտերը գիտեր, որ մինչ հոկտեմբեր՝ Ադրբեջանի նախագահական ընտրությունները, ոչ մի որոշում չի կայացվի: Անկարան երբեք չի գործի, երբ Հեյդար Ալիևը մահվան եզրին է:

Նման որոշումը կվիրավորեր նրա հիշատակը:

Հետպատերազմյան Իրաքի ծանր դժվարությունները նույնպես ազդեցին Անկարայի որոշման վրա: Երբ անվտանգության պայմաններն Իրաքում վատացան, Անկարան համոզվեց, որ Բուշի վարչակազմը կխնդրի իր օգնությունը: Գեներալ Աբիզեյդը՝ ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության գլխավոր հրամանատարը, և եվրոպական հրամանատար գեներալ Ջեյմս Ջոնսը մեկնեցին Անկարա՝ քննարկելու անվտանգության համագործակցությունը Իրաքում: 2003թ. հուլիսի նրանց այցին անմիջապես հետևեցին մի շարք ռմբակոծություններ և սպանություններ: Ավտոմեքենայում տեղադրված ռումբ օգտագործվեց Բաղդադում հորդանանյան դեսպանատան վրա հարձակվելու համար: Օրեր անց Սերխիո Վիերա դե Մեյոն և ՄԱԿ-ի քսանմեկ աշխատակիցներ զոհվեցին, երբ հարձակում կատարվեց նաև ՄԱԿ-ի շենքի վրա: Շուտով սպանվեցին հայտնի արաբական շիիթ առաջնորդ Բաքր ալ-Հաքիմը և Ակիլա Հաշեմին՝ Իրաքի կառավարման նորանշանակ խորհրդի անդամը: Բռնությունների շարանը էլ ավելի էր ձգվում՝ դուրս գալով վերահսկողությունից:

Վաշինգտոնի ինստիտուտի Սոներ Քագապտեյը նշեց. «Թուրքիան մեծ դեր պետք է խաղա Իրաքի վերակառուցման գործում, բայց նաև ավելի լայն վերակառուցման գաղափարախոսական ասպարեզներում»[9]: Կոալիցիոն ժամանակավոր իշխանությունները քայլեր ձեռնարկեցին՝ ընդլայնելու Թուրքիայի դերը մարդասիրական և վերակառուցողական աջակցության բնագավառներում: Քիրքուկի առևտրային պալատից պատվիրակություն ժամանեց Ստամբուլ՝ ուսումնասիրելու առևտրի և ներդրումների հնարավորությունները: ԱՄՆ-ի ռազմական ծրագրողները, նույնպես մտահոգված Թուրքիայի ՔԱԿ-ի զինյալների հարցով, որոնք գտնվում էին Հյուսիսային Իրաքի լեռներում, համաձայնեցին ապառազմականացնել խմբավորումը, որն ահաբեկչական կազմակերպությունների ԱՄՆ-ի ցուցակում էր: Բուշի վարչակազմը առաջնահերթ համարեց Իրաքում անվտանգություն միջազգայնացումը: Երբ Հնդկաստանը, Պակիստանը և Հարավային Կորեան դուրս եկան, Թուրքիան դարձավ իր զինվորներին Իրաքում տեղակայելու հակված առավել հավանական երկիրը:

Հոկտեմբերի 7-ին Թուրքիաի խորհրդարանը 358-ից 183 կողմ ձայներով թույլատրեց Իրաքում զինվորների տեղավորումը: Թուրքիայի դեսպանատունը Վաշինգտոնում հայտարարեց.

«Որոշումը ԱՄՆ-ի և ամերիկացի ժողովրդի նկատմամբ Թուրքիայի բարեկամության, երկարամյա դաշնակցության և ընկերակցության հավաստիքն է: Թուրքիայի քայլը Իրաքում խաղաղությանը և կայունությանը

նպաստելու համար շատ կարևոր է ահաբեկչության դեմ պայքարում: Մասնակցելով Երկարատև ազատության գործողությանը և ապա ստանձնելով Միջազգային անվտանգության աջակցության ուժերի (ՄԱԱՈՒ/ ISAF) հրամանատարությունը Աֆղանստանում ՝ թուրք խաղաղապահ զորքերը տեղակայվելով Իրաքում, նշանակալիորեն կպահպանեն այն ավանդույթը, որը ձևավորվել է այն ժամանակվանից, երբ կորեական պատերազմում թուրք և ամերիկացի զինվորները կողք կողքի ծառայում էին՝ հասնելու միասնական նպատակներին և բարձր պահելու ընդհանուր արժեքները»:[10]

Մինչ Բուշի վարչակազմը զբաղված էր Իրաքում, ԱՄՆ-ի՝ հայ-թուրքական սահմանը բացելու ճնշումը Անկարայի վրա գրեթե վերացավ: Երբ սեպտեմբերի 23-ին Գյուլը և Օսկանյանը հանդիպեցին Նյու Յորքում, Գյուլը գիտեր իր առավելությունը: Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը հեզ հայտարարությամբ նշեց. «Նրանք քննարկեցին փոխադարձ մտահոգությունները, ներառյալ երկու երկրների միջև սահմանի բացման հեռանկարները: Նրանք համաձայնեցին նորից հանդիպել և շարունակել հարաբերությունների բարելավման անհրաժեշտ քայլերի մասին խոսակցությունը»[11]:

ԱՄՆ-ի կողմից ճնշման բացակայության և Թուրքիայի ու Հայաստանի միջև երկկողմ բանակցությունների փակուղի մտնելու պայմաններում, ես ժողով գումարեցի Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի սահմանամերձ շրջանների փոքր համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Խումբը կանոնավորապես հանդիպում էր՝ ուսումնասիրելու առևտրի հնարավորությունները և կապի ու համագործակցության ուղիները: Ես նրանց հորդորեցի համախմբել հիմնական համակիրներին՝ կոչ անելով բացել սահմանը:

Մենք հանդիպեցինք Թբիլիսիում՝ «Վերա փալաս» հյուրանոցում՝ մի հին տխուր շինությունում, որը գտնվում էր Վրաստանի մայրաքաղաքի փլուզված մասում: Մեր ճաշի սեղանը լի էր սառը խորտիկներով և մայոնեզով աղցաններով: Ճաշեցինք մոմի լույսի ներքո: Էլեկտրականությունը ընդհատվող էր, և մի քանի անգամ հայտնվեցինք մթության մեջ: Թարթող լույսերը խորհրդանշական էին նրանց սպասումների առումով: Չնայած բոլորը առաջ էին նայում դեպի պայծառ ապագա, քաջ ծանոթ էին զարգացման ամենօրյա սահմանափակումներին:

Հայերը եկան նախագծերի փաթեթով զինված՝ սկսած առևտրից և

վերջացրած զբոսաշրջությամբ, ինչպես նաև մշակութային և քաղաքացիական փոխայցելություններով: Թեև ազերիները համաձայն են համագործակցել, բախվում են գործնական սահմանափակումների: Նրանք գիտեն Ալիևի ավտորիտար հակումները և զգուշանում են կենտրոնական իշխանություններին ընդդիմանալու հարցում: Վրաստանը միակ երկիրն է Հարավային Կովկասում, որ բարիդրացիական հարաբերություններ է պահպանում իր բոլոր հարևանների հետ:

Թուրքերն ավելի իրատես են և, հետևաբար, զգուշավոր են որոշումներ կայացնելիս: Երբ Կարսի թուրք քաղաքապետն իր պարտքը համարեց 2001թ. հրավիրել Գյումրիի հայ քաղաքապետին, նրան դատապարտեցին պետական անվտանգության դատարանում և մեղադրեցին պետության դեմ հանցանք գործելու մեջ: Թբիլիսիի հանդիպմանը թուրք ներկայացուցիչները կողմ արտահայտվեցին սահմանի բացմանը և տարածաշրջանում առևտրի հարաբերությունների կարգավորմանը: Երբ խումբն առաջարկեց միացյալ հայտարարություն ընդունել, թուրքերը երերացին: Նրանք շատ լավ գիտեն, որ Անկարայի հետ անհամաձայնությունը իրենց բանտախուց կտանի:

Համայնքների ղեկավարները համաձայնեցին բավարարվել փոքր քայլերով, որոնք հնարավոր են տվյալ իրավիճակում: Նրանք նաև համաձայնեցին հայ-թուրքական սահմանի բացման դեպքում նոր հնարավորություններից օգտվելու գործողությունների վերաբերյալ: Չնայած Անկարան 2003թ. հոկտեմբերի 16-ին թույլ տվեց «Ֆլայ էյրին» ուղիղ թռիչքներ կատարել Ստամբուլի և Երևանի միջև, որոշումը հեռու էր բնականոն ուղևորություններն ու առևտուրն ապահովող սահմանի բացումից: Խցանումը վերացնելու նպատակով ԱՄՆ-ի պաշտոնյաներն առաջարկեցին սահմանը բացել դիվանագիտական անձնագիր ունեցողների կամ երրորդ երկրի քաղաքացիների համար: Մինչ տողերս գրքին հանձնելու պահը դեռևս ոչինչ չի ձեռնարկվել:

Սիրտս սեղմվեց, երբ համայնքների ղեկավարները կանգնեցին «Վերա» հյուրանոցի աստիճաններին՝ հրաժեշտ տալու: Չնայած նրանց ջանքերին՝ հիմնավորապես ճնշված էին իրենց իշխանությունների սահմանափակումներից: Չնայած նրանց բացահայտ լավատեսությանը, թվում էր, թե գիտեն, որ աշխարհը առաջ է շարժվել, իսկ իրենք հետ են մնացել:

2004 թ. ապրիլի 14-ին ՀԹՀՀ-ն համաձայնեց, որ իր՝ որպես հանձնաժո-

ղովի աշխատանքը հասնում է ավարտին: ՀԹՀՀ-ի ժամկետը մեկ տարի էր, սակայն դեպքերի ընթացքը պահանջեց, որ այն նախատեսվածից երկար գործեր:

Մասամբ իր ջանքերի շնորհիվ ՀԹՀՀ-ն հավատում է, որ քաղաքացիական հասարակության կապերն այժմ մշտական են, և պաշտոնական կապերը նույնպես կշարունակվեն: Նոր և ավելի ընդգրկուն Հայ-թուրքական խորհրդատվական խումբ ստեղծվեց՝ ամեն տարի հանդիպելու, ընթացքը գնահատելու և առաջարկներ անելու համար: 2004թ. Հիշատակի օրվա իր հայտարարությունում նախագահ Բուշը նշեց. «Այս օրին ես ողջունում եմ Հայաստանի և Թուրքիայի այն անհատներին, ի դեմս Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի, ովքեր աշխատել են խաղաղությանը և հաշտեցմանը աջակցելու համար»[12]:

Թևան Պողոսյանը վստահ է, որ տարբերություն կա ֆիզիկական և հոգեբանական սահմանների միջև: Նա բացատրեց, որ թուրքերն ու հայերը ունեցել են խոր անվստահություն և թշնամություն միմյանց հանդեպ, երբ սկսվեց ժողովրդական դիվանագիտության ծրագիրը: Թևանը պնդեց, որ իրենք մեծ առաջընթաց ունեցան: «Այսօր երկու երկրների ժողովուրդներն իրենց հարաբերությունների մասին խոսում են ազատորեն և ավելի քիչ նախապաշարումով»: Միշտ հուսով լի՝ նա ինձ վստահեցրեց. «Չնայած ֆիզիկական սահմանը դեռ գոյություն ունի, հոգեբանական սահմանն արդեն փլվել է»[13]:

Ծանոթագրություններ

1. Ռոզբալթ, 2003, 14 հուլիսի:
2. Շլիֆեր, ԱՄՆ-ն խնդրում է թուրք զինվորներ, 2003, 22 հուլիսի:
3. Քոլին Փաուելի հայտարարությունը, 2003, 24 հուլիսի:
4. Արտաքին քաղաքականության սովետական փաստաթղթեր, 1921թ., հոկտեմբեր:
5. Ռոզբալթ, 2003թ., 14 հուլիսի:
6. *Արմինֆո*, 2003թ., 14 հուլիսի:
7. Նույնը:
8. “Azeri PM calls for an end to Civic Contacts with ‘Aggressor’ Armenia”, «*Արմինիա լիբերթիե*, 2003, 11 սեպտեմբերի:

9. Շլիֆեր, ԱՄՆ-ն խնդրում է թուրք զինվորներ:
10. Վաշինգտոնում թուրքական դեսպանատան հայտարարությունը, 2003թ., 8 հոկտեմբերի:
11. Հայաստանի արտաքին գործերի նախարարության լրատու, 2003, 25 սեպտեմբերի:
12. Սպիտակ տուն, 2004, 24 ապրիլի:
13. Հանդիպման գրառումներ, 2003 թ., 25 սեպտեմբերի:

14

Տեսությունից՝ կիրառում

Մասնագետները կարող են ժողովրդական դիվանագիտության մշակման և զարգացման ընթացքում օգտագործել հետևյալ սահմանումները, առանձնահատկություններն ու ռազմավարությունները:

Պաշտոնական դիվանագիտություն

Պաշտոնական դիվանագիտությունը վարվում է ԱՄՆ կառավարության լիազոր ներկայացուցիչների կողմից: Արտաքին ծառայության աշխատակիցները (ԱԾԱ/FSO) խիստ սահմանափակում իրենց՝ տարածելով պետքարտուղարության հրահանգներին համապատասխան պաշտոնական ուղերձները: Նրանք նաև տեղեկություններ և տպավորություններ են քաղում ամերիկյան արտաքին քաղաքականության մշակման համար անհրաժեշտ տեղեկություններն ապահովելու նպատակով:

Դիվանագետներն այն երկրներում, որտեղ աշխատում են, հասարակ քաղաքացիներին ձեռք մեկնելու փոխարեն սովորաբար հիմնվում են այլ դիվանագետների և երկրի վերնախավի հետ կապերի վրա: Արտաքին ծառայության աշխատողներին հաճախ թույլ չեն տալիս պաշտոնական շրջանակներից դուրս հաղորդակցվել: Նրանք թույլտվություն են խնդրում անգամ դեսպանատնից դուրս հանդիպում ունենալու համար: Սահմանափակ կապը ոչ պետական դերակատարների հետ հաճախ հանգում է կիսատ տե-

ղեկատվության, թյուրըմբռնման և ոչ ճիշտ գնահատման վրա հիմնված պաշտոնական քաղաքականության:

Պետդեպարտամենտն ընդգրկում է բարձր որակավորում ունեցող անհատների՝ աշխարհի մասին հարուստ գիտելիքներով: Սակայն դեպարտամենտը արմատավորում է ռիսկի ենթակա մի մշակույթ, որը թուլացնում է նախաձեռնությունը և զսպում ստեղծագործականությունը: Այլ երկրների քաղաքացիների հետ քննարկումներում նրանք չեն ցանկանում նոր մտահղացումներ փորձել, որպեսզի դրանք չընկալվեն որպես պաշտոնական իշխանությունների քաղաքականություն: Որպես ԱՄՆ-ի շահերի պաշտպաններ՝ ամերիկյան դիվանագետները սովորել են հանդես գալ հաստատված դիրքորոշումներից:

ԱՄՆ-ի պաշտոնյաները կիրառում են են համագործակցային և մրցակցային բանակցությունների ռազմավարություն: Համագործակցային ձևի պարագայում դիվանագետները ընդգծում են դիմացինի դրական շահերը, ինչպես նաև փոխադարձ շահերը: Դա նրանց հնարավորություն է տալիս ծանրանալու ընդհանուր սպասումների և փոխադարձ շահերի վրա: Նրանց գործելակերպը բաց լինելն է հաղորդակցության համար, լսելու, պատասխանելու և օգտակար լինելու պատրաստակամությունը: Բանակցողն ավելի շատ զարգացնում է փոխադարձ ազդեցությունը, քան ուժային տարբերությունները:

Համագործակցային եղանակը, սակայն, միակ ուղին չէ: Ազդեցության համար պայքարը պետությունների միջև քաղաքականության հատկանշական առանձնահատկությունն է: Երբ շահերը բախվում են, ամերիկյան դիվանագետները կարող են հրաժարվել համագործակցությունից և ընդունել ավելի ընդդիմախոս մոտեցում: Բանակցությունների համագործակցային ձևը զիջում է իր տեղը մրցակցային ձևին, երբ բանակցություններն ընդհատվում են, և գերակշռում են կասկածամտության ու թշնամության զգացումները:

Ժողովրդական դիվանագիտություն

Ոչ պաշտոնական երրորդ կողմի միջնորդությունը նորություն չէ: Ոչ էլ նորություն է հակամարտող խմբերի տարբերությունները քննարկելու նպատակով դրանք հանդիպեցնելու գաղափարը: Պետական պաշտոնյաների հետ խորհրդակցելով՝ ժողովրդական դիվանագիտության նախաձեռնությունն էլ ավելի է արժևորում պաշտոնական դիվանագիտությունը: Ժողովրդական դիվանագիտությունը չի փոխարինում պաշտոնական դիվանագի-

տությանը: Սակայն դրա ճկունությունն օգնում է լրացնելու պաշտոնյաներին ներհատուկ սահմանափակումները:

Որպես խնդիր լուծելու ոչ պաշտոնական աշխատանք՝ ժողովրդական դիվանագիտությունը զարգացել է տասնամյակների ընթացքում առանձին քաղաքացիների մասնակցության շնորհիվ ծնված մտահղացումներով և լուծումների փորձերով: Մասնավոր անձինք հնարավորություն ունեն ստեղծագործաբար ուսումնասիրելու արմատական պայմանները, որոնք դառնում են հակամարտության պատճառ, և համատեղ ջանքերով մշակելու համատեղ ռազմավարություններ: Նպատակն է խթանել համագործակցությունը, որպեսզի հակամարտությունը դիտվի որպես ընդհանուր խնդիր, որը պահանջում է երկու կողմերի համագործակցություն[1:]

Անհատների կրիտիկական զանգվածը, ով հավատում է բռնության այլընտրանքին, կարող է խթանել դիվանագիտական գործունեությունը կամ ապահովել առկա դիվանագիտական ջանքերի առաջընթացը: Խաղաղության աջակցությունը ցույց է տալիս քաղաքական գործիչներին, որ նրանց քաղաքականությունը պատրաստ է փոխվելու, եթե անգամ իրենք պատրաստ չեն: Նույնիսկ երբ գործում են պաշտոնական դիվանագիտական ուղիները, ժողովրդական դիվանագիտությունը կարող է զորակցել իշխանությունների ներկայացուցիչների ջանքերին: Եթե պաշտոնական դիվանագիտությունը պարտություն կրի, ժողովրդական դիվանագիտությունը կծառայի որպես անվտանգության բարձիկ: Ժողովրդական դիվանագիտությունն ավելի ազդեցիկ է, երբ գործ ունի ժողովրդավարական իշխանության հետ, որը բաց է իր ընտրազանգվածի մտահղացումների և նախաձեռնությունների համար:

Բռնության շրջան

Հակամարտությունը սովորաբար ներառում է դաժան բռնությունների շրջան: Շատ հակամարտություններ խարսխված են ճանաչման կարիքի վրա, հատկապես եթե խմբային տրավմա գոյություն ունի: Պատմական կորուստը ինքնություն է կերտում, որն էլ իր հերթին միավորում է ցեղի անդամներին նրանց ընդհանրական տառապանքների միջոցով: Ինքնության, տրավմայի և վախի խնդիրները սովորաբար կազմում են հակամարտության հիմքը:

Անդրադառնալով զոհականացման հոգեբանությանը՝ Ջո Մոնթվիլը նշում է. «Մարդիկ անցնում են իրենց անվտանգության և ապահովության համար անհանգստության տարբեր մակարդակներով: Կառչելով ընտանի-

քին, աշխատանքին և հասարակությանը՝ մարդիկ ձևավորում են են մարմնական և հոգեբանական պաշտպանություն անսպասելի բացասական դեպքերի դեմ»: Լինելով վտանգված՝ անհատները կարող են դառնալ ավանդական մարդկային պաշտպանական մտածողությանը՝ ներառյալ բռնություններին: Նույնիսկ հալածողն է հակվում զոհի զգացմունքների՝ արդարացնելու իր գործած չարիքները: Երբ մի կողմի տանջանքները ճանաչվում են, և՛ զոհը, և՛ հալածողն ավելի ընդունակ են դառնում հասկանալու այլոց կարիքները[2:]

Վամիկ Վոլկանը նախաձեռնել է հոգեբանական աշխատանք՝ ուսումնասիրելով հակամարտության ծագման հիմքում ընկած մոտեցումները: Նա ծանրանում է հակամարտության հոգեկան դրամայի վրա՝ նպաստելով թշնամական հարաբերությունների մարդկայնացմանը, վիրավորանքները ճանաչելուն և ներողամտության խթանմանը: Վամիկը պնդում է, որ պատմական վերքերի ճանաչումը հակամարտության կարգավորման առաջին քայլն է: Հաջորդ քայլը պատասխանատվություն ստանձնելն է և զղջումը կորուստների համար: Փոխըմբռնումը կարող է հանգեցնել ներողության, որն էլ իր հերթին առաջընթաց և ապաքինում է ապահովում: Նա հավատում է, որ երկուստեք ճանաչման գործընթացը հիմք է ծառայում դատապարտումների, կրկնամեղադրանքների և բռնության շրջանը խզելու համար[3:]

Հասունացում

Ժողովրդական դիվանագիտությունը հատուկ նշանակություն է տալիս հասունության պայմաններ ստեղծելուն, որպեսզի հակամարտող կողմերը կարողանան առերեսումից անցնել կապերի հաստատման և ապա համագործակցության: Հակամարտության շարժընթացը ստատիկ չէ: Առաջընթացը կարող է արագացվել լարվածությունը թուլացնող միջոցների շնորհիվ: Լուծումներ հնարավոր չեն, եթե խնդիրը բավականաչափ հասունացած չէ լուծման համար:

1977թ. նոյեմբերին Քնեսեթին ուղղված իր դիմումի մեջ Եգիպտոսի նախագահ Անվար էլ-Սադաթն առաջընթաց ազդարարեց, բայց նշեց. «Կա ևս մեկ պատ: Այդ պատը հոգեբանական արգելք է ստեղծում մեր միջև, կասկածամտության, մերժման, վախի և խաբեության արգելք»[4]: Տասնվեց տարի անց իրավիճակը փոխվեց: 1994թ. հուլիսին Հորդանանի թագավոր Հուսեյնի հետ հանդիպելուց հետո նախագահ Իցհակ Ռավինը նկատեց, որ առաջընթաց կա, և հոգեբանական արգելքը հաղթահարվել է[5]:

Հակամարտող կողմերը պատրաստ են բանակցելու, երբ վստահ են, որ դա իրենց շահերից է բխում, երբ հոգնել են դաժանությունից կամ հուսախաբված են ստատուս քվոյից: Բանավիճողները պետք է հասնեն մի հանգրվանի, հասկանան, որ եղած վանդակը իրենց իրական շահերին չի նպաստում: Հակառակորդի հետ կապ հաստատելուց առաջ կարևոր է հավատալ, որ կարելի է լուծման հասնել, և վստահ լինել, որ երկուստեք ընդունելի համաձայնությունն իրատեսական է:

Հասունացում տեղի է ունենում, երբ գոյություն է ունենում համաձայնության հասնելու հզոր շարժառիթ, որի վրա ազդում են համատեքստի գործոնները, ինչպես նաև հակամարտության նկատմամբ անհատի սուբյեկտիվ մոտեցումը: Եթե նույնիսկ հակամարտության կողմերը երկխոսություն սկսելու ցանկություն են հայտնում, պետք է հաղթահարեն վարքագծային արգելքները: Արմատավորված թշնամությունն ու հաղորդակցության բացակայությունը սովորաբար սրվում են խնդիրը լուծելու անկարողությունից:

Կազմակերպման դերը

Ժողովրդական դիվանագիտության մեջ անփոխարինելի է փորձառու հաշտարարի առկայությունը: Հավուր պատշաճի միջնորդության ընթացք ապահովելու համար հաշտարարը պետք է հաղթահարի թերահավատությունը և վաստակի երկու կողմերի հարգանքը: Ակտիվ ունկնդրումը հնարավորություն է տալիս հաշտարարին տարբերելու կարիքներն ու դիրքերը: Դա նաև հնարավորություն է տալիս հաշտարարին խրախուսելու ուրիշի հեռանկարի ըմբռնումն ու վերասահմանելու հարցերը՝ ընդհանուր հայտարարն ընդգծելու նպատակով: Երկխոսության ընթացքն արդյունավետ վարելով՝ հաշտարարը կարող է հզորացնել կողմերի՝ համաձայնության հասնելու քայլերի դրդապատճառները:

Վստահություն ներշնչելու համար վարողը պետք է էականորեն տիրապետի բուն խնդիրներին: Նաև պետք է ձևավորի աշխատանքային լավ հարաբերություններ՝ խթանելով բաց համագործակցությունը, արձագանքելով առաջարկություններին և պահանջելով մեկնաբանություններ: Վստահություն ձեռք է բերվում, երբ հաշտարարը դիտվում է որպես հավասարակշռված և չեզոք անձ: Հաշտարարը վստահություն է ներշնչում, երբ լուսաբանում է հնարավորությունները և վստահեցնում կողմերին, որ կարող են գործել առանց իրենց դեմքը կորցնելու: Խնդրի լուծման համար համագործակցային միջավայր ստեղծելու պատասխանատվությունը հաշտարա-

րինն է: Երբ շփոթ է առաջանում, նա պետք է հստակություն մտցնի: Երբ հնարավորությունները նեղանում են, պետք է ընդլայնի դրանք: Երբ առաջարկություններ են հասունանում, պետք է աջակցի դրանց կենսունակության իրատեսական գնահատականի իրականացմանը:

Կարևոր է խուսափել դիլետանտությունից: Լանդրում Բոլինգը զգուշացնում է. «Երբ մասնավոր անձինք սկսում են ակտիվորեն միջնորդել կամ միջազգային դժվար խնդիրների լուծումներ փնտրել, պետք է իմանան, թե ինչ են անում»[6]: Որոշ դեպքերում ժողովրդական դիվանագիտություն նախաձեռնելու միայն մեկ հնարավորություն է լինում:

Ծրագրի մշակում

Ժողովրդական դիվանագիտությունը ճկուն մեխանիզմ է, որը հարմարեցվում է թշնամական իրավիճակին և արձագանքում հնարավորությանը: Ժողովրդական դիվանագիտության ծրագրի զարգացման փուլերն են՝ շփումը, հաղորդակցումը և համագործակցությունը: Քանի որ հակամարտությունները միանման չեն լինում, ընդհանուր մոտեցում գոյություն չունի: Ձանքերն ու գինն արդարեցնելու համար ժողովրդական դիվանագիտությունը պետք է գործուն լինի, կանխատեսելի և նպատակաուղղված:

Ժողովրդական դիվանագիտության ծրագրի մշակումը սկսվում է վիճաբանող կողմերի կարիքների, արժեքների և շահերի խոր վերլուծությունից: Հաշտարարը պետք է ծրագրերի մշակման փորձ ունենա, ինչպես նաև՝ մշակույթին և գործին առնչվող այլ պայմանների իմացություն: Հակամարտության նրբությունները հասկանալու համար անհրաժեշտ է խորը ուսումնասիրություն, ինչպես նաև անձնական շփումներ: Գիտական ուսումնասիրության հետ մեկտեղ կարևոր է այցելել համապատասխան երկրներ՝ հակամարտության բոլոր կողմերի հետ կապեր հաստատելու համար: Օգտակար է նաև հարցազրույց վերցնել պետական այն պաշտոնյաներից, ովքեր ներառված են խնդրի մեջ: ԱՄՆ-ի դեսպանի հետ հարցազրույցից բացի, պետք է հարցազրույցներ վերցնել դեսպանատան տարբեր բաժինների աշխատակիցներից, ներառյալ քաղաքական, տնտեսական և հասարակական գործերի հավատարմատարները: Այլ շահագրգիռ կառավարությունների պաշտոնյաների հետ հանդիպումը նույնպես կարևոր է: Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունը խորաթափանց վերլուծություն է իրականացնում: Նորվեգիան և զարգացման աջակցության բյուջեներ ունեցող այլ երկրներ նոր հեռանկարներ են առաջարկում:

Ուսումնասիրությունը նաև պետք է գնահատի միջազգային շահագր-

գիռ կողմերի դերը, լինեն դրանք բազմակողմանի կազմակերպություններ, կառավարություններ, ձեռնարկություններ թե հասարակական կազմակերպություններ, որոնք ազդում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման կարևոր դերակատարների գործելակերպի վրա: Շահագրգիռ կողմերի գնահատումն օգնում է որոշելու գործընթացի մեջ ներգրավված այլ միջնորդների ջանքերը: Կարևոր է խուսափել աշխատանքների կրկնություններից և համոզվել, որ ժողովրդական դիվանագիտության գործունեությունը չի շեղում գործունեության այլ նախաձեռնություններից

Կառուցվածք

Ժողովրդական դիվանագիտության հետևյալ մեխանիզմները կարող են կիրառվել առանձին կամ համակցված.

- *Պահեստային ուղիները* պաշտոնապես լիազորված են հաղորդագրություններ փոխանցելու կամ բանակցություններ վարելու, երբ պաշտոնական հաղորդակցության մեթոդներն անարդյունավետ են: Սակայն ժողովրդական դիվանագիտությունն առհասարակ գաղտնի ընթացակարգ չէ, որն ուղղված է պաշտոնական դիվանագիտության ջանքերը լրացնելուն: Դիվանագետները տանել չեն կարող անակնկալները և չեն վստահում ոչ պաշտոնական միջնորդություններին, որոնք գործում են առանց իրենց իմացության:

- *Քաղաքականության ֆորումը* հիմք է պատրաստում պաշտոնական քննարկումների համար՝ ապահովելով պաշտոնական բանակցությունները խթանող նոր մտահղացումներ: Բանակցությունները միշտ առաջընթացի խիստ կարիք են զգում և դժվար թե նահանջի՝ ապագա փոխշահավետ հարաբերությունների պատկերացումների սահմանման հնարավորություն ունեն: Քաղաքականության ֆորումը ենթադրում է պաշտոնական օրակարգ դեռևս չմտած հեռանկարային խնդիրները տեսնելու և քննարկման ժամանակ փորձված այլընտրանքներ սահմանելու գործառույթ: Այն կարող է պաշտոնական բանակցությունների համար կամ որպես նախաբան ծառայել, կամ որպես օժանդակություն: Այն նաև գործում է որպես անվտանգության բարձիկ: Եթե որևէ իրադարձություն խզում է դիվանագիտական հարաբերությունները, ապա քաղաքականության ֆորումը կարող է նպաստել երկխոսություն սկսելուն կամ վերածվել պահեստային ուղու:

- *Լրատվական խումբը* կենտրոնանում է «մյուսի» պատկերների վրա, որպեսզի նվազեցնի բռնությունն արդարացնող բացասական կարծրատիպերը: Մերձեցման համար անհրաժեշտ է, ձևավորել նպաստավոր հանրային կարծիք: Հակամարտության կարգավորման լրատվությունը ներառում է համատեղ ստեղծված նորություններ, փաստագրություն և երեխաների հեռուստատեսություն: Հակամարտության կարգավորման ռադիոն լուսաբանում է նորությունները՝ դրամատիկական և հեռաձայնման այլ ձևաչափերով: Տպագիր լրատվությունը մատուցում է միացյալ հոդվածներ, երկհեղինակ առաջնորդող հոդվածներ, երկկողմանի մեջբերման ծառայություններ, կադրերի փոխայցելություններ և տեղեկատվության թեժ գծեր: Այն նաև օգտագործվում է հասարակական կարծիք ձևավորելու նպատակով, որը քաղաքական ղեկավարների համար անվտանգ է դարձնում ռիսկը և թափանցիկության ընդլայնումը իշխանություններին պատասխանատու պահելու համար:

- *Տեխնիկական համագործակցությունը* զարգացնում է փոխադարձ շահեր մասնագետների միջև և ընդգծում է իրական առավելություններ: Համագործակցությունը ստեղծում է կապեր, ջնջում է ազգային սահմանները և կանխում է թշնամական պատկերները: Ժողովրդական դիվանագիտությունը, որ ներառում է բիզնեսի ղեկավարների, հաճախ դառնում է համագործակցող տնտեսական զարգացման առաջարկների արդյունք: Հակամարտության տնտեսական ազդեցության վրա կենտրոնանալով՝ բիզնեսի ղեկավարները ունակ են տեսնելու համագործակցության գործնական առավելությունները: Նրանք կարևոր հաճախորդներ են՝ քաղաքական առաջնորդների վրա ազդելու ունակությամբ:

- *Հոգեբանական աշխատանքային կենտրոնը* ուսումնասիրում է անհատականության, տրավմայի և վախի խնդիրները, որոնք կազմում են հակամարտության հիմքը: Հակամարտությունը հաճախ խարսխված է ճանաչման կարիքի վրա, մանավանդ երբ խմբային տրավմա է առաջանում: Հոգեբանության աշխատանքային կենտրոնը առաջարկում է հաշտեցված միջավայր՝ ախոյանական հարաբերությունները մարդկայնացնելու, բողոքները ճանաչելու և կորուստները ողբալու համար: Փոխըմբռման փորձը խզում է դատապարտման, կրկնահանցանքի և բռնությունների փակ շրջանը: Այն կարող է հանգեցնել ներողության, ինչն էլ իր հերթին հանգեցնում է զարգացման ու առողջացման: Հոգե-

բանության աշխատանքային կենտրոնի արդյունքները պետք է տարածվեն լրատվության միջոցով՝ ախոյանական կարծիքի վրա ազդելու և քաղաքականության ֆորումի գործողությունների մասին տեղեկացնելու համար:

Ժողովրդական դիվանագիտության այլ աշխատանքներ են հասարակ քաղաքացիների ցանցերը և միջանձնային կապերը:

Մասնակիցներ

Խմբում փոխադարձ ձգողությունը կարևոր է: Անձնական կապերի կարելի է հասնել ոչ միայն կառուցված քննարկումների միջոցով: Ախոյաններն իրար ճանաչում են հաղորդակցության միջոցով: Ճանաչելով միմյանց՝ նրանք կարող են ցանկալի միջոցով վերացնել բացասական տեսիլքները և գտնել բռնություն կիրառելու այլընտրանքներ՝ վեճերը լուծելու համար: Սովորաբար սկզբում մասնակիցները վստահություն ձևավորելու, գործնական քայլեր գտնելու և երկուստեք ընդունելի արդյունքները ուսումնասիրելու համար հանդիպում են չեզոք վայրում կամ երրորդ երկրում:

Հաշտարարը պետք է մշակի մասնակիցության չափանիշները և դիմակայի քաղաքական ճնշումներին՝ պահպանելով մասնակիցների ընտրության վերջնական իրավասությունը: Փորձելով ազդել քաղաքականության վրա՝ մասնակիցները պետք է քաղաքական լավ կապեր և մուտք ունենան իրենց իշխանությունների մոտ ու քաղաքական կուսակցություններում: Իշխանությունները փոխվում են, ուստի մասնակիցները պետք է շարժվեն քաղաքական սպեկտրով: Մասնավոր քաղաքացիներն ավելի մեծ հանդուրժողականություն ունեն ՝ քննադատելու գոյություն ունեցող քաղաքականությունը և օգնելու պաշտոնյաներին հասկանալ իրողությունները:

Մասնակիցները զբաղված մարդիկ են՝ իրենց ժամանակի սահմանափակումներով: Նրանք պետք է զգան, որ իրենց աշխատանքը ինչ-որ արդյունք է տալու: Ցանկալի են այն մասնակիցները, որոնց հետ հաշտարարն անձնական կամ ինստիտուցիոնալ հարաբերություններ ունի: Չնայած հնարավոր է, որ ժողովրդական դիվանագիտության գործընթացում այնպիսի շահեր ի հայտ գան, որոնք հակասեն կարգավորմանը, սակայն մասնակիցները պետք է նվիրված լինեն մերձեցմանը: Չար մտադրություն ունեցող անձինք կարող են խաթարել խմբի դինամիկան և վերացնել հաշտեցման նպատակը: Թեև ժողովրդական դիվանագիտության փորձը ցանկալի է, այնուամենայնիվ պետք է խուսափել «նույն դեմքերից»:

Վարող

Լավ վարողն օգնում է մասնակիցներին տեսնելու համագործակցության նոր հնարավորություններ: Մասնակիցների հետ քննարկման ժամանակ վարողը (հաշտարարը) գնահատում է հակամարտության կարգավորման հասունության աստիճանը: Հաշտարարը վստահություն է ճառագում՝ աշխատելով իրագործելի նպատակների իրականացման ուղղությամբ և ցուցաբերելով վստահության ու հարգանքի արժանի հատկանիշներ: Կարևոր է վաղ փուլում հաստատել վստահությունը՝ մասնակիցների հետ սերտորեն աշխատելով և ցուցադրելով որոշակի արդյունքներ:

Հաշտարարը պետք է լեզուների լավ իմացություն ունենա, ինչպես նաև միջանձնային և վարման հմտություններ: Հնարավոր է, որ հաշտարարը բոլոր հարցերի պատասխանները չունենա: Նրան կարող է մասնագետ միանալ՝ համապատասխան մասնագիտական հավատարմագրով: Մասնագետը դառնում է ռեսուրսային անձ, որ ակտիվորեն մասնակցում է քննարկումներին և, եթե հարկավոր է, ղեկավարում խումբ ստեղծելու և ուսուցանելու աշխատանքներ:

Խաղի կանոններ

Ուժեղ ղեկավարությունը հատկապես կարևոր է նախագծի սկզբնական խոցելի փուլերում, երբ որոշվում են նպատակները, կազմվում՝ օրակարգերը և ամփոփվում ընթացակարգերը: Մասնակիցներին ներշնչելով ընթացակարգի հանդեպ սեփականության զգացում՝ հաշտարարը չպետք է հանձնի ղեկավարության կամ որոշում կայացնելու իրավասությունը:

Ընթացակարգերը պետք է քննարկվեն և արժանանան խմբի հավանությանը: Մասնակիցները պետք է հետևեն հիմնական ընթացակարգերին, ինչպիսիք են հարգանքի դրսևորումը և մյուսներին առանց ընդհատելու լսելը: Որպես խումբ միասին աշխատելը նպատակներ սահմանելու համար և ռազմավարություններ որոշելը նպաստում են ընդհանուր նպատակի զգացողությանը: Նախկին կամ համեմատելի ջանքերը պետք է գնահատվեն, որպեսզի բացառվի կրկնությունը:

Ֆիզիկական միջավայրը ազդում է մասնակիցների կեցվածքի վրա: Սկզբնական հանդիպումները պետք է անցկացվեն չեղոք հողի վրա և հարմարավետ միջավայրում: Հանդիպումները պետք է լինեն բավականին երկար, որպեսզի առարկայական լինեն, բայց ոչ այնքան երկար, որ հնարավորություն տան մասնակիցներին սևեռվելու անհամաձայնությունների վրա:

Հնարավոր է՝ երբեմն ցասում և ատելություն առաջանան: Մասնակիցներին պետք է հնարավորություն տրվի արտահայտելու իրենց զգացմունքները: Ազատ արտահայտվելու հնարավորություն տալով՝ հաշտարարը չպետք է թույլ տա, որ զրույցը չափազանց թշնամական դառնա: Կառուցված քննարկումների հետ մեկտեղ օրակարգը պետք է ընդգրկի հանգստի դադարներ, որպեսզի հանդիպման մասնակիցները հնարավորություն ունենան շփվելու պաշտոնական քննարկումներից դուրս: Երբ մասնակիցներին խանգարում են նրանց նեղ կանխակալ կարծիքները, հրավիրված նշանավոր մարդիկ կարող են ոգեշնչել և շարժառիթներ ստեղծել:

Հաղորդակցման ռազմավարություն

Հաշտարարը պետք է ստեղծի խաղի կանոնները, որոնք կապահովեն խորհրդապահությունը և արձանագրումը: Օգտակար է գրի առնել քննարկումները, որպեսզի համաձայնությունները լուսաբանվեն և պարտականությունները՝ դասակարգվեն: Սակայն հանդիպման արձանագրությունից պետք է խուսափել, քանի որ այն խանգարում է ազատ քննարկմանը: Չնայած խորհուրդ է տրվում շարադրանք կամ համատեղ հայտարարություն պատրաստել, այն կարող է խոչընդոտ կամ անհամաձայնության առարկա դառնալ: Եթե համատեղ տեքստի մշակումը կարող է երբեմն կենտրոնացնել քննարկումները, ապա ղեկավարի հայտարարությունը սովորաբար ամենաարդյունավետ ձևն է գրառումներ անելու, պարտականություններ պարզաբանելու, ընդհանուր կանոններ հաստատելու համար:

Տեղեկատվությունը պետք է ռազմավարական նկատառումով տարածվի, որպեսզի զարգացնի ծրագրի նպատակները նախաձեռնության տարբեր փուլերում: Լրատվական ուղեցույցն օգնում է խուսափելու խեղաթյուրումից և թյուրիմացությունից: Մասնակիցները պետք է.

- հրապարակեն սկզբնական հայտարարություն՝ մանդատի և իրավասության հարցերի վերաբերյալ,
- պահեն գործողությունների և քննարկումների գաղտնիությունը, եթե այլ պայմանավորվածություն չկա,
- տեսակետները ներկայացնեն անհատապես, ոչ թե ողջ խմբի անունից,
- մինչ խմբին դիտողություն անելը հայցել երկու կողմերի համաձայնութ-

յունը, և մինչ որևէ անհատի դիտողություն անելը, հայցել նրա համաձայնությունը,

- խմբի ջանքերի և անդամների վերաբերյալ խոսել կամ գրել կառուցողական,
- յուրաքանչյուր և բոլոր խնդիրները ներկայացնել ճշտգրիտ,
- ուշադրություն հրավիրել հաշտարարի այն հայտարարությունների կամ գրառումների վրա, որոնք անհամատեղելի են համաձայնեցված լրատվական սկզբունքների հետ, որպեսզի հաշտարարը կարողանա ձեռնարկումները ներկայացնել խմբին:

Իշխանությունների հետ կապեր

Ժողովրդական դիվանագիտության ամենակարևոր նպատակը քաղաքականություն կերտելն ու իրադարձությունների վրա ազդեցություն ունենալն է: Այս նպատակով ժողովրդական դիվանագիտությունն ուշադրություն է դարձնում քաղաքականություն մշակողների և հանրային կարծիք ձևավորողների վրա: Ինչպես պաշտոնական դիվանագիտությունը, ժողովրդական դիվանագիտությունը նույնպես ազդեցություն է կրում պաշտոնական տրամադրություններից: Երբ պաշտոնական հարաբերությունները ջերմ են, իշխանությունները խրախուսում են գործընկերների աշխատանքը, հանձնարարվում է ավելի ստեղծագործաբար հետազոտել խնդիրները: Նմանապես, պաշտոնական հարաբերությունների սառեցումը սահմանափակում է ժողովրդական դիվանագիտության մասնակիցների հնարավորությունները:

Իշխանությունների հետ կապ հաստատելը հեշտ խնդիր չէ: Մի կողմից՝ Միացյալ Նահանգների և այլ կառավարությունների պաշտոնյաների հետ կապ հաստատելն ընդլայնում է հնարավորությունների սահմանները՝ ստեղծելով ազդեցության ընկալում: Մյուս կողմից՝ անկողմնակալության ապահովման համար կարևոր է իշխանությունից անկախ դիրքորոշումը: Դեպի որոշումների կայացման գործընթացը դուռ բացելու համար համակարգողը պետք է կապ պահպանի իշխանությունների ներկայացուցիչների հետ: Աշխատանքային մակարդակի կապի պահպանումը ապահովում է պաշտոնական բյուրոկրատիայի ուշադրությունը:

Չնայած կարևոր է պաշտոնյաների հետ կապի պահպանումը, սակայն

ժողովրդական դիվանագիտությունը պետք է պահպանի անկախությունն իշխանություններից: Երբ կարծիք է ստեղծվում, որ մասնակիցները գործում են իրենց իշխանությունների անունից, նրանց ջանքերն ապարդյուն են: Երկխոսությունը, որը պարզապես կրկնում է այն, ինչ ասվում է պաշտոնական բանակցություններում, ժողովրդական դիվանագիտության ձևաչափում կարճ կյանք ունի: Մասնակիցները պետք է անկախ լինեն իրենց իշխանություններից: Նույնիսկ այնպիսի անձանց մասնակցությունը, ովքեր կառավարության խորհրդականներ են, կարող է հարցականի տակ դնել գործունեության անկախությունը և օրինականությունը:

Միջանկյալ դիվանագիտությունն այն է, երբ պետական պաշտոնյաները հանդիպում են մասնավոր կարգավիճակով մի ֆորումում, որը վարում է չեզոք հասարակական կազմակերպություն: Այս եզրույթն օգտագործվում է նաև բնութագրելու համար խորհրդարանականների հանդիպումները, ովքեր, որպես քաղաքական գործիչներ, իրենց երկրների իշխանությունների կողմից լիազորված անձինք չեն, միաժամանակ քաղաքացիական հասարակության հասարակ ներկայացուցիչներ չեն: Միջանկյալ դիվանագիտությունը կարող է կիրառվել, երբ բացակայում է քաղաքական կամքը, կամ՝ որպես անցում ժողովրդական դիվանագիտությունից պաշտոնական դիվանագիտության:

Ֆինանսավորում

Միջոցների հայթհայթումը մշտական խնդիր է: Չնայած իշխանությունների և առանձին դրամաշնորհ հատկացնողների աջակցությունը ողջունելի է, նրանց վերահսկելու իրավասություն չի տրվում: Պաշտոնյաների մեքենայությունները հանգեցնում են նրան, որ ժողովրդական դիվանագիտությունը ժամանակի կարուստ է դառնում, կամ կառավարություններն են այդ աշխատանքով զբաղվում: Քննադատները կարող են մեղադրել պաշտոնական հովանավորին ժողովրդական դիվանագիտությունը որպես անմիջական բանակցություններից խուսափելու կամ քաղաքականապես դժվար որոշումներին փոխարինող միջոց օգտագործելու մեջ:

Ժողովրդական դիվանագիտությունը կսայթաքի, եթե վարկաբեկվի որևէ մասնակցի կամ կազմակերպողի կողմից: Դրամաշնորհներ չպետք է ընդունվեն որևէ հովանավորի կողմից, ով արդյունքից անմիջական շահ ունի: Քաղաքական հարկադրանքից խուսափելու համար ֆինանսավորումը պետք է տարբեր աղբյուրներից ապահովվի: Հնարավոր ֆինանսավորողներ են այդ հարցով շահագրգիռ կառավարությունները, ինչպես նաև առան-

ձին դրամաշնորհ հատկացնողները:

Ֆինանսավորման որոշումները սովորաբար ընդունվում են տեղում: Որոշ դեսպանատներ հայեցողական հիմնադրամներ ունեն փոքր դրամաշնորհներ տրամադրելու համար: Եթե անգամ մեծ նպաստների մասին որոշումներն ընդունվում են կենտրոնակայաններում, պետական պաշտոնյաները միշտ փորձում են ներթափանցել դեսպանատան կամ նման դաշտի աշխատակազմ: Նույնը վերաբերում է մասնավոր դրամաշնորհներ հատկացնողներին, ովքեր սովորաբար որոշումների կայացման ապակենտրոնացված համակարգ ունեն:

Ժողովրդական դիվանագիտության մասնակիցները պետք է վստահ լինեն, որ հովանավոր կազմակերպությունը համապատասխան միջոցներ ունի լուրջ պարտավորություն ստանձնելու համար: Եթե սկզբնական պայթունավտանգ նիստերը հաջող անցնեն, ապա միջոցներն անհրաժեշտ կլինեն շարժիչ ուժ ստեղծելու համար՝ արագորեն գումարելով հաջորդ ժողովը: Սկզբնական ֆինանսավորումը պետք է հաշվի առնի մի քանի հանդիպումների ծախս:

Անձնակազմի ստեղծում

Ծրագրի արդյունավետ կառավարումն ամենից լավ իրականացնում է այնպիսի մասնագետների խումբը, որի անդամների փորձառությունը փոխլրացնող է: Ծրագրի ղեկավարը պետք է քաղաքականությունը լավ ըմբռնի և լավ կապեր ունենա: Նա պետք է կարողանա գործունեությունը համահունչ դարձնել պաշտոնական քաղաքականությանը և ծրագրի մշակման, իրականացման և գնահատման փորձ ունենա: Կենտրոնակայանի գործունեությունից զատ տվյալ դաշտում գործունեություն ծավալելն ու ներկայություն պահպանելն օգնում է խնդիրների լուծմանն ու ծրագրի կառավարման ընդլայնմանը:

Միջառարկայական անձնակազմը հարկավոր է դժվար միջազգային ծրագրեր իրականացնելու համար: Ծրագրի ղեկավարը ապահովում է ռազմավարական ուղղվածությունը և կապ հաստատում քաղաքականություն մշակողների և ֆինանսավորողների հետ: Հաշտարարը ձևակերպում է աշխատակազմի հանդիպումները և կառավարում երկխոսությունը: Տեխնիկական մասնագետը աշխատանքային խմբերին աջակցում է տեղեկատվությամբ և ուսուցմամբ: Քարտուղարությունը վարում է կազմակերպչական աշխատանքները, իրականացնում գործերի կառավարումը, պահպանում ծրագրի տվյալների շտեմարանները, տարածում նյութեր, պահպանում

հաղորդակցությունները և համակարգում ուղևորությունները: Քարտուղարությունը նաև ուսումնասիրություններ է վարում և տվյալներ հավաքում քաղաքացիական հասարակության կապերի և համագործակցային ծրագրերի վերաբերյալ: Տվյալների շտեմարանը ցուցադրում է առաջընթացը և արձանագրում հակամարտության կարգավորման ժողովրդական դիվանագիտության համայնքի ձևավորումը:

Թուրքիայի և Կովկասի ժողովրդական դիվանագիտության ծրագրի դասերը օգտակար կլինեն հետագա համանման նախաձեռնությունների համար: Վաղաժամ հրապարակայնությունը առաջընթացի թշնամին է: Գաղտնապահությունը կարևոր է սկզբնական շրջանում, կարևոր է նաև հետագայում լրատվության զգույշ կառավարումը: Վերահսկումից դուրս մնալով՝ դեպքերը կարող են անխուսափելիորեն խզել առաջընթացը: Հարկավոր է ճկուն լինել արտաքին միջոցառումների ժամանակ ռազմավարություններ ընդունելիս: Ժողովրդական դիվանագիտությունը չարժե դրա վրա ծախսված ժամանակն ու միջոցները, եթե որևէ արդյունքի չհասնի: Թեպետ գործողությունները պետք է համակարգվեն խնդրով շահագրգիռ կառավարությունների կողմից, հարկավոր են միջոցառումներ պաշտոնական շահարկումներից խուսափելու համար:

Զուգահեռ դիվանագիտությունը շատ հազվադեպ է մեծ նվաճումների հասնում: ՀԹՀՀ-ն ապացուցվեց, որ հաշտեցումը ցավալի և դժվարին գործընթաց է՝ լի ծուղակներով: Այն նման է հեծանիվ վարելուն: Ընկնում ես, երբ ոտնակները չես սեղմում:

Ծանոթագրություններ

1. Հերբերտ Քելման, Հակամարտության լուծման մեջ խնդիրների լուծման աշխատանք, «*Անոֆիշլ Դիփլոմեթս»,* փոփոխված Մորին Բերմանի և Ջոզեֆ Ջոնսոնի կողմից, Կոլումբիայի համալսարանի մամուլ, 1977:
2. Ջոզեֆ Մոնթվիլ, Տրանսնացիոնալիզմը և ժողովրդական դիվանագիտության դերը, *Approaches to peace: An intellectual map*, փոփոխված Վ. Սքոթ Թոմսոնի և Քենեթ Ջենսենի կողմից, Խաղաղության մամուլի ամերիկյան հաստատություն, 1991:
3. Վամիկ Վոլկան, Թշնամիներ և դաշնակիցներ ունենալու կարիք. զարգացողական մոտեցում, *Political Psychology,* 1985, հունիս:

4. Նախագահ Էլ-Սադաթ, Քնեսեթ, Երուսաղեմ, 1977թ. 20 նոյեմբերի:
5. Վաշինգտոնի հռչակումը, 1994, 25 հուլիսի և White House Press Release. Office of the Press Secretary, 1994, 25 հուլիսի:
6. Լանդրում Բոլինգ, "Strengths and Weaknesses of Track Two: A Personal Account", *Conflict Resolution: Track Two Diplomacy,* փոփոխված Դիանա Բենդահմեյնի և Ջոն Մակդոնալդի կողմից, Արտաքին գործերի ուսումնասիրման կենտրոն, Արտաքին ծառայության Ինստիտուտ, Government Printing Office, 1987:

ՎԵՐՋԱԲԱՆ

Աշխույժ երթևեկությունը հարկադրեց հապաղել Ստամբուլի կենտրոնական փողոցներից մեկում: Մի քանի հայերի ուղեկցությամբ վերադառնում էինք հյուրանոց, երբ նրանցից մեկը շրջվեց և հարցրեց. «Դու հավատում ես, որ ցեղասպանություն եղել է, չէ՞»:

Նրա հարցը զարմացրեց ինձ: Որպես հումանիտար գործիչ՝ բարեկամական զգացումներ եմ տածում անբարեբախտ մարդկանց նկատմամբ: Իմ անձը հակադրվում է բարոյական համարժեքությանը՝ դժվարացնելով զոհի և հալածողի, իսկության և սխալի տարանջատումը: Ես կցկտուր բացատրեցի, որ չեմ կարող օբյեկտիվ միջնորդ լինել՝ կանխակալ կարծիք ունենալով թե՛ մեկ, թե՛ մյուս կողմի նկատմամբ: Իմ միակ խնդիրն այս երկու ազգերի տարաձայնությունների քննարկման, անցյալի ճանաչման և առաջ շարժվելու գործին նպաստելն էր: Աշխատանքս սահմանափակվում էր քաղաքականապես ազդեցիկ մարդկանց կողմից նոր հասկացություններ, պատկերացումներ և գաղափարներ մշակելու դաշտի ստեղծմամբ:

Թուրքիայի և Կովկասի ժողովրդական դիվանագիտության ծրագրի ընթացքում տպավորված էի մասնակիցներից շատերի կամքով և խիզախությամբ: Նրանք եռանդուն կերպով աշխատում էին հաշտեցման նպատակի առաջխաղացման ուղղությամբ: Շատերն արժանապատվորեն և բարեհաճ էին մոտենում խնդրին: Մյուսները նվազ վստահելի էին, խանգարող և նույնիսկ ստոր:

Սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունները և իրաքյան պատերազմը խիստ բացասաբար անդրադարձան գործադրված ջանքերի վրա: Ի լրումն՝ աշխատանքները հղի էին տեխնիկական խնդիրներով: Թռիչքները չեղյալ էին հայտարարվում, անցագրերը հետաձգվում էին, հիվանդությունը՝ տարածվում:

Թուրքերն ու հայերը փորձում էին նախատրամադրել ինձ և համոզել այս կամ այն կողմի դիրքորոշման արդարացիության հարցում:

Երկու կողմն էլ ինձ նայում էին կասկածամտությամբ իրենց կողմնորոշմանը չհակվելու պատճառով: ՀԹՀՀ-ն լավ չէր տնօրինում ԶԼՄ-ների հետ իր հարաբերությունները: Հանձնաժողովի անդամները առաջացնում էին խնդիրներ՝ խոսելով միմյանց հետ մամուլի միջոցով: Հաղորդակցությունը վատթարացնում էր հանդիպումները, և բուն գործունեությանը փոխարինելու էին գալիս վիրավորանքի կամ վնասի կանխարգելման փորձերը: Թեև խեղաթյուրումից ու տարակարծություններից խուսափելու համար ՀԹՀՀ-ն հաստատում էր ԶԼՄ-ների սկզունքները, դրանց որդեգրումը չափազանց ուշացած էր:

ՀԹՀՀ-ի որոշ անդամներ պարզապես արհամարհում էին դրանք: Վերահսկողության արդյունավետ մեխանիզմ գոյություն չուներ:

Միայնակ փնտրտուքը դժվար է և ցավագին: Ապրել եմ նման մի քանի իրավիճակներ: Երբ ուզում էի հեռանալ, գործընկերներս սուր ընդվզումով էին մոտենում այդ որոշմանը: Նրանք պնդում էին, որ անկախ ամեն ինչից, կարևորը դիմակայելն է և առաջ շարժվելը: Ի վերջո, զգում եմ՝ շատ բան եմ սովորել իմ մասին և վաստակել եմ այնքան, որքան ներդրել եմ գործընթացում: Չնայած իմ լավատեսությանը՝ կարևոր է իրատես լինել ժողովրդական դիվանագիտության օգտակարության հարցում: Միշտ համոզված եմ եղել, որ ժողովրդական դիվանագիտությունը չի կարող փոխարինել պաշտոնական դիվանագիտությանը: Սակայն ժողովրդական դիվանագիտությունը քաղաքականության վրա ազդելու նպատակով բարձրաստիճան պաշտոնյաների հետ հաղորդակցվելու հիմքեր ունի: Ժողովրդական դիվանագիտության ծրագիրը աննախադեպ հնարավորություն էր ստեղծում՝ շփվելու պետական և քաղաքական այրերի հետ: Դրա թերացումը պայմանավորված էր նաև նրանով, որ ԱՄՆ-ի կառավարությունը, այլ գերակայություններից ելնելով, արհամարհեց մեր ջանքերը: Ազնիվ ինքնաքննադատությունը հուշում է, որ վստահությունը ԱՄՆ-ի պաշտոնյաների աջակցության նկատմամբ չափից ավելի էր:

Հաշվի առնելով այս սահմանափակումները՝ որևէ մեկը չէր կարող կանխատեսել գործընթացի նման արագ և ծավալուն զարգացումը: Կան ձեռքբերումներ, որոնք անհնար է չնկատել: Երբ ՀԹՀՀ-ն ձեռնարկվեց, չկար որևէ դիվանագիտական կապ թուրք և հայ պաշտոնյաների միջև: Սահմանները փակ էին, իսկ Թուրքիայի անցագրերի ձեռքբերումը՝ գրեթե անհնար: Պատմության ծանր բեռը ծառացել էր երկու ժողովուրդների ուսերին: Հարաբերությունները կարելի էր բնորոշել մեկ բառով՝ անվստահություն:

ՀԹՀՀ-ն.

- հաստատեց կառուցողական երկխոսություն և բացեց դռները քաղաքացիական հասարակության հայ և թուրք ներկայացուցիչների համար.
- խթանեց դիվանագիտական կապը թուրք և հայ պաշտոնյաների միջև.
- (ցեղասպանության հարցի լուծման նկատառումներով) իր գործունեությամբ սկիզբ դրեց Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի հետ աշխատանքներին.
- առաջադրեց սահմանի բացման սկզբունքային ու պայմանագրային հիմքեր կրող մոտեցում: Չնայած առաջընթացին՝ հարաբերությունները Թուրքիայի և Հայաստանի, ինչպես նաև Ադրբեջանի և Հայաստանի միջև մնում են անկայուն: Տարակարծությունները հեշտությամբ կարող են ապահովել զարգացումների հետընթացը կամ նպաստել բռնության ելք թելադրող իրադարձությունների:

Սույն գրքում շարադրվում է ՀԹՀՀ-ի պատմությունը: Հուսով եմ՝ այն կծառայի նաև որպես թուրքերի և հայերի միջև շարունակական երկխոսության խթան: Ժողովրդական դիվանագիտությունը գործընթաց է, ոչ իրադարձություն: ՀԹՀՀ-ն քանդեց «ամբարտակը», ինչի արդյունքում հազարավոր թուրքեր և հայեր կարող են աշխատել՝ համատեղելով միմյանց շահերը: Երբ 1999թ. Մարկ Գրոսմանն ինձ՝ որպես խորհրդատուի, աշխատանքի վարձեց, հույս ուներ ուղղորդել ժողովրդական դիվանագիտությու-

նը՝ որպես դիվանագիտության ընդունված տեսակ: 2002թ. սեպտեմբերի 23-ին, նա դիմեց մեծ թվով ՀԿ ներկայացուցիչների, որոնք ներկա էին նախարարի՝ ժողովրդական դիվանագիտությանը նվիրված ֆորումին:

Նա ասաց. «Հավատում եմ, որ (ժողովրդական դիվանագիտությունը) կընդլայնի մեր դիվանագիտությունը»: Մենք Պետդեպարտամենտում ուզում ենք մշտապես բաց լինել նորարարությունների և գործընկերության համար: Տարիներ շարունակ իմ ժողովրդական դիվանագիտության գործնական փորձը, ուղղորդվել է Դեյվիդ Ֆիլիպսի ղեկավարությամբ: Առաջին անգամ ժողովրդական դիվանագիտություն վարել եմ Թուրքիայում թուրքերի և քրդերի, թուրքերի և հույների, իսկ այնուհետև թուրքերի և հայերի միջև: Ժողովրդական դիվանագիտության՝ որպես մեր դիվանագիտության էական մասի հնարավորությունները անսպառ են թվում»: Գրոսմանի՝ այս փաստի ճանաչումը մեծ պատիվ էր: Խորապես շնորհակալ եմ ԱՄՆ կառավարությանը ժողովրդական դիվանագիտության սատարելու համար: Հայ-թուրքական սահմանը մի օր կբացվի, և կհաստատվեն կարգավորված հարաբերություններ: ՀԹՀՀ-ն հանդիպել է բազմաթիվ խոչընդոտների, սակայն հանձնաժողովի անդամները հաստատակամ շարունակել են գործունեությունը: Չնայած դժվարություններին՝ դինամիկ գործընթացի մաս կազմելու ցնծությունը շատ ավելին է, քան անխուսափելի հուսահատության պահերը:

Ծանոթագրություններ

1. Քաղաքական հարցերի պետքարտուղարի տեղակալ Մարկ Գրոսմանի դիտարկումները Նախարարի ֆորումի ընթացքում (սեպտեմբերի 23, 2002թ.):

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայ-Թուրքական հաշտեցման հանձնաժողով

Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման
հանձնարարականները համապատասխան
կառավարություններին (ապրիլի 14 , 2004թ.)

Ներածական մաս

Հայ-Թուրքական հաշտեցման հանձնաժողովը (ՀԹՀՀ) ձևավորվել է Ժնևում 2001թ. հուլիսին՝ Հայաստանի և Թուրքիայի, հայերի և թուրքերի հարաբերությունների բարելավման հստակ նպատակով: Այս նպատակներին հասնելու հիմնարար մեխանիզմը շփումների հաճախականացումն է և՛ կառավարական և՛ ոչ կառավարական մակարդակներում: Նշանակալի առաջխաղացումներ են գրանցվել՝ սկսած 2001 թվականից: Այդ զարգացումները եղել են առավել տեսանելի քաղաքացիական հասարակության ոլորտում, որտեղ ուղղակի կապի ամենաբարդ խոչընդոտները ալևս անցյալում են, իսկ համերաշխության գործընթացը ոչ միայն սկսվել է, այլև անկախ ճյուղավորում է արձանագրել: Դեռևս որոշ հիմնարար անհամաձայնություններ կան, սակայն ուղղակի ներգրավումը դրանք մեղմելու գործում ՀԹՀՀ-ի կոնկրետ նպատակն է: Սկսած 2001թ. աճել են նաև կառավարությունների պաշտոնական շփումները: Պետք է այնուամենայնիվ խոստովանել, որ այդ աճը կայուն չի եղել: ՀԹՀՀ-ի մյուս նախանշումներից է եղել կառավարություններին համերաշխության խթանման վերաբերյալ հանձնա-

րարականներ տալը: Թե՛ հանրային, թե՛ մասնավոր հարթակներում հանձնաժողովը եղել է հետևողական այդ հարցում: Սույն փաստաթղթով ՀԹՀՀ-ն ներկայացնում է համերաշխությանն առնչվող իր հանձնարարականները, որոնք նպաստում են պաշտոնական հարաբերությունների բարելավմանը: Այդ հանձնարարականները լուրջ դիտարկումների արդյունք են: Հասարակության համապատասխան ներկայացուցիչների հետ անցկացված խորհրդակցությունը ներառել է տարբեր տեսանկյուններ:

Ընդունելով տարբերությունների լրջությունը՝ հայ և թուրք հասարակությունների մեծամասնությունը միակարծիք է այն հարցում, որ անհրաժեշտ է բարելավել հարաբերությունները: Այսպիսով, մեր որոշիչ հանձնարարականը՝ կառավարական պաշտոնյաներին հետևյալն է. ակտիվորեն և հրապարակայնորեն քաջալերել կապերն ու վստահության մեխանիզմները Հայաստանի ու Թուրքիայի միջև և առհասարակ՝ տարածաշրջանում:

Միաժամանակ ՀԹՀՀ-ն հայտարարում է իր՝ որպես հանձնաժողովի ավարտի մասին: ՀԹՀՀ-ի նախնական ժամկետը մեկ տարի էր, բայց իրադարձությունների դասավորությունը պահանջեց ավելի երկար ժամանակահատված՝ իրականացնելու նախանշված ծրագրերն ու նպատակները: Մենք իրազեկ ենք՝ առաջընթացը քաղաքացիական հասարակության կապերում մշտական բնույթ ունի և ժամանակի ընթացքում միայն և միայն կուժեղանա: Ընկալում ենք նաև, որ ի լրումն մեր հանձնարարականների՝ պաշտոնական հարաբերությունները կարող են լավագույնս շարունակվել և ամրապնդվել՝ անկախ ՀԹՀՀ-ի ձևաչափից: Փոխարենը, վճռել ենք ժողովել ՀԹՀՀ-ի անդամակցությունը գերազանցող աշխատանքային մի խումբ՝ քննարկելու հայ-թուրքական հարաբերությունների վերականգնումը և համերաշխությունը: Այդ համաժողովը ծրագրված է կազմակերպել 2004թ. աշնանը: Բացի այդ, նպատակ ունենք աջակցել նոր հայ-թուրքական խորհրդատվական խմբի ստեղծմանը: Խումբը կհանդիպի նվազագույնը տարին մեկ անգամ՝ փոխանակելու տեսակետներ, գնահատելու առաջխաղացումները և առաջարկելու բարիդրացիական հարաբերությունների խթանման ուղիներ: ՀԹՀՀ-ի վեբկայքը (www.tarc.info) կշարունակի գործել մեկ թուրք և համապատասխանաբար մեկ հայ ներկայացուցչի խմբագրությամբ: Հրահանգը համընկնում է ՀԹՀՀ-ի սկզբնանպատակի հետ, և խմբագիրները լիազորված են կատարել այն ըստ իրենց հայեցողության:

ՀԹՀՀ-ի աշխատանքները 2001թ.-ից ի վեր անհնար կլինեին՝ առանց բազմաթիվ անհատների և կառույցների անմիջական օժանդակության: Նշվածների շարքերում առաջին հերթին Դեյվիդ Լ. Ֆիլիպսն է: Հրապարակայնորեն շնորհակալություն հայտնելով նրան, ինչպես նաև՝ Թեդ Սորենսենին,

Ալեքս Բորրեյնին, Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին, Հենրի Դանենթ կենտրոնին, Վիեննայի դիվանագիտական ակադեմիային և Միացյալ ծառայությունների թագավորական ինստիտուտին՝ չենք թերագնահատում շատերի նպաստը, ովքեր տվել են իրենց իմաստությունը, ջանքերն ու բարի կամքը հայ և թուրք ժողովուրդների լավ ապագան կերտելու ընդհանուր գործին: Մենք անկեղծորեն երախտապարտ ենք բոլորին: Սակայն այս կետը անմիջապես նախորդում է առաջարկությունների մեր ցանկին, որպեսզի պաշտոնյաներն ու այլք հանգիստ և իրազեկ լինեն, որ հարաբերությունների բարելավման ռիսկերը բացահայտում են աջակցության անկանխատեսելի աղբյուրներ և դրական արդյունքներ, որոնք անմիջապես տեսանելի չեն:

Հանձնարարականներ

Հայերն ու թուրքերը ունեն ընդհանուր ժառանգություն: Հայկական և թուրքական կառավարությունների վերջնանպատակը պետք է լինի լիակատար երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, որը իր հերթին կներառի բաց սոցիալական, տնտեսական և մշակութային գործունեություն երկու հարևան երկրների միջև:

Ներկայացնում ենք բարիդրացիական հարաբերությունների հաստատման հետևյալ առաջարկությունները.

- **Պաշտոնական շփումները պետք է զարգանան:** Սկսած 2001թ. պաշտոնական կապերը արտաքին գործերի նախարարի և այլ հարթություններում էապես բարելավվել են: Ստամբուլում հայկական դիվանագիտական ներկայացուցչության մասնակցությունը Սևծովյան տնտեսական համագործակցությանը (ՍԾՏՀ) գովասանքի արժանի փաստ է: Կառավարությունները պետք է նպաստեն հաճախակի շփումներին, մշակեն խորհրդակցության նոր ձևաչափեր և ամրապնդեն հարաբերությունները՝ հաշվի առնելով լրացուցիչ պայմանագրային կանոնակարգումները: Լիակատար դիվանագիտական հարաբերությունների անցման շրջանում կառավարությունները պետք է նաև խորհեն տվյալ երկրում իրենց քաղաքացիների դիվանագիտական անվտանգության միջոցառումների շուրջ:

- **Հայ-թուրքական սահմանի բացումը պետք է հայտարարվի և իրականացվի 2004թ.** Մեր հանձնարարականը կազմված է երեք որո-

շիչ գործոններից: Առաջին. երկու երկրների միջև կազմված համաձայնագրերը, ճանաչելով առկա սահմանները, ենթադրում են ազատ երթևեկություն, բեռնափոխադրումներ և առևտուր այդ սահմաններով: Երկրորդ. բաց սահմանը զգալիորեն կբարելավի սահմանի երկու կողմերում ապրող մարդկանց տնտեսական դրությունը: Երրորդ. բաց սահմանը կարգավորված երկկողմ հարաբերությունների հաստատման հիմնասյուն է և համապատասխանում է միջազգային համակարգին, որին և հետամուտ են Հայաստանը և Թուրքիան:

- **Երկու երկրները պետք է պետական մակարդակով աջակցեն քաղաքացիական հասարակության կրթությանը, գիտությանը, մշակույթին ու զբոսաշրջությանն ուղղված ծրագրերը:** Սկսած 2001թ. քաղքացիական հասարակության ամենահաջողված փոխանակման ծրագրերը եղել են հատկապես այս ոլորտներում: Դրանք արժանի են գնահատանքի և քաջալերման: Խոստումնալից են նաև խնդիրների նորարարական և արդյունավետ լուծման տարբերակները: Կառավարությունները պետք է ավելի աջակից լինեն նմանատիպ հարցերում՝ սատարելով և նույնիսկ նախաձեռնելով ծրագրեր, ինչպիսիք են՝ թուրք և հայ ակադեմիկոսների և գիտնականների դասախոսությունների և գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, համատեղ ուսանողական կրթական ծրագրերի կազմակերպումը, ամառային դպրոցները և կրթաթոշակային ծրագրերն ու նախագծերը, որոնք, ըստ էության, փոխըմբռնման և հարգանքի առաջին քայլ են:

- **Անհրաժեշտ է հաստատել հումանիտար աղետի աջակցության և առողջապահության համագործակցության մեխանիզմներ:** Եվ Հայաստանը, և՛ Թուրքիան գտնվում են բնական աղետների ռիսկային գոտում, մասնավորապես, սակայն ոչ բացառապես՝ երկրաշարժերի: Արտակարգ իրավիճակների հարցերում համագործակցությունը ևս կարող է հեշտությամբ բարելավվել՝ հօգուտ բոլորի: Բացի այդ, երկու երկրների բարի կամքը կարող է զարգանալ առողջապահության և բուժօգնության ոլորտներում համագործակցության ծավալման և հրապարակայնացման միջոցով:

- **Թուրքիայի և Հայաստանի միջև առկա անվտանգության և վստահության կառուցողական միջոցները պետք է էլ ավելի զարգանան:** Մեր հանդիպումները վկայում են, որ թուրքերի և հայերի մեծամաս-

նությունը ցանկանում է ունենալ և զարգացնել խաղաղ հարաբերություններ:
Եվ Հայաստանում, և՛ Թուրքիայում անվտանգությունը, հակաահաբեկչությունը և առնչվող հարցերը կարևոր մտահոգություններ են: Այսպիսով, հարաբերությունների բարելավման ընթացքում անվտանգության հարցերին պետք է անմիջականորեն անդրադառնալ միջազգային և տարածաշրջանային անվտանգության միջոցառումների և երկկողմ շփումների միջոցով՝ հաշվի առնելով հանրության շրջանում վստահություն սերմանելու կարևորությունը:

- **Պետք է խրախուսվի կրոնական փոխըմբռնումը:** Քաղաքացիական հասարակության նախաձեռնություններում ծանոթություններ հաստատելու և համատեղ գործողություններում ներգրավվելու հնարավորություն ունեն նաև կրոնական առաջնորդները: Ներգրավվածությունը ենթադրում է մասնակցություն տվյալ (այս դեպքում՝ կրոնական) խմբի շրջանակներում՝ դարձյալ նպաստելու թուրքերի և հայերի համերաշխության կայացմանը: Նմանատիպ գործողությունները, ներառյալ կրոնական սրբավայրերի վերականգնումը, ինչպես նաև կրոնական հիմնադրամների իրավունքների պաշտպանությունն ու աշխատանքը, պետք է քաջալերվեն կառավարությունների կողմից:

- **Հայ և թուրք ժողովուրդները պետք է ունենան ավելի մեծ վստահություն, որ իրենց կառավարությունները աշխատում են հաղթահարել անցյալի դժվարությունները:** Նրանք, ովքեր հետևել են ՀԹՀՀ-ի աշխատանքին, գիտեն՝ որքան դժվար է եղել այդ հիմնախնդիրը: Ցեղասպանության կանխման և պատժի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ XX դարասկզբի իրադարձությունների առնչությամբ կիրառելիության իրավական վերլուծության վերաբերյալ ԱԱՄԿ կարծիքը հիշատակվում է մեր էլեկտրոնային կայքում:

Ամփոփում

Մեր եզրահանգման հիմքում նույն գաղափարն է, որով սկսվել է գործընթացը: Բազմաթիվ տարաձայնություններ կան, սակայն այդ տարաձայնությունները հարթելու դրական և հարաճուն միտում կա: Այդ միտումը, մասնավորապես, ենթադրում է տասնամյակներ ի վեր կարծրացած իրավիճակի փոփոխություն՝ հօգուտ մեծաթիվ ուղղակի կապերի հաստատման և

փոխըմբռնման: Գիտակցում ենք, որ քննարկվող իրավիճակներում մեր հանձնարարականները որոշակի հավակնոտ բնույթ ունեն: Կրկին անգամ շեշտում ենք, որ կառավարությունները պետք է աջակցեն նրանց, ովքեր պատրաստ են աշխատել հարաբերությունների բարելավման ուղղությամբ: Հարաբերությունների վերականգնումը և համերաշխությունը մեր դեպքում գործընթաց է, ոչ իրադարձություն: Գործընթացը կարելի է բնորոշել որպես «բարդ»:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Միջազգային զարգացման գործակալություն (ՄԶԳ)

Ազատության աջակցության համաձայնագիր (ԱԱՀ)

Աջակցություն արևելաեվրոպական ժողովրդավարություններին (ԱԱԵԺ)

Անցումային արդարադատության միջազգային կենտրոն (ԱԱՄԿ)

Արևելաեվրոպական ժողովրդավարությունների պաշտպանություն (ԱԵԺՊ)

«Արդարություն և զարգացում» կուսակցություն (ԱԶԿ)

Առաջընթացի և զարգացման միություն (ԱԶՄ)

ԱՄՆ ինֆորմացիոն բյուրո (ԱԻԲ)

ԱՄՆ երկրաբանահետախուզական ծառայություն (ԱՀԾ)

ԱՄՆ խաղաղության ինստիտուտ (ԱԽԻ)

ԱՄՆ կառավարություն (ԱԿ)

Ամերիկյան համալսարան (ԱՀ)

Ամերիկայի հայկական համագումար (ԱՀԱ)

Ամերիկայի հայկական ազգային կոմիտե (ԱՀԱԿ)

Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ)

Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)

Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ)

Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ)

Բանակի հետևակազոր (ԲՀ)

Գյուղատնտեսական մեծածախ առևտրի վիրտուալ շուկա (ԳՄԱՎՇ)

Դիվանագիտական ծառայության ներկայացուցիչ (ԴԾՆ)

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

Եվրախորհրդարան (ԵԽ)

Եվրոպայում հայկական ասոցիացիաների ֆորում (ԵՀԱՖ)

Եվրոպական միություն (ԵՄ)

Զինված ուժերի ծառայության միավորված թագավորական ինստիտուտ (ԶՈՒԾՄԹԻ)

Թուրք-ամերիկյան ասոցիացիաների համագումար (ԹԱԱՀ)

Թուրքիայի ազգային մեծ ժողով (ԹԱՄԺ)

Թուրքիայի գլխավոր շտաբ (ԹԳՇ)

Հայ-թուրքական գործարար զարգացման խորհուրդ (ՀԹԳԶԽ)

Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողով (ՀԹՀՀ)

Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ (ԹՏՍՀՀ)

Ինֆորմացիայի ազատության մասին օրենք (ԻԱՕ)

Իրաքի թուրքմենական ճակատ (ԻԹՃ)

«Իսլամական կոնֆերանս» կազմակերպություն (ԻԿԿ)

Խաղաղագիտության միջազգային ինստիտուտ, Օսլո (ԽԳՄԻ)

Խորհրդականներ հանուն գլոբալ ակտիվության (ԽՀԳԱ)

Կովկասի ակադեմիական համագործակցության միջազգային ասամբլեա (ԿԱՀՄԱ)

Կոալիցիայի ժամանակավոր հանձնակատար (ԿԺՀ)

Կենտրոնական հետախուզական վարչություն (ԿՀՎ)

Կոնգրեսի հետազոտական ծառայություն (ԿՀԾ)

Կրթության և մշակույթի բյուրո (ԿՄԲ)

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն (ՀԱԳՄ)

Հարավարևելյան հանձնախումբ (ՀԱՀ)

Հարավարևելյան Եվրոպայի համագործակցության նախաձեռնություն (ՀԱԵՀՆ)

Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն (ՀԿԹՀ)

Հասարակական խնդիրների հետազոտման կենտրոն (ՀԽՀԿ)

Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Հարավսլավիայի միջազգային քրեական դատակազմ (ՀՄՔԴ)

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիա (ՀՍԱ)

Ճանապարհատրանսպորտային միջանցք «Եվրոպա-Կովկաս-Ասիա» (ՃՏՄԵԿԱ)

Իսկության և հաշտեցման հանձնաժողով (ԻՀՀ)

Միջազգային անվտանգության աջակցության ուժային կառույց (ՄԱԱՈՒԿ)

Կովկասի մարկետինգային ցանց (ՄԱՆԵԿ)

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (ՄԶՄԿ)

Ազգային հետախուզական կազմակերպություն (ՄԻԹ)

ՄԱԿ-ի միջազգային դատարան (ՄՄԴ)

Միջազգային փրկարարական կոմիտե (ՄՓԿ)

Միջազգային քրեական դատարան (ՄՔԴ)

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն (ՆԱՏՕ)

Նորանկախ պետություններ (ՆՊ)

Կաբելային հեռուստատեսության նորությունների լրատվական ալիք (Սի-Էն-Էն)

Սևծովյան տնտեսական համագործակցության խորհուրդ (ՍՏՀԽ)

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ)

Փոխըմբռնման եվրոպական կենտրոն (ՓԵԿ)

«Փոխըմբռնման ուղիներ» ՀԿ (ՓՈՒ)

Քուրդստանի աշխատավորական կուսակցություն (ՔԱԿ, ՔԲԿ)

Քրդական ժողովրդավարական կուսակցություն (ՔԺԿ)

Քրդստանի հայրենասիրական միություն (ՔՀՄ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔ

Ջոն Աբիզայիդ.	գլխավոր հրամանատար, ԱՄՆ միավորված կենտրոնական հրամանատարություն (2004-ից մինչ օրս):
Ռուբեն Ադալյան.	տնօրեն, Հայաստանի ազգային ինստիտուտ:
Գունդուզ Ակտան.	Թուրքիայի ընդհանուր և արտաքին գործերի փոխնախարար և Ժնևում ՄԱԿ-ի դեսպան, Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի տնօրեն, Թուրքիայի մշտական ներկայացուցիչը Ժնևում, արտաքին գործերի նախարարի խորհրդական և Թուրքիայի դեսպանը Հունաստանում:
Մադլեն Օլբրայթ.	ԱՄՆ նախկին մշտական ներկայացուցիչ ՄԱԿ-ում (1993–1996) և ԱՄՆ պետքարտուղար (1997–2001):
Հեյդար Ալիև.	Ադրբեջանի Հանրապետության նախագահ (1993–2003):
Լեյլա Ալիևա.	ադրբեջանական ՀԿ ներկայացուցիչ:
Քոֆի Անան.	ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար (1997– մինչ օրս):
Ռիչարդ Արմիթաժ.	պետքարտուղարի տեղակալ (2001– մինչ օրս):
Ալեքսանդր Արզումանյան.	Հայաստանի Հանրապետության նախկին դեսպանը ՄԱԿ-ում (1992–1993) և արտգործնախարար (1996–1998):
Դևլեթ Բահչելի.	նախագահ, «Ազգային պայքար» կուսակցություն (1997– մինչ օրս), փոխվարչապետ (1999–2002):

Մեհմեթ Բեյդար.	Թուրքիայի գլխավոր հյուպատոսը Լոս Անջելեսում (մինչև 1973):
Էմին Մահիր Բալչիօղլու.	մշակութային փորձագետ և արվեստաբան:
Մասուդ Բարզանի.	նախագահ, Քրդստանի ժողովրդավարական կուսակցություն (1979–մինչ օրս):
Հալիլ Բերքթեյ.	պատմության դասախոս, Սաբանչի համալսարան:
Մեհմեթ Ալի Բիրանդ.	թուրք լրագրող:
Էդվարդ Բլեյքլի.	դեկան, Միլանի կառավարման դպրոց, «Նյու սքուլ» համալսարան:
Ալեքս Բորեյն.	փոխտնօրեն, Հարավային Աֆրիկայի իսկության և հաշտեցման հանձնաժողով, Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի նախագահ:
Զբիգնիև Բժեզինսկի.	ԱՄՆ պետանվտանգության խորհրդական (1977–1981):
Սամ Բրաունբաք.	Կանզասի նահանգի հանրապետական կոնգրեսական (1994–1996), Կանզասի նահանգի հանրապետական սենատոր (1996–մինչ օրս):
Սոներ Կագափթեյ.	ավագ փորձագետ, Մերձավոր Արևելքի ռազմավարության ինստիտուտ Վաշինգտոնում:
Իսմայիլ Չեմ.	Թուրքիայի արտգործնախարար (1997–մինչ օրս):
Ռիչարդ Չենի.	ԱՄՆ պաշտպանության նախարար (1989–1993) և փոխնախագահ (2001–մինչ օրս):
Թանզու Չիլլեր.	Թուրքիայի վարչապետ (1993–1995):
Գլաֆկո Կլերիդես.	Կիպրոսի Հանրապետության նախկին նախագահ (1993–2003):
Ջոն Քոնոր.	Իռլանդիայի սենատոր:
Ջոն Ս. Կորզայն.	Նյու Ջերսի նահանգի ժողովրդավարական սենատոր (2000– մինչ օրս):
Ստեփան Դեմիրճյան.	նախագահ, Հայաստանի ժողովրդական կուսակցություն, ՀՀ ԱԺ պատգամավոր
Ռաուֆ Դենքթաշ.	Թուրք կիպրոսցիների առաջնորդ

Էդվարդ Պ. Ջերեջյան.	հիմնադիր տնօրեն, Ռայս համալսարանի Ջեյմս Ա. Բեյքերի անվան ինստիտուտ, նախարարի նախկին օգնական, Մերձավոր Արևելքի հարցերի նախարարություն, ԱՄՆ նախկին դեսպանը Իսրայելում և Սիրիայի Արաբական Հանրապետությունում:
Զորան Ջինջիչ.	Սերբիայի վարչապետ (2001–2003):
Բուլենթ Էջևիթ.	Թուրքիայի վարչապետ (1974, 1977–1979, 1999–2002):
Աբուլֆազ Էլչիբեյ.	Ադրբեջանի Հանրապետության նախագահ (1992–1993):
Սուկրու Էլեկդաղ.	ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան (1979–1989):
Ջոն Էնսայն.	Նևադայի նահանգի հանրապետական կոնգրեսական (1995–1999), Նևադայի հանրապետական սենատոր (2000–մինչ օրս):
Նեչմեթին Էրբաքան.	Թուրքիայի վարչապետ (1996–1997):
Ռեջեփ Թայիփ Էրդողան.	Թուրքիայի վարչապետ (2003–մինչ օրս):
Դողու Էրգիլ.	Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի անդամ և Թուրքիայի սոցիալական հարցերի գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն:
Ուստուն Էրգուդեր.	տնօրեն, Ստամբուլի քաղաքական ծրագրերի կենտրոն, Սաբանչի համալսարան:
Սադի Էրգուվենչ.	Թուրքիայի օդային ուժերի նախկին գեներալ:
Ահմեթ Էրթեգուն.	նախագահ, «Ատլանտիկ ռեքորդս»:
Ահմեթ Էվին.	ֆակուլտետի անդամ, Սաբանչի համալսարան:
Դուգլաս Ֆեյթ.	ԱՄՆ պաշտպանության փոխնախարար (2001–մինչ օրս), Թուրքիայի Հանրապետության նախկին շահախմբական (լոբբիստ):
Հելենա Քեյն Ֆին.	Հասարակական-քաղաքական հարցերի խորհրդական, Թուրքիայում ԱՄՆ դեսպանություն (1997–2000), Կրթության և մշակույթի նախարարի օգնական (2001):

Թոմի Ֆրանկս.	գլխավոր հրամանատար, Միավորված կենտրոնական հրամանատարություն, ԱՄՆ (2000–2003):
Դուգլաս Ֆրանց.	«Նյու Յորք թայմզ» ամսագրի նախկին մեկնաբան Ստամբուլում:
Դան Ֆիլդ.	Նորանկախ պետությունների պետքարտուղարի փոխօգնական (2000–2001) և Ազգային անվտանգության խորհրդի եվրոպական հարցերի տնօրեն (2001– մինչ օրս):
Բիլ Ֆրիստ.	Թեննեսի նահանգի հանրապետական սենատոր (1994– մինչ օրս):
Հարրի Գիլմոր.	ԱՄՆ դեսպանը Հայաստանի Հանրապետությունում (1993–1995):
Մարկ Գրոսման.	քաղաքական գործերի փոխնախարար (2001–2005), եվրոպական և կանադական հարցերի նախարարի օգնական (1997– 1998) և ԱՄՆ դեսպանը Թուրքիայում (1995–1997):
Աբդուլա Գյուլ.	Թուրքիայի արտգործնախարար (2003–մինչ օրս):
Քեն Խաչիկյան.	նախագահ, Ամերիկայի հայկական ազգային կոմիտե:
Շելլի Հաք.	մամլո խորհրդական:
Ռիչարդ Հակոբյան.	հայկական ավանդական երաժշտության ամերիկահայ կատարող:
Աբդուլ Համիդ.	Օսմանյան կայսրության սուլթան (1876–1909):
Լորդ Դեյվիդ Հաննեյ.	Միացյալ Թագավորության հատուկ բանակցող Կիպրոսում (1996–2003), դեսպան և Եվրահանձնաժողովի մշտական ներկայացուցիչ (1985–1990), ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ (1990–1995), Լորդերի պալատի անկախ անդամ:
Ջ. Դենիս Հասթերթ.	Իլինոյս նահանգի հանրապետական կոնգրեսական (1986–մինչ օրս), ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ (1999–մինչ օրս):

Պրիսցիլա Հեյներ.	Սոցիալական ծրագրերի և վերլուծությունների մասով տնօրեն, Անցումային արդարադատության միջազգային կենտրոն:
Ռիչարդ Ս. Հոլբրուք.	ԱՄՆ մշտական ներկայացուցիչ ՄԱԿ-ում (1998–2001), եվրոպական և կանադական հարցերի պետքարտուղարի օգնական (1994–1995), Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան գոտու պետքարտուղարի օգնական (1977–1981), Կիպրոսի հատուկ նախագահական գործակալ (1997–1999):
Հրայր Հովնանյան.	նախագահ, Ամերիկայի հայկական համագումարի հոգաբարձուների խորհուրդ:
Դավիթ Հովհաննիսյան.	Հայաստանի Հանրապետության նախկին դեսպան Սիրիայում և տարածաշրջանային հարցերի պատասխանատու:
Վահան Հովհաննիսյան.	փոխնախագահ, Հայ հեղափոխական դաշնակցություն:
Ուդի Հրանտ.	Տաճկահայ երաժիշտ:
Հրանուշ Խառատյան.	Հայ կանանց միություն:
Գեներալ Ջեյմս Ջոնս.	Եվրոպայում ԱՄՆ ազգային զինված ուժերի գլխավոր հրամանատար:
Ջին-Քլոդ Ջանքեր.	Լյուքսեմբուրգի վարչապետ (1995– մինչ օրս):
Ռոբերտ Գալուստյան.	նախագահ, Հայաստանի ազգային ինստիտուտ, խորհրդական, Ամերիկայի հայկական խորհուրդ:
Հերբերտ Ս. Քելման.	պրոֆեսոր, Հարվարդի համալսարան:
Մուսթաֆա Քեմալ Աթաթուրք.	ժամանակակից Թուրքիայի հիմնադիր և Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ (1923–1938):
Անի Քալայջյան.	պրոֆեսոր, Ֆորդհամի համալսարան:
Սուլե Կիլիկարսլան.	սոցիոլոգ և հայ-թուրքական կանանց ամսագրի հրատարակիչ:
Ջոզեֆ (Ջո) Նոլլենբերգ.	Միչիգան նահանգի հանրապետական կոնգրեսական (1993–մինչ օրս) և Կոնգրեսի հայաստանյան հարցերի փակ համագումարի համանախագահ:

Ռոբերտ Քոչարյան.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ, (1994–1997), Հայաստանի Հանրապետության վարչապետ (1997–1998) և Հայաստանի Հանրապետության նախագահ (1998–2008):
Սամի Քոհեն.	«Հուրրիեթի» թուրք մեկնաբան:
Վան Զ. Գրիգորյան.	Նյու Յորքի տարածքային դատախազ, ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցչի տեղակալ և խորհրդական (1992), Ամերիկայի հայկական համագումար (1977–մինչ օրս):
Ռահմի Կոչ.	թուրք արդյունաբերող և հույն-թուրքական գործարարության խորհրդի նախկին համանախագահ:
Անթոնի Լեյք.	ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդական (1993–1997):
Ռաֆայել Լեմկին.	Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին կոնվեցիայի հեղինակ:
Մայքլ Լեմոն.	Հայաստանում ԱՄՆ դեսպան (1998–2001):
Ռիչարդ Գ. Լուգար.	Ինդիանայի նահանգի հանրապետական սենատոր (1976– մինչ օրս):
Օմեր Լութեմ.	Թուրքիայի նախկին դեսպանը Բուլղարիայում և պատվիրակ Վատիկանում:
Վազգեն Մանուկյան.	Ազգային ժողովրդավարական միություն, Հայաստանի Հանրապետության ԱԺ պատգամավոր:
Թհաբո Մբեկի.	Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ (1999–մինչ օրս):
Յասթին Մակքարթի.	պրոֆեսոր, Լուիզվիլլի համալսարան:
Միտչ Մակքոննել.	Կենտուկի նահանգի հանրապետական սենատոր:
Նաիրա Մելքումյան.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտգործնախարար:
Սերջիո դե Մելլո.	գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Իրաքում (2003):
Կարլոս Սաուլ Մենեմ.	Արգենտինայի նախագահ (1989–1999):

Անդրանիկ Մարգարյան.	Հայաստանի Հանրապետության վարչապետ (2000–2007):
Թոմաս Միլլեր.	Կիպրոսի ծրագրերի նախկին համակարգող և ԱՄՆ դեսպան Հունաստանում (2002–2004):
Զոզեֆ Վ. Մոնտվիլ.	նախկին ամերիկյան պետական գործիչ և ժողովրդական դիվանագիտության «կնքահայր»:
Հենրի Մորգենթաու.	ԱՄՆ դեսպանը Թուրքիայում (1913–1916):
Միկե Մոյերս.	տնտեսագիտության պրոֆեսոր, Ամերիկյան համալսարան:
Ստեֆեն Ռ. Նորտոն.	ԱՄՆ բանակի գնդապետ (թոշակառու):
Աբդուլա Օջալան.	Քրդստանի աշխատավորական կուսակցության ղեկավար (PKK, ՔԲԿ):
Զոն Օրդուեյ.	ԱՄՆ դեսպան Հայաստանում (2001–2004):
Վարդան Օսկանյան.	Հայաստանի արտգործնախարար (1998–մինչ օրս):
Թուրգութ Օզալ.	Թուրքիայի վարչապետ (1983–1989), Թուրքիայի նախագահ (1989–1993):
Հիլմի Օցկոկ.	ղեկավար, Թուրքիայի գլխավոր շտաբ (2002–մինչ օրս):
Ֆրանկ Պալլոնե.	Նյու Ջերսի նահանգի ժողովրդավարական կոնգրեսական և կոնգրեսի հայաստանյան փակ համագումարի համանախագահ:
Ալեքսիս Պապահելաս.	հույն լրագրող:
Գիորգիոս Պապանդրեոս.	Հունաստանի վարչապետ (1964–1967):
Լոնգին Պաստուսիակ.	Լեհաստանի Սենատի նախագահ (2001–մինչ օրս):
Ռոբերտ Փիրսոն.	ԱՄՆ դեսպան Թուրքիայում (2000–2003):
Ռաշել Պենտլարգե.	Թուրքիայի և Կովկասի ժողովրդական դիվանագիտության ծրագրի համակարգող, Ամերիկյան համալսարան:
Թևան Պողոսյան.	տնօրեն, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (Հայաստան):

Քոլին Փաուել.	ԱՄՆ պետքարտուղար (2001–2004), պետական անվտանգության նախկին խորհրդական, պաշտպանության նախարարի նախկին գլխավոր օգնական, չորսաստղանի գեներալ, շտաբի ղեկավարների միավորված կոմիտեի նախագահ:
Սամանտա Փաուեր.	տնօրեն, «Քարր» մարդու իրավունքրեի կենտրոն, Հարվարդի համալսարան, և Պուլիտցերյան մրցանակի դափնեկիր (2003):
Քիրան Պրենդերգաստ.	Մեծ Բրիտանիայի դեսպանը Թուրքիայում (1992–1995) և քաղաքական հարցերի գլխավոր քարտուղարի տեղակալ ՄԱԿ-ում (1997–մինչ օրս):
Յիթժակ Ռաբին.	Իսրայելի վարչապետ (1974–1977, 1992–1995) և Խաղաղության ամրապնդման նոբելյան մրցանակակիր (1994):
Ջորջ Ռադանովիչ.	Կալիֆոռնիայի նահանգի հանրապետական կոնգրեսական (1994–մինչ օրս):
Շազիա Ռաֆի.	գլխավոր քարտուղար, Խորհրդականներ հանուն գլոբալ ակտիվության:
Չամփթելլերս դե Ռիբես.	Նյուրնբերգյան դատավարության ֆրանսիացի մեղադրող:
Քոնդոլիզա Ռայս.	ԱՄՆ պետանվտանգության խորհրդատու (2001–2004):
Ջեյ Ռոքֆելլեր.	Արևմտյան Վիրջինիա նահանգի ժողովրդավարական սենատոր:
Դոնալդ Հ. Ռամսֆելդ.	պաշտպանության նախարար (2001–2006):
Սակիպ Սաբանչի.	Թուրք արդյունաբերող (1933–2004):
Անվար էլ-Սադաթ.	Եգիպտոսի նախագահ (1970–1981) և Խաղաղության ամրապնդման Նոբելյան մրցանակակիր (1978):
Վիլյամ Սաֆիր.	մեկնաբան, «Նյու Յորք թայմզ» ամսագիր:
Ռուբեն Սաֆրաստյան.	դասախոս, Երևանի պետական համալսարան, տնօրեն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Արևելագիտության ինստիտուտ:

Աբդուլ Ազիզ Սայիդ.	պրոֆեսոր, Ամերիկյան համալսարանի «Մոհամեդ Սայիդ Ֆարսի» իսլամական խաղաղության ամբիոն. հիմնադիր տնօրեն, Գլոբալ խաղաղության կենտրոն, Ամերիկյան Համալսարանի Խաղաղության և հակամարտության կարգավորման միջազգային ծրագիր:
Օզդեմ Սանբերկ.	արտաքին գործերի նախարարի նախկին տեղակալ և Թուրքիայի դեսպան Մեծ Բրիտանիայում:
Արամ Սարգսյան.	Հայաստանի Հանրապետության վարչապետ (1999–2000), «Հանրապետություն» կուսակցության ղեկավար, ՀՀ ԱԺ պատգամավոր:
Բրենթ Սկաուքրոֆթ.	ԱՄՆ նախագահներ Ֆորդի և Բուշի ազգային անվտանգության խորհրդական:
Ստեֆեն Ռ. Սեստանովիչ.	ռուսագիտության և եվրասիական ուսմունքների ավագ գիտաշխատող Արտաքին հարաբերությունների խորհրդում և նորանկախ պետությունների հարցերով պետքարտուղարի նախկին օգնական:
Ռուբեն Շուգարյան.	Հայաստանի Հանրապետության դեսպանը ԱՄՆ-ում (1992–1999) և ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ (1999–մինչ օրս):
Օրհան Սիլեր.	տնօրեն, Թուրքիայի պատմության հիմնադրամ:
Էդուարդ Սիմոնյանց.	ՀՀ Ազգային անվտանգության պետական վարչության տնօրեն (1993–1994):
Քալվին Սիմս.	խմբագիր-պրոդյուսեր, հեռուստատեսային փաստավավերագրության բաժին, «Նյու Յորք թայմզ» ամսագիր:
Բեթթի Սիտկա.	ղեկավարի օգնական, Ամերիկյան համալսարանի գլոբալ խաղաղության կենտրոն:
Թեոդոր Սորենսեն.	նախագահ Ջոն Ֆ. Քենեդու խորհրդական և Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի խորհրդի անդամ:
Կաան Սոյակ.	համանախագահ, Հայ-թուրքական գործարար զարգացման խորհուրդ:

Նոյան Սոյակ.	Ստամբուլի ներկայացուցիչ, Հայ-թուրքական գործարար զարգացման խորհուրդ:
Ռիչարդ Սփրինգ.	Իռլանդիայի Հանրապետության փոխվարչապետ (1982–1987, 1993–1994, 1994–1997) և Իռլանդիայի Հանրապետության արտգործնախարար (1993–1994, 1994–1997):
Մումթազ Սոյսալ.	Թուրքիայի արտգործնախարար (1994):
Սուլեյման Փառահեղ.	Օսմանյան կայսրության սուլթան (1520–1566):
Սարի Թարա.	նախագահ, «Էնկա հոլդինգս» (Թուրքիա):
Վիլյամ Բ. Թեյլոր, Կրտսեր.	ԱՄՆ դեսպան, Աֆղանստանի ծրագրերի համակարգող ԱՄՆ Պետդեպարտամենտում (2003–մինչ օրս), Եվրոպայի և Եվրասիայի ամերիկյան աջակցության համակարգող և ՆԱՏՕ-ում ԱՄՆ դեսպանի պաշտպանության գծով հատուկ խորհրդականի տեղակալ:
Լևոն Տեր-Պետրոսյան.	Հայաստանի Հանրապետության նախագահ (1991–1998):
Ջորջ Թերզես.	Փոխըմբռնման եվրոպական կենտրոն:
Խաչիկ Թոլոլյան.	Վեսլեյան համալսարանում անգլերենի դասախոս, «Սփյուռք» օրաթերթի խմբագիր:
Իլթեր Թուրքմեն.	Թուրքիայի արտաքին գործերի նախկին նախարար (1980–1983), ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ և ՄԱԿ-ի Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքի գործակալության գլխավոր հանձնակատար:
Դեսմոնդ Տուտու.	արքեպիսկոպոս (1986–1996), վաստակավոր արքեպիսկոպոս (1996–մինչ օրս), և Հարավային Աֆրիկայի իսկության և հաշտեցման հանձնաժողովի նախագահ (1995–2003):
Աղվան Վարդանյան.	Հայ հեղափոխական դաշնակցություն, ՀՀ ԱԺ պատգամավոր:
Վամիկ Վոլկան.	Վիրջինիայի համալսարանի հոգեբուժության դասախոս:

Էլի Վիզլ.	Բոստոնի համալսարանի հումանիտար առարկաների պրոֆեսոր և խաղաղության ամրապնդման Նոբելյան մրցանակակիր (1986):
Պոլ Վոլֆովից.	ԱՄՆ պաշտպանության նախարարի տեղակալ (2001–մինչ օրս):
Տիգրան Խզմալյան.	տնօրեն, «Երևան» կինոստուդիա ՓԲԸ:
Յաշար Յակիշ.	Թուրքիայի արտգործնախարար (2003):
Մեհմեդ Յիլմազ.	նախագահ, Կարսի Առևտրաարդյունաբերական պալատ:
Մեսութ Յիլմազ.	Թուրքիայի վարչապետ (1991–1996, 1997–1999):
Փոլ վան Զիլ.	համայնքային ծրագրերի տնօրեն, Անցումային արդարադատության միջազգային կենտրոն և Հարավային Աֆրիկայի իսկության և հաշտեցման հանձնաժողովի գործադիր քարտուղար: